

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՅՐԸ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲՆՕՐՐԱՆ

1.1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՅՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԼԵՌՆԵՐԸ ԵՎ ԼԵՌՆԱՇՐՈՒԹՎԱՆԵՐԸ, ԳԵՏԵՐԸ ԵՎ ԼՃԵՐԸ, ԴԱՇՏԵՐԸ ԵՎ ՀԱՐԹԱՎԱՅՐԵՐԸ

Աշխարհագրական դիրքը: Յուրաքանչյուր երկրի քաղաքական միջավայրն ու աշխարհագրական դիրքը, բնությունը, կլիման, բուսական և կենդանական աշխարհը, հանքային հարստություններն այն օբյեկտիվ նախադրյալներն են, որոնք սուբյեկտի՝ ժողովրդի կամքից ու ցանկություններից անկախ՝ մեծապես ազդում են նրա պատմական ճակատագրի վրա: Բնական պայմանները խորը հետք են թողնում ազգերի ձևավորման, ազգային դիմագծի ու հոգեկան կերտվածքի, ազգային մշակույթի վրա:

Մարդկությունը վայրենությունից՝ հոտային կյանքից, դեպի հասարակական կյանքի, բարբարոսությունից դեպի քաղաքակրթություն անցում է կատարել երկրագնդի այն վայրերում, որտեղ եղել են բնակլիմայական բարենպաստ պայմաններ: Հայկական լեռնաշխարհը երկրագնդի այն կենտրոններից է, ուր սաղմնային վիճակից փուլ առ փուլ զարգացել է հնդեվրոպական քաղաքակրթությունը՝ տարածվելով աշխարհով մեկ: Հայկական լեռնաշխարհը մեկն է այն տարածաշրջաններից, որտեղ ոչ միայն քաղաքակրթությունն է ձևավորվել, այլև խաչաձևվել են մշակույթի արևմտյան և արևելյան տարրերը: Որպես կապող օղակ՝ Հայկական լեռնաշխարհի բնակիչները նպաստել են բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների աշխատանքային ու կենցաղային հմտությունների, գաղափարախոսական ու պաշտամունքային տարրերի փոխանակմանը:

Հայ ժողովուրդը կազմավորվել և իր պատմական ուղին է անցել Առաջավոր Ասիայի հյուսիսային սահմանագլխին՝ Փոքրասիական (Անատոլիական) բարձրավանդակի և Իրանական սարահարթի միջև ընկած Հայկական լեռնաշխարհի տարածքում, որը գրեթե համընկնում է հայ ժողովրդի պատմական հայրենիքի տարածքին և ունի ավելի քան 300 հազար քառակուսի կիլոմետր մակերես:

Լեռնաշխարհի տարածքն իր բարձր դիրքով (ծովի մակերևույթից 1500-1800 մ միջին բարձրություն) գերիշխող է շրջակա բոլոր երկրների նկատմամբ, որի պատճառով հայտնի է եղել «**Լեռնային երկիր**», «**Լեռնային կղզի**», «**հայկական բարձրավանդակ**» անուններով:

Հայկական լեռնաշխարհը բնության հզոր ուժերի՝ տեկտոնական ու հրաբխային գործունեության հետևանքով ձևավորված ֆիզիկաաշխարհագրական չափազանց յուրահատուկ մի մեծ շրջան է՝ իր ուրույն բնությամբ, կլիմայով, բուսական և կենդանական աշխարհով:

Լեռներ և լեռնաշղթաներ: Հայկական լեռնաշխարհը լեռնահամակարգերի, լեռնաշղթաների, լեռնաբազուկների, ճառագայթաձև տարածվող լեռնաճյուղերի, հրաբխային սարահարթերի և դրանց միջև ընկած հարթավայրերի, գոգահովիտների ու ծորահովիտների մի բարդ ու ամբողջական համակարգ է: Ձգվելով տարբեր ուղղություններով՝ լեռնաշղթաները հաճախ հատվում են իրար հետ՝ առաջացնելով բազմաթիվ փակ շրջաններ: Լեռնաշղթաների միջև ձգվում են ձորեր, հովիտներ ու դաշտեր, իսկ գոգահովիտներում բազմաթիվ մեծ ու փոքր լճեր:

Արևմուտքում Հայկական լեռնաշխարհը եզերվում է **Անտիտավրոսի** լեռներով, հյուսիսարևմուտքում նրա բնական սահմանագիծն են կազմում **Պոնտական** լեռները, հյուսիսից և հյուսիս-

արևելքից լեռնաշխարհի սահմանն անցնում է **Փոքր Կովկաս** լեռնահամակարգի մաս կազմող լեռնաշղթաներով, հարավում՝ **Հայկական Տավրոս** լեռնահամակարգի հարավային լեռնաճյուղ հանդիսացող **Մասիոս** լեռներով (այժմ՝ Մարդինի), իսկ արևելքում լեռնաշխարհի սահմանները հասնում են մինչև **Ուրմիա** լճի շրջակայքը: Լեռնահամակարգերի բնական պատնեշով պարփակված այս երկրամասը հնում հայտնի էր նաև **Միջնաշխարհ** անունով:

Հայկական պար լեռնաշղթան, լեռնաշխարհի կենտրոնով անցնելով արևելքից արևմուտք, այն բաժանում է հյուսիսային և հարավային մասերի: **Հայկական պարը լեռնաշխարհի ամենաբարձր լեռնաշղթան է: Հայկական պարի բազմաթիվ հատվածներում կան լեռնացքներ, որոնցով հաղորդակցվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հարավային մասերի բնակչությունը:** Հայկական պարից դեպի հյուսիս են ձգվում **Մեծրաց** լեռները, դեպի հարավ՝ **Վասպուրականի (Ջագրոսի)** լեռները, որոնցից դեպի արևմուտք են տարածվում **Ծաղկանց** լեռները: Մյուս լեռնաշղթաներից հիշատակության արժանի են Փոքր Կովկաս լեռնաշղթայի ճյուղավորված բազմաթիվ լեռնաբազուկները, որոնք գրավում են Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ տարածքի մեծ մասը: Դրանք **Ջավախքի (Խոնավ), Վիրահայոց, Բազումի, Փամբակի, Արեգունու, Սևանի, Գեղամա, Վարդենիսի, Սյունյաց (այժմ՝ Ջանգեզուրի), Մռավի, Արցախի** լեռներն են:

Առաջավոր Ասիայի ամբողջ տարածքի վրա հսկա պահպանների պես իշխում են Հայկական լեռնաշխարհի՝ մինչև 3000 մ և ավելի բարձրություն ունեցող բազմաթիվ լեռնագագաթներն, որոնց մեծ մասը հնուց ի վեր համարվել են սուրբ լեռներ: Դրանցից ամենաբարձրը բիրլիական **Արարատն** է՝ **5165 մ** բարձրությամբ, որը հայկական աղբյուրներում հանդիպում է նաև **Ազատ Մասիս** անունով: Ի դեպ՝ Արարատը հարաբերական բարձրությամբ աշխարհի ամենաբարձր լեռնագագաթն է: Արարատյան դաշտի նկատմամբ կտրուկ վեր խոյացող Մասիս և Սիս (Մեծ և Փոքր Մասիս) զույգ լեռնագագաթները ստեղծում են արտակարգ գեղեցիկ մի բնապատկեր: Մասիսը հայերի համար սուրբ լեռ է, ինքնության և հայրենիքի գաղափարի արտահայտություն, որի մասին ժողովուրդը պահպանել է բազմաթիվ ավանդություններ, ասքեր ու առասպելներ:

Սիփանը կամ **Նեխ-Մասիքը՝ 4434 մ** բարձրությամբ, լեռնաշխարհի երկրորդ բարձր գագաթն է և գտնվում է Վանա լճից հյուսիս: Հայաստանի Հանրապետության ամենաբարձր լեռը քառագագաթ **Արագածն** է (4090 մ)՝ ընդարձակ լեռնազանգվածով, որի մասին ժողովուրդն ասքեր է հորինել և ավանդություններ պահպանել: Լեռան ստորոտում բխում են բազմաթիվ սառնորակ աղբյուրներ, իսկ մարգագետինները ՀՀ անասնապահական կարևոր կենտրոններից են: Արագածի խառնարանի շուրջը ցրված են բազմաթիվ լճակներ, որոնցից ամենամեծը **Քարի** լիճն է՝ 3225 մ բարձրության վրա:

Հայկական լեռնաշխարհում այսօր էլ շարունակվում են լեռնակազմական գործընթացները. տեղի են ունենում երկրաշարժեր, որոնցից հայտնի են հետևյալները՝ **341թ., 735 թ., 893թ., 1319թ., 1679թ., 1926թ., 1931թ., 1937թ., 1988թ.:** 341թ. երկրաշարժն այնքան հզոր է եղել, որ երկու Մասիսների մեջտեղում բլուր է առաջացել: 735 թ. երկրաշարժը կործանեց Վայոց ձորի Մոզն քաղաքը: 893 թ. երկրաշարժի հետևանքով զոհվել է Դվինի բնակչության մեծ մասը, իսկ քաղաքն ու շրջակա գյուղերը վեր են ածվել ավերակների կույտի: 1319 թ. Այրարատ աշխարհում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժի հետևանքով քարուքանդ եղած բազմաթիվ բնակավայրերի թվում էր

«տիեզերահռչակ» Անին: 1679 թվականի երկրաշարժից է կործանվել Գառնիի հեթանոսական տաճարը, որն այժմ վերականգնված է: 1926 թ. Լենինականում (այժմ Գյումրի), 1931 թ. Զանգեզուրում, ինչպես նաև 1937 թ. Երևանում տեղի ունեցած երկրաշարժերը մեծ վնաս պատճառեցին բնակչությանը: Վերջին ավերիչ երկրաշարժը 1988 թվականին տեղի ունեցած Սպիտակի երկրաշարժն էր, որին զոհ գնացին տասնյակ հազարավոր մարդիկ:

Ներկայումս Հայկական լեռնաշխարհը հանգած հրաբուխների տարածաշրջան է: Այստեղ է գտնվում Առաջավոր Ասիայի միակ գործող հրաբուխը՝ **Թոնդրակը** կամ **Թոնդուրեկը**՝ Ծաղկանց լեռներում: Հրաբխային ակտիվություն, սակայն, դրսևորել են շատ լեռներ: Օրինակ՝ Վանա լճի արևմտյան ափին բարձրացող **Նեմրուք** լեռան վերջին ժայթքումը տեղի է ունեցել **1441** թվականին: Այժմ նրա խառնարանում լիճ է գոյացել, որն իր մեծությամբ աշխարհի ամենամեծ խառնարանային լճերից է:

Հայկական լեռնաշխարհի ռելիեֆի ձևավորման վրա լեռնակազմական ու հրաբխային երևույթներից բացի, մեծապես ազդել են նաև սառցադաշտերի տեղաշարժերը, որոնք պարզ երևում են Արագածի ու Մասիսների վրա, Գեղամա լեռների լանջերին: Սառցադաշտային ժամանակաշրջանի վաղ անհետացման հետ է կապվում նաև Հայկական լեռնաշխարհում քաղաքակրթության վաղ ձևավորումը:

Գետեր և լճեր: Հայկական լեռնաշխարհը հարուստ է լճերով և գետերով, որի պատճառով Միջագետքի սեմական բնակչության կողմից ստացել է **Նաիրի**, այսինքն՝ «**գետերի երկիր**» անունը: Հայկական լեռնաշխարհն Առաջավոր Ասիայի գլխավոր գետերի ջրաբաշխն է: Հայկական լեռնաշխարհի գետերը պատկանում են չորս ջրավազանի: Դեպի **Պարսից ծոց** են հոսում **Եփրատն** ու **Տիգրիսը**, դեպի **Կասպից ծով**՝ **Կուրը** և **Արաքսը**, դեպի **Սև ծով**՝ **ճորոխը**, **Գայլը** և **Հալխը**: Ներքին ջրավազանի հայտնի գետերից են՝ **Բերկրին**, **Արձեշը**, **Գավառագետը**, **Մասրիկը**, **Արգիճին**, **Ձկնագետը** և այլն:

Եփրատն Առաջավոր Ասիայի ամենամեծ գետն է (երկարությունը՝ **2700** կմ): Այն գոյանում է երկու բազուկներից՝ **Արևմտյան Եփրատ** և **Արևելյան Եփրատ** կամ **Արածանի**: Տավրոսյան լեռների շրջանում Եփրատը կազմում է մոտ 300 փոքրիկ ջրվեժներ: Դուրս գալով Հայկական լեռնաշխարհից՝ այն անցնում է Միջագետքով, միախառնվում Տիգրիսին և թափվում Պարսից ծոց: **Տիգրիսը** Հայկական լեռնաշխարհի ամենաջրառատ գետն է (երկարությունը՝ **1950** կմ): Այն ևս կազմված է երկու ճյուղից՝ **Արևմտյան** և **Արևելյան**: **Կուրն** Անդրկովկասի ամենախոշոր գետն է՝ երկարությունը **1113** կմ: Դարեր շարունակ Եփրատը եղել է Մեծ Հայքի թագավորության արևմտյան, Տիգրիսը՝ հարավարևմտյան, իսկ Կուրը՝ հյուսիսարևելյան սահմանագիծը:

Արաքսը (հնում՝ **Երասխ**) ունի **914** կմ երկարություն և գրեթե ամբողջովին հոսում է պատմական Հայաստանի տարածքով: Արաքսի նշանավոր վտակներից են **Ախուրյանը**, **Քասախը**, **Հրազդանը** (հնում՝ նաև **Մեծամորը**, որի մեջ թափվում էին **Քասախ**, **Հրազդան** և **Ազատ** գետերը), **Արփան**, **Նախճավանը**, **Որոտանը**: Նեղոսից հետո աշխարհի ամենից շատ տիղմ պարունակող գետն է համարվում, որի շնորհիվ նրա ափերին փռված հարթավայրերը հին Հայաստանի ամենաբերրի երկրագործական կենտրոններն էին: Ժողովուրդը նրան տվել է «**Մայր Արաքս**» անունը: Արաքսը հաճախ է փոխել իր հունը՝ հատկապես Արարատյան դաշտում, ուր մինչև այսօր էլ պարզ երևում է հին հուններից մեկը, որին տեղացիներն անվանում են «**Չոր Արաքս**»: Հռոմեացի բանաստեղծ

Վիրգիլիոսը հայ ժողովրդի ազատասեր ոգին այլաբանորեն համեմատել է Արաքսի հորդաբուխ հոսանքի հետ՝ բնութագրելով գետը «**Կամուրջ չհանդուրժող Արաքս**» արտահայտությամբ:

Հայկական լեռնաշխարհի գետերի ակունքները ևս համարվել են սուրբ վայրեր. այնտեղ կանգնեցվել են ջրի պաշտամունքը խորհրդանշող ցուլ և խոյ պատկերող ձկնակերպ քարե վիշապներ:

Հայկական լեռնաշխարհի լեռնային գոգավորություններից շատերի հատակը լցված է ջրով, որոնք բարձրադիր անուշահամ ալպիական բնական ջրամբարներ են: Սակայն երկու խոշոր ջրամբարների՝ Վանա և Կապուտան լճերի ջուրն աղի է:

Ուրմիան (հնում՝ **Կապուտան ծով**) Հայկական լեռնաշխարհի խոշոր, սակայն ամենածանձաղ լիճն է: Խորությունը 4-5 մ է, մակերեսը տատանվում է՝ 3900-5900 կմ²: Ուրմիան մոտ չորս անգամ մեծ է Սևանա լճից: Ջուրն արտակարգ աղի է. վեց անգամ ավելի, քան օվկիանոսայինը, զուրկ է կենդանական և բուսական աշխարհից:

Իր մեծությամբ երկրորդը **Վանա** լիճն է (հնում՝ **Տոսպա լիճ, Բզնունյաց ծով**): Երկուսուկես անգամ մեծ է Սևանա լճից. մակերեսը 3765 կմ² է: Ունի 451 մետր առավելագույն խորություն և ծովի մակերևույթից 1720 մետր բարձրություն: Վանա լճի ջուրը մեծ քանակությամբ բորակ է պարունակում, որն ունի բուժիչ և վլացող հատկություն: Վանա լճի մակարդակը վերջին 20 տարիների ընթացքում անընդհատ բարձրանում է, մակերեսն՝ ընդարձակվում՝ ջրով ծածկելով ափամերձ տարածքներն ու բնակավայրերը: Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ում նշված Վանա լճի 7 կղզիներից մնացել են չորսը՝ **Աղթամարը, Առտերը, Լիմը** և **Կտուցը**, որոնցից նշանավորն Աղթամարն է՝ իր հայկական միջնադարյան ճարտարապետական հուշարձաններով: Վանա լիճը հայտնի է նաև **տառեխ** ձկնատեսակով: Հին և միջին դարերում ապխտած կամ աղ դրած վիճակում տառեխն արտահանվել է օտար երկրներ: Վանա և Ուրմիա լճերը փակ լճեր են, ջրերը ելք չունեն, նրանցից սկիզբ չի առնում ոչ մի գետ:

Սևանա լիճը (**Գեղարքունյաց ծով, Գեղամա ծով**) աշխարհի ամենամեծ ու ամենաբարձր լեռնային քաղցրահամ լճերից մեկն է: Մինչև ջրի մակարդակի իջեցումը ծովի մակարդակից բարձր էր 1916 մ, մակերեսը 1416 կմ² էր, իսկ առավելագույն խորությունը՝ 99 մ: Ներկայումս լճի մակարդակն իջել է 18 մետրով, իսկ մակերեսը կրճատվել է 200 կմ²-ով: Լճի ջրերի իջնելու հետևանքով Սևանա կղզին վերածվել է թերակղզու: Սևանա լիճն իր մեջ ընդունում է երեսունից ավելի գետերի ու գետակների ջրեր, իսկ լճից դուրս է գալիս միայն **Հրազդան** գետը: Սևանա լիճը և նրա ափամերձ տարածքները հարուստ են կենդանական աշխարհով: Լճում աճում են բնիկ և բերովի բազմաթիվ ձկնատեսակներ՝ **իշխան, բախտակ, սիգ, կողակ**: Ափամերձ ժայռերում բնադրում են բազմաթիվ ջրլող թռչուններ: Հայաստանի Հանրապետության համար տնտեսական առումով Սևանա լիճն ունի ռազմավարական չափազանց մեծ նշանակություն՝ և՛ որպես խմելու ջրի հուսալի պաշար, և՛ որպես ոռոգման աղբյուր: Էներգետիկ ճգնաժամերի պայմաններում կարևորվում է նաև լճի հիդրոէներգետիկ նշանակությունը: Բազմաթիվ փոքր լճերից են **Հյուսիսական ծովակը** (ներկայումս՝ **Չըլդըր**), **Արձակը** կամ **Արձիշակը, Թորթունը, Փարվանան, Արփին, Այդըր**, որոնցից մի քանիսը նշված մեծ լճերի ուղղակի մանրակերտ կրկնությունն են: Այսպես, օրինակ՝ Հայկական պարի լանջերին գտնվող **Գայլատու** լիճը Սևանա լճի փոքրիկ կրկնօրինակն է:

Ղաշտեր և հարթավայրեր: Հայկական լեռնաշխարհը հարուստ է հացաբույսերի, թելատու և յուղատու բույսերի, այգեգործության և բանջարաբուծության համար բարենպաստ պայմաններ ունեցող բազմաթիվ հարթավայրերով ու դաշտերով: Նշանավոր դաշտերն են՝ **Արարատյան, Ալաշկերտի, Բասենի, Մանազկերտի, Մշո, Շիրակի** և այլն:

Արարատյան դաշտը Հայկական լեռնաշխարհի ամենամեծ, առավել արգավանդ և իր բերրիությամբ հայտնի դաշտն է: Այն ընկած է Արաքս գետի միջին հոսանքում՝ պատմական Հայաստանի կենտրոնական ամենամեծ աշխարհի սրտում՝ Այրարատում: Լայն առունով Արարատյան դաշտ է կոչվել Արաքսի երկու ափերին տարածվող այն հարթությունը, որը փռված է Ախուրյան-Արաքս գետերի միախառնումից մինչև Մեղրու կիրճը՝ մոտ 200 կմ երկարությամբ: Կլիմայական տեսակետից Արարատյան դաշտը կվերածվեր կիսաանապատի, եթե չլիներ ոռոգման հսկայական ցանցը՝ դեռևս հնագույն շրջանում Արաքսից ու նրա վտակներից գոյացած ջրանցքներն ու առուները: Այստեղ են գտնվել հին Հայաստանի տնտեսական ու մշակութային կենտրոններից շատերը: Հայոց մայրաքաղաքների մեծ մասը՝ **Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին, Երևան**, կառուցվել են Արարատյան դաշտում:

Տիգրիսի և Արածանիի (Արևելյան Եփրատ) հովիտները ևս հնագույն ժամանակներից եղել են հողագործության կենտրոններ: Դրանց ափերին փռված **Բագրևանդի (Ալաշկերտի), Մանազկերտի, Տարոնի (Մշո), Խարբերդի** դաշտերը Արևմտյան Հայաստանի համար կենսական նշանակություն են ունեցել: Հայոց պատմության մեջ կարևոր դեր են խաղացել նաև Արաքսի և նրա վտակների ափերին փռված **Բասենի և Նախիջևանի** դաշտերը, **Շիրակի, Վանանդի (Կարսի)** սարահարթերը և այլն:

1.2. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ, ԿԼԻՄԱ, ԲՈՒՄԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄ

Օգտակար հանածոներ: Հնագույն շրջանից մինչև այսօր Հայկական լեռնաշխարհի հանքային հարստություններից տնտեսական մեծ նշանակություն ունեն **աղը, գանազան մետաղները՝ պղինձ, երկաթ, կապար, սնդիկ, ոսկի, արծաթ, շինանյութերը՝ ավազ, կավ, հատկապես շինաքարի բազմաթիվ տեսակները, հանքային բուժիչ ջրերը:**

Հայկական լեռնաշխարհի **կերակրի աղի** երեք հռչակավոր հանքերը՝ **Կողբը, Նախիջևանը և Կաղզվանը**, շահագործվել են դեռևս քարե դարաշրջանից: Աղի մեծ պաշարներ են հայտնաբերվել Երևանի տարածքում (**Ավան**):

Հայկական լեռնաշխարհը եղել է մետաղի արդյունահանման ու մշակման սկզբնական օրրաններից մեկը, որի ապացույցը միայն Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված 600-ից ավելի հնագույն հանքավայրերն ու մետաղագործության տեղավայրերն են՝ հին ձուլարանները: Այդ շարքում աչքի է ընկնում **Մեծամորը** (Ք.ա. III հազարամյակ):

Արդեն իսկ պղնձե դարում (էնեոլիթ) Հայկական լեռնաշխարհը հայտնի է եղել **պղնձի** ու նրան ուղեկցող մետաղների՝ **կապարի, ցինկի, ոսկու**, հանքերով: Անանիա Շիրակացու «Աշխարհացույց»-ի մեջ հիշատակվում է, որ **երկաթով** հարուստ են Աղձնիք և Տուրուբերան նահանգների «Երկաթահատ» կոչվող հանքերը: Աղձնիքում ու Տուրուբերանում հիշատակվում է նաև **նավթի** առկայությունը: Նավթի պաշարներ կան նաև Կարինում, իսկ **քարածուխ**՝ Արևմտյան Տիգրիսի և Եփրատի ավազաններում:

Հայաստանի Հանրապետությունում այսօր էլ շարունակվում է **պղնձի, մոլիբդենի, ոսկու** արդյունահանումը: Հանրապետության համար տնտեսական մեծ նշանակություն ունեցող հանքային պաշարներից են նաև **աղը, պեռլիտները, տուֆը, մարմարը, բազալտը** և այլն: Հայաստանի Հանրապետությունում արդյունահանվող վարդագույն տուֆը, տարբեր տեսակի ու գույնի մարմարներն առաքվում են աշխարհի բազմաթիվ երկրներ:

Հանքային բուժիչ ջրերի (ջերմուկներ, թթու ջրեր) հարուստ պաշարների արդյունահանումը Հայաստանի համար ունի տնտեսական նշանակություն. դրանց հիմքի վրա ստեղծվել են առողջապահական բուժիչ կենտրոններ **Արզնիում և Ջերմուկում**: Հայկական լեռնաշխարհում տաք աղբյուրներից հայտնի են նաև Դիաղինի շրջանի (հնում՝ **Վարչակի ջերմուկներ**) ջրառատ աղբյուրները: Դժբախտաբար, Հայաստանի Հանրապետությունը չունի էներգետիկ հանքային մեծ պաշարներ՝ նավթ, գազ, քարածուխ:

Կլիմա: Հայկական լեռնաշխարհի աշխարհագրական դիրքը, բարձր լեռնային բնույթը, օվկիանոսներից ունեցած մեծ հեռավորությունը, շրջապատում չոր տափաստանների առկայությունը, երկրի բարդ ռելիեֆը, ինչպես նաև ջրային և անտառային տարածությունների սակավությունն (անտառներ կան միայն Սյունիքում, Գուգարքում, Արցախում, Սարիղամիշի շրջանում, Տաուշում) առանձնահատուկ կլիմայական պայմաններ են ձևավորում: Արցախը, որը հայտնի է իր անտառներով, (Եղիշեն դրանք անվանել է «թանձրախիտ մայրիք»), Հայկական լեռնաշխարհի համեմատաբար մեղմ կլիմա ունեցող երկրամասերից է:

Ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության փոփոխության՝ լեռնային երկրներում յուրաքանչյուր 200 մ բարձրանալիս տարեկան միջին ջերմաստիճանը իջնում է ցելսիուսի մեկ

սանդղակով: **Հայկական լեռնաշխարհում առկա են կիսաանապատայինից մինչև ալպիական , մերձարևադարձայինից մինչև լեռնային տունդրայի կլիմայական ու բուսական գոտիները. ցածրադիր՝ 350-1000մ ծովի մակերևույթից բարձր, նախալեռնային՝ 1000-1500մ և լեռնային՝ 1500-2000մ: 2000մ բարձրությունից վեր ալպյան գոտին է՝ Հայկական լեռնաշխարհի հռչակավոր արոտավայրերի շրջանը՝ իր ճոխ բուսականությամբ, որը հաճախ ծածկված է բազմերանգ ծաղիկներով և հեռվից գորգի է նման: 1 մ² տարածքի վրա բույսերի բազմազանությամբ Հայկական լեռնաշխարհը աշխարհում գրավում է առաջին տեղը:**

Հայկական լեռնաշխարհի կլիմայի վրա վճռական ազդեցություն են թողնում նաև հյուսիսից ու հարավից մուտք գործող օդային զանգվածները: Լեռների, դաշտերի հաջորդականությունն ու մերձավորությունը ևս որոշիչ են . Հայաստանի բոլոր դաշտերում կեսօրից հետո փչում է լեռնահովտային քամի: Գեղամա և Ծաղկունյաց լեռների արանքով դեպի Արարատյան դաշտ, Երևան, Էջմիածին ամռանը փչող քամուն ժողովուրդն անվանում է **«Լուսավորչի քամի»**: Նույնպիսի լեռնահովտային քամիներ են առաջանում Արագածից դեպի Ախուրյանի ափերը, Հայկական պարից դեպի Ալաշկերտի դաշտը և այլն:

Չնայած Սև և Կասպից ծովերի որոշ բարենպաստ ազդեցությանը՝ լեռնաշխարհի կլիման չոր և ցամաքային է՝ ջերմաստիճանի կտրուկ տատանումներով ոչ միայն տարվա եղանակներին, այլև գիշերվա ու ցերեկվա ընթացքում: Ձմռանտ, խստաշունչ ու դաժան ձմեռները սովորական երևույթ են Հայկական լեռնաշխարհի համար: Ինչպես վկայում է հույն աշխարհագրագետ **Ստրաբոնը** (Ք. ա. I դար - Ք. հ. I դար), հյուսիսային Հայաստանի լեռներում ձյունն այնքան առատ է եղել և բուքն այնքան սաստիկ, որ ճանապարհորդները թաղվել են ձյան տակ:

Հայկական լեռնաշխարհի ցրտի գոտին Կարսից Էրզրում ընկած տարածքն է, որտեղ գրանցված բացարձակ նվազագույն ջերմաստիճանը - **41-43°** է: Ամենաուժեղ շոգը լինում է Արևմտյան Տիգրիսի հովտում, Արածանիի ափամերձ շրջաններում և Արարատյան դաշտում՝ **41-43°** տաքություն: Ձմռան ու ամռան միջև ամենաուժեղ ջերմաստիճանային տատանումները լինում են Արաքսի հովտում, որը հասնում է մոտ **70°**-ի:

Հայկական լեռնաշխարհում մթնոլորտային տեղումները խիստ անհամաչափ են տեղաբաշխված՝ հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջաններում՝ տարեկան **600-1000 մմ**, հարավային և հարավարևելյան շրջաններում՝ տարեկան **250-300 մմ**:

Հնուց ի վեր բնության հետ կռիվ տալով՝ հայ աշխատավոր ժողովուրդը փորձել է մեղմացնել իր աշխարհի դաժան կլիման՝ փորելով հարյուրավոր ջրանցքներ ու առուներ, տնկելով պուրակ-անտառներ: Մինչ այսօր գործում է **Մենուա** հզոր արքայի (Ք. ա. 810-786 թթ.) կողմից վանում կառուցած **72 կմ** երկարությամբ ջրանցքը, որը ժողովրդի կողմից ստացել է **«Շամիրամի ջուր»** անվանումը: Բազմաթիվ ջրանցքներ ու առուներ են անցկացվել Արարատյան դաշտում: Հին Հայաստանում տնկված նշանավոր պուրակ-անտառներից են եղել **«Սոսյաց անտառը»** Արմավիր մայրաքաղաքի մոտ (ի դեպ՝ սոսիների տերևների սոսափյունով քրմերը գուշակություններ են արել), **«Ծննդոց անտառը»** (Ք. ա. III դար) Բագարանի շրջանում և վերջապես **Խոսրով Կոտակի** օրոք (330-338 թթ.) Արտաշատ, Դվին-Գառնի հսկայական տարածքում տնկված անտառը, որի մեծ մասը մինչև այսօր գոյություն ունի **«Խոսրովի անտառ-արգելոցի»** ձևով: Հնում վերջինիս առաջին մասը կոչվում էր **«Տաճար մայրի»**, իսկ երկրորդը՝ **«Խոսրովակերտ»**: Թագավորական որսի համար այստեղ պահվում էին զանազան տեսակի կենդանիներ:

Քուսական և կենդանական աշխարհ: Կլիմայական բազմազանությամբ է պայմանավորված Հայկական լեռնաշխարհի բուսական ու կենդանական աշխարհի բազմազանությունը: Ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության՝ **ուղղաձիգ գոտիականության**, Հայկական լեռնաշխարհի բուսական ծածկույթն ունի հետևալ պատկերը. ցածրադիր մասերում՝ ծովի մակերևույթից 500-1100մ բարձրության վրա, գերակշռող վայրի բուսատեսակներից են **օշինդրը, ուղտափուշն** ու **հավամրգի** թփուտները: Լեռնային կիսաանապատների տարածքում արհեստական ոռոգման դեպքում փարթամորեն աճում են մերձարևադարձային բուսատեսակներից **բամբակը, բրինձը, ծխախոտը, խորդենին, ձմերուկը, սեխը**, կորիզավոր պտուղներից՝ **ծիրանը, դեղձը, նուռը, խաղողը**: Ոչ պտղատու ծառատեսակներից տարածվածներն են **սոսին, բարդին, ուռին**:

Նախալեռնային գոտում՝ ծովի մակերևույթից 1100-1500մ բարձրությունում, որը Հայկական լեռնաշխարհի տարածքի մեծ մասն է կազմում, ամենից տարածված բուսատեսակներից են **վայրի հացաբույսերը և կերախոտերը**: Պատահական չէ, որ Հայկական լեռնաշխարհը համարվում է ցորենի նախահայրենիքը: Այստեղ աճում է վայրի ցորենի **230 տեսակ**՝ աշխարհում հայտնի վայրի ցորենի տարատեսակների 1/3-ից ավելին: Գիտնականների կարծիքով «**Ուրարտու**» անունը ստացած վայրի ցորենից են առաջացել ցորենի մշակովի տեսակները: Այս գոտու բնորոշ մշակովի կուլտուրաներից են նաև **շաքարի ճակնդեղը, հացաբույսերից՝ ցորենը, գարին, հաճարը, կորեկը**, յուղատու բույսերից՝ **կտավատը**:

Մինչև 1300մ բարձրության վրա ևս տարածված **խաղողի** և կորիզավոր պտուղների մշակումը, իսկ **խնձորենին, սալորենին, բալենին, կեռասենին** հաջողությամբ պտղաբերում են մինչև 1500մ բարձրության վրա:

Լեռնային գոտին ծովի մակերևույթից 1500-2500 մ բարձր, ծածկված է ենթալպյան և ալպյան բուսականությամբ. այստեղ ծառեր չեն աճում: Մշակովի կուլտուրաներից են **գարին** ու **տարեկանը**:

Չնայած Հայկական լեռնաշխարհն անտառներով հարուստ չէ, սակայն այստեղ հանդիպող ծառատեսակներն աչքի են ընկնում իրենց բազմազանությամբ: Այսպես, օրինակ, միայն Հայաստանի Հանրապետության անտառներում հանդիպում են 180 տեսակի ծառեր ու թփեր: Առանձնապես տարածված են լայնատերև ծառատեսակները **կաղնի, բոխի, հացենի, հաճարենի, թխկի, կեչի, լորենի**: Հայկական լեռնաշխարհի անտառները, մասնավորապես **Լոռու, Ջանգեզուրի և Արցախի**, հարուստ են վայրի պտղատու ծառերով ու հատապտղի թփերով՝ **խնձոր, տանձ, սալոր, կաղին, ընկույզ, հոն, մոշ** և այլն:

Հայկական լեռնաշխարհի դեղատու, եթերատու և ներկատու բույսերից շատերը (**անանուխ, ուրց, լոշտակ**) հնուց ի վեր եղել են լեռնաշխարհից արտահանվող ապրանքների թվում:

Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհը ևս աչքի է ընկնում վայրի ու ընտանի կենդանիների, թռչունների բազմազանությամբ: Վայրի կենդանիներից տարածված են **գայլը, աղվեսը, նապաստակը, բորենին, արջը, վարազը**, հազվադեպ հանդիպում են անգամ **հովազ, լուսան և վայրի կատու**: Մինչև այսօր էլ Հայկական լեռնաշխարհում հանդիպում են **քարայծ և վայրի ոչխար (մուֆլոն)**, որոնց ընտելացմամբ դեռևս քարե դարում հիմք դրվեց անասնապահությանը: Վայրի թռչնատեսակներից տարածված են **կաքավը, բադը, փասիանը, ճայը, արոսը, լորը, արագիլը, վայրի աղավնիները** և այլն:

Հույն պատմիչ, գորավար **Քսենոփոնը** (Ք.ա. V դարի վերջ) վկայում է, որ Հայկական լեռնաշխարհում ինքը **ջայլամներ** է տեսել: Մեր պատմիչների մոտ ևս բազմաթիվ վկայություններ

կան այն մասին, որ հնում Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհը շատ ավելի հարուստ է եղել՝ **առյուծ, վայրի ձի, վայրի էշ** և այլն: Ընտանի կենդանիներից տարածված են **ոչխարը, կովը, գոմեշը, ձին, էշը**:

Միջին դարերում Արարատյան դաշտի աղուտներում բազմաճյուղ էր որդի մի փոքրիկ տեսակ, որից հայերը պատրաստում էին լավագույն որակի կարմիր ներկ՝ **«որդան կարմիրը»**, որով ներկված գորգերը հռչակված էին ամբողջ աշխարհով:

Հայկական լեռնաշխարհը համարվում է ցորենի, ծիրանի, դեղձի, խաղողի մշակության հայրենիքը, այստեղ են ընտելացվել վայրի կենդանիներից այծը, ոչխարը, ձին, խոզը:

Վարչական բաժանում: Հայկական լեռնաշխարհն աշխարհի հնագույն քաղաքական կառույցների՝ **պոլիսների (քաղաք-պետություն)** սաղմնավորման տարածքներից է: Մեզ հայտնի հնագույն քաղաք-պետությունն **Արատտան** է (Ք.ա. XXVIII-XXVII դդ.): Ավելի ուշ շրջանի (Ք.ա. IV դար մինչև II դարի սկիզբը) հայկական պետություններն էին **Մեծ Հայքը, Փոքր Հայքը, Ծոփքը և Կոմմագենեն:** Մեծ Հայքի տարածքը մոտ **300 հազ. կմ²** էր, բաժանված էր վարչական մեծ և փոքր միավորների, ուներ **15 նահանգ** կամ **աշխարհ՝ Գուգարք, Տայք, Բարձր Հայք, Ծոփք, Աղձնիք, Տուրուբերան (Տարոն), Կորձայք (Կորդուք), Մոկք, Վասպուրական, Պարսկահայք, Փայտակարան, Ուտիք, Արցախ, Սյունիք և Այրարատ:** Դրանք բոլորը միասին ունեին մոտ **200 գավառ:** Ամենից բազմագավառ աշխարհը **Վասպուրականն** էր՝ 35-37 գավառ: Ամենանշանավոր աշխարհն **Այրարատն** էր՝ 16-21 գավառ:

Մեր հին մատենագրական երկերում, միջնադարյան ձեռագրերում ու նոր պատմագիտական աշխատություններում՝ սկսած V դարի պատմիչներից մինչև մեր օրերի գիտնական պատմաբանները, հաճախ են անդրադարձել ու տվել Մեծ Հայքի աշխարհների հավաստի նկարագիրը: Այսպես, V դարի պատմիչ **Ղազար Փարպեցին** տվել է Այրարատ աշխարհի, **Հովհան Մամիկոնյանը** (VIII դար)՝ Տարոնի, **Թովմա Արծրունին** (IX-X դարեր)՝ Վասպուրականի, **Սովսես Կաղանկատվացին** (VII դար) և **Կիրակոս Գանձակեցին** (XIII դար)՝ Ուտիքի և Արցախի, **Ստեփանոս Օրբելյանը** (XIII-XIV դարեր)՝ Սյունիքի բավական հետաքրքիր ու արժեքավոր նկարագրությունը:

Արժանահիշատակ է **Ղևոնդ Ալիշանի՝** որպես Հայաստան աշխարհի հնուտ տեղագիր-պատմաբանի և աշխարհագրագետի հայրենանվեր գործը, որը, հայրենիքում երբևէ չլինելով հանդերձ, կարողացել է տալ Հայաստանի մի շարք աշխարհների ու բազմաթիվ գավառների, ինչպես նաև Կիլիկիայի հայկական պետության խիստ հավաստի պատմագիտական նկարագրությունը: **«Այրարատ», «Շիրակ», «Միսուան», «Միսական»** և բազմաթիվ այլ աշխատություններում Ղևոնդ Ալիշանը մասնագիտական մանրակրկիտությամբ տեղագրել ու նկարագրել է Հայաստանի պատմական նահանգների լեռները, գետերը, լճերը, հովիտներն ու դաշտերը, ձորերն ու կիրճերը, տեղեկություններ է հաղորդել հայկական բնաշխարհի ավելի քան 3400 բույսերի ու ծաղկատեսակների մասին, արժեքավոր տեղեկություններ է հաղորդել Հայկական լեռնաշխարհում սփռված մեծ ու փոքր պատմական հուշարձանների մասին:

Ղազար Փարպեցին Այրարատ նահանգն իրավամբ համարում է «ամեն ինչ բուսացնող, ամեն ինչ տվող, ամեն ինչով լի, մարդկային կյանքին, վայելքին ու երջանկությանն անհրաժեշտ օգտի ու դեղի համար ամեն ինչ ունեցող՝ դաշտեր լայնատարած ու որսալից, շուրջբոլորը լեռներ գեղեցկանիստ ու փարթամ արոտներով ծածկված, կճղակաբաշխ ու որոճող անասուններով և նրանց հետ էլի ուրիշ բազմատեսակ կենդանիներով լեցուն»:

Եփրատ գետից արևմուտք տարածվող **Փոքր Հայքի** տարածքը մոտ **70 հազ. կմ²** էր:

Հայաստանի Հանրապետության տարածքը (մոտ **30 հազ. կմ²**) կազմում է հայոց պետությունների տարածքի (մոտ 400 հազար կմ²) **1/13** մասը և իր մեջ ներառում է տարածքներ Մեծ Հայքի **Այրարատ, Սյունիք, Գուգարք, Ուտիք** աշխարհներից: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը՝ մոտ **12 հազ. կմ²**, հիմնականում ընդգրկում է տարածքներ Մեծ Հայքի **Արցախ, Ուտիք** և **Սյունիք** աշխարհներից:

Ահա այսպիսին է Հայկական լեռնաշխարհ-բնաշխարհը, հայ ժողովրդի պատմական հայրենիքը, հնդեվրոպական բոլոր ժողովուրդների նախահայրենիքը:

1.3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ. ԵԿՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարդկության պատմության սկզբից մինչև մեր օրերը երկրագնդի բնակչությունն անընդհատ փոփոխվում է՝ ենթարկվելով քանակական և որակական տեղաշարժերի: Այսօր երկրագունդը բնակեցնում են բազմաթիվ ազգեր, ժողովուրդներ, ազգություններ՝ ավելի քան 6 միլիարդ մարդ: Նրանք գտնվում են սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային զարգացման տարբեր մակարդակներում: Մի մասը (օրինակ՝ հայերը, հույները, հրեաները) ծագել ու կազմավորվել է հազարավոր տարիներ առաջ, մի մասն էլ (օրինակ՝ իսպանացիները, ռուսները, բուլղարները)՝ համեմատաբար ավելի ուշ շրջանում: Կան նաև բոլորովին երիտասարդ ազգեր, ինչպես, օրինակ՝ բրազիլացիները, մեքսիկացիները, ավտրալացիները: Ավելին, ազգերի կազմավորման գործընթացն այսօր էլ շարունակվում է:

Ազգը ծագումնաբանական հիմքով տարածքի, լեզվի, սովորույթների, հոգեբանության, մշակույթի միասնությամբ մարդկանց կայուն ամբողջություն է, որը բնորոշվում է նաև սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական կյանքի ընդհանրությամբ: Մարդկանց մյուս կայուն ամբողջություններից այն տարբերվում է ծագման ինքնագիտակցությամբ, որը հաստատվում է **ինքնանվանմամբ (էթնոնիմ):**

Հայերն աշխարհի հնագույն ժողովուրդներից են, և նրանց ծագումն ու կազմավորումը հազարամյակների պատմություն ունի: Երկար ժամանակ հայ ժողովրդի ու հայոց լեզվի առաջացման հարցը, որը սերտորեն առնչվում էր հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդների մայր երկրի՝ նախահայրենիքի հայտնաբերման հետ, պատմաբանների, հայագետների, լեզվաբանների համար մնում էր չպարզված՝ ծնելով տարակարծություններ: Առաջ քաշված տեսությունները բազմաթիվ են, հաճախ՝ իրար հակասող: Հայ ժողովրդի ծագման վերաբերյալ տեսություններից կարելի է առանձնացնել երկուսը՝ «եկվորության» և «բնիկության» տեսությունները: «Եկվորության» տեսության կողմնակիցները հենվում են պատմական այն փաստերի վրա, որոնցով բացահայտվում են բազմաթիվ ցեղերի տեղաշարժերը, երբ դրանք ժողովրդագրական պայթյունի հետևանքով գերբնակեցված տարածքներից տեղափոխվել են նոր տարածքներ և, հաճախ ունենալով քաղաքակրթության ավելի բարձր մակարդակ, ձուլվել են տեղի բնակչությանը: Եզիպտական սկզբնաղբյուրներից հայտնի է, որ **«ծովի ժողովուրդները»** **Ք. ա. XIII-XII դդ.** Բալկանյան թերակղզուց թափանցել են Փոքր Ասիա: **Ք. հ. V դարում** Հռոմեական կայսրության անկման շրջանում, արևելքից բազմաթիվ ցեղեր՝ **օստգոթեր, վեստգոթեր, վանդալներ, հոներ, Վոլգայի բուլղարներ, ներթափանցեցին վերջինիս տարածք:** Նրանց հարվածներից կործանվեց Հռոմեական կայսրությունը: Եկվորները, յուրացնելով այս տարածքները, գտան նոր հայրենիք և, խառնվելով տեղի ժողովուրդների հետ, ձևավորեցին նոր ազգեր, ստեղծեցին նոր պետություններ:

«Եկվորության» տեսությունը հիմնավորող փաստարկ են համարվում մեզ հասած հին ավանդազրույցները:

1. ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական ավանդություն: Հայ ժողովրդի ծագման մասին ամենահին առասպելախառն ավանդությունը «**Հայկի ու Բելի առասպել**» անունով հայտնի հայկական ժողովրդական ավանդությունն է: Ավանդության բովանդակությունը հետևյալն է:

Առաջին աստվածներից առաջացած հաղթանդամ ու վիթխարի հսկաներից մեկը **Թորգոմի որդի Հապեթոսյան Հայկն էր:** Հայկը, ընդդիմանում է բոլոր նրանց, ովքեր ձգտում էին իշխանություն ձեռք բերել հսկաների ու դյուցազունների վրա: **Բաբելոնում** աշտարակաշինության անհաջող փորձից հետո հսկաներից մեկը՝ **Տիտանյան Բելը**, բռնանում է բոլորի վրա և իրեն արքա է հայտարարում: Հայկը չի կամենում հնազանդվել Բելին և իր որդիների, դուստրերի ու թոռների հետ, թվով մոտ երեք հարյուր հոգի, Բաբելոնից հեռանում, գնում է **Արարադի երկիրը** և բնակվում է մի լեռնադաշտում, ու այդ դաշտը կոչվում է Հարք:

Լսելով Հայկի անհնազանդության մասին՝ Բելը պահանջում է նրանից հետ վերադառնալ և հնազանդվել իրեն: Սակայն Հայկը մերժում է կատարել այդ պահանջը: Ջայրացած Բելը հետևակ զորքերի բազմությամբ գալիս հասնում է Արարադի երկիրը: Հայկը, Բելի հարձակման լուրն առնելով, անմիջապես հավաքում է իր քաջ և աղեղնավոր որդիներին, թոռներին ու շարժվում Բելի դեմ: **Ադի ջուր և մանր ձկներ ունեցող ծովակի (Վանա լճի)** մոտ՝ բարձր լեռների միջև գտնվող մի դաշտածև տեղում, Հայկը և նրա ուղեկիցները հանդիպում են Բելի զորքին: Երկու կողմի հսկաները իրար են զարնվում: Մարտի ընթացքում Հայկը քաշում է իր լայնալիճ աղեղը և նետահարում Բելին: Հպարտ Բելը տապալվում է, իսկ նրա զորքը փախուստի է դիմում:

Հայկը հաղթանակի առթիվ ճակատամարտի տեղում դաստակերտ է շինում և այն անվանում **Հայք**, նույն պատճառով գավառն էլ անվանվում է **Հայոց ձոր**, իսկ մեր աշխարհն էլ մեր նախահոր՝ Հայկի անունով կոչվում է **Հայք**:

Ավանդության մեջ այնուհետև պատմվում է, թե ինչպես Հայկի որդիներն ու թոռները շարժվելով դեպի հյուսիս, բնակություն են հաստատում Արարատյան դաշտում և Հյուսիսային Հայաստանի տարբեր մասերում, որտեղ և նրանց անունով են կոչվում առանձին գավառների ու բնակավայրերի անունները: Այսպես, օրինակ՝ **Արամանյակի անունով է կոչվում Արագած լեռը և Արագածոտն գավառը, Արամայիսի անունով՝ Արմավիրը, Շարայի անունով՝ Շիրակը, Գեղամի անունով՝ Գեղարքունիքը, Սիսակի անունով՝ Սիսականը, Արայի անունով՝ Այրարատը** և այլն:

Ըստ ավանդության՝ Հայկի սերնդից էր նաև Արամը, որը բազմաթիվ քաջագործություններ է կատարում և Հայոց աշխարհի սահմանները ընդարձակում: Այդ պատճառով էլ օտարները Արամի անունով հայերին սկսում են անվանել **արմեն**, իսկ նրանց երկիրը՝ **Արմենիա**:

Այս ավանդագրույցը մեզ հայտնի է **Մովսես Խորենացու** և **Սեբեոսի** պատմություններից: Թվում է, թե հենց հայ պատմիչներն իրենք են վկայում հայերի՝ Հայկական լեռնաշխարհի Միջագետքից եկած լինելու մասին: Իսկապես էլ, խոսքը հայկական ցեղերի վաղ տեղաշարժերի մասին է: Սակայն պետք է հաշվի առնել մի քանի հանգամանք: Նախ, քրիստոնեության հաղթարշավի ժամանակաշրջանում հեղինակը չէր կարող չընդունել Աստվածաշնչի՝ ազգերի ծագման բաբելոնյան աշտարակաշինության հետ կապված գաղափարը: Բայց «**Հայոց Պատմության**» առաջին գրքում՝ «Հայոց մեծերի ծննդաբանություն»-ում, **Խորենացին** խոստովանում է, որ ոչ բոլոր պատմագիրներն են ընդունում ազգերի առաջացման Աստվածաշնչի տարբերակը:

Խորենացին նման պատմագիրներից նշում է **Բերոսոսի, Բազմավեայի, Աբյուդոսի** անունները, որոնց գործերից, ամենայն հավանականությամբ, ինքն օգտվել է: Երկրորդ՝ Խորենացին օգտվել է հնագույն այնպիսի աղբյուրներից, որոնք մեզ չեն հասել, ինչպես, օրինակ՝ **Մար Աբաս Կատինայի**՝ Չայաստանի և հայ ժողովրդի պատմությանը նվիրված գործը: Այն գրելիս վերջինս օգտվել է հայ արքունական դիվանի վկայագրերից: Չունենալով հայ ժողովրդի ծագումը լուսաբանող Չայկի և Բելի առասպելի նախնական շարադրանքը՝ դժվար է ճշգրիտ ասել, թե մեր նախնիներն ինչ պատկերացում են ունեցել իրենց ծագման մասին:

Յունական առասպելը: Չույն պատմիչ, աշխարհագրագետ **Ստրաբոնն (Ք.ա. I դար- Ք.հ. I դար)** «Աշխարհագրություն» աշխատությունում, հիմք ընդունելով Չոմերոսի (**Ք.ա. V դար**) «Ողիսական» պոեմի վկայությունը, նշում է, որ արգոնավորդներից մեկը՝ Թեսալիայի Արմենիոն քաղաքից Արմենոսը անցել է Իբերիան ու Աղվանքը, հասել՝ մինչև Կասպից ծով և Արմենիա ու Մեդիա, ապա իր ուղեկիցների հետ հաստատվել է Չայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջաններում, բնակեցրել Եկեղիքն ու Սպերը: Չենց Արմենոսն էլ իր անունը թողել է **Արմենիային:** Իսկապես, հույները Միջերկրական և Սև ծովերի ափամերձ տարածքներում հիմնել էին բազմաթիվ գաղութներ: Ք. ա. XI-X դդ. ստեղծված արգոնավորդների առասպելն այս փաստի պատմական-առասպելական շարադրանքն է: Սակայն այդ ժամանակաշրջանում Առաջավոր Ասիայի խորքերը հույների թափանցելու վերաբերյալ պատմական տեղեկություններ, փաստեր չկան: Ինչպես Չայկի և Բելի, այնպես էլ արգոնավորդների առասպելի նորացված տարբերակը եղել է ժամանակի պահանջը՝ հելլենիզմի (հունականության) տարածումն Առաջավոր Ասիայում:

Աքեմենյան Պարսկաստանի և հունական պետությունների միջև դարեր շարունակվող մրցակցությունն Առաջավոր Ասիայի ափամերձ տարածքներում գերիշխանություն հաստատելու համար ավարտվեց **Ք. ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտում Ալեքսանդր Մակեդոնացու** տարած հաղթանակով և Աքեմենյան Պարսկաստանի կործանումով: Չույների մոտ ամրապնդվեց իրենց ազգային առաջնության գաղափարը մնացած ազգերի նկատմամբ, որոնց բարբարոս էին համարում: Առաջավոր Ասիայի ժողովուրդների՝ մարրերի, պարսիկների, հայերի՝ Բալկանյան թերակղզուց գաղթելու մասին առասպելները հենց հույների գերակայությունը հիմնավորելու փորձեր էին:

Վրացական ավանդագրույցը: **XIդ. վրաց պատմիչ Լեոնտի Մրովելիի «Վրաց թագավորների և նախահայրերի պատմություն»**-ում ասվում է, որ կովկասյան բոլոր ազգերի նախահայրը **Նոյի որդի Չաբեթի թոռ Թարգամոսն** էր՝ մի քաջ մարդ, որը Բաբելոնի աշտարակաշինությունից ու լեզուների բաժանումից հետո իր տոհմով եկավ ու բնակություն հաստատեց մարդկանց համար անմատչելի երկու լեռների՝ Արարադի (Կորդվաց լեռներ) և Մասիսի միջև ընկած տարածքում: Նրա ութ որդիները հզոր ու անվանի հսկաներ էին: Նրանցից **Չայոսը**, որն առավել զորեղն էր, ստացավ հոր ժառանգության (երկրի) կեսը: Մյուս յոթ եղբայրները հպատակվում էին նրան: **Վրացական ավանդության համաձայն Չայկը (Չայոսը) հայերի նախահայրն է, Քարթլոսը՝ վրացիների, Ռանոսը՝ աղվանների, Եգրեսը՝ եգերների և այլն:** Ինչպես Խորենացին է պատմում Չայկի սերունդների կողմից Չայկական լեռնաշխարհի բոլոր մասերը բնակեցնելու մասին, այնպես էլ Մրովելին, բայց Արարադի երկիրն այլևս չէր տեղավորում բոլորին, ուստի նրանք ընդարձակեցին իրենց բնակության սահմանները՝ հասցնելով Սև ծովից մինչև Կասպից ծով ու Կովկասյան լեռներ: Այս ավանդագրույցի պատմական շարժառիթը, հավանաբար, **IX-X դդ. Բագրատունյաց Չայաստանի գերակայությունն էր, իսկ Խորենացու « Չայոց Պատմությունը»՝ հնարավոր**

սկզբնաղբյուրը: Այս ավանդությունը առանձնակի, որոշիչ արժեք չի ներկայացնում, քանի որ ստեղծվել է արդեն գոյություն ունեցող հայկական ավանդության ազդեցությամբ ու նմանությամբ:

2.ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ և ԼԵԶՎԻ ԾԱԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Եկեղեցական տեսություն: Մինչև այսօր էլ պատմաբանների համար կարևոր սկզբնաղբյուր է Աստվածաշունչը: Գիրք Ծննդոցը, Ելիցը, Եսայու ու Երեմիայի մարգարեությունները որոշակի տեղեկություններ են պարունակում աշխարհի ստեղծման, մարդու արարման, առաջին ցեղերի, պետությունների մասին, մասնավորապես՝ Իսրայելի ու հրեաների, նրանց դրացի ու հեռավոր ժողովուրդների, պետությունների մասին:

Ըստ Աստուածաշնչի՝ երկրի ողջ բնակչությունը սերունդն է Աստծո կողմից ստեղծված առաջին մարդկանց՝ Ադամի և Եվայի: Եղեմը (դրախտը), ուր նախապես բնակվում էին նրանք, գտնվում էր Արևելքում, ուր հոսում էին Գեհոն, Փիսոն, Եփրատ և Տիգրիս գետերը (տարածք, որը գտնվում էր Հայկական լեռնաշխարհում): Այստեղ էր նաև Կենաց ծառը (բարին ու չարը ճանաչելու իմաստության ծառը), որի արգելված պտուղը ճաշակելու պատճառով էլ Ադամն ու Եվան արտաքսվեցին դրախտից:

Աստվածային պատժից՝ համաշխարհային ջրհեղեղից հետո կենդանի մնաց միայն **Նոյն**՝ իր ընտանիքով, որն Աստծո հրամանով տապան էր պատրաստել և այնտեղ պատսպարվել կնոջ, որդիների ու նրանց կանանց հետ: Տապանը կանգ առավ **Արարատ լեռան** վրա(որը ևս գտնվում է Հայկական լեռնաշխարհում): Իջնելով տապանից՝ Նոյն ու նրա որդիները կրկին բնակեցրին երկիրը, նրանց սերունդները տարածվեցին աշխարհով մեկ:

Միջնադարյան պատմագիրները ելակետ էին ընդունում այս հիմնավորումները: Աստվածաշնչի վրա հիմնվելով՝ XVIII - XIX դարերում եվրոպական և հայ եկեղեցական պատմագրության ու լեզվաբանության ներկայացուցիչները կառուցում էին հայ ժողովրդի և հայոց լեզվի ծագման տեսությունները: Եկեղեցական տեսության համաձայն՝ մարդկությունը երկու անգամ էլ առաջացել է Հայաստանում: Դրա ապացույցը աստվածաշնչյան դրախտի արդեն նշված աշխարհագրական դիրքն ու Նոյի հիմնած բնակավայրն է: Ինքը՝ Նոյը, և անմիջապես նրա հաջորդները մնացել են Հայաստանում և խոսել են հայերենով: Հայաստանի մի շարք տեղանուններ հաստատում են դա. այսպես, օրինակ՝ Նոյի իջևանած առաջին վայրն անվանվել է «**Նախիջևան**» («**Նախ իջևան**»), Նոյի՝ հեռվից տեսած առաջին բնակավայրը՝ «**Երևան**» («**Երևալ**» բառից), իսկ այն տեղը, ուր Նոյը ուռի է տնկել, կոչվել է «**Ակոռի**» («**արկ ուռի**»):

Այսպիսով, եկեղեցական տեսությունը մարդկության առաջացման բնօրրան է համարում **Հայաստանը**: Հետևաբար, հայ ժողովուրդը պետք է համարվի աշխարհի ամենահին ժողովուրդ, իսկ հայերենը՝ նախամայր լեզու: Սակայն, համաշխարհային՝ մասնավորապես, հրեական և անգլո-ամերիկյան պատմագրության մեջ շարունակում է իշխել Աստվածաշնչում չհիմնավորված այն տեսակետը, ըստ որի՝ հրեաներն ու նրանց հնագույն լեզուն են նախաստեղծ:

Պատմահամեմատական կամ հնդեվրոպական տեսություն: Ազգերի ծագումնաբանությունը պարզելու նպատակով գիտնականները հիմնվում են ազգերին բնորոշող որակական հատկանիշների վրա: Կատարվում է ազգերի դասակարգում ըստ մեկ էական կամ մի շարք հատկանիշների, օրինակ՝ **ռասսայական ընդհանրություն** կամ **լեզվական հարազատություն**: Վերջինս գիտության մեջ դասակարգման ամենատարածված սկզբունքներից է: Լեզվական

հարազատությունը խոսում է այն մասին, որ տվյալ ժողովուրդները կան ծագումնաբանական ընդհանրություն ունեն, կան երկարատև հոգևոր-մշակութային կապերով են կապված: Հաշվի առնելով բառապաշարների, հնչյունաբանության և քերականության միջև գոյություն ունեցող նմանությունները՝ լեզուները միավորվում են լեզվաընտանիքների մեջ: Խոշորագույն լեզվաընտանիքներից է հնդեվրոպականը: Այս լեզվաընտանիքին պատկանող լեզուներով խոսում է աշխարհի բնակչության մոտ կեսը՝ Եվրոպայից մինչև Հնդկաստան ընկած տարածքում, **Ամերիկայում և Ավստրալիայում**: Հնդեվրոպական լեզվաընտանիքն ունի 15 խումբ: Ազգերի թվաքանակով ամենամեծ խմբերն են **սլավոնականը, գերմանականը, ռոմանականը: Ալբաներենն** ու հայերենն առանձին ճյուղեր են կազմում: Հայերենին ամենից մոտ են իրանական և հունական լեզվախմբերը:

Գիտնականներին հաջողվել է լեզուների համեմատական վերլուծության շնորհիվ վերականգնել մի լեզու, որն ընդունված է անվանել **հնդեվրոպական լեզու, հնդեվրոպական նախալեզու կամ հնդեվրոպական հիմք լեզու**: Վերականգնվել է մոտ 2000 արմատ, որից մոտ 700-ը կազմում են հայերենի հնդեվրոպական արմատները:

Միայն XIX դարում եվրոպացի լեզվաբաններ **Հ.Պետերմանին, Ֆ.Վինդիշմանին, Հ.Հյուբշմանին, Ֆ. Բոպպին** առաջին անգամ հաջողվեց ապացուցել, որ հայերենը ծագումով հնդեվրոպական լեզու է, **հնդեվրոպական լեզվաընտանիքի** անկախ և ինքնուրույն ճյուղ: Ավելի վաղ տիրում էր այն կարծիքը, թե հայերենը պատկանում է իրանական կամ արիական ճյուղին: Հաստատելով հայոց լեզվի յուրահատուկ տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում՝ հայագետները փորձում էին բացահայտել հայ ժողովրդի ծագումնաբանությունը: Օգտվելով հայտնի ամենահավաստի սկզբնաղբյուրներից՝ **հույն պատմիչներ Ջերոդոտոսի, Քսենոփոնի, Ստրաբոնի, աշխարհագրագետ Եվդոքսոսի, Դիոնիսիոս Հալիկառնացու** վկայություններից՝ գիտնականները հանգեցին այն եզրակացության, որ հայերի հնդեվրոպացի նախնիներն արմեններն են: «**Ծովի ժողովուրդների**» գաղթի ժամանակ (Ք. ա. XIII-XII դդ.) արմենները, Բալկանյան թերակղզուց հեռանալով, հաստատվել են Փոքր Ասիայում և, 500-600 տարվա ընթացքում տարածվելով դեպի արևելք, մոտ **Ք. ա. VII** դարի վերջին տիրել են Հայկական լեռնաշխարհին: «**Հայ**» անունն էլ հավանաբար վերցրել կան ժառանգել են տեղաբնիկ որևէ ոչ հնդեվրոպական ցեղից:

Չնայած հայագիտության խնդիրներին իրենց տարբերակված մոտեցմանը՝ XX դարի համարյա բոլոր հայ և օտարազգի հայագետները ելակետ էին ընդունում հայերի՝ Եվրոպայից՝ Բալկանյան թերակղզուց, եկած լինելու վարկածը: Այդ տեսակետը պաշտպանում էին **Հ.Աճառյանը, Հ. Մանանդյանը, Ն. Ադոնցը, Ա. Մեյեն, Հ. Հյուբշմանը**: Այս վարկածի գիտական հիմնավորման համար հնդեվրոպաբանները հիմնվում են Ջերոդոտոսի հաղորդած այն տեղեկությունների վրա, ըստ որոնց՝ արմենները «փոյուզիական¹ վերաբնակիչներ» էին՝ զինված փոյուզիացիների նման, ինչից կարելի է եզրակացնել, թե հայերը ծագում են փոյուզիացիներից: Իրականում Ջերոդոտոսի վկայության մեջ ոչ մի խոսք չկա ո՛չ արմենների՝ Եվրոպայից գաղթելու, ո՛չ էլ փոյուզիացիների ցեղակիցը լինելու մասին: Ինչ վերաբերում է հայերի և փոյուզիացիների համազգեստի, զենքուզրահի նմանությանը, ապա բնական է, որ հարևան ազգերի մոտ շատ տարրեր կարող են կրկնվել: Ի դեպ, Ջերոդոտոսն իր խոսքն սկսում է այսպես. «Մակեդոնացիները ասում են, թե...»,

¹ Փոյուզիան պետություն էր Փոքր Ասիայի կենտրոնում:

այսինքն՝ համոզված չէ դրա ճշմարտացիության մեջ: Հետազոտողների ուշադրությունը բևեռվում է նաև հայերենի ու փոյուզիերենից պահպանված տարրերի համադրման վրա, որը հանգեցնում է այն եզրակացության, թե այդ լեզուներն ազգակից են: Նախ նշենք, որ փոյուզիերենից պահպանվել է ընդամենը 200 բառ, ինչն արդեն իսկ բարդացնում է համալեզվության հիմնավորումը: Այս վարկածը միանշանակ մերժվել է համեմատական լեզվաբանության նշանավոր գիտնականների՝ **Յ. Տաշյանի, Յ. Հյուբշմանի, Ա. Մեյեի, Յ. Աճառյանի** կողմից: Ինչ վերաբերում է լեզուների որոշ նմանությանն, ապա պետք է ասել, որ անգամ տարբեր լեզվաընտանիքներին պատկանող լեզուներն ունեն հեռավոր ցեղակցություն: Այս երևույթն անվանվել է **նոստրատիկ լեզվաբանություն**: Հնդեվրոպական ու սեմական, քարթվելական, ֆիննա-ուգրական և այլ լեզուներում շատ բառեր ունեն նման արտասանություն և նույն իմաստը: Ստրաբոնի կողմից շարադրված պատմական հիմքից զուրկ առասպելը որպես գիտական փաստարկ առաջադրելը ևս քննադատության չի դիմանում: Թեսալիայում Արմենիոն անունով քաղաքի գոյությունը կարող է ապացուցել ճիշտ հակառակը, այսինքն այն, որ Հայկական լեռնաշխարհից դուրս եկած հայկական ցեղերից մեկը «ծովի ժողովուրդների» գաղթից շատ ավելի առաջ բնակություն է հաստատել Բալկանյան թերակղզում:

Հաբեթական և ասիանիկ տեսությունները: Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի եկվորության տեսությունը ժխտել են ակադեմիկոսներ **Ն. Մառը և Գր. Ղափանցյանը**՝ ապացուցելով, որ հայերը տեղաբնիկ են: Սակայն հայոց լեզվի ծագման հարցին վերջիններս ունեցել են յուրահատուկ մոտեցում:

Ն. Մառը «Հաբեթական լեզվաբանության» տեսության հիմնադիրն է: Ըստ այդ տեսության՝ հայոց լեզուն ձևավորվել է **հնդեվրոպական և հաբեթական (կովկասյան)** լեզուների համազոր շերտերից և **խառնածին լեզու է**: Պաշտպանելով լեզուների աստիճանական զարգացման տեսությունը՝ Մառը փորձում է ապացուցել, որ հայերենը հաբեթական աստիճանից փոխանցվող լեզվի դասական օրինակ է: Մառի հետևորդները ոչ միայն ժխտում էին հայերենի՝ հնդեվրոպական լեզու լինելը, այլև աշխատում էին ապացուցել, որ հայ ժողովուրդը և հայոց լեզուն կազմավորվել են բացառապես տեղաբնիկ ցեղերի և նրանց լեզուների միաձուլման, խաչավորման միջոցով:

Գր. Ղափանցյանը գտնում էր, որ հայերենը պատկանում է **ասիանիկ** կոչվող լեզվախմբին և ձևավորվել է **հայասացիների, խեթերների, խուռի-ուրարտական լեզուների խառնուրդից**: Իրականում խառնածին լեզուներ գոյություն չունեն: Ժողովուրդների համատեղության դեպքում տիրապետող է դառնում առավել հզոր մշակույթ ունեցող, ճկուն ու կենսունակ լեզվի տիրապետող ազգի լեզուն, այս դեպքում՝ հայերենը: Լեզվաբաններն ապացուցել են, որ ընդհանրություններ կան հայասերենի և հայերենի, խուռիերենի և հայերենի, ուրարտերենի և հայերենի միջև: Համեմատական լեզվաբանությունն ապացուցում է, որ բոլոր հիշյալ լեզուները Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայերի գրական կամ խոսակցական (բարբառներ) լեզուներն են և օգտագործվել են պատմական տարբեր ժամանակներում, անցել հասունացման, կատարելագործման փուլերով:

Այսպիսով, **հայ ժողովրդի՝ Հայկական լեռնաշխարհում եկվոր լինելու տեսությունը, հայոց լեզվին վերաբերող վերոհիշյալ վարկածները գիտական հիմք չունեն և, ըստ էության, չեն ապացուցվում լեզվաբանական ոչ մի օրենքով**: Դրանք հիմնված են հույն պատմիչների, աշխարհագրագետների ոչ լրիվ, որոշ դեպքերում՝ քաղաքականացված տեղեկությունների վրա,

կամ էլ Աստվածաշնչի քրիստոնեական գաղափարախոսությունը հարմարեցվում է պատմական նյութին: Դրանով փորձ է արվում հայերին Չայկական լեռնաշխարհում բնիկ չհամարել, նրա ծագմանն ու կազմավորմանը տալ տարբեր ժողովուրդներից կազմված հավաքականության որակ, ինչը բնորոշ է միայն այսօրվա երիտասարդ ազգերին:

1.4. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑՈՒ ԲՆԻԿՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհը երկրագնդի այն եզակի տարածքներից է, որտեղ մարդն անընդհատ ապրել ու արարել է: Առաջավոր Ասիան ընկած է մարդու ծագման բնօրրան՝ Աֆրիկայից դեպի Եվրոպա ու Ասիա տանող այն խաչուղու վրա, որով նախնադարյան բազմաթիվ ցեղեր անցել են, սփռվել աշխարհով մեկ: Նրանց մի մասը վաղագույն շրջանում հաստատվել է Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում, ստեղծել այնպիսի համամարդկային արժեքներ, որոնց շնորհիվ այսօր **Հայկական լեռնաշխարհը դասվում է համաշխարհային քաղաքակրթության հնագույն օրրանների շարքում:**

Նյութական մշակույթի բազմադարյան հետքերը, հնագույն ժողովուրդների բանավոր ստեղծագործությունների մեջ պահպանված պատմական վկայությունները, Հայկական լեռնաշխարհի տեղանուններն ու հայկական անձնանունները, հայոց լեզվի հարուստ բառապաշարում պահպանված հնագույն բառակազմական արմատները, վերջապես տասնյակ հազարավոր տարիներ առաջ Հայկական լեռնաշխարհում ապրած մարդկանց ու ներկայիս հայերի անփոփոխ մնացած մարդաբանական տիպը գալիս են ապացուցելու, որ **հայերը Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչներն են՝ բնիկները**, և ապրում են այստեղ անհիշելի ժամանակներից:

Հայկական լեռնաշխարհում հայ ժողովրդի բնիկ լինելու, նրա ծագման ու կազմավորման հիմնահարցի վերաբերյալ աշխարհի հայագետների եզրահանգումներում արմատական բեկում սկսվեց միայն 1970-ական թվականներից՝ հնագիտական, ազգագրական, լեզվաբանական ու մարդաբանական նոր ուսումնասիրությունների շնորհիվ:

Հայ ժողովրդի ծագման, կազմավորման և Հայկական լեռնաշխարհում բնիկ լինելու գիտական հիմնավորումը կատարվեց երեք մեթոդով՝

- **նյութական-մշակութային արժեքների համեմատություն,**
- **համեմատական լեզվաբանություն,**
- **համեմատական մարդաբանություն (անթրոպոլոգիա):**

1.ՆՅՈՒԹԱՎԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆ

Գիտական այս մեթոդը հայերի բնիկ լինելը հիմնավորում է Հայկական լեռնաշխարհից և հարակից տարածքներից պեղված նյութական արժեքների նույնությունն ապացուցելու միջոցով: Ապացուցվում է, որ դրանք ստեղծել են միևնույն էթնոսի ներկայացուցիչներ: Սակայն գիտության մեջ ամեն ինչ հարթ չի ընթանում: Պատմական Հայաստանի տարբեր շրջաններից հայտնաբերված հնագիտական նյութերը հաճախ արհեստականորեն առանձնացվում են, ներկայացվում որպես **Միջագետքյան, Անատոլիական, Փոքրասիական կամ Կովկասյան մշակույթների**ն պատկանող:

Մարդու բնակության հետքերը Հայկական լեռնաշխարհում ամենուր են, ժամանակագրորեն շարունակական հին, միջին, նոր քարի, պղնձի քարի, բրոնզի և երկաթի դարերում: **Գեղամա լեռներ, Արտին լեռ, Հրազդան գետի ավազան, Երևանի տարածք, Թալինի շրջան, Նուռնուս, Արզնի, Մեծամոր, Լճաշեն** այս և բազմաթիվ այլ հնավայրերում տասնյակ մետրերի հասնող մշակութային տարբեր շերտերից գտածոներն ապացուցում են միևնույն վայրում հազարամյակներ շարունակ մարդկանց բնակվելու մասին: Պատմական Հայաստանի **Կործայք** աշխարհում **Շանիդար քարայրում** մարդու գործունեության մշակութային շերտը ունի 13 մետր հաստություն: Նախնադարյան մարդը քարայրում անընդմեջ ապրել է 20 հազ. տարի՝ 35-40-ից մինչև 60 հազարամյակ առաջ: Նախնադարյան մարդու նմանատիպ բնակավայր հայտնաբերվել է նաև **Հրազդան գետի ձորում՝** Երևանյան լճի մոտակայքում:

Հալաֆյան կամ Հասունյան անվանված նոր քարի դարի մշակույթի կենտրոն է համարվում **Հայկական Միջագետքը**: Այս մշակույթը հատկապես առանձնանում է նուրբ, փայլուն գծանախշ խեցեղենի առատությամբ: Ենթադրվում է, որ Հասունյան մշակույթի բարձրագույն փուլ հանդիսացող **Սամարյան մշակույթը** կրող ցեղերը Հայկական լեռնաշխարհից շարժվել են Միջագետք՝ հիմք դնելով **Շումերական քաղաքակրթությանը**:

Մարդկային հասարակության պատմական զարգացման գործընթացի թռիչքը կապված է մետաղի մշակման հետ:

Հայկական լեռնաշխարհի **էնեոլիթյան (պղնձի քարի դար)** հնավայրերի պեղումները (**Շենգավիթ, Մոխրաբլուր**) վկայում են, որ ամենից վաղ հալման միջոցով պղինձ ստացել են այստեղի բնակիչները: **Վաղ բրոնզեդարյան մշակույթի (Ք. ա. IV հազ. վերջ - III հազ. սկիզբ)** անվանումն իսկ **Կուրարաքսյան**, հուշում է, որ մետաղի այդ համաձուլվածքի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է: **Մեծամորում (Ք.ա. III հազ.)** գտնվել է **2 տեսակի 23 վառարան-հալոց**, որտեղ ձուլվել են բրոնզի 14 տեսակի համաձուլվածք: Եթե պղնձի հայտնագործումով մարդկային քաղաքակրթությունը թռիչք գործեց դեպի ապագա, ապա երկաթի հայտնագործումն այդ թռիչքին մեծ արագություն հաղորդեց: Հայկական լեռնաշխարհի բնակիչները, շնորհիվ օդամուղ փուքսի կիրառման, 300-500 տարի ավելի շուտ են մուտք գործել երկաթի դար:

Հնագույն այս մշակույթները շարունակում ու լրացնում են մեկը մյուսին: Հայկական լեռնաշխարհում պարզորոշ նկատելի է այդ ժառանգականությունը: **Հետևաբար, այդ մշակույթներն ստեղծողները նույն ցեղի, ժողովրդի սերունդներն են եղել:**

Հայկական լեռնաշխարհի հետ է կապվում մեկ այլ հայտնագործություն ևս: Այն, որ Հայկական լեռնաշխարհը եղել է մետաղամշակման հնագույն կենտրոններից վկայում է հետևյալ փաստը. Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված՝ Ք.ա. II հազարամյակին վերաբերող կենցաղային իրերը, պերճանքի և զարդարանքի պարագաները, և, որը շատ կարևոր է, զենք ու զրահները պատրաստված են եղել մետաղից:

Հայաստանը մետաղների մշակման (նաև ձիու ընտելացման) հայրենիքն է, ուստի հայ ռազմիկները (Ք.ա. XIX- XVIIIդդ.) զինված են եղել ամենալավ, մետաղյա ամուր զենքերով՝ անխոցելի զրահներով, սուր հատող սրերով ու նետերի երկաթե սլաքներով: Անխոցելի զրահներով էին պաշտպանված նաև նրանց ձիերն ու մարտակառքերը:

Յնագույն գրավոր աղբյուրները (աքքադական, եգիպտական, խեթական, ասորական), պատկերներն ու քանդակները վկայում են, որ Յայկական լեռնաշխարհի բնակիչները՝ հայերը, գերազանց ռազմիկներ են եղել (նրանց հաճախ կոչել են **հիքսոսներ կամ հաքսոսներ**):

Յայկական լեռնաշխարհը հայտնի է նաև մեկ այլ հայտնագործությամբ: Տեխնիկական ոչ մի հայտնագործություն այնքան վճռորոշ նշանակություն չի ունեցել քաղաքակրթության հետագա զարգացման համար, որքան **անիվի գյուտը**: Բրուտի դուրգից ու ջրաղացի աղացքարից մինչև ճաղանիվ ու թափանիվ, ատամնանիվ ու փոկանիվ ճանապարհն ընդգրկում է գիտատեխնիկական հայտնագործություններով լի հազարամյակներ, և այն սկիզբ է առել Յայկական լեռնաշխարհում: Յայկական լեռնաշխարհից հնագույն ցեղերը հասել են Յնդկաստան ու Եվրոպա՝ շնորհիվ իրենց հայտնագործած անվավոր փոխադրամիջոցների (սայլեր, կառքեր, ռազմականքեր):

Յայկական լեռնաշխարհը հայկական մշակույթի նախնական տարածքն է՝ հնդեվրոպական (գիտական ասպարեզում ընդունված է անվանել արիական) քաղաքակրթության բնօրրանը: Յնդեվրոպացիները ք. ա. V-IV հազարամյակներում՝ «հնդեվրոպական ընդհանրության» տրոհումից հետո, իրենց նախահայրենիքից՝ Յայկական լեռնաշխարհից, տարել են հոգևոր մշակույթի այնպիսի ակունքային տարրեր, որոնց ընդհանրությունն ու միասնությունը թույլ են տալիս բոլոր ժողովուրդներին միավորել մեկ մեզաընտանիքում:

Յնդեվրոպացիների նախնիների՝ **արիական ցեղերի** հոգևոր մշակույթի ակունքային հարազատությունն ակնհայտ է դառնում նրանց բանավոր ստեղծագործությունների՝ դիցաբանությունների, էպոսների, վիպերգերի, ծիսական երգերի, հիմների, ավանդապատումների, հեքիաթների, առակների, ինչպես նաև բնապաշտական, ոգեպաշտական ու հեթանոսական հավատալիքների ուսումնասիրության ժամանակ: Տարբեր ժողովուրդների բանավոր ստեղծագործություններում, հոգևոր գրքերում առկա բովանդակային ընդհանրություններն ու զուգադիպությունները հուշում են նրանց **ընդհանուր արմատի** մասին: Յնդեվրոպական ժողովուրդների բանահյուսության մեջ հաճախ հանդիպում ենք մարդուն միշտ հուզող անմահության գաղափարի, անմահական ջրի, սրբազան ծառի (կենաց ծառի), անարատ հղիության, անդամաճան սիրո, չար ուժերի դեմ պայքարող հերոսների, նրանց օգնող ուժերի (քամիներ, կայծակներ), հրեղեն ձիերի, հրաշագործ գեներների (թուր կեծակի) թեմաներին:

Ուսումնասիրությունները վկայում են, որ արիական հասարակության հիմքը ընտանիքն էր: Ընտանիքում հատկանշական էին փոխադարձ սերն ամուսինների միջև, կնոջ նկատմամբ հարգանքը, ծերերի ու երեխաների նկատմամբ հոգատարությունը, ինչպես նաև սերունդների՝ հոր ու որդու պայքարը: Ակնհայտ է, որ դրանց ստեղծման աղբյուրը պատմական միևնույն միջավայրն է եղել՝ **նախահայրենիքը, մայր երկիրը, որը Յայկական լեռնաշխարհն է**, մայր ժողովուրդը, որի որակական հատկանիշների կրողն ու պահապանը հայն է:

Յնդեվրոպացիների հոգևոր մշակույթում կարևոր տեղ է գրավում աստվածների, հատկապես գլխավոր **Ար** աստծո պաշտամունքը: Յեռանալով մայր երկրից՝ հնդեվրոպական ցեղերը շարունակել են պաշտել նախնիների գլխավոր աստծուն: Չնայած **Ար** աստվածը միշտ չէ, որ պահպանել է գերակա դիրքը պանթեոնում: Յիշենք հետևյալ աստվածներին. Յունաստանում՝ **Արես** (գարնան ու ռազմի աստված), **Յերմես** (հովիվների ու երկրագործների աստված), Մակեդոնիայում՝ **Արաս** (արևի ու ռազմի աստված), Իրանում՝ **Ահուրումազդ** (զրադաշտության գլխավոր աստված), Յռոմում՝ **Մարս** (ռազմի աստված), սլավոնների մոտ՝ **Յար-Յարիլա-Յարիլո**

(բուսականության, երկրագործության, ռազմի աստված), Յնդկաստանում՝ **Ռամ**: Ար աստծո պաշտամունքը տարածվել է նաև հարևան երկրներում՝ Եգիպտոսում՝ **Ռա** (արևի աստվածը), Վրաստանում՝ **Արալի** (երկրագործության աստվածը), Ասորեստանում և Բաբելոնում՝ **Արիա** աստվածը:

Ար-ով սկսվող բազմաթիվ անձնանուններ կարելի է գտնել հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող բոլոր ժողովուրդների մոտ: Բերենք օրինակներ. իրանական անուններ են՝ **Արտայանտե**, **Արիստոնե**, **Արտայոս**, **Արտաքսերքսես**, **Արիագոս**, **Արսամես** և այլն, հունական՝ **Արիադնա**, **Արգեյա**, **Արտեմիս**, **Արիստեաս**, **Արգեոս** և այլն: Խորենացու «Յայոց պատմություն»-ում հիշատակվում են 11 հայ նահապետների անուններ, որոնցից 5-ը սկսվում է Ար-ով՝ **Արամանյակ**, **Արամայիս**, **Ջարմա**, **Արամ**, **Արա Գեղեցիկ**: Հիշատակվում են նաև **Արտաշես**, **Արտավազդ**, **Արշակ**, **Արշամ**, **Արտավան**, **Արշավիր**, **Արբակ**, **Արծրուն** անունները:

Յայկական լեռնաշխարհի բնակիչը՝ հայ-արմենը, **Տիեզերական Արարչին** նույնացրել է ամենամեծ ու ամենապայծառ լուսատուի՝ լույս, ջերմություն, կյանք պարգևող Արևի հետ՝ պաշտելով նրան որպես ամենազոր արարիչ: Այս բանի վկայությունն ամենուր է: **Մ. Գավաթչյանը** «**հայ**» անունը բխեցնում է ար-ից: Յայերն իրենց Ար աստծու անունով նախապես կոչվել են **արեր**, որը փոփոխվելով՝ դարձել է **հար**, ապա ստացել վերջնական ձևը՝ **հայ**: Յարևան ժողովուրդները մեզ անվանում են **արմեն**: Ըստ **Ա. Վարպետյանի**՝ **արմեն** ձևն առաջացել է **արմա**-ից՝ ար=արև, մա=որդի (շումերերեն՝ ծին, սերունդ), այսինքն՝ **արևորդիներ** կամ **արևածիններ**: **Արմա**-ն հետագայում դարձել է **արմին**, **արմեն**: Մեր երկրին տված անուններում ևս մեծ թիվ են կազմում ար-ով սկսվողները՝ **Արատտա**, **Արարատ**, **Արմանի**, **Արմինա**, **Արմենիա** և այլն:

Յայ ժողովուրդն **Ար** աստծուն ընդունել է որպես բնության ու զարթոնքի, նաև ռազմի մեծ ու հզոր աստվածություն: Յայոց լեզվում կյանք, գարուն, զարթոնք, վարուցանք, ուժ, հզորություն, զենքուզրահ բնութագրող բազմաթիվ բառերի ենք հանդիպում **ար** արմատով: Այսպես, օրինակ՝ **արտ**, **արոր**, **արգավանդ**, **արահետ**, **արթնանալ**, **հառնել**, նաև՝ **արյուն**, **արի**, **արիասիրտ**, **արիական**, **անարի** և այլն:

Աշխարհի ոչ մի ժողովուրդ արևով երդվելու, օրհնելու կամ անիծելու այնքան օրինակ չունի, որքան հայերը. իմ արև, մորս արև, արևս վկա, արևդ սիրեմ, արևիդ մեռնեմ, արևդ ապրի, արևդ մեռնի, արևդ թաղեմ, արևդ խավարի, օր ու արև չտեսնես և այլն:

Յին աշխարհի շատ ժողովուրդների կողմից Յայաստանն ընկալվել է որպես արևի բնակության վայր, հանգստարան, արևի ելքի (արևելք) և մուտքի երկիր (**Արև աստծո երկիր**): «**Սասնա ծռեր**» էպոսում ևս Յայաստանը նույնացվում է **Արևի թագավորի երկրի** հետ:

Արև-աստվածն ու նրա խորհրդանիշները Յայկական լեռնաշխարհի հնագույն ժայռապատկերներում հանդիպում են բազմաթիվ այլակերպումներով՝ **արև-առյուծի**, **արև-ցուլի**, **արևը մարտակառքով**, **խաչի**, **պտտվող անիվի**՝ **կեռախաչի (սվաստիկա) տեսքով** և այլն:

Դրանք մեծ քանակությամբ պատկերված են նաև Յայկական լեռնաշխարհում հայտնաբերված խեցեղենի վրա: **Մոխրաբլուրի հնավայրից (Ք. ա. III հազ.)** հայտնաբերված օջախի շրջանաձև պատվանդանի վրա կա արևի մի քանի խորհրդանիշ: Յատկապես շատ է հանդիպում արևի խորհրդանիշ՝ կեռախաչ(սվաստիկա), ճանկախաչ, խաչաթև, ինչպես նաև երկճյուղ և եռաճյուղ

թեքումներով: Հայ վարպետները **խաչ ու սվաստիկա** են պատկերել նաև միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքների **Դվինի եկեղեցիներին, Անիի պարիսպներին:**

Այսպիսով, Արև-աստծո պաշտամունքը ծագել է Հայաստանում մարդկության պատմության արշալույսին, ապա Հայկական լեռնաշխարհից դուրս եկած ցեղերի միջոցով տարածվել Միջագետքում, Փոքր Ասիայում, Հնդկաստանում, Եվրոպայում:

Այն, որ Հայկական լեռնաշխարհը քաղաքակրթության բնօրրան է, հայ ժողովրդի նախնյաց հայրենիքը, վկայում են պահպանված բազմաբնույթ հոգևոր հուշարձանները՝ ժայռապատկերները, կիկլոպյան կառույցները, հին աշխարհի տարբեր ժողովուրդների քարտեզներն ու առասպելները (ավանդազրույցները):

Հնագույն գրավոր աղբյուրներ: Ք.ա. V-IV հազարամյակներում Ստորին Միջագետքում ձևավորված շումերական մշակույթի և պատմության ուսումնասիրության համար մեծ արժեք են ներկայացնում շումերական դյուցազնավեպի մեզ հայտնի **վիպերգերը (Ք. ա. XVIII-XVII դարեր):** Այդ վիպերգերում մեծ տեղ է տրված **Շումեր** և հայոց հնագույն՝ **Արատտա պետությունների** միջև եղած մշակութային, տնտեսական և այլ կարգի կապերին: **«Գիլգամեշը և անմահների երկիրը»** վիպերգում **Գիլգամեշը** անմահություն ձեռք բերելու համար ուղևորվում է **«անմահների երկիր»**՝ **Արատտա:** Այդ երկիրը տանող ճանապարհը նրան ցույց են տալիս **«յոթ ոգեղեն, ամենազոր ու ամենազնաց էակներ»:**

Շումեր-աքքադական դյուցազնավեպից հայտնի է դառնում, որ **Լույսը, Արևը** ծագում են երկվորյակ **Մաշու (Մասիս) լեռներից:** Ըստ դյուցազնավեպի, լեռներից այն կողմ գտնվում էր կախարդական այգին՝ դրախտը, ուր ապրում էին աստվածները: Հիշենք, որ աստվածաշնչյան դրախտը ևս գտնվում էր Հայաստանում: Շումերների, ինչպես նաև Միջագետքի մյուս ժողովուրդների համար Հայաստանը լեռների երկիր էր:

«Էմերքարը և Արատտայի գլխավոր քուրմը» վիպերգում Արատտան հանդես է գալիս ոչ միայն **«բարձր լեռների երկիր»**, **«անմահների երկիր»** անունով, այլև որպես **«սուրբ օրենքների երկիր»:** Հայաստանն անվանվում էր ոչ միայն **օրինաց երկիր**, այլև **սրբազան**, և Միջագետքի **«Գիլգամեշ» էպոսի** համաձայն ջրհեղեղից փրկված հերոսին աստվածների կողմից անմահություն է շնորհվում **«աստվածների կաճառում»**՝ **Հայկական լեռնաշխարհում:**

Հատկանշական է, որ շումերների համար լեռը մեծ խորհուրդ է ունեցել: Նրանց պատկերացմամբ աստվածները ոչ միայն ապրում էին լեռներում, այլև ծնվում էին լեռներից: Նրանք (ինչպես նաև քաղաքացիները) անգամ **«լեռ» և «երկիր»** բառերի համար օգտագործել են նույն սեպանշանը: Այսինքն՝ շումերները նույնացրել են իրենց երկիրն ու նախահայրենիքը, և պատահական չէ, որ սրբավայրերը կառուցել են լեռների նման՝ արհեստականորեն կառուցված բարձր վայրերում: Քանի որ Միջագետքում լեռներ չեն եղել, շումերներն արհեստական լեռներ՝ բարձունքներ են կառուցել: Դրանք քառակուսի հիմքով հսկայական շինություններ էին (3,5-7մ բարձրությամբ), որոնք հեռվից լեռների տպավորություն էին թողնում:

Շումերական գրառումները վկայում են նաև, որ իրենք՝ Միջագետքի հնագույն բնակիչները, Միջագետքում բնակվելուց առաջ **(Ք.ա. VI-V հազարամյակ)** բնակվել են Հայկական լեռնաշխարհի հարավային մասերում և «սուրբ» են համարել այն երկիրը, որը նրանց նախահայրենիքն է: Սա Հայկական լեռնաշխարհից կատարված հայտնի էթնիկական տեղաշարժն

է, երբ ցեղի մի մասը հեռանում է բնօրրանից, հաստատվում այլ վայրերում և ստեղծում իր պետությունը:

Հնագույն գրավոր աղբյուրներից արժեքավոր են նաև **հնդկական «Վեդաները»** և **իրանական «Ավեստան»**, որոնք կարևոր հիշողություններ են պահպանել արիական ցեղերի, նրանց աստվածների և հայրենիքի մասին: Այս աղբյուրներից հայտնի է դառնում, որ վաղ ժամանակներից հնդկական և իրանական ցեղերը իրենք իրենց **ari (arya)-արի** ցեղի մարդիկ են համարել: Նրանք, ըստ աղբյուրների, ոչ միայն դարեր շարունակ պահպանել են արի ցեղին պատկանելու գիտակցությունը, արի ցեղին բնորոշ սովորույթներն ու բարքերը, այլև հպարտացել են այդ ցեղին պատկանելու, արիացի լինելու փաստով:

Բացի առասպելներից, հայերի, նրանց հայրենիքի մասին տեղեկություններ կան նաև հունական գրավոր աղբյուրներում: Առաջին հիշատակությունը **հայերի՝ արիմ-արմենների** մասին, տեղ է գտել **Հոմերոսի «Իլիական» (Ք.ա. IX կամ VIII դդ.)** պոեմում, ուր պատմվում է Ք.ա. **XII-IX դդ.** հունական ցեղերի էթնիկական տեղաշարժերի, նրանց ընդհարումների, կազմավորված պետական փոքր միավորումների, գերիշխանության համար մղվող պայքարի մասին:

Հույն պատմիչների վկայություններն ավանդություններ են, որոնք վկայում են ոչ միայն հայերի և հույների միջև եղած հանագույն կապերի, այլև արյունակից եղբայրներ լինելու մասին:

Հայրենիքի մասին հիշատակություններ են պահպանվել նաև **անգլիական, գերմանական, ռուսական՝** շատ անգամ ավելի երիտասարդ (**Ք.ա. VIII, X, XII դդ.**) աղբյուրներում: Այդ աղբյուրները խոսում են Հայաստանը **անգլիացիների, բավարացիների, ռուսների** նախահայրենիքը՝ բնօրրանը լինելու մասին:

Ժայռապատկերներ և հնագույն կառույցներ: Հայկական լեռնաշխարհում ամենուր սփռված ժայռապատկերները ոչ միայն գիտությանը հայտնի ամենահին ժայռապատկերներն են (Ք. ա. **VII - III** հազ.), այլև մյուս վայրերում (Հս. Աֆրիկա, Հրվ. Ֆրանսիա, Հնդկաստան, Անգարա գետ՝ Ռուսաստան) հայտնաբերվածներից առանձնանում են հարուստ բովանդակությամբ՝ որսի, երկրագործության ու անասնապահության պարզ տեսարաններից մինչև պաշտամունքի տարրեր ու դիցաբանական հերոսներ, Կենաց ծառ ու համաստեղություններ: Այսպես, օրինակ՝ **Գեղամա լեռների** ժայռապատկերներից մեկում պատկերված է **Օրիոնի (Հայկի)** համաստեղությունը, մյուսում՝ տիեզերքի քարտեզը, **Վարդենիսում** հայտնաբերված ժայռապատկերում՝ լուսնային օրացույցը, **Սևասարում՝ լուսնային քարտեզը**, իսկ **Սիսիանի մոտ գտնվող Ծղուկ լեռան ժայռապատկերում՝ Արարչագործության տեսարանը:** Ժայռապատկերներում առկա են նաև հայերեն գրերի նշաններ ու գաղափարագրեր:

Աստղային երկնքի դիտարկման երկրագնդի հնագույն կենտրոններից է **Սիսիանի մոտ գտնվող Զորացքար կամ Դիք-դիք քար (այժմ նաև՝ Քարահունջ)** կոչվող վայրը: Քարահունջի աստղադիտարանը վկայում է, որ դեռևս Ք. ա. VII հազարամյակում Հայաստանում կատարվել են աստղային երկնքի, Արեգակի և Լուսնի դիտարկումներ՝ նոր տարվա սկիզբը, ծիսական արարողությունների և երկրագործական աշխատանքների ժամանակը որոշելու համար:

Առավել «երիտասարդ» քաղաքակրթական օջախներից է **Մեծամորը (Ք. ա. III- II հազ.)**, որտեղ հայտնաբերվել են հնդեվրոպական քաղաքակրթության գրեթե բոլոր տարրերը՝ **Արևի տաճար-աստղադիտարան, Արևի պաշտամունքին նվիրված քարե կոթողներ, գաղափարագրեր, պղնձածուլարաններ, կենցաղային իրեր** և այլն:

Քարտեզներ: Հատկանշական է այն հանգամանքը, որ Ք. ա. IV հազարամյակից մինչև XX դարի սկիզբ աշխարհի բոլոր հնագույն, հին և նոր **քարտեզների վրա**, անկախ հայկական պետության գոյության հանգամանքից, Հայկական լեռնաշխարհի տարածքում գրեթե առանց բացառության հիշատակվում է **Armenia-Հայաստան** անունը: Թվարկենք այդ քարտեզներից մի քանիսը՝

1. Աքքադական ժայռափոր քարտեզ (Ք. ա. IV հազ.), որտեղ ներկայացված է Արատտան:
2. Բաբելոնյան քարտեզ (Ք. ա. VI դար). ընդգրկված է Ուրուատրի-Ուրարտու-Արարատի թագավորությունը:
3. Հեկատես Միլեթացու (Ք. ա. IV դ.) քարտեզը:
4. Պտղոմեոսի (Ք. հ. I-II դդ.)՝ աշխարհի քարտեզը, ուր պատկերված են Սեծ և Փոքր Հայքերը:

2. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԼԵՁՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լեզուն ժողովրդի հավերժությունը պայմանավորող հզոր զարկերակն է: Հայերենն աշխարհի առավել զարգացած լեզուներից մեկն է: Հայոց լեզվի պատմական ուղին ընդգրկում է զարգացման տարբեր փուլեր, վիճակներ՝ **նախահայերեն, վիպասանական հայերեն, գրաբար, հունաբան հայերեն, լատինաբան հայերեն, միջին գրական հայերեն, նոր գրական հայերեն (արևելահայերեն և արևմտահայերեն):** Հայերենն ունի **60 բարբառ** ու բազմաթիվ **ենթաբարբառներ:** Հայերենագիտությունը վաղուց դարձել է միջազգային հետաքրքրությունների առարկա, և նրա երախտավորների շարքում կան բազմաթիվ ազգերի ներկայացուցիչներ:

Այն, ինչ չի կարող տալ նյութական-մշակութային արժեքների ուսումնասիրությունը, կարող ենք գտնել լեզվի գանձարանում: **Գր. Ղափանցյանը** լեզուն համեմատում է մի շտեմարանի հետ, ուր անցյալը պահվում է իր բազմազանությամբ: Անհրաժեշտ է միայն պեղումներ կատարել, և անցյալը կբացի իր գաղտնիքները:

Հնդեվրոպացիների նախահայրենիքի տեղորոշման նպատակով մեծ ուշադրություն է դարձվում լեզվաբանությանը: **Համեմատական լեզվաբանություն**, օգտագործելով տարբեր լեզուների ընդհանրությունները, դրանց միջև եղած փոխազդեցություններն ու փոխառությունները, փորձում է **գտնել հնդեվրոպացիների նախահայրենիքը, մայր լեզուն և նախաժողովուրդը:**

XX դարի հայագետների մեծ մասը (**Յ. Աճառյան, Ն. Ադոնց, Ա. Մեյե, Հ. Հյուբշման**) հնդեվրոպացիների նախահայրենիքը տեղադրում էր Բալկանյան թերակղզում: Սակայն արդեն XIX դարի վերջին առաջ էր քաշվել հնդեվրոպացիների նախահայրենիքի՝ Առաջավոր Ասիայում գտնվելու տեսակետը (**Յ. Շմիդտ, Ջ. Նայար**):

XX դարի 70-ական թվականներին օգտագործելով համեմատական լեզվաբանության հնարավորությունները՝ լեզվաբաններ **Օ. Շիրոկովը, Վ. Իվանովը, Թ. Գամկրելիձեն, Ռ. Իշխանյանը, Գ. Ջահուկյանը** հնդեվրոպացիների նախահայրենիքը տեղադրում են Հայկական լեռնաշխարհում և շրջակա տարածքներում: Նրանք հենվում են հայոց լեզվի հնագույն շերտերի ուսումնասիրության վրա: Պարզվում է, որ հայոց լեզվի բառապաշարի հնագույն շերտը հնդեվրոպական է կամ բնիկ հայկական և արտացոլում է Հայկական լեռնաշխարհի կենդանական ու բուսական աշխարհը, նրա կենցաղային, մշակութային առանձնահատկությունները:

Առաջիններից մեկը **Ռ. Իշխանյանն էր**, ով հայոց լեզվում հայտնաբերեց շուրջ 100 շումերա-աքքադական բառ, ինչպես օրինակ՝ **կշեռք, կաշառք, արագիլ, դուռ, նուռ, գինի** և այլն, որոնք,

իր կարծիքով, հայերը վերցրել են այդ հնագույն ժողովուրդներից: **Դրանով ապացուցվում էր, որ IV-III հազ. շումերների և աքքադացիների հարևանությամբ՝ Հայկական լեռնաշխարհում, բնակվում էին հայեր:**

Հետագայում, համեմատելով շումերերեն, աքքադերեն և հայերեն բառերը, լեզվաբանները պարզեցին, որ հայերենն ավելի մոտ է շումերերենին: Ապացուցվեց **շումերների կողմից հայերենից նշված բառերի փոխառումը, ապա դրանց անցումն աքքադերենին:**

Եզրակացությունը մեկն է՝ Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի պետությունների ու ժողովուրդների միջև եղել են սերտ, կայուն տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային կապեր, առանց որոնց անհնար էր լեզվական փոխազդեցությունը:

Սեմական (աքքադերեն, արամերեն, ասորերեն, հրեերեն, արաբերեն) և հնդեվրոպական (հայերեն, լատիներեն, հունարեն, հինդու, իրանական լեզուներ, գերմաներեն, ռուսերեն և այլն) լեզուներում կան բազմաթիվ նման բառեր: Բնական է, որ դրանց կապող օղակը սեմական ժողովուրդների հետ անմիջական շփում ունեցող հայերն են ու հայոց լեզուն:

Հայերենը կապ ունի հնդեվրոպական մի շարք մեռած՝ օրինակ՝ խեթա-լուվիական լեզուների հետ: Ուսումնասիրողները (Պ. Ենսեն, Գր. Ղափանցյան, Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան) պարզել են, որ սեպագիր խեթերենի, պալայերենի, լուվիերենի (Ք. ա. XVII-XIII դդ.) ու հայերենի միջև ևս կան շատ ընդհանրություններ: Հետևաբար, հայերը գոնե մինչև այս ժողովուրդների անհետանալը՝ Ք. ա. II հազարամյակ, պետք է նրանց հարևանը լինեին:

1981 թ. Թբիլիսիում լույս տեսավ անվանի լեզվաբաններ **Վ. Իվանովի և Թ. Գամկրելիձեի «Հնդեվրոպացիներ և հնդեվրոպական լեզու» երկհատոր աշխատությունը:** Հեղինակները, համեմատական լեզվաբանության հիման վրա ամփոփելով հնդեվրոպաբանության ողջ ժառանգությունը, եկան սպառիչ և համարձակ եզրահանգման՝ հնդեվրոպական մայր լեզուն և ժողովուրդը ձևավորվել են մոտ X հազարամյակում (այժմ ընդունվում է Ք. ա. XIII – XII հազ.)՝ Հայկական լեռնաշխարհի, Իրանական բարձրավանդակի և Հյուսիսային Միջագետքի տարածքում: «Հնդեվրոպական» անվանումն աշխարհագրական բնույթի է, իսկ ըստ լեզվահոգևոր պատկանելության՝ այս լեզվաընտանիքը կարող է համարվել **արիական**, որի բնօրրանն է Արևի հնագույն պաշտամունքի կենտրոնը՝ Հայկական լեռնաշխարհը: Քանի որ նախալեզվի արմատական բառերն ամենից շատ (ավելի քան 500 նմուշ) առկա են հայոց լեզվում և, բացի այդ, հնդեվրոպական (և ոչ միայն) լեզուների հետ ամենից շատ բառային-իմաստային առնչություններ ունի հայերենը, ուստի և կարելի է եզրակացնել, որ **հայ ժողովուրդը ծագել ու հարատևել է հնդեվրոպացիների նախահայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում:**

3. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդաբանությունը (միջազգային տերմինն՝ **անտրոպոլոգիա**) գիտություն է մարդու առաջացման ու զարգացման, ռասսաների, ազգերի ձևավորման ու մարդու կազմվածքի նորմալ տարբերակների վերաբերյալ: Մարդաբանությունը սերտորեն առնչվում է հնագիտության և ազգագրության հետ: **Հնէամարդաբանությունն** ուսումնասիրում է մարդկանց և մարդու մերձավոր ազգակիցների պեղած ոսկրային մնացորդները: **Էթնոգենեզին (ազգի**

ծագումնաբանություն) վերաբերող ուսումնասիրություններում մարդաբանությունը գուգակցվում է **լեզվագիտության, պատմության, հնագիտության** հետ:

Դեռևս հին հույները (Սոկրատես, Զիպոկրատես, Արիստոտել) մարդաբանական դիտարկումներ են կատարել, բավական փաստեր կուտակել և մեզ են թողել մի շարք աշխատություններ:

Հայկական լեռնաշխարհի բնակիչների ֆիզիկական առանձնահատկությունների մասին տեղեկություններ կան **Քսենոփոնի** մոտ (Ք.ա. V դար): Հայերի մարդաբանական տիպը նկարագրում է պատմահայր Մովսես Խորենացին «**Վահագնի ծնունդը**» վիպերգում:

Հայերի մարդաբանական տիպի առաջին գիտական ուսումնասիրությունները կատարել է **Պ. Լանգերհանսը 1873 թ.**, ապա նաև՝ **Է. Շանտրը, Ռ. Էրկերտը, Ա. Իվանովսկին** և ուրիշներ:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին **Ֆ. Ֆոն Լուշանն** ընդհանուր մարդաբանական գծեր գտավ **խեթերի** և ժամանակակից հայերի միջև և հանգեց այն եզրակացության, որ հայերը կազմում են յուրահատուկ մարդաբանական տիպ, որն անվանեց **արմենոիդ**: Այս տիպին հատուկ են կլոր գանգը, տափակ ծոծրակը, մարմնի խիտ մազածածկույթը, ալիքածև մազերը, բարձր քթոսկրը և այլն: «**Արմենոիդ**» տիպի հնագույն նմուշներ են **Լագաշից (Շումեր)** հայտնաբերված ցածրաքանդակները (Ք. ա. III հազ.): Հայաստանում այս տիպին պատկանող գանգեր (Ք. ա. IV հազ.) գտնվել են Շենգավիթից: Մարդաբանական հետազոտություններով ապացուցվել է, որ Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում ապրող խուրրի-ուրարտական ցեղերի տիպը պահպանվել է Հայկական լեռնաշխարհի և Առաջավոր Ասիայի ժամանակակից ժողովուրդների, մասնավորապես հայերի մեջ: Սա փաստում է, որ Ք. ա. II հազարամյակից մինչև I հազարամյակի կեսը Հայկական լեռնաշխարհում բնակվող խուրրի-ուրարտական ցեղերը ևս ժամանակակից հայերի նախնիներն են:

Հետագա ուսումնասիրությունները բացահայտեցին, որ «արմենոիդ» տիպը գենետիկորեն արտակարգ միատարր է հայերի մեջ: Հայերն օժտված են «եվրոպոիդ» ռասսային բնորոշ բոլոր հատկություններով: Հետաքրքիր է նաև այն, որ մարդաբանական «արմենոիդ» տիպի առաջացման ու տարածման սահմանները հիմնականում համընկնում են հնդեվրոպական լեզվաընտանիքի ժողովուրդների նախահայրենիքի և նրանց տարածման սահմաններին:

Այսպիսով՝ **նյութական-մշակութային արժեքների համեմատության, համեմատական լեզվաբանության ու մարդաբանության ուսումնասիրությունների շնորհիվ կուտակված հսկայական գիտական նյութը թույլ է տալիս ասելու, որ Հայկական լեռնաշխարհը հայկական (արիական) ցեղի հայրենիքն է, հայ ժողովուրդն արիական ռասսայի ու քաղաքակրթության հիմնական կրողն ու ժառանգորդն է և նախասկզբնական ժամանակներից մինչև օրս ապրում և արարում է իր մայր երկրում, թեկուզև սեղմված է նրա մի փոքր հատվածում:**

ԳԼՈՒԽ 2. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ

2.1. ՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ (Ք.Ա. ՈՍ ՀԱԶԱՐԱՄՅԱԿ – Ք. Հ. 1 ԴԱՐ)

Հայ ժողովրդի պատմական անցյալն իր մեջ արտացոլում է աշխարհի ժողովուրդների անցած ուղու օրինաչափ փոփոխությունների բոլոր ելևէջները: Միաժամանակ եզակի է հայ ժողովրդի պատմական ճակատագիրը: **Լինելով աշխարհի հնագույն ազգերից մեկը՝ հայերը պատմության քառուղիներում ցուցաբերել են բացառիկ կենսունակություն:** Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդների մեծ մասն անհետացել է պատմական թատերաբեմից, բայց հայ ժողովուրդը, թեև կորցրել է իր պատմական հայրենիքի մեծ մասը, այնուամենայնիվ գոյատևել և հարատևում է: Սակայն հայ ժողովրդի պատմական ուղին չի եղել սոսկ գոյատևում. այն հաճախ դաժան ու ծանր գոյապայքարի է վերածվել: Ապրելով աշխարհագրական մի միջավայրում, որը համարյա թե միշտ եղել և մնում է հզոր տերությունների քաղաքական շահերի խաչաձևման կիզակետ՝ հայ ժողովուրդը ստիպված է եղել անընդհատ պայքարել իր անկախության ու պետականության պահպանման համար: Ամեն տեսակ չար ու դաժան ուժերի դեմ չընդմիջվող պայքարում մեր ժողովուրդը դարձել է պողպատի պես ամուր, երբեք չի կոտրվել ու չի կորցրել իր ոգու ամրությունը: Իր բնույթով աշխատասեր ու արարող հայ ժողովուրդը ստեղծել է պատմամշակութային գանձեր, որոնք իրենց արժանի տեղն ունեն համամարդկային մշակույթի գանձարանում:

1. ՀՆԱԳՈՒՅՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Արատտա: Համաշխարհային գրականության գանձարանում առանձնահատուկ է շումերական «**Գիլգամեշ**» դյուցազնավեպի ոչ միայն գրական, այլև պատմագիտական արժեքը: Դյուցազնավեպի ինը վեպերգից հինգում տեղեկություններ են պարունակվում **Արատտա** երկրի մասին (Ք.ա. XXVIII-XXVII դդ.):

Արատտան գոյատևել է Հայկական լեռնաշխարհում և եղել է հնագույն այդ ժամանակաշրջանի ամենազարգացած երկրներից մեկը: Արատտայում, ինչպես Շումերում, երկիրը ղեկավարում էր «**գերագույն քուրմը**», որը կարևոր պետական հարցերը որոշում էր՝ խորհրդակցելով **ավագների ժողովի** հետ:

Արատտան ունեցել է բավականին զարգացած տնտեսություն, իսկ նրանց մոտ արհեստների, մանավանդ շինարարական, զարգացման բարձր մակարդակի մասին է վկայում այն փաստը, որ շումերները արատտացի վարպետներից պահանջել են իրենց երկրում կառուցել տաճարներ: **Արատտացիները հավանաբար աշխարհում առաջինն են ձիեր օգտագործե տնտեսության մեջ ու ռազմական գործում:**

Ք.ա. V-III-րդ հազարամյակներում վաղ բրոնզեդարյան շրջանի պատկերագրերի գործածության փաստը և շումերական աղբյուրների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ աշխարհում առաջինը գիր ստեղծած շումերների հետ լայն կապեր ունեցող Արատտա երկիրը ևս ունեցել է սեփական գիր: Եթե նկատի ունենանք, որ Ք.ա. III հազարամյակում **ողջ Հայկական լեռնաշխարհի ու հարակից շրջանների** հնագիտական նյութը (300-ից ավելի հնավայրերի)

նմանատիպ է, ապա կարելի է փաստել, որ այդ մշակույթը կրող ցեղերը՝ հավանաբար 100-ից ավելի, ունեցել են ծագումնաբանական, ազգակցային ընդհանրություն:

Յայտաս: **Ք.ա. XXIV դարում**, երբ դեռ նոր էր սկսվել Հայկական լեռնաշխարհի ցեղերի միավորումը, տեղի ունեցավ աշխարհում առաջին աշխարհակալ պետության հիմնադիր **Սարգոն Մեծ Աքքադացու** արշավանքը դեպի Հայկական լեռնաշխարհ: **Ք.ա. XXIII դարում** Հայկական լեռնաշխարհի երկիր-թագավորությունները ենթարկվեցին Սարգոնի թոռան՝ **Նարամ-Սուեն Աքքադացու** նվաճողական արշավանքներին:

Ք.ա. II հազարամյակում Հայկական լեռնաշխարհում ձևավորված ցեղային միությունների ցեղապետությունները՝ **Հայասա-Ազգին, Արմե-Շուբրիան, Նահիրին, Ուրուատրին** և ստիպված էին դիմագրավել խեթական, ասորական, խուռիական պետությունների ոտնձգություններին՝ հաճախ հաղթող դուրս գալով այդ պայքարում:

Հայասա կամ **Հայասա-Ազգի** ցեղապետությունը **Ք.ա. XV** դարում հանդես է գալիս **Տայքի, Բարձր Հայքի և Փոքր Հայքի** տարածքում՝ Եփրատի ափին ընկած **Կումախա** (հետագայում՝ **Անի-Կամախ**) մայրաքաղաքով: Հայասայի արքաները (**Մարիաս, Կարաննիս, Խուկանաս, Անիաս**) **Ք.ա. XIV-XIII դդ.** իրենց տիրապետության սահմաններում ընդգրկել էին Հայկական լեռնաշխարհի ամբողջ արևմտյան մասը՝ Սև ծովից մինչև Վանա լիճ: Հայասայում բարձր զարգացման էին հասել երկրագործությունն ու անասնապահությունը, արհեստագործությունը, մանավանդ՝ մետաղագործությունը: Այստեղ կառուցվել են ամրացված քաղաքներ, բերդեր:

Խեթական թագավորները հաճախ բախվել են Հայասայի հետ: Ք.ա. XIV դարի սկզբներին նրանք երկու արշավանք են կատարել Հայասայի դեմ, բայց չեն կարողացել հաղթել նրան: Հայասա ցեղապետությունը վերջին անգամ հիշատակվում է Ք.ա. XIII դարի երկրորդ կեսին խեթական արձանագրություններից մեկում:

Օտար աղբյուրներում Հայկական լեռնաշխարհի տարածքում հիշատակվում են նաև **Ալծի (Աղծնիք), Իշուվա (Ճոփք), Բարձր երկիր (Բարձր Հայք), Կադունլիսի (Կորդուք), Ինծիտե (Անծիտ), Դայաենի (Տայք), Տունմուրու (Տմորիք)** և այլ ցեղապետությունների մասին, որոնք հիմնականում ընդգրկում էին լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանները:

Հայկական լեռնաշխարհի ցեղապետությունները, չնայած բնական սահմաններով պարփակվածությանը և սահմանազատմանը, դեռևս Ք.ա. 2-րդ հազարամյակի վերջերից իրար հետ կապված էին տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային կապերով, թշնամու դեմ կարողանում էին ստեղծել բավական ամուր ռազմական համադաշնություններ: Այսպես, օրինակ՝ Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասի նաիրյան ցեղերն Ասորեստանի արքաների ասպատակություններին դիմագրավում էին 60 և ավելի ցեղերի միացյալ ուժերով: **Ընդհանուր թշնամու դեմ միացյալ պայքարում հայկական ցեղերի մոտ աստիճանաբար ձևավորվում էր ընդհանուր շահի, իրենց ծագումնաբանական ընդհանրության գիտակցումը:**

2. ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (ՈՒՐԱՐՏՈՒ)

Հայկական լեռնաշխարհում կազմավորված ցեղապետությունների հետագա մերձեցումը Ք.ա. XI դարի առաջին կեսին հանգեցրեց լեռնաշխարհի կենտրոնական և հարավային շրջաններում հայկական հնագույն միավորված պետության՝ **Արարատյան թագավորության**, կազմավորմանը: **Հայկական լեռնաշխարհի ցեղերի մեծ մասն առաջին անգամ մեկ**

պետության մեջ միավորվել են Ք. ա. IX-VIII դարերում: Բիայնացիներն, որոնք բնակվում էին Վանա լճից Ուրմիա լիճն ընկած տարածքում, դիմագրավելով Ասորեստանի ոտնձգություններին, ստեղծեցին **Ուրարտու-Արարատյան** (հաճախ անվանվում է նաև **Վանի**) թագավորությունը:

Ուրարտի կամ **Ուրուարտի** ձևով այս պետությունն առաջին անգամ հիշատակվում է **Ք.ա. XIII** դարում, ասորեստանյան արձանագրություններից մեկում: Այն համառ պայքար է մղել Ասորեստանի տիրակալների ավերիչ արշավանքների դեմ, իսկ արդեն **Ք.ա. IX** դարից Ուրարտուն բռնել է հզորացման ճանապարհը: Պետության հիմնադիր **Արամեն**, որը հիշատակվում է **Ք.ա. 859 թ.**, հզոր Ասորեստանի դեմ երկարատև պայքար է մղել իր պետության հիմնադրման առաջին օրերից սկսած: Պետության կենտրոնն այդ ժամանակ դարձել էր Վանա լճից հյուսիս ընկած **Արգաշկու (Արճեշ)** քաղաքը:

Արարատյան թագավորության սահմանների ընդլայնման և ազդեցության ոլորտների ծավալման քաղաքականությունը հաստատակամորեն շարունակեցին Արամեի անմիջական հաջորդները: Ուրարտական հաջորդ՝ **Սարգուրի I** արքան (**Ք.ա. 835-825 թթ.**), կառուցեց մայրաքաղաք **Տուշպան** (ներկայիս՝ **Վանը**) և շարունակեց պայքարն Ասորեստանի դեմ: Տուշպա-Վանի հզոր միջնաբերդի կառուցմանը նվիրված արձանագրություններում Սարգուրի I-նն իրեն անվանում է «մեծ արքա, հզոր արքա, Նահիի երկրի արքա, արքաների արքա»:

Սարգուրիի հաջորդների՝ **Իշպուլիմիի (Ք.ա. 825-810 թթ.)** և **Մենուայի (Ք.ա. 810-786 թթ.)** ժամանակ Վանի թագավորությունն ավելի է հզորանում: Երկրի հոգևոր կենտրոն է դառնում **Արդիմի (Մուծածիր)**՝ այնտեղ կառուցված **Խալդի** աստծո տաճարով:

Մենուայի գահակալմամբ Վանի թագավորությունը մտնում է իր հզորության ժամանակաշրջանը: **Ք.ա. 810-745 թթ. ժամանակահատվածում Մենուա և նրան հաջորդած Արգիշտի I, Սարգուրի II հզոր արքաների արշավանքներով այդ պետությունը դարձավ տարածաշրջանում ամենահզորը:** Մենուան իր պետությանը միավորեց **Տարոնը, Ծոփքը՝** հասնելով մինչև Եփրատի աջ ափը: Նա առաջինն էր, որ գնահատեց Արարատյան դաշտի նշանակությունը և այնտեղ՝ Արաքս գետի աջ ափին, կառուցեց **Մենուախիմիլի (Մենուայի քաղաք)** քաղաք-ամրոցը՝ Խալդիին նվիրված տաճարով:

Մենուայի օրոք երկրում լայն թափ են ստանում շինարարական աշխատանքները: Կառուցվում են նոր քաղաքներ ու բերդեր, տաճարներ, ջրանցքներ, ճանապարհներ և կամուրջներ: Նշանավոր է Մենուայի կառուցած ջրանցքը Վանում՝ **72** կմ երկարությամբ, որը հայտնի է **Շամիրամի ջուր** անունով: Այն խմելու և ոռոգման ջուր էր մատակարարում մայրաքաղաքին, շրջակայքին և գործում է մինչ օրս:

Արարատյան թագավորության հզորացումը և անկասելի վերելքը շարունակվեցին Մենուայի հաջորդների՝ **Արգիշտի I-ի (Ք.ա. 786-764 թթ.), Սարգուրի II-ի (Ք.ա. 764-735 թթ.)** և մասամբ նաև **Ռուսա I-ի (Ք.ա. 735-713 թթ.)** գահակալման տարիներին, որոնց գլխավորությամբ հակասասորեստանյան ռազմաքաղաքական խմբավորման մեջ ներքաշվեցին դրացի բազմաթիվ երկրներ:

Արգիշտի I արքան, շարունակելով հոր գործը, ներքին քաղաքականության մեջ երկրի տնտեսության զարգացման համար մեծ աշխատանքներ կատարեց: Արարատյան դաշտը, որ միշտ էլ եղել է հայ ժողովրդի տնտեսական ու մշակութային կենտրոնը, համալրվեց բազմաթիվ նոր բնակավայրերով ու կառույցներով: **Ք.ա. 782 թ. ներկայիս Երևանի տարածքում՝ Արին-Քերդ բլրի վրա, կառուցվեց Էրեբունի բերդաքաղաքը:** Հայկական լեռնաշխարհի արևմուտքից այստեղ

տեղափոխվեցին 6600 զինվորներ՝ իրենց ընտանիքներով: Արարատյան դաշտում Արգիշտին հիմնադրեց նաև **Արգիշտիխինիլի** քաղաքը, որը հետագայում դարձավ Երվանդունիների մայրաքաղաքը՝ ստանալով **Արմավիր** անունը: Արարատյան (Ուրարտու) թագավորության հզորության, ինչպես նաև քաղաքակրթության ձեռք բերած բարձր մակարդակի մասին են վկայում կառուցողական արվեստի, հատկապես քաղաքաշինության նվաճումները: **Եթե Ասորեստանի հռչակավոր մայրաքաղաք Նինվեի շրջագիծը 15 կմ էր, իսկ Բաբելոնինը՝ 10 կմ, ապա Արգիշտիխինիլինը եղել է մոտ 12 կմ:** Անգլիացի պատմաբան, հայագետ **Դեվիդ Մարշալ Լենգն** իր «Հայաստանը քաղաքակրթության օրրան» աշխատությունում նշում է, որ **Ուրարտուի արքաներն աթենացիներից շատ ավելի վաղ են միջնաբերդ կառուցել որպես ամբողջական դասական ճարտարապետական համալիր:**

Ք.ա. 777թ. Ասորեստանի դեմ 14 արշավանք կատարած Արգիշտի I արքան ստիպեց նրան հարձակողական մարտերից անցնել պաշտպանողականի: Նրա անունն անգամ սարսափ էր առաջացնում Ասորեստանի զորավարների մոտ:

Արարատյան թագավորության բնակչության կազմը մեծամասնությամբ հայկական ցեղերն էին: Ինչպես վկայում են մեզ հասած ասորական և ուրարտական սեպագիր արձանագրությունները, **Ք.ա. VIII դարում** Հայկական լեռնաշխարհը ծածկված է եղել բնակավայրերի խիտ ցանցով, ունեցել է այն ժամանակների համար բավականին հոծ բնակչություն: Ասորեստանի թագավոր **Սարգոն II-ը** Ռուսա I-ի դեմ տարած հաղթանակի մասին (**Ք.ա. 714թ.**) արձանագրել է. «Նրա բազմաթիվ քաղաքները, որոնք երկնքի աստղերի պես անթիվ էին, բոլորը ես նվաճեցի...»:

Սկսած **Ք. ա. VIII դարի** երկրորդ կեսից Վանի թագավորությունը որոշ չափով թուլացավ ասորեստանցիների, ապա և Հյուսիսային Կովկասից ներխուժած **կիմերների** և **սկյութական** ցեղերի ավերիչ ասպատակություններից, սակայն շարունակում էր մնալ տարածաշրջանի հզոր ուժերից մեկը: Արարատյան թագավորության հզորությունը և քաղաքական հեղինակությունը այնքան ազդու էր, որ Հին Հրեաստանի հոգևոր առաջնորդ Երեմիան (**Ք.ա. 629-586թթ.**) որ **Բաբելոնիայի** դեմ պայքարում օգնության էր կանչում հայոց թագավորությանը: Ուրարտուն իր գոյությունը պահպանեց մինչև **Ք.ա. 580-ական** թվականները:

3. ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ք.ա. VII դարի վերջերին Առաջավոր Ասիայում հզորացավ **Մեդիան (Մարաստան)**, որի հարվածների տակ **Ք.ա. 612 թ.** կործանվեց երբեմնի հզոր Ասորեստանի մայրաքաղաք **Նինվեն**, իսկ ավելի ուշ՝ **Ք.ա. 580-ական** թվականներին՝ Վանի թագավորությունը: Ըստ Մովսես Խորենացու բերած մի ավանդության՝ մարերի թագավոր **Կիաքսարի** հետ Նինվեի գրավմանն ու Ասորեստանի կործանմանը մասնակցել են նաև հայերը՝ «**հայոց առաջին պսակավոր**» **Պարույր Նահապետի** գլխավորությամբ: Կիաքսարն իրեն մատուցած ծառայության դիմաց Պարույրին ճանաչել է իբրև Հայոց թագավոր:

Ք.ա. 580-ական թվականներից Վանի թագավորության մայրաքաղաք **Տուշպա-Վանում** ամրացած **Պարույր Սկայորդու (հսկայի որդի)** ազգականներից **Երվանդ Սակավակյացը** հիմք դրեց մի նոր արքայատոհմի, որը հայտնի է **Երվանդունյաց կամ Երվանդական անուններով (Ք.ա. 580-ական թթ. - Ք.ա. 201 թ.):** Վերջինս դարձավ Վանի թագավորության

պետականության ժառանգորդը: Մովսես Խորենացին վկայում է, որ **Ք.ա. VI-IV դդ. Հայաստանում գահակալող արքաներն Արամի հիմնադրած Հայկազյան արքայատան ներկայացուցիչներից էին:**

Հիմնականում նախկին պետության սահմաններում միավորված երկիրը Երվանդունիների օրոք հարավից սահմանակցում էր Մարաստանին, իսկ հյուսիս-արևմուտքից՝ մերձսևծովյան շրջաններին: Հայկական գործի թիվն այդ ժամանակ հասել էր 48 հազարի՝ 40 հազարը հետևակ, 8 հազարը՝ հեծյալ:

Երվանդունիների հայոց անկախ պետությունը շուտով ընկավ իր նախկին դաշնակից Մարաստանի տիրապետության տակ և պայքար սկսեց իր անկախությունը վերականգնելու համար: **Ք.ա. 555թ.** մարերի տիրապետության դեմ սկսված պայքարում հայերին աջակցում էին պարսից Աքեմենյանները՝ **Կյուրոսի** գլխավորությամբ, որոնք նույնպես ապստամբել էին Մարաստանի դեմ: Կյուրոսին հաջողվում է տապալել Մարաստանի իշխանությունը, իսկ նրան այդ գործում աջակցում էր հայոց թագավոր **Տիգրանը**՝ Երվանդ Սակավակյացի որդին:

Ք.ա. 550 թ. Կյուրոս Մեծը ստեղծում է պատմության մեջ մինչ այդ գոյություն ունեցած աշխարհակալ տերություններից ամենամեծը՝ **Աքեմենյան պարսկական տերությունը**, որի մեջ արտոնյալ կարգավիճակով մտնում է նաև Հայոց թագավորությունը: Սակայն վիճակը փոխվում է Աքեմենյան **Դարեհ I** արքայի օրոք, որի դաժան իշխանությունը մեծ դժգոհություն էր առաջացնում ամբողջ տերության մեջ: Այդ ժամանակներից էլ սկսվում է հայ ժողովրդի պայքարը լիակատար անկախության համար, որի վկայությունը **Ք.ա. 522-520թթ.** Աքեմենյան Պարսկաստանի դեմ ապստամբությունն էր: **Աքեմենյան թագավոր Դարեհ Մեծի Բեհիսթունյան եռալեզու արձանագրության մեջ արքան վկայում է, որ ամենից դժվարությամբ կարողացել է հնազանդեցնել հայերին**, որոնց դիմադրությունը ճնշվել է միայն հինգ արյունահեղ ճակատամարտերից հետո: Ապստամբած Հայաստանի դեմ Դարեհը երկու մեծ բանակ է ուղարկում, որոնցից մեկը վարում էր հայազգի **Դադարշիշը**, իսկ մյուսը՝ պարսիկ մի զորավար:

Հայաստանը ժամանակավորապես կորցնում է իր անկախությունը և ընկնում պարսից Աքեմենյանների տիրապետության տակ: Անգամ այս պայմաններում Երվանդունիների Հայկական թագավորությունը շարունակում էր պահպանել իր ներքին ինքնուրույնությունը: Երկիրը կառավարում էին Երվանդունիները, որոնք արտոնյալ դիրք ունեին պարսկական արքունիքում: Հայոց պետությունն այդ ընթացքում շարունակում էր տնտեսապես ու ռազմականապես հզորանալ: Դրա վկայությունն է այն փաստը, որ **Մեծ Հայքը** և **Փոքր Հայքը**, լինելով Աքեմենյան Պարսկաստանի **20** սատրապություններից երկուսը, գանձարան էին մուծում աշխարհակալ այդ պետության մեջ հավաքված հարկերի **1/3-ը՝ 400 տաղանդ:** **Միայն որպես հարկ՝ հայերը պարսկական զորքին տարեկան տրամադրում էին 20.000 ձի:**

Ք.ա. 401 թ. պարսից **Արտաքսերքսես** թագավորի դեմ ապստամբում է եղբայրը և պարտություն կրում: Նրա վարձած հույն զինվորների **10 հազարանոց (բյուր)** բանակը, որի հրամանատարներից էր հույն պատմիչ և զորավար **Քսենոփոնը**, ստիպված էր Միջագետքից Հայաստանի վրայով նահանջել դեպի Սև ծով: Հույն պատմիչն իր «Անաբասիս» («Նահանջ բյուրոց») աշխատության մեջ նկարագրում է Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղերին, նրանց կենցաղն ու բնակարանները և արժեքավոր տեղեկություններ թողնում պատմական այդ ժամանակաշրջանի Հայաստանի պատմության վերաբերյալ:

Ք.ա. ամբողջ V դարի ընթացքում սուր պայքար էր մղվում միավորված հունական քաղաք-պետությունների՝ Աթենական ֆեդերացիայի ու Սպարտայի միացյալ ուժերի և Աթենենյան Պարսկաստանի միջև: Չնայած պարսիկները գրավեցին Աթենքը, սակայն հետագայում, երբ Աթենենյան Պարսկաստանը սկսեց թուլանալ, իսկ Մակեդոնիայի արքա **Ֆիլիպը** միավորեց հույներին, վիճակը փոխվեց: **Ֆիլիպի որդի Ալեքսանդր Մակեդոնացին Ք.ա. 334 թ.** անցավ **Յելես-Պոնտոսը (Քոսֆորի նեղուցը)** և **Ք.ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտում** պարտության մատնեց պարսից արքա **Դարեհ III Կոդոմանոսին**: Պարսիկների կողմից ճակատամարտին մասնակից հայկական զորքը պարտություն չէր կրել, և **Երվանդ III արքան**, օգտվելով այդ վիճակից, **վերականգնեց Հայկական թագավորության լիակատար անկախությունը**: Ավելին՝ նա ոչ միայն կարողացավ պարտության մատնել Հայաստան ներխուժած մակեդոնյան զորավարներ **Մեմնոսի** և **Սելևկոս Նիկատորի** զորքերին, այլև աջակցեց Փոքր Հայքի, Կապադովկիայի և Պոնտոսի թագավորություններին՝ պահպանելու իրենց անկախությունը:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով Առաջավոր Ասիայում՝ այդ թվում նաև Հայաստանում, ամրապնդվեց հունական քաղաքակրթության և Առաջավոր Ասիայի մշակույթների միաձուլմամբ ձևավորված **հելլենիզմը**: Մակեդոնացու մահից հետո նրա աշխարհակալ պետությունը քայքայվեց: Առաջավոր Ասիայում գերիշխող դարձավ Սելևկյան պետությունը: Այդ պետության արքաների՝ Հայաստանը ստրկացնելու փորձերը 120 տարի շարունակ ապարդյուն անցան: Կարճ ժամանակով միայն **Ք.ա. 201-190թթ.** սելևկյան Անտիոքոս Մեծ արքայի օրոք Մեծ Հայքը ենթարկվեց Սելևկյաններին, սակայն շարունակվում էր կառավարվել հայազգի ստրատեգոս **Արտաշեսի** կողմից:

4. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ք. ա. II դարի սկզբին միջազգային ասպարեզում հիմնավորապես հանդես եկան նոր հակամարտող ուժեր: Իրանի հյուսիս-արևելքից շարժվող պարթևներն աստիճանաբար տեր էին դառնում Սելևկյանների տիրույթներին, իսկ արևմուտքում հզորանում էր Հռոմեական պետությունը:

Ք.ա. 190թ. Սելևկյանները **Մագնեսիայի ճակատամարտում** ծանր պարտություն կրեցին հռոմեացիներից: **Հայկական լեռնաշխարհում նորից անկախ դարձան Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփքի և Կոննազենեի հայկական թագավորությունները**: Մեծ Հայքում **Արտաշեսը (Ք. ա. 189-160 թթ.)** հանդիսացավ նոր արքայական տոհմի՝ **Արտաշեսյանների (Ք.ա. 189-1թթ.)** հիմնադիրը:

Արտաշես I Բարի արքան իր արտաքին միավորիչ գործունեությամբ և ներքին բարեփոխումներով ստեղծեց կենտրոնացված միասնական հզոր պետություն: **Հայաստանը դարձավ Առաջավոր Ասիայի հզոր պետություններից մեկը**: Արտաշես արքայի օրոք հայ ժողովուրդն առաջին անգամ ունեցավ հոգևոր-գաղափարական միասնություն՝ միաժամանակ իրեն զգալով տնտեսապես ու քաղաքականապես միասնական: Դրան նպաստեց արքայի իրականացրած բազմաբնույթ բարենորոգումները, հատկապես հողի մասնավորեցման խնդրի կարգավորումը:

Այս փոփոխությունները նախադրյալ հանդիսացան նրա թոռան՝ **Տիգրան Մեծի (Ք. ա. 95-55 թթ.)** համար **աշխարհակալ պետություն ստեղծելու ճանապարհին**: Ի դեպ, սա միակ դեպքն է, երբ **հայոց պետությունը, իր մեջ ներառելով 15 տարբեր ազգությունների, տարածքը**

եռապատկել է, դուրս եկել Հայկական լեռնաշխարհի սահմաններից, ընդգրկել Կասպից ծովից մինչև Միջերկրական ծովը, Կովկասյան լեռներից մինչև արաբական անապատներն ընկած տարածքը: **Ջետաքրքիր է այն փաստը, որ անգամ որոշ ազգեր ինքնական են մտել Տիգրանի աշխարհակալ պետության մեջ** և դրանով իսկ իրենց համար ապահով կյանք ստեղծել:

Տիգրան Մեծի պետությունը դարձել էր աշխարհի հզորագույն պետության՝ Հռոմի հիմնական ախոյանը: Հաղթելով ու ոչնչացնելով Կարթագենին՝ Հռոմն իր ծավալապաշտական ձգտումներով ամեն ինչ անում էր՝ Առաջավոր Ասիայի հարուստ երկրներն իրեն ենթարկելու համար: Հռոմեացիները Ք.ա. 70-ական թթ. հաղթեցին Տիգրանի դաշնակից, իրենց ոխերիմ թշնամի Պոնտոսի արքա Միհրդատ Պոնտացուն և **Ք.ա. 69 թ. գարնանը հանկարծակի հարձակվեցին Տիգրան Մեծի տերության վրա: Սա հայերի առաջին լուրջ բախումն էր հռոմեացիների հետ:**

Հռոմեացի զորավար **Լուկուլլոսի** գլխավորած հռոմեական զորքերի դեմ տեղի ունեցավ երկու մեծ ճակատամարտ **Ք.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին** Տիգրանակերտի ճակատամարտում հայկական զորքերը պարտվեցին, իսկ **Ք.ա. 68 թ. սեպտեմբերին Արածանիի ճակատամարտում ծանր պարտության մատնեցին հռոմեացիներին:** Սակայն Հայաստանն արդեն հայտնվել էր երկու հզոր պետությունների՝ Հռոմի և Պարթևստանի ռազմավարական հետաքրքրությունների ոլորտում: Բացի այդ, երկրի ներսում հենց Տիգրան արքայի որդու կողմից դրսևորվեց քաղաքական պառակտում: Ներքաղաքական այս պայմաններում, հռոմեական և պարթևական սպառնալիքի առկայությամբ, Տիգրանը ցուցաբերեց իրավիճակը գնահատելու մեծ հմտություն: **Ք.ա. 66թ. հռոմեացի զորավար Պոմպեոսի հետ կնքած Արտաշատի պայմանագրով Հայաստանը դարձավ Հռոմի դաշնակիցն ու բարեկամը՝ մնալով հզոր ու ամբողջական պետություն, սակայն կորցրեց գրավյալ տարածքները և ստիպված էր վճարելու մեծ ռազմատուգանք:**

Արտավազդ II արքայի օրոք (**Ք.ա. 55-34 թթ.**) Հայաստանը ստիպված էր քաղաքական ու ռազմական ծանր պայքար մղել իր անկախությունը պահպանելու համար: Չնայած Հայաստանը շարունակում էր մնալ տարածաշրջանի երրորդ հզոր պետությունը, սակայն հարկավոր էր քաղաքականապես կողմնորոշվել դեպի այս երկու ուժերից որևէ մեկը: Հայաստանի պետական ինքնուրույնությունը պահպանելու համար Արտավազդ II արքան ստիպված էր երկակի քաղաքական դիրքորոշում որդեգրել՝ մի կողմից Հռոմի նկատմամբ «դաշնակցային» պարտավորությունների իրագործում, մյուս կողմից՝ Հռոմի արևելյան քաղաքականությանը՝ ամբողջ Առաջավոր Ասիան իրեն ենթարկելու ձգտմանը, հակակշռելու քաղաքականություն: Անգամ այս պայմաններում Հայաստանի ռազմական ու տնտեսական հզորությունն այնքան մեծ էր, որ նրա քաղաքական կողմնորոշումից էր մեծապես կախված այդ հզոր ուժերից որևէ մեկի հաղթանակը: Դժվարությունն այն էր, որ նրանք ամեն կերպ ցանկանում էին Հայաստանը նվաճել: Նվաճողական ձգտումներ ուներ հատկապես Հռոմը: Հռոմի՝ Պարթևստանի դեմ ձեռնարկած **Մարկոս Կրասոսի (Ք.ա. 53թ.),** ապա և **Մարկոս Անտոնիոսի (Ք.ա. 36թ.)** արշավանքներում Հայաստանը, պարտավորված լինելով դաշնակցել Հռոմին, բոլորովին էլ չէր ցանկանում թշնամանալ պարթևների հետ: Հայաստանի նկատմամբ զավթողական նկրտումները գիտակցելով էր, որ Արտավազդ II-ը Պարթևստանի հետ գնաց մերձեցման, որն ավարտվեց հայ-պարթևական ռազմաքաղաքական համագործակցության պայմանագրի կնքումով: Այն կնքվեց **Արտաշատում** և ամրապնդվեց Արտավազդի քրոջ ու պարթևական թագաժառանգ **Բակուրի** ամուսնությամբ:

Ք.ա. 34թ. Անտոնիոսը խաբեությամբ գերեց Արտավազդ II արքային և նրա ընտանիքին: **Ք.ա. 31թ.** Արտավազդ II-ին գլխատեցին: Հռոմեական զորքերը սկսեցին թալանել Հայաստանը:

Պարթևների աջակցությամբ **Արտաշես II արքային** կարճ ժամանակով (**Ք.ա. 30-20թթ.**) **հաջողվեց հաջողվեց վերականգնել Հայաստանի անկախությունն ու հզորությունը:**

Հռոմում կայսր հռչակված **Օկտավիանոս Օգոստոսը** քաղաքական դավերով 10 տարի շարունակ ձգտում էր Հայաստանի հետ թշնամացնել նրա հարևաններին, ինչպես նաև պառակտել երկրի ներքին ուժերը: Կաշառքի ու խոստումների միջոցով նրան հաջողվեց Հայաստանի դեմ լարել Փոքր Հայքի, Կապադովկիայի, Պոնտոսի թագավորներին, իբերական և աղվանական ցեղերին: Երբ **Ք.ա. 20 թ.** հռոմեական զորքերը ներխուժեցին Հայաստան, դավաճան հայ ազնվականների ձեռքով սպանվեց Արտաշես II արքան: Հայաստանը նորից հայտնվեց պետական անկախության կորստի վտանգի առջև: Հռոմեացիները գահ բարձրացրին Հռոմում մեծացած Արտաշես II-ի եղբորը՝ **Տիգրան III-ին (Ք.ա. 20-9 թթ.)**, որը փաստորեն կայսրության դրածոն էր: Վերջինս, իր մահվան պահին, Հռոմի մտադրություններին հակառակ, հայոց գահը կտակեց իր որդի **Տիգրան IV-ին (Ք.ա. 9 - Ք. հ. 1 թթ.)**, որը գահ բարձրացավ քրոջ՝ **Էրատոյի** հետ միասին: Տիգրան IV-ը զոհվեց լեռնականների դեմ պատերազմում, իսկ Հռոմը, գրավելով Հայաստանը, այն վերածեց պրովինցիայի:

Այսպես, **Ք.հ.1թ.** կործանվեց Արտաշեսյան արքայատոհմը, և Հայաստանը ժամանակավորապես կորցրեց իր անկախությունը:

2.2. ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (66-428 թթ.)

1. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՏՐԴԱՏ I

Արտաշեսյան արքայատան անկումից հետո, սկսած մեր թվարկության առաջին տարիներից՝ շուրջ կես դար շարունակ Հռոմի և Պարթևստանի միջև սուր պայքար էր մղվում Հայաստանի համար: Այդ երկու գերտերություններն էլ հետամտում էին Մեծ Հայքում իրենց ազդեցությունը պահպանել դրածո թագավորների միջոցով: Հայաստանում մինչև **52 թ.** ընկած ժամանակահատվածում Հռոմի և Պարթևստանի աջակցությամբ գահի շուրջ պայքար էին մղում հիմնականում հարևան **Ատրպատականի** և **Իբերիայի (Վրաստան)** մի շարք թագավորներ: Մինչդեռ հայ ժողովուրդը ջանում էր ձերբագատվել օտար կամակատար գահակալներից և վերականգնել Մեծ Հայքի թագավորության ինքնուրույնությունը: Պատահական չէ, որ այդ շրջանում բացի **Ջենոն-Արտաշեսից (18-34 թթ.)**, մյուս օտար դրածո գահակալները դավադրության զոհ դարձան:

I դարի կեսերից նոր փուլ սկսվեց հայ-պարթևական հարաբերություններում: Պարթևստանում գահ բարձրացած **Վաղարշ I Արշակունին (51-80 թթ.)** ծրագրեց Հայաստանում թագավոր հռչակել իր եղբորը՝ **Տրդատին**, ինչը համընկնում էր հռոմեական ծավալապաշտ քաղաքականությանը դիմակայող հայ ավագանու ձգտումներին: **52 թ.** Վաղարշը և Տրդատը պարթևական զորքով մտնում են Հայաստան, և Տրդատը մայրաքաղաք **Արտաշատում** հանդիսավորությամբ բազմում է Հայոց գահին: Հայոց թագը զավթած Հռոմի դրածո վրաց արքայորդի **Հռադամիստը** փախչում է Վրաստան՝ հոր մոտ՝ անօգնական թողնելով իր հղի կնոջը, որին հայերը փրկում են և ազատություն շնորհում:

Տրդատի հռչակումը Հայաստանի թագավոր խիստ զայրացրեց Հռոմի **Ներոն կայսրին (54-68թթ.)**, որը չհապաղեց խառնվել Հայաստանի գործերին: Պատերազմական գործողություններն որոշ ընդհատումներով տևեցին **10 տարի (54-64 թթ.)**: Տրդատը հայ-պարթևական միացյալ ուժերով Հայաստանից դուրս մղեց հռոմեացիներին: Սակայն Հռոմը, չհաշտվելով Հայաստանի կորստի հետ, **58 թ.** Արևելք ուղարկեց **Կորբուլոն** զորավարին, որը ներխուժելով Հայաստան՝ գրավեց և ավերեց **Արտաշատ** մայրաքաղաքը: Հռոմեացիներն ուժեղ դիմադրության հանդիպեցին հատկապես **Տիգրանակերտի** պաշարման ժամանակ: Հայաստանում ծավալված համաժողովրդական պայքարն ստիպեց Կորբուլոնին հեռանալ Հայաստանից: Պարթևների Վաղարշ թագավորը դեսպաններ ուղարկեց Հռոմ՝ Ներոն կայսեր մոտ՝ Տրդատին որպես Հայաստանի թագավոր ճանաչելու նպատակով: Ներոնը, սակայն, հրաժարվեց՝ Հայաստան ուղարկելով **Պետոս** զորավարին: Հայաստան ուղարկված պարծենկոտ Պետոս զորավարը հայտարարեց, թե ծնկի կբերի հայերին և պարթևներին: **62 թ. գարնանը** Ծոփաց աշխարհի հարբերդի դաշտում գտնվող **Հռանդես** վայրում տեղի ունեցավ վճռական ճակատամարտ, որտեղ հռոմեացիները, ընկնելով շրջափակման մեջ, ստիպված էին անձնատուր լինել: Հռոմեական զորքը ենթարկվեց ծաղրուծանակի և հարկադրված էր ծնկաչոք անցնելու նիզակներով պատրաստված անարգանքի «լծի» տակով, ինչը մեծագույն խայտառակություն էր:

Հռոմեական կայսրության վճռական միջամտությունները՝ Տրդատին տապալելու և Մեծ Հայքում իր ազդեցությունը վերականգնելու համար, ձախողվեցին հայ-պարթևական

համագործակցության շնորհիվ: Հռանդեայի պարտությունից հետո Ներոն կայսրը հարկադրված էր հրաժարվել ռազմական միջամտություններից և դիմել խաղաղ բանակցության: **64 թ.** նույն **Հռանդեա** վայրում հռոմեական զորքերի պարտության տեղում, հայերի պահանջով, Վաղարշի և Կորբուլոնի միջև կնքված հաշտության պայմանագրով, Հռոմը ճանաչեց Տրդատի գահակալությունը Հայաստանում՝ պայմանով, որ Տրդատն անձամբ ներկայանա Ներոնին և նրանից ստանա արքայական թագ: Դրանով Ներոնը ձգտում էր ցույց տալ, թե Հռոմը մեծահոգաբար, կանոններ ճանաչում է Տրդատի գահակալությունը: Հռանդեայի պայմանագրով Հռոմը և Պարթևստանը ճանաչեցին Մեծ Հայքի անկախությունը և Տրդատի ինքնավար իրավունքները, իրենց զորքերը հեռացրին Հայաստանից՝ միաժամանակ պարտավորվելով, որ այսուհետ Մեծ Հայքի գահի համար Պարթևաց արքունիքի առաջադրած թեկնածուն, սկսած Տրդատ I-ից, պետք է մեկնի Հռոմ և արժանանա կայսերական արքունիքի հավանությանն ու հաստատմանը:

65 թ. գարնանը Տրդատն իր ընտանիքով և **3000** հեծյալ շքախմբով մեկնեց Հռոմ: 9 ամիս տևած այդ ուղևորության ծախսերը պարտավորվեց վճարել հռոմեական արքունիքը: Տրդատը մեծ շուքով ընդունվեց Հռոմում, Ներոն կայսրից ստացավ թագ ու հանդերձանք և քաղաքի գլխավոր հրապարակում՝ Ֆորումում, մեծ հանդիսավորությամբ օժվեց Մեծ Հայքի թագավոր:

Այսպիսով, 66 թ. Տրդատ I-ը վերադարձավ Հայաստան՝ որպես Հայոց թագավոր (66-88 թթ.):

Վերադառնալով Հայաստան՝ Տրդատ I-ը զբաղվեց երկրի տնտեսական վերականգնմամբ և շինարարական աշխատանքներով: Հռոմի հատկացրած խոշոր գումարով ու Հայաստան ուղարկված բազմաթիվ արհեստավորների օգնությամբ վերականգնվեցին Կորբուլոնի կողմից ավերված **Արտաշատը, Գառնիի** ամրոցը, որին առընթեր կառուցվեց **Միհր** աստծո տաճարը (**76 թ.**) և այլն: Տրդատի օրոք Հայաստանն ենթարկվեց հյուսիս-կովկասյան ցեղերի՝ ալանների (օսեր) ներխուժմանը: Տրդատը կարողացավ ետ մղել նրանց հարձակումները:

Այսպիսով, Հռոմ-Պարթևստան պայքարը վերջացավ նրանով, որ **Հայաստանի գահին բազմեց պարթևաց Արշակունի Վաղարշ թագավորի եղբայր Տրդատ Արշակունին՝ հիմնադրելով հայ Արշակունյաց թագավորությունը (66-428 թթ.):**

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ I ԴԱՐԻ ՎԵՐՋԻՑ ՄԻՆՉԵՎ IV ԴԱՐԻ ՍԿԻՉԲԸ

Հայաստանում ազգային սովորությունները, նիստուկացն այնքան ամուր էին, որ պարթև Արշակունիները շուտով իրենք հայացան: Նրանք երկիրը կառավարում էին հայ ազնվականների ու ժողովրդի կամքին համապատասխան՝ դառնալով հայ անկախ պետության հզոր պաշտպաններ:

Նրանցից **Սանատրուկը (88-110 թթ.)** Հայաստանում գահակալեց Տրդատ I-ի մահից հետո և երկրի աթոռանիստ դարձրեց Մշո դաշտում՝ Արածանիի ափին իր հիմնած **Մծուրք** քաղաքը, որտեղով անցնում էր Տիգրանակերտից Արտաշատ գնացող առևտրական և ռազմական կարևոր նշանակության ճանապարհը: Մծուրք քաղաքը հետագայում կործանվեց երկրաշարժից:

114 թ. Հայաստան արշավեց Հռոմի **Տրայանոս** կայսրը և այն հռչակեց կայսրության նահանգ: Սակայն շատ չանցած՝ **117 թ.**, Հայաստանի անկախությունը վերականգնվեց:

Հայոց նոր թագավոր **Վաղարշ I Արշակունին (117-140 թթ.)** նախկին Վարդգեսավան գյուղաքաղաքի հիմքի վրա կառուցեց **Վաղարշապատ** քաղաքը, որը ժամանակի ընթացքում դարձավ Արշակունյաց թագավորության մայրաքաղաքը:

Սակայն պարթև Արշակունիները պետք է ստանային Հռոմի համաձայնությունն իրենց տոհմից նոր թեկնածուին Հայոց գահին նստեցնելու համար: Սկսվեց պայքարի մի շրջան, երբ չորս դար շարունակ, սկզբուն Հռոմը, ապա և Սասանյան Պարսկաստանը, ձգտում էին կլանել Հայաստանը: Հայաստանի համար պարսկա-հռոմեական մրցակցությունը հատկապես ուժեղացավ սկսած II դարի երկրորդ կեսից:

Վաղարշ I-ի թոռ **Վաղարշ II-ը (185-211 թթ.)**, օգտվելով պարթևա-հռոմեական հակամարտությունից, հիմք դրեց հայ Արշակունիների ժառանգական ճյուղին: Եթե նախկինում Մեծ Հայքի թագավոր դառնալու համար Պարթևստանի առաջարկած թեկնածուն ստանում էր Հռոմի համաձայնությունը, ապա այժմ հայ Արշակունիները ժառանգաբար ստանում էին Հայոց գահը:

Կովկասյան ցեղերի դեմ կռիվներից մեկուն զոհված Վաղարշ II-ին փոխարինում է որդին՝ **Խոսրով I Մեծը (211-259 թթ.)**, որին հռոմեացիները խաբեությանը ձերբակալում են և բանտ նետում, իսկ Հայոց թագավոր ճանաչում **Տրդատ II-ին (216-217 թթ.)**: Հռոմը, սակայն, շուտով պարտություն է կրում պարթևներից, հարկադրված ճանաչում է Հայաստանի անկախությունը և վերստին հաստատում Խոսրով I-ի գահակալությունը:

III դարի սկզբներին Իրանում հակամարտություն է սկսվում պարթև Արշակունիների և պարսից Սասանյան տոհմերի միջև: **226 թ.** վճռական ճակատամարտում զոհվում է պարթևաց վերջին թագավոր **Արտավան V-ը**, և գահն անցնում է **Արտաշիր I Սասանյանին**:

Խոսրով I Մեծը տարիներ շարունակ գլխավորեց հակասասանյան ուժերի պայքարը, Մեծ Հայքում ապաստան տվեց Պարսկաստանից դուրս մղված մի շարք պարթև արքայատոհմերի: Ի վերջո, Խոսրով I-ը զոհվեց Արտաշատի իր ապարանքում, Սասանյան Արտաշիր I-ի որդու՝ **Շապուհ I** արքայի կազմակերպած դավադրությանը, պարթև իշխան **Անակի** ձեռքով:

Մեծ Հայքի և Պարսկաստանի միջև առաջացած անհաշտելի թշնամության հետևանքով հայ Արշակունիները հարկադրաբար կողմնորոշվեցին դեպի Հռոմեական կայսրություն՝ ջանալով նրա դաշնակցությամբ դիմակայել ռազմատենչ Սասանյաններին:

Խոսրով I Մեծի մանկահասակ որդին՝ **Տրդատը**, որ հարկադրաբար ապաստանել էր Հռոմում, **287 թ.** կայսր **Դիոկղետիանոսի** աջակցությամբ պարսկական զավթիչներից ազատագրեց Մեծ Հայքը և հաստատվեց հայրենի գահին: **Հայ-հռոմեական զորքերից վերստին պարտություն կրած Սասանյանները 298 թ. Մծբինում կնքված 40-ամյա հաշտության պայմանագրով ճանաչեցին Մեծ Հայքի թագավորության անկախությունը և Տրդատ III Մեծի գահակալությունը**:

Տրդատ III Մեծի գահակալության ժամանակաշրջանում (287-330 թթ.)՝ 301 թվականին քրիստոնեությունը հռչակվում է հայոց պետության պաշտոնական կրոն: Հայրապետ **Գրիգոր Լուսավորչի** առաջնորդությամբ հայոց եկեղեցին երկարատև պայքարում ապահովեց ժողովրդի գաղափարական ու հոգևոր միասնությունը, իսկ պետականության կորստից հետո դարձավ հայ ժողովրդի գոյապայքարի առաջնորդը:

3. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ IV ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ

Տրդատ III Մեծի օրոք հզորանում են կենտրոնական իշխանությունը և բանակը: Վերելք է ապրում երկրի տնտեսությունը, նոր թափ է ստանում առևտուրը:

Հատուկ ուշադրություն է հատկացվում պետական ապարատին՝ արքունիքին՝ իր բազմաթիվ գործակալություններով, որոնց ղեկավարման իրավունքը ժամանակի ընթացում դարձավ խոշոր նախարարական տների արտոնությունը: Կարևոր նշանակություն ունեցող գործակալություններից էին **հազարապետությունը**, որը ղեկավարում էր երկրի տնտեսական կյանքը, տնօրինում պետական շինարարական աշխատանքները, հարկերի գանձումն ու բաշխումը, **սպարապետությունը**, որը կոչված էր ապահովելու երկրի պաշտպանությունը արտաքին թշնամիներից, **մարդպետությունը**, որը տնօրինում էր թագավորի սեփական կալվածքներն ու գանձերը և իրականացնում թագաժառանգների դաստիարակությունը, **թագադիր ասպետությունը**, որի խնդիրն էր արքայի թագադրման արարողությունների վերահսկումը, արքունական կարգ ու կանոնի հետևումը և օտարերկրյա դեսպանների ընդունումը, **մաղխազությունը**, որի առջև դրված էր թագավորի և արքունիքի անվտանգության ապահովումը և այլն: Պետական խոշոր նշանակություն ունեցող հարցերը լուծելու համար գումարվում էր **աշխարհաժողով**՝ թագավորի ղեկավարությամբ և նախարարների մասնակցությամբ:

Մեծ արտոնություններ էր տրված **Հայոց եկեղեցուն**: Նրան անցան ոչ միայն բռնագրավված տաճարային հողերը, այլև բազմաթիվ կալվածքներ և հարստություններ երկրի տարբեր հատվածներում: Եկեղեցուն տրվող բազմաթիվ հարկերը, հատկապես **«տասանորդը»**, տնտեսապես ուժեղացրին նրան: Հայոց կաթողիկոսը գլխավորում էր երկրի դատական բարձրագույն իշխանությունը՝ **Մեծ դատավարություն** գործակալությունը:

Տրդատ III Մեծի գահակալման խաղաղ տարիներին թագավորի, նախարարների և եկեղեցու միջև հարաբերությունները ջերմ էին, սակայն վիճակը փոխվեց Տրդատի մահից հետո:

Դժբախտաբար հայոց պետականության ներսում սկսվել էր պատմականորեն ձևավորված մի գործընթաց. նախարարները, լինելով տնտեսապես անկախ և ունենալով իրենց ռազմական ուժերը, վարում էին կենտրոնական իշխանությանը չենթարկվելու կենտրոնախույս քաղաքականություն: Հայրենասեր ուժերի մի մասն էլ ուներ հռոմեական (բյուզանդական) կամ պարսկական կողմնորոշում: Հայաստանի անկախության համար պայքարը հատկապես դաժան բնույթ կրեց **Խոսրով Կոտակ (330-338 թթ.)**, **Տիրան (338-350 թթ.)** և **Արշակ II (350-368 թթ.)** արքաների կառավարման տարիներին:

Հայոց արքա **Խոսրով Կոտակը**, որն իր կոտակ անունը ստացել էր կարճահասակության պատճառով, հարկադրված էր զենքով ճնշել ներքին խռովությունները, սրի քաշել **Մանավազյան, Որդունի և Բզնունի** նախարարական տոհմերին, վերամիավորել պարսից արքա **Շապուհ II Երկարակյացի (309-379 թթ.)** սադրանքով ինքնագլուխ դարձած Աղձնիքն ու Հայոց Միջագետքը, հակահարված հասցնել **Մազքթաց Սանեսան** թագավորի ոտնձգություններին:

Խոշոր ավատատերերի անջատողական ձգտումները կանխելու նպատակով սահմանվեց օրենք, որի համաձայն՝ հազար և ավելի զինվոր ունեցող նախարարները պետք է բնակվեին մայրաքաղաքում՝ արքունիքի անմիջական հսկողության ներքո:

Կարճատև խաղաղության տարիներին խոսրովը ծավալել է շինարարական աշխատանքներ, հիմնել Դվին քաղաքը, տնկել **Տաճար մայրի** և **խոսրովակերտ** անտառները (ներկայիս խոսրովի անտառ- արգելոցը):

Խաղաղությունը խաթարվեց **337 թ.**, երբ պարսկական մի զորամաս ներխուժեց Հայաստան: Վանա լճի ափին՝ **Առեստ ավանի** մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայկական 30 հազարանոց զորաբանակը՝ սպարապետ **Վաչե Մամիկոնյանի** գլխավորությամբ, ջախջախեց թշնամուն և ազատագրեց երկիրը:

Խոսրով Կոտակի մահից հետո նրա որդին՝ **Տիրանը**, պարսկական ներխուժման հետևանքով հայրենի գահին հաստատվեց հռոմեացիների օգնությամբ և ստիպված էր զգույշ քաղաքականություն վարել: Նա շարունակեց իշխանության կենտրոնացման քաղաքական գիծը. սանձեց անջատամետ նախարարներին, սահմանափակեց տնտեսապես ուռճացած եկեղեցու կալվածքները, կաթողիկոսական աթոռից զրկեց Գրիգոր Լուսավորչի թոռ **Յուսիկին**:

Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ **350 թ.** Շապուհ II-ի կողմից Հայաստան ուղարկված պարսկական զորքերը խարդախությամբ գերեվարեցին Տիրան արքային և կուրացրին նրան: Սակայն նույն թվականին հայ-հռոմեական միացյալ զորքերը **Բասենում** գլխավին ջախջախեցին պարսկական ուժերին, և Շապուհ II-ը հարկադրված էր հաշտություն կնքել՝ գերությունից ազատելով Տիրանին և նրա ընտանիքին: Վերջինս հրաժարվեց գահից՝ հօգուտ իր որդու՝ **Արշակ II-ի**, որի գահակալության շրջանը (**350-368 թթ.**) համընկավ Սասանյան Պարսկաստանի դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին:

Գահակալման սկզբնական տարիներին Արշակ II-ը զիջողական քաղաքականությամբ փորձեց մեղմացնել աշխարհիկ և հոգևոր ավատատերերի դժգոհությունները:

Հայ ժողովրդի պառակտված խավերի միասնականությունն ապահովելու գործում նշանակալից ներդրում ունեցավ կաթողիկոսական աթոռին հաստատված Ներսես Մեծը: 354թ. Աշտիշատի ժողովում՝ արգելվելով բազմակնությունը, արյունակիցների ամուսնությունը, միաժամանակ փորձ է արվում **ապահովել ժողովրդի քաղաքական, քրիստոնեության ամրապնդումով՝ հոգևոր-գաղափարական միասնությունը, ինչպես նաև հասնել աշխատավորների և ազնվականների սրված սոցիալական հակամարտության մեղմացմանը:**

Կենտրոնական իշխանության տնտեսական և քաղաքական հզորությունը մեծացնելու նպատակով՝ Արշակ II-ը ծրագրեց արքունական տարածքում հիմնել նոր քաղաք, որտեղ արտոնյալ պայմաններով կարող էին բնակություն հաստատել նախարարական տիրույթներում ապրող աշխատավորները: Այրարատ աշխարհի Կոգովիտ գավառում նա հիմնեց **Արշակավանը**, որը կարճ ժամանակամիջոցում դարձավ մարդաշատ քաղաք, արհեստագործության և առևտրի առաջատար կենտրոն:

Նոր ավատատիրական հասարակարգը, սակայն, իր օրենքներն էր թելադրում: Հայաստանը թևակոխել էր ավատատիրության մասնատման ժամանակաշրջանը, և ինչպես խոսրով Կոտակի խստությունները խռովարար նախարարների հանդեպ, այնպես էլ Արշակ II-ի՝ կենտրոնական իշխանությունն ուժեղացնելու միջոցառումները հաջողություն չունեցան: Արշակ II-ի այդ քաղաքականությունը հարուցեց նախարարների դժգոհությունը, որոնք էլ կործանեցին Արշակավանը և ձախողեցին արքայի ծրագրերը:

Կար մի հանգամանագ ևս, որը Հայաստանի համար ստեղծել էր արտաքին քաղաքական խիստ անբարենպաստ իրավիճակ: Սասանյան Պարսկաստանի արքաները, հատկապես Շապուհ II Երկարակյացը, խիստ թշնամաբար էին տրամադրված հայոց Արշակունյաց թագավորության նկատմամբ, մանավանդ այն ժամանակներից սկսած, երբ հայերը պարսիկներին հակադրվեցին նաև քրիստոնեական գաղափարախոսությամբ:

Շապուհը կարողացավ օգտվել Արշակի դեմ ծագած դժգոհությունից՝ իր կողմը քաշելով կենտրոնախույս հայ նախարարներին, ինչպես, օրինակ՝ **Սերուժան Արծրունուն և Վահան Մամիկոնյանին: 364-368 թթ.** ընթացող հայ-պարսկական քառամյա պատերազմի ընթացքում պարսկական զորքերը բազմիցս ներխուժեցին Հայաստան, սակայն հակահարված ստանալով՝ ետ շարվեցին երկրի սահմաններից:

Ի վերջո, Արշակի II-ի օրոք տեղի ունեցած հայ-պարսկական հակամարտությունը վերջացավ նրանով, որ 368 թ. Շապուհը II-ը դավադրաբար իր մոտ հրավիրեց հայոց թագավորին և սպարապետ **Վասակ Մամիկոնյանին.** առաջինին բանտարկեց, իսկ երկրորդին մորթազերծ արեց:

Այնուհետև **369 թ. պարսիկները,** գրավելով Արտագերս ամրոցը, գերեվարեցին ու մահապատժի ենթարկեցին հայոց Փառանձեն թագուհուն, ապա ասպատակեցին ամբողջ երկիրը՝ **ավերելով մի շարք քաղաքներ՝ Արտաշատը, Վաղարշապատը, Երվանդաշատը, Վանը, Ջարիշատը և Ջարեհավանը, գերի տարան 100 հազար մարդ՝ ամայացնելով շատ երկրամասեր:**

4. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋԻՆ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ

Արշակի II-ի որդի **Պապ թագավորին (370-374 թթ.)** հռոմեացիների օգնությամբ հաջողվեց կարճ ժամանակով վերականգնել Մեծ Հայքի պետության տարածքը և սպարապետ **Մուշեղ Մամիկոնյանի** աջակցությամբ ստեղծել 90 հազարանոց բանակ: **371թ. գարնանը Նպատ լեռան ստորոտում՝ Ձիրավի դաշտում, հայ-հռոմեական զորքերը սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ ծանր պարտության են մատնում պարսիկներին:** Գերված դավաճան Սերուժան Արծրունին մահապատժի է ենթարկվում հայ զինվորների ձեռքով, իսկ մյուս դավաճան իշխանը՝ Վահան Մամիկոնյանը, սպանվում է որդու՝ Սամվելի ձեռքով:

Երիտասարդ եռանդուն Պապ թագավորը քայլեր է ձեռնարկում երկրի ամրապնդման ու հզորացման համար: Նա զենքի ուժով ճնշեց կենտրոնական իշխանության դեմ ապստամբած իշխանություններին և վերամիավորեց ինքնազուլիս դարձած մի շարք աշխարհներ: Պապը փակեց կուսակրոն հաստատությունները, որոնք խոչընդոտում էին բնակչության վերարտադրությանը և կլանում երիտասարդ ուժերին, կրճատեց եկեղեցու հողային կալվածքները և եկեղեցու օգտին գանձվող հարկը՝ «տասանորդը», սահմանափակեց բարձրաստիճան հոգևորականության իրավունքները քաղաքական կարևոր հարցերի լուծման գործում: Նա ընդարձակեց զինված ուժերը և բռնագրաված հողերը շնորհեց զինվորական ծառայություն կրող մանր ազնվականներին: Պապն ընդգծված ազգային քաղաքականություն էր վարում, ինչը չէր կարող աննկատ մնալ արտաքին ուժերի կողմից:

Դժբախտաբար Պապ թագավորի վարած ինքնուրույն արտաքին քաղաքականությունը և երկրի ներսում իրագործած խիստ միջոցառումները, մանավանդ եկեղեցու իրավունքների սահմանափակումն ու հողերի բռնագրավումը, նրա դեմ լարեցին և՛ ներքին, և՛ արտաքին ուժերին: Պապի նկատմամբ թշնամության ու ատելության հետևանքը եղավ պետության միավորմանը, ամրապնդմանն ու անկախացմանն ուղղված նրա եռանդուն քայլերի խափանումը, իսկ ինքն էլ զոհվեց Զոռմի կազմակերպած դավադրության հետևանքով:

Երկյուղելով հայ ժողովրդի ցասումից և Մեծ Զայքուն հակահռոմեական տրամադրությունների ալիքից՝ **Վաղես** կայսրը Զայոց թագավոր ճանաչեց Պապի ազգական **Վարազդատին (374-378 թթ.)**, որն ապրել և կրթվել էր Զոռմում, հռչակվել օլիմպիական մրցախաղերում: Նա պետական գործերից հեռու կանգնած գահակալ էր և փաստորեն լիովին ծառայում էր հռոմեացիներին: Թագավորի և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի միջև խորացած տարաձայնություններն ավարտվեցին սպարապետի դավադրաբար սպանությամբ: Սակայն, շատ չանցած՝ իշխան **Մանվել Մամիկոնյանի** ջանքերով Վարազդատը հարկադրված էր փախչել Զոռմ, իսկ Մանվելի խնամակալությամբ Մեծ Զայքի թագավոր հռչակվեց Պապի անչափահաս որդի **Արշակ III-ը (378-389 թթ.)**:

Այս ընթացքում Զոռմեական կայսրությունը խիստ թուլացել էր «բարբարոս» ցեղերի հարձակումներից, զրկվել էր Մերձավոր Արևելքում գործուն քաղաքականություն վարելու հնարավորությունից: Զոռմեա-պարսկական հակամարտությունն ավարտվեց **387 թ.** հաշտության պայմանագրով, որով Մեծ Զայքը բաժանվեց նրանց ազդեցության ոլորտների միջև: Մեծ Զայքի արևմտյան (հռոմեական) փոքր մասում գահակալեց Պապի որդի **Արշակը**, իսկ արևելյան (պարսկական) մեծագույն մասում՝ **Խոսրովը**՝ Արշակունիների տոհմից:

Այսպիսով, Արշակունի արքաների բոլոր քայլերն, ուղղված հայկական պետության ամրապնդմանը, տնտեսական հզորացմանը և քաղաքական կենտրոնացմանը, անհաջողության մատնվեցին: Զեռևանքը եղավ Զայաստանի բաժանումը Զոռմի և Պարսկաստանի միջև: Արևմտյան Զայաստանը կարճ ժամանակ անց դարձավ Զոռմեական կայսրության պրովինցիա, իսկ երկրի մեծ մասում Պարսկաստանի տիրապետության տակ հայ Արշակունիները շարունակեցին գահակալել մինչև **428 թ.**՝ զրկված լինելով ինքնուրույն ներքին և արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից:

Խոսրովի փորձերը՝ միավորելու երկրի երկու մասերը, անհաջողության մատնվեցին, նա գահընկեց արվեց, և նրան փոխարինեց եղբայրը՝ **Վռամշապուհը**, որի կառավարման համեմատաբար երկարատև ժամանակաշրջանում (**389-415 թթ.**) Արևելյան Զայաստանը բարեբախտաբար չի ենթարկվել արտաքին հարձակումների, ներքին կյանքն էլ խաղաղ է ընթացել: **Զայ ժողովրդի հանճարեղ զավակ Մեսրոպ Մաշտոցը Սահակ Պարթև կաթողիկոսի և Վռամշապուհ արքայի աջակցությամբ ձեռնամուխ է լինում հայ գրերի ստեղծմանը և 405 թվականին Եդեսիայում արարում այբուբենի 36 տառերը: Մեր ժողովրդի հետագա գոյատևման համար հայ գրերը դարձան հզոր զենք ու քրիստոնեության, հայ եկեղեցու հետ միասին եղան մեր ազգի հարատևման գրավականը:** Ինչպես նշում է ակադեմիկոս Գ. Սարգսյանը. «Գրերի գյուտը կարծես մի ջրբաժան գիծ է հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ. նրանից առաջ հայ հասարակության քաղաքական ակտիվություն, հզոր պետության ստեղծում, մշակույթի բնագավառում արժեքների աստիճանական կուտակում,

նրանից հետո՝ պետականության կորուստ, բայց և մշակութային հզոր վերելք, քաղաքական ազդեցության տարածման փոխարեն քաղաքակրթիչ ազդեցության տարածում»:

Արշակունի վերջին թագավորը Վռամշապուհի որդի **Արտաշեսն էր (423-428 թթ.)**, որին հայ նախարարներն այդպես էլ չճանաչեցին, և, ինչպես հայտնում է Ղազար Փարպեցի պատմիչը, ընդունեցին այսպիսի որոշում՝ «իրենց հայ թագավոր պետք չէ...»:

Այսպես, **428 թ. արտաքին քաղաքական ու ռազմական ճնշման, ինչպես նաև ավատատիրական կարգերի օրինաչափ ներքին զարգացման հետևանքով երկարատև ծգնաժամի մեջ հայտնված հին հայկական պետությունը դադարեց գոյություն ունենալ: Փակվեց 13 դար (Ք.ա. 859 – Ք.հ. 428թթ.) գոյատևած աշխարհի հին պետականություններից մեկի՝ հայկական պետության վերջին էջը, բայց ոչ հայ ժողովրդի: Սկսվեց պատմական մի շրջան, երբ պատմության քառուղիներում հայ ժողովուրդն ի հայտ բերեց իր բացառիկ կենսունակությունը:**

2.3. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ (V-XI դդ.)

1. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ V-IX դդ.

Հայ ժողովրդի պատմական ճակատագրում V-IX դարերը եղել են անկախության համար պայքարի, ծանր փորձությունների մի ժամանակաշրջան, երբ բազմաթիվ անգամներ ամբողջ ազգը բարձրացել է համաժողովրդական պայքարի, զենքը ձեռքին պաշտպանել իր երկիրը, հավատն ու ազգային արժանապատվությունը: **Այդ պայքարի փառավոր էջերից են 450-451 թթ. Վարդանանց և 481-484 թթ. Վահանանց պատերազմները:**

Վերածվելով Մարզպանական Հայաստանի՝ սկզբնական շրջանում Հայաստանը չզրկվեց պետականությունը խորհրդանշող քաղաքական, ռազմական և տնտեսական ինքնուրույն կառույցներից: Այն արտոնյալ կարգավիճակով ինքնուրույն պետություն էր. ուներ իր ռազմական ուժերը, կառավարման մարմինները (գործակալություններ), հարկային համակարգը: Հայ նախարարները շարունակում էին վարել իրենց պաշտոնները, ունեին լայն իրավունքներ, հզոր տնտեսություն: Հոգևորականությունը ևս պահպանել էր իր արտոնությունները:

Վիճակը փոխվեց պարսից արքա Հազկերտ II-ի (439-457 թթ.) օրոք: Առաջին հերթին հայերին զրկեցին ռազմական ուժից. 442 թ. հայոց բանակը երկրից դուրս հանվեց և ուղարկվեց քուշանների դեմ պատերազմի: 447 թ. «աշխարհագիր» (մարդահամար և եկամուտների հաշվառում) անցկացվեց, խիստ ծանրացվեցին հարկերը: Պարսիկ պաշտոնյա Դենշապուհը, նշանավոր հայ նախարարներին զրկելով պաշտոններից, դրանք տալիս էր ուրացող կամակատարներին: 449թ. հատուկ հրովարտակով հայերին պարտադրվեց զրադաշտականություն՝ կրակապաշտության կրոնը: 450 թ. Արտաշատում հրավիրված հայ ավագանու ժողովը միահամուռ մերժեց Հազկերտի պահանջը: Հետագա դեպքերի ընթացքը հայ ժողովրդին ստիպեց դիմելու համաժողովրդական ընդվզման՝ սկսվեց ազգային-ազատագրական պատերազմ:

451 թ. մայիսի 26-ին Վասպուրականի Արտազ գավառի Տղմուտ գետի ափին՝ Ավարայրի դաշտում, տեղի ունեցավ ճակատամարտ պարսկական 180 հազարանոց և հայկական 66 հազարանոց բանակների միջև: Արյունահեղ ճակատամարտը ռազմական տեսակետից կողմերից ոչ մեկին առավելություն չտվեց, սակայն մեծ էր հայերի բարոյական հաղթանակի նշանակությունը. հայ ժողովուրդը թշնամուն ստիպեց հարգել իր ազգային ինքնությունը, հրաժարվել հայերի հոգևոր սրբության՝ քրիստոնեական հավատի նկատմամբ ոտնձգությունից: Այն մեր հարատևության առհավատչյան էր:

Ավարայրի ճակատամարտի մասնակից, **V դարի պատմիչ Եղիշեն իր «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին»** հերոսական պատումում Ավարայրի հերոսների սխրանքն անմահացրել է մինչ այսօր թևավոր դարձած **հետևյալ խոսքերով՝ «Մահ չիմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն»:** Վարդանանց պատերազմին և նրան նախորդող ու հաջորդող իրադարձություններին անդրադարձել է նաև Դազար Փարպեցին:

Հետագայում ևս պարսիկները բազմիցս փորձել են կոտրել հայ ժողովրդի դիմադրական ոգին և որպես հետևանք ստացել անհնազանդության, ազատության ոգու նոր դրսևորումներ: Պայքարի ու հաղթանակների նոր փառավոր էջեր է գրել հայ ժողովուրդը: Այսպես, երբ Վարդան Մամիկոնյանի դուստր Շուշանիկը, հրաժարվելով ընդունել զրադաշտությունը, նահատակվեց, իսկ նրա ուրացող ամուսնուն վրաց թագավորը սպանեց դավաճանության համար՝ փաստորեն ըմբոստանալով պարսիկների դեմ, հայերը ևս դիմեցին զինված պայքարի:

481-484 թթ. ընթացքում հայկական զորաջոկատները Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ պարսկական զորքին բազմաթիվ անգամներ պարտության մատնեցին: **Արժանահիշատակ է Արարատի լանջին գտնվող Ակոռի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, երբ հայկական 400 հոգանոց զորաջոկատը հաղթանակ տարավ 7 հազարանոց պարսկական զորքի նկատմամբ:**

484 թ. կնքված Նվարսակի հաշտությամբ պարսից արքունիքը ստիպված էր ճանաչել ու վերականգնել հայերի ավանդական կարգերն ու իրավունքները, հրաժարվել կրոնափոխության պահանջից, պահպանել Մարզպանական Հայաստանի ներքին ինքնուրույնությունը, հայ նախարարների ժառանգական արտոնությունները, ինչպես նաև Վահան Մամիկոնյանին նշանակել հայոց տանուտեր և մարզպան՝ դրանով իսկ առժամանակ հրաժարվելով Հայաստանի ներքին գործերին միջամտելու իր մտադրությունից:

Հայաստանի արևմտյան մասում ևս հայ ժողովրդի վիճակը բարվոք չէր: Բռնաճնշումները հատկապես ուժեղացան Բյուզանդիայի կայսր Հուստինիանոսի (527-565 թթ.) կառավարման շրջանում: Քաղաքական, վարչական ու սոցիալ-տնտեսական ռեֆորմներով հայ նախարարները զրկվեցին իրենց ժառանգական իրավունքներից, թուլացավ նրանց քաղաքական ազդեցությունը: Նախարարներն այլևս իրենց տարածքների կառավարիչները չէին, նրանք զրկվեցին զորք ունենալու իրավունքից, իսկ կալվածքները մասնատվեցին: Հայոց եկեղեցին նույնպես ենթարկվեց բռնաճնշումների. հայերին պարտադրում էին ուղղափառություն: **Յետևանքը, ինչպես միշտ, հայ ժողովրդի զինված պայքարն (539թ.) ու անհնազանդության դրսևորումներն էին (548 թ.):**

VI դարում Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև Հայաստանին տիրանալու համար պայքարը սուր բնույթ ընդունեց: Որպես հետևանք վատթարանում էր Հայաստանի վիճակը: Հայաստանը կլանելու, հայ ժողովրդին ձուլելու նպատակադրված եռանդուն քայլեր էին ձեռնարկում առանձնապես պարսիկները: Նորից ուժեղացան հալածանքները հայ նախարարների, եկեղեցու ու ժողովրդի նկատմամբ: Հայ նախարարներին հեռացրին պաշտոններից, եղան սպանություններ, վերսկսվեցին կրոնական հալածանքները, նորից պարտադրվում էր կրակապաշտությունը, ծանրացավ հասարակ ժողովրդի հարկային բեռը:

572 թ. հայերը կրկին ապստամբեցին: Սկզբնական շրջանում ապստամբությանը միացան պարսիկների դաժան քաղաքականությունից դժգոհ վրացիները և Աղվանքի ժողովուրդները: **Վարդան Մամիկոնյանի (Վարդան Կրտսեր կամ Կարմիր Վարդան) և կաթողիկոս Հովհաննես Գաբեղենացու առաջնորդությամբ հայկական զորքն ազատագրեց Դվինը:** Երբ հայկական զորքը Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ խաղամախուի ճակատամարտում փայլուն հաղթանակ տարավ պարսկական 20 հազարանոց պատժիչ զորքի դեմ, Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Կովկասի բոլոր ժողովուրդները՝ աղվաններ, վրացիներ, ալաններ, պայքարի ելան պարսից գերիշխանությունից ազատագրվելու համար:

Օգտվելով Հայաստանում ծավալված զինված պայքարից՝ Բյուզանդիան պատերազմ սկսեց Պարսկաստանի դեմ: 20 տարի շարունակ Հայաստանը պատերազմի թատերաբեմ էր: **591 թ. պատերազմն ավարտվեց Հայաստանի նոր բաժանումով: Խորացվեց հայ ժողովրդի երկու մասերի տարանջատումը: Այս անգամ Հայաստանի մեծ մասը անցավ Բյուզանդիայի տիրապետության տակ:**

2. ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

Աշխարհը VII դարի թևակոխեց Մերձավոր Արևելքում ի հայտ եկած մի նոր ռազմա-քաղաքական հզոր ուժի մրցակցության մուտքով: 622 թվականից իսլամի (մահմեդականություն) դրոշի ներքո միավորված արաբական քոչվոր ռազմատենչ ցեղերը շուտով ստեղծեցին մի պետություն՝ Արաբական խալիֆայությունը, որն արդեն 630-ական թվականներին իր նվաճումներով դարձավ աշխարհակալ հզոր տերություն:

Մի շարք ճակատամարտերում հաղթելով բյուզանդացիներին ու պարսիկներին՝ արաբներն իրենց հետագա արշավանքներով իրականացրին Առաջավոր Ասիայի երկրների նվաճումը:

Արաբական առաջին արշավանքները Հայաստան թալանչիական-հետախուզական բնույթի էին:

640 թվականի առաջին արշավանքի ժամանակ գրավելով Դվինը՝ 12 հազար ղվինցիների կոտորեցին, և 33 հազարին գերեվարեցին և հարուստ ավարով հեռացան: 642-643 թթ. և 650 թ. արշավանքներից հետո էլ իրավիճակը չփոխվեց: Թուլացած Բյուզանդիան կարծես հաշտվել էր Հայաստանը կորցնելու մտքի հետ: Թշնամու դեմ կռվում էին միայն հայկական փոքրաթիվ ջոկատները հայոց իշխանաց իշխան Թեոդորոս Ռշտունու առաջնորդությամբ: Հայկական ջոկատները կարողացան արաբական առանձին ջոկատներին պարտության մատնել, սակայն այդ հզոր ուժին միայնակ պարտության մատնելն անիրական խնդիր էր:

652 թ. Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կառավարիչ, հետագայում խալիֆ դարձած Մուավիայի միջև կնքված հայ-արաբական դաշինքը, թեկուզև ժամանակավորապես, Հայաստանը գերծ պահեց խալիֆայության փաստացի գերիշխանությունից: Ավելին՝ երբ խալիֆայությունում ծայր առան գահակալական կռիվներ, Հայաստանը հասավ փաստացի անկախության, և նույնիսկ նրա երկու մասերը միավորվեցին հայոց իշխանաց իշխանի կառավարման ներքո:

698 թ. արաբական 100 հազարանոց բանակը երկու տարի շարունակ մահ ու ավեր սփռեց ամբողջ Անդրկովկասում: **700 թ. վերջնականապես նվաճված այս տարածքն արաբները վերածեցին Արմինիա վարչական միավորի՝ Դվին կենտրոնով:**

Մեկ և կես դար տևած արաբական ծանր լուծը Հայաստանի և հայ ժողովրդի համար դարձավ անդամնալի կորուստների պատմական ժամանակաշրջան: Ամբողջ VIII դարի ընթացքում Հայաստանում շինարարական աշխատանքներ չիրագործվեցին: 725 թ. «աշխարհագիր» (մարդահամար) անցկացնելուց հետո խիստ բարձրացվեցին հարկերը: **Ամենից վտանգավորը, սակայն, արաբների իրագործած վերաբնակեցման քաղաքականությունն էր, երբ արաբական և այլ քոչվոր բազմաթիվ ցեղեր (կասրիկներ, ութմանիկներ, քրդեր) հաստատվեցին Հայաստանում և սեպի պես խրվելով հայ ժողովրդի մարմնի մեջ՝ բաժան-բաժան արեցին նրան:** Բնական է, որ ազատասեր հայ ժողովուրդը չպետք է հանդուրժեր, և ամբողջ VIII դարի և ապա IX դարի առաջին կեսը նշանավորվեցին ազատագրական պայքարի զինված ապստամբությունների բազմաթիվ դրվագներով:

Հիշարժան է 703-705 թթ. զինված ապստամբությունը հայոց իշխան և սպարապետ Սմբատ Բագրատունու գլխավորությամբ: Ապստամբների ընդամենը 2 հազարանոց ջոկատը հաղթեց և գրեթե ամբողջովին ոչնչացրեց արաբական 5 հազարանոց զորքին: Հայերը բազմաթիվ վայրերում (Ռշտունիք, Վանանդ) հաղթանակներ տարան, սպանվեց Արմինիայի ոստիկան Աբդուլլան: **Բռնաճնշումների նոր ալիքը հայերին ստիպեց զենքի դիմել 748-750 թթ.: Ապստամբությունը գլխավորում էր Գրիգոր Մամիկոնյանը,** որի մահից հետո զինված պայքարը

գլխավորեց նրա եղբայրը՝ Մուշեղը: Աստիճանաբար հայերի մոտ ամրապնդվեց այն հավատը, որ արաբներին կարող են հաղթել:

774-775 թթ. հակաարաբական ապստամբությունը հայերի՝ VIII դարում մղած զինված ամենածավալուն և հզոր պայքարն էր, որի առաջնորդներն էին հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին և Մուշեղ Մամիկոնյանը:

Ապստամբության ընթացքում Հայաստանի շատ գավառներ հայերի վերահսկողության տակ էին: Ապստամբների 5 հազարանոց զորագունդը պաշարեց արաբների հենակետերից մեկը՝ Կարին քաղաքը:

Արաբներն ապստամբությունը կարողացան ճնշել միայն այն բանից հետո, երբ ստիպված եղան ապստամբների դեմ դուրս բերել 30 հազարանոց մարտունակ բանակ: Չնայած այս ապստամբության պարտությանը՝ հայ ժողովուրդը և նրա առաջնորդները ցուցաբերեցին միասնականության և համաժողովրդական պայքարի բարձր աստիճան: Դրսևորելով արժանապատվություն, հայրենասիրություն, պետականության վերականգնման ձգտում՝ թեկուզ և մահվան գնով, թշնամուն ստիպեցին հաշվի նստել իր հետ:

Բռնի ուժով ստեղծված ցանկացած կայսրություն դատապարտված է կործանման: Արաբական խալիֆայության թուլացումն ու քայքայումն ակնհայտ դարձավ IX դարի սկզբին, երբ հասունացել էին պատմական այդ երևույթի բոլոր օբյեկտիվ ու սուբյեկտիվ նախադրյալները: Խալիֆայության տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազատագրական պայքարի ուժեղացումը, կայսրության ծայրամասային ամիրայությունների ինքնիշխանության դրսևորումները, անընդհատ կրկնվող գահակալական կռիվները, վարձու բանակի գոյությունը և իշխանության ճակատագրի կախվածությունը թուրք զորավարների գործողություններից, ինչպես նաև Բյուզանդիային սահմանակից իշխանությունների իշխանների նկատմամբ հակասական դիրքորոշումը (դաժան պատիժներից մինչև կարևոր պաշտոնների շնորհում) խալիֆայության խիստ թուլացման արտահայտություններն էին:

Չնայած արաբների՝ հայ իշխանների ու զորական ուժի նկատմամբ կիրառած դաժան քաղաքականությանը և ֆիզիկական բնաջնջմանը (միայն **705 թ. Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում հրկիզեցին 1000-ից ավելի զորականների ու իշխանական տների անվանի ներկայացուցիչներին**), ազատագրական պայքարի ընթացքում քաղաքական թատերաբեմից հինավուրց մի շարք նախարարական տոհմերի հեռանալուն (ինչպես, օրինակ՝ Մամիկոնյանները, Կամսարականները, Ամատունիները)՝ պայքարի բովում ոչ միայն դիմացան, այլև ժամանակի ընթացքում նորից հզորացան հինավուրց նախարարական տներից **Բագրատունիները, Արծրունիները, Սյունյաց ու Արցախի իշխանները: Ահա այս իշխանական տների առաջնորդությամբ էլ հայ ժողովրդի պայքարը IX դարի երկրորդ կեսին թևակոխեց վճռական փուլ:**

851-852 թթ. արաբների պատժիչ արշավանքը Հայաստան անփառունակ վախճան ունեցավ: Մուշի, Սասունի ապստամբած հայերն Աշոտ և Դավիթ Բագրատունիների, Խութեցի Հովնանի առաջնորդությամբ հարձակվեցին Մուշ քաղաքում ձմեռած արաբների վրա, կոտորեցին նրանց, գտան ու սպանեցին եկեղեցու գմբեթում թաքնված ոստիկան Յուսուֆին: **Հայ ժողովրդի հերոսական էպոսում՝ «Սասնա ծռեր»-ում, տրված է պատմական այս իրական դեպքերի գեղարվեստական փայլուն նկարագիրը:**

Շուտով ապստամբությունն ընդգրկեց Արմինիա փոխարքայության բոլոր երկրները: Այս անգամ արաբ խալիֆը Հայաստան ուղարկեց թուրք զորավար Բուղայի՝ հիմնականում թուրք վարձու զինվորներից բաղկացած հսկայական զորաբանակը՝ պատվիրելով անխնա պատժել ապստամբներին, ապա և խոստացավ անհնազանդ նախարարների տիրույթները տալ թուրքերին:

852-855 թթ. Բուղայի գործը գերեվարեց շատ իշխանների, ավերեց ու թալանեց Տարոնը, Վասպուրականը, Սյունիքը, մտավ Վրաստան, ներխուժեց Արցախ: Վասպուրականում, Վրաստանում և Արցախում արաբները հանդիպեցին ուժեղ դիմադրության: Արժանահիշատակ է արցախահայության հերոսական պայքարը թշնամու դեմ, երբ Եսայի իշխանի գլխավորությամբ մեծ ջարդ տալով թշնամուն՝ հայերն ամրացան Քթիշ բերդում ու ետ մղեցին թշնամու 28 գրոհ՝ նրան պատճառելով հսկայական կորուստներ:

Սա արաբների վերջին խոշոր պատժիչ արշավանքն էր Հայաստան, որից հետո ուժով ու դավերով հայերին հաղթելու հույսը կորցնելով՝ խալիֆը 855 թ. Բուղայի գործը հանեց Հայաստանից: **Այսպիսով, հայերը մեկուկեսդարյա պայքարի շնորհիվ հասան փաստացի անկախության:** Հայաստանում կառավարիչ նշանակվեց Աշոտ Բագրատունին, որի ղեկավարությամբ էլ ավարից ու թալանից քայքայված Հայաստանը դարձավ տնտեսապես կայուն, ռազմականապես ուժեղ երկիր:

Աշոտ Բագրատունին 862 թ. խալիֆից ստացավ իշխանաց իշխանի և հարկեր հավաքելու պաշտոնները, իր դիրքն օգտագործեց բանակը հզորացնելու գործում. նրա թիվը հասցրեց 40 հազար, իսկ եղբորն՝ Աբասին, սպարապետ կարգեց: **Աշոտն իր ազդեցությունը տարածեց ոչ միայն Արծրունյաց, Սյունյաց, Արցախի հայ իշխանների վրա, այլև նրա գերակա դիրքը ընդունում էին նաև վրաց, աղվանից իշխաններն ու հարևան արաբական ամիրաները:** **Այսպես, Աշոտ Բագրատունին դարձել էր Արմինիա փոխարքայության ամենահեղինակավոր կառավարիչը, և արաբ ոստիկանի պաշտոնը, հատկապես Հայաստանում, զուտ անվանական էր:** Ամբողջ Հայաստանում, բացառությամբ Դվինի, արաբները զորքով ապահովված հենակետեր այլևս չունեին: Հասունացել էր, փաստորեն, ինքնավար թագավորություն դարձած երկրի լիակատար անկախության ու պետականության վերականգնման պատմական պահը: Ամբողջ հայ ժողովուրդը՝ իշխանները, հոգևորականությունը, շինականները, արհեստավորները, միասնական էին այս խնդրում, որի վկայությունը 869 թ. Ջաքարիա Չագեցի կաթողիկոսի հրավիրած ժողովն էր, ուր որոշվեց Աշոտ Բագրատունուն ճանաչել հայոց թագավոր և խալիֆից պահանջել ճանաչել Հայաստանի թագավորությունը, թեկուզ և Արմինիայի կազմում:

Արաբական խալիֆայությունը, սակայն, դեռևս չէր կորցրել Հայաստանը լիակատար ենթակայության վերադարձնելու իր մտադրությունը: Այս նպատակով Արմինիայի նոր ոստիկան Ահմադը փորձեց հարևան արաբ ամիրայությունների համատեղ ուժերով դավադրության ճանապարհով հասնել հաջողության: Աշոտ Բագրատունին, աչալուրջ հետևելով դեպքերի ընթացքին, կանխեց այդ դավադրությունը և համարձակորեն երկրից վճռեց արաբ վերջին ոստիկանին:

Հայաստանում տեղի ունեցող դեպքերին ակնդետ հետևող Արաբական խալիֆայության հիմնական ախոյան Բյուզանդիան իր հերթին ակտիվ քայլեր էր ձեռնարկում ամրապնդելու հայբյուզանդական դարավոր կապերը: **876 թ. Բյուզանդիայի կայսր, ծագումով Արշակունի, հայկական մակեդոնական դինաստիայի հիմնադիր Բարսեղ I-ը Աշոտ Բագրատունուց՝ որպես հայոց արքաների թագակիր ասպետությունը կրող իշխանական տոհմի գլխավորից, թագ խնդրեց:** Աշոտ Բագրատունին, կայսրին թագ ուղարկելով, վերականգնեց Բյուզանդիայի հետ բարեկամական հարաբերությունները, միաժամանակ աճեց նրա հեղինակությունը տարածաշրջանում:

Ահա Հայաստանի համար այսպիսի արտաքին և ներքին բարենպաստ պայմաններում Հայաստանը թեկուզ և անվանական իրեն ենթակա տեսնելու ձգտումով խալիֆը ստիպված **Աշոտ Բագրատունուն ճանաչեց հայոց թագավոր և 885 թ. նրան ուղարկեց թագ ու արքայական հանդերձանք:** Բյուզանդիայի կայսր Բարսեղ (Վասիլ) I-ը ևս ճանաչեց Աշոտին՝ որպես

Հայաստանի թագավոր: 885 թ. օգոստոսի 26-ին աթոռանիստ Բագարանում Աշոտը հանդիսավոր պայմաններում օծվեց ու դարձավ հայոց վերածնված թագավորության՝ Բագրատունյաց դինաստիայի հիմնադիրը (885-1045 թթ.):

Այսպիսով, 450 տարվա ընդմիջումից հետո անցնելով պատմության քառուղիների ամեն տեսակ վայրուվերումների միջով՝ վերականգնվեց ու միջազգային ճանաչում գտավ հայոց Բագրատունյաց թագավորությունը՝ դառնալով հայոց հնադարյան պետականության ժառանգորդը:

3. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

Բագրատունյաց առաջին թագավորները քայլեր ձեռնարկեցին երկրի ներքին կյանքը կայունացնելու և հարևան երկրների հետ բարեկամական կապեր հաստատելու համար: Միաժամանակ վճռական գործողություններով ընդարձակեցին իրենց տիրույթների սահմանները՝ սաստելով թշնամիներին:

Աշոտ I-ի օրոք Հայաստանի տարածքն արդեն ընդգրկում էր Կուր գետից մինչև Մանազկերտ, Պարտավից մինչև ճորոխ գետի հովիտը: Խելամիտ ու խիզախ քաղաքականության շնորհիվ Աշոտ I-ին հաջողվեց միավորել երկրի բոլոր ներքին ուժերը: Խնամիական կապերով Բագրատունիները բարեկամացան Արծրունյաց և Սյունյաց հզոր իշխանական տների հետ: Աշոտ I-ը կալվածքներ տվեց թուլացած հայ իշխաններին՝ դրանով իսկ ձեռք բերեց նրանց հավատարմությունը, նպաստեց երկրի հզորացմանը: Նա վճռական գործողություններով միաժամանակ պատժում էր անհնազանդության դրսևորումները: Աշոտ I-ը ճնշեց Վանանդի իշխանների ապստամբությունը և նրանց գավառը՝ Կարս կենտրոնով, միացրեց իր պետությանը: Հայաստանը թևակոխել էր բարգավաճման, տնտեսական վերելքի, արհեստների և առևտրի աշխուժացման, խաղաղ շինարարության մի ժամանակաշրջան. նկատելիորեն զարթոնք էր ապրում մշակութային կյանքը:

Սմբատ I-ի կառավարումը (890-914 թթ.) նշանավորվեց արաբների վերջին հենակետ Դվինի գրավումով՝ 892 թ.: Սմբատն ավարտին հասցրեց հայկական հողերի միավորման գործը՝ Տայքը, Տարոնը, Աղձնիքը և Բարձր Հայքը վերամիավորելով Հայաստանին:

893 թ. բարեկամության և առևտրական պայմանագիր կնքվեց Բյուզանդիայի հետ: 898 թ. Սմբատը թագադրեց Ատրներսեհին՝ վերականգնելով նաև վրաց պետականությունը, որով ապացուցեց իր գերակայությունը:

Արաբական խալիֆայությունը, որը բոլորովին էլ չէր հրաժարվել Հայաստանի նկատմամբ իր գերիշխանական հավակնություններից, հարմար պահի էր սպասում:

Երբ 893 թ. ավերիչ երկրաշարժից հետո զոհվեցին տասնյակ հազարավոր մարդիկ, Դվինը վերածվեց ավերակների կույտի, իսկ Գագիկ Արծրունու դավաճանության հետևանքով խախտվեց երկրի ներքին անդորրը, խալիֆի կուսակալ Ատրպատականի ամիրաները բազմիցս ներխուժեցին Հայաստան: 894 թ. Ավշինը գրավեց Նախճավանը և ավերված Դվինը: Սմբատ I-ին հաջողվեց Արագածոտն գավառի Դողս գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում (894 թ.) թշնամուն պարտության մատնել: X դարի սկզբին արաբները կարողացան պառակտել ու դավաճանության մղել հայ նշանավոր իշխաններից մի քանիսին, որոնց օգնությամբ էլ հասան ժամանակավոր հաջողության:

914 թ. Ատրպատականի էմիր Յուսուֆը խաբեությամբ ձերբակալեց Սմբատ I-ին և նրան խաչեց Դվինի դարպասներին: Թվում էր, թե նորից Հայաստան աշխարհն ընկղմվելու է ստրկության

հորձանուտի մեջ և այլևս երբեք չպիտի կարողանա ոտքի կանգնել: Սակայն տեղի ունեցավ հակառակը: Արաբների դեմ նորից ծայր առավ համաժողովրդական պայքար: Ամենուր մեծ ու փոքր ուժերով հայերը հակահարված էին տալիս արաբներին, ուժերի գերագույն լարումով պայքարում բռնության դեմ: Նույնիսկ դավաճան իշխանները, գիտակցելով իրենց գործողությունների կործանարար բնույթը, հեռացան արաբներից, միացան հայրենասեր ուժերին: Անկախության համար համաժողովրդական պայքարը գլխավորեց Սմբատի որդի Աշոտ II-ը՝ քաջարի ու անկոտորում կամքի տեր մի մարդ, որին ժողովուրդը կոչեց Աշոտ Երկաթ: Ազատության համար երկարատև պայքարը պսակվեց հաջողությամբ: **921 թ. Սևանի ափին տեղի ունեցած ճակատամարտում հայկական փոքրաթիվ զորքը մեծ ջարդ տվեց արաբ զորավար Բեշիրի վիթխարի զորաբանակին**, որը խայտառակ փախուստի դիմեց: Գառնիի մոտ նահանջող արաբների վրա հանկարծակի հարձակվեց Գևորգ Մարզպետունի իշխանի փոքրաթիվ ջոկատն ու մի նոր ջարդ տվեց արաբներին: Այս իրական դեպքերը հիմք են հանդիսացել մեծ վիպասան Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի համար:

Հայ ժողովրդի անկոտորում կամքի այս դրսևորումներն արաբներին վերջնականապես համոզեցին Հայաստանի անկախության նկատմամբ ոտնձգությունների անհեռանկարության մեջ: **922-925 թթ. զորքերը դուրս բերելով Հայաստանից՝ արաբ խալիֆը Աշոտ II-ին շնորհեց շահնշահի, այսինքն՝ արքայից արքայի տիտղոս: Հայոց երկրում սկսվեց երկարատև խաղաղ շրջան, և ավելի քան 100 տարի թշնամիները վտանգ չէին ներկայացնում հայոց երկրի համար:**

Այդ պայմաններում նախկին կենտրոնախույս ուժերը, որոնց մի մասը թշնամու խառնակիչ ձեռքով ու Բագրատունիների նվիրատվությամբ դարձել էին թագավորություններ (Վասպուրական, Սյունիք, Տաշիր-Ձորագետ, Կարս-Վանանդ, Տայք), հպատակվում էին Բագրատունյաց կենտրոնական իշխանությանը: Բագրատունիների գերակայությունն ընդունել էին նաև Վրաց և Աղվանից իշխանությունները:

Աշոտ Երկաթին հաջորդած Աբասի (928-953 թթ.), Աշոտ Ողորմածի (953-977 թթ.), Սմբատ II-ի (977-990 թթ.), Գագիկ I-ի (990-1020 թթ.) գահակալության պատմական ամբողջ ժամանակաշրջանը Հայաստանի համար եղավ բարգավաճման, տնտեսական վերելքի, քաղաքական կայունության և հատկապես մշակութային վերածննդի տարիներ: 961 թ. մայրաքաղաք ու թագավորանիստ դարձած Անին կառուցապատվեց փառահեղ շինություններով՝ եկեղեցիներ ու վանքեր, իջևանատներ, կամուրջներ ու երկշարք պարիսպներ՝ աշտարակներով ու դարպասներով:

Ոչ միայն Բագրատունի թագավորները, այլև նրանց ենթակա թագավորները, իշխաններն ու զորավարները, անգամ նրանց կանայք կարծես մրցում էին իրար հետ՝ պատվիրելով ու հովանավորելով հոգևոր-մշակութային կենտրոնների հիմնադրումն ու նրանց գործունեության ծավալումը: Այդ տարիներին են հիմնադրվել ու լայն գործունեություն ծավալել հոգևոր-կրթական համալիրներից Հաղպատն ու Սանահինը, Հաղարծինն ու Հռոռոնսը, Կեչառիսն ու Մակարավանքը, Տաթևն ու Դադիվանքը և այլն: **1001 թ. ավարտվեց Անիի Մայր տաճարի՝ Կաթողիկեի կառուցումը, որի ճարտարապետն էր Տրդատը՝ հանձարեղ մի այր, ով հետագայում վերականգնելով Կոնստանդնուպոլսի Ս. Սոֆիա աշխարհահռչակ տաճարի՝ երկրաշարժից քանդված գմբեթը՝ այն դարձրեց ավելի հոյակերտ, որը կանգուն է մինչ օրս: Հետագա դարերում՝ ընդհուպ մինչ XV դարի կեսը, սրանց մի մասը ծայրահեղ ծանր պայմաններում չղաղարեցին գործել՝ վառ ու բորբոք պահելով ազգային մշակույթի, գիտության ու գրականության անշեջ հուրը:** Բագրատունիների հեղինակությունն ամբողջ տարածաշրջանում այնքան ծանրակշիռ էր, որ նրանք ավագության իրավունքով հաճախ միջամտում էին միջպետական ու հարևան երկրների

ներքին գործերին: Այսպես, Սմբատ II-ը 988 թ. դարձավ հաշտարար միջնորդ վրաց-արխագական հարաբերություններում: **Բագրատունիների ակտիվ միջամտությամբ** Վրաստանում վերջ տրվեց արաբական տիրապետությանը, միավորվեցին երկրի տարանջատված մարզերը, հիմնադրվեց **Բագրատունյաց թագավորական դինաստիայի վրացական ճյուղը, որը գոյատևեց IX դարից մինչև 1801 թ.:**

Վերջին անգամ արաբները հայոց երկրի անդորրը խախտեցին 998 թ.: Ատրպատականի էմիր Սամվանի զորաբանակը ներխուժեց Հայաստան: Հայ-վրացական միացյալ ուժերը նշանավոր զորավար սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ Ապահունիք գավառի Ծմբո գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում մեծ ջարդ տվին թշնամուն: Սա արաբների վերջին ոտնձգությունն էր Հայաստանի ու Վրաստանի հանդեպ:

Թվում էր, թե զարգացած ավատատիրական կարգերի հետագա գործընթացը պետք է հանգեցնի ազգային հզոր միապետության ձևավորմանը: Հայաստանը բավական վաղ թևակոխեց զարգացած ավատատիրության փուլը, և Գագիկ I-ին թագավորին որոշ չափով հաջողվեց ստեղծել կենտրոնացված իշխանությամբ հզոր ազգային պետություն: Սակայն Հայաստանում տեղի ունեցող ֆեոդալական պառակտման գործընթացն այդպես էլ կանգնեցնել չհաջողվեց: Ընդհակառակը, Գագիկի I-ի մահից հետո՝ 1020թ., այն ավելի խորացավ և ընդգրկեց նաև Անիի բուն թագավորությունը:

Բյուզանդիան, Հայաստանի նկատմամբ իր հերթին ունենալով նվաճողական պլաններ, ամեն կերպ խրախուսում էր հայ իշխաններին իրենց անջատողական ձգտումներում: Հետագայում յուրացնելով Հայաստանի տարածքները՝ վարում էր Հայաստանը զինական ուժից զրկելու, ռազմականապես թուլացնելու կարճատես քաղաքականություն: Չկարողանալով դիմագրավել սելջուկների ասպատակություններին՝ **Վասպուրականի թագավոր Սենեքերիմը 1021 թ. Վասպուրականը կտակեց Բյուզանդիային և 70.000 հայերի հետ միասին տեղափոխվեց Սեբաստիա:**

1022 թ. Պետրոս Գետադարձ կաթողիկոսի դրդմամբ Հովհաննես-Սմբատ թագավորը համաձայնեց Անին կտակել Բյուզանդիային: **1045 թ. խաբեությամբ ձերբակալելով Բագրատունի վերջին թագավոր Գագիկ II-ին (1041-1045 թթ.)՝ Բյուզանդիան գրավեց մայրաքաղաք Անին՝ չնայած անեցիների երկարատև պայքարին:** Այսպիսով, կործանվեց Հայաստանի տարածքում հայոց վերջին թագավորությունը: Հետևանքն եղավ այն, որ Առաջավոր Ասիայում ամենահզոր բանակներից մեկն ունեցող երկիրը՝ Հայաստանը (մոտ 100 հազար զինվոր), մի քանի տարի հետո չկարողացավ սելջուկ-թուրքերի հորդաներին դիմագրավել:

2.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ (XI-XV դդ.)

1. ՍԵԼՋՈՒԿ-ԹՈՒՐԲԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

Անիի թագավորության գրավումից հետո (1045 թ.) Բյուզանդիան ձգտում էր էլ ավելի թուլացնել Հայաստանը: Բյուզանդացիները, հայ իշխաններին երկրից հեռացնելու նպատակով, կայսրության զանազան շրջաններում նրանց շնորհում էին ընդարձակ կալվածքներ: Հայկական զորքերը ցիրուցան արվեցին, մի մասն էլ տարվեց կայսրության խորքերը: Սկսվեց բնակչության զանգվածային արտագաղթ **Փոքր Ասիա**, **Վրաստան** և այլ շրջաններ: Բնակչությունը ենթարկվեց ծանր հարկման: Պայքարի սլաքը բյուզանդացիները ուղղեցին նաև եկեղեցու դեմ: Նույնիսկ Անիի անկման հարցում իրենց օժանդակած **Պետրոս Գետադարձ** կաթողիկոսին կանչելով Կոստանդնուպոլիս՝ արգելեցին վերադառնալ հայրենիք: Հարկեր էին սահմանվել նաև եկեղեցու վրա: Քաղկեդոնական դավանանքի տարածման լուրջ վտանգ ստեղծվեց: Բյուզանդիայի ծայրաստիճան անհեռատես այս քաղաքականությունը ճակատագրական եղավ ոչ միայն Հայաստանի, այլև կայսրության համար: Շուտով բյուզանդացիները բախվեցին հզոր թշնամու՝ սելջուկ-թուրքերի հետ:

Սելջուկ-թուրքերի նախնիները քոչվոր անասնապահներ էին և զբաղեցնում էին Ալթայից Միջին Ասիա ընկած տարածքը: Նրանք առաջին անգամ Հայաստանում և Փոքր Ասիայում հայտնվել էին դեռևս VIII դարում՝ իբրև վարձկաններ արաբական բանակում: X դարի II կեսին թուրքական ցեղերի մի մասը միավորվեց իրենց առաջնորդ **Սելջուկի** շուրջը, գրավեց Պարսկաստանը և մոտեցավ Հայաստանի սահմաններին:

Արդեն **1047 թ.** սելջուկ-թուրքերի **20** հազարանոց բանակն առաջին անգամ ներխուժեց Հայաստան: **Վասպուրականի** վրայով այն գրեթե անարգել, բյուզանդացիների թողտվությամբ հասավ մինչև **Բասեն**՝ ճանապարհին ավերելով բազմաթիվ բնակավայրեր: **1048 թ.** հետևեց **100** հազարանոց սելջուկյան բանակի նոր արշավանքը: Թուրքերը գրավեցին Կարինի մոտ գտնվող **Արծն** վաճառաշահ ու հարուստ քաղաքը, ավերեցին այն, իսկ բնակչությանը կոտորեցին կամ գերեվարեցին: Բյուզանդական զորքը, որին օգնության էին հասել հայ-վրացական ջոկատները, ուշացումով փորձեց կանգնեցնել սելջուկներին, սակայն **Բասենի** ճակատամարտում պարտություն կրեց: Հարուստ ավարով սելջուկները վերադարձան Ատրպատական: Դիմադրության կարողությունից զրկված Հայաստանն այլևս անկարող էր դառնալ Բյուզանդիային սելջուկներից պաշտպանող երկիր:

1054 թ. սելջուկների երրորդ արշավանքը, որը գլխավորում էր նրանց առաջնորդ **Տուղրիլ** բեկը, նորից մեծ դիմադրության չհանդիպեց, բացառությամբ **Կարսի** պաշտպանների հերոսական պայքարի: Կարսի բնակիչները, **Կարս-Վանանդի** թագավոր **Աբասի** որդի **Գագիկի (1029-1065թթ.)** գլխավորությամբ, հերոսաբար դիմադրեցին: Թուրքերին հատկապես ապշեցրեց գերի ընկած **Թաթուլ** անունով մի երիտասարդի քաջությունը: Տուղրիլի զորքերը համառ դիմադրության հանդիպեցին նաև **Մանազկերտի** մոտ: Չկարողանալով գրավել քաղաքը՝ թշնամին հարձակվեց **Արծկե** և **Բերկրի** քաղաքների վրա ու կոտորեց բնակիչներից շատերին:

Սելջուկներն այս հետախուզական արշավանքից հետո էլ հարուստ ավարով հեռացան Հայաստանից:

Իրադրությունը փոխվեց Տուղրիլից հետո, երբ սելջուկյան պետության գլուխ կանգնեց **Ալփ-Արսլանը (1063-1072թթ.)**: Նա իր տիրապետությունը հաստատեց Պարսկաստանում, իսկ **1064թ.** ասպատակելով **Աղվանքն** ու **Վրաստանը**՝ ներխուժեց Հայաստան՝ այն վերջնականապես գրավելու նտադրությամբ: Սելջուկյան զորքերը հարձակվեցին **Տաշիր-Չորագետի (Լոռու)** թագավորության վրա, այնուհետև պաշարեցին **Անին**: Քաղաքի բյուզանդական կայազորը քաշվեց միջնաբերդ՝ բնակչությանը թողնելով անպաշտպան: **1064-1071թթ.** ընթացքում սուլթան Ալփ-Արսլանի առաջնորդությամբ Հայաստան ներխուժած սելջուկյան բանակն ավերակների վերածեց մայրաքաղաք Անին: Անիի անկումից հետո սելջուկներին շտապեցին իրենց հպատակությունը հայտնել **Տաշիր-Չորագետի, Կարս-Վանանդի** և **Սյունիքի** թագավորություններն՝ այդպիսով փրկվելով ասպատակություններից:

1071թ. բյուզանդացիները, սելջուկների առաջխաղացումը կասեցնելու նպատակով, մեծ բանակով շարժվեցին արևելք: **Մանազկերտի** մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում բյուզանդական զորքերը ծանր պարտություն կրեցին, իսկ սելջուկները, գերեվարելով կայսր **Ռոմանոս IV Դիոգենեսին**, նրան պարտադրեցին խիստ անոթալի մի հաշտություն, որով բյուզանդացիները ճանաչեցին սելջուկների տիրապետությունը Հայաստանի ու Փոքր Ասիայի վրա: Սելջուկյան ասպատակություններն ու տիրապետությունը ծանր հետևանքներ ունեցան Հայաստանի համար: Նորից, ինչպես արաբական տիրապետության շրջանում, Հայաստանը հայտնվեց ծանր վիճակում: Կարճ ժամանակամիջոցում թուրքական անասնապահ ու վաչկատուն ցեղերը սփռվեցին Հայաստանի լավագույն հողերում ու բնակավայրերում, իրենց ռազմական առաջնորդների գլխավորությամբ հիմնեցին մի շարք մահմեդական իշխանություններ՝ ամիրայություններ: **1064թ.** գրավված **Անին** հանձնվեց **Շադդադյաններին**, հարավում ստեղծվեց **Շահ-Արմենների ամիրայությունը՝ Խլաթ** կենտրոնով, իսկ պատմական **Ուտիքում** ձևավորվեց **Գանձակի աթաբեկությունը**: Փոքր Ասիայում՝ Կիլիկիայից հյուսիս, **1077թ.** առաջացած **Իկոնիայի (Ռումի) սուլթանությունը** բազում դժբախտությունների պատճառ եղավ: Քոչվոր անասնապահական օտար կենցաղը ծանր հարված հասցրեց Հայաստանի տնտեսությանը: Կրկին մեծ չափեր ընդունեց բնակչության զանգվածային արտագաղթը:

Ալփ-Արսլանին հաջորդած նոր սուլթան **Մելիքշահը (1072-1092 թթ.)**, դադարեցնելով պատերազմները, փորձեց իր իշխանությունն ամրապնդել նվաճված երկրներում: Նա **1085 թ. Հայաստանից, Առանից** ու **Ատրպատականից** կազմեց մի առանձին **էլայեթ**, որի կառավարիչ նշանակվեց նրա մերձավոր ազգականներից մեկը: Հայաստանի կառավարումը թեև հանձնվեց սելջուկյան թուրքերի ռազմական ավագանուն, սակայն տեղերում վարչական, տնտեսական ու կրոնական կառավարումը մեծամասամբ մնաց հայ իշխանների ու հոգևորականության ձեռքում: Հայ հոգևորականներն ազատվեցին հարկերից, իսկ իշխանական տների կախվածությունը սուլթանից արտահայտվում էր **հողահարկ («խարաջ»)** վճարելու տեսքով:

Իրենց գոյությունը շարունակում էին պահպանել **Սյունիքի** և **Տաշիր-Չորագետի** թագավորությունները, իսկ Հայաստանի հարավում՝ **Սասունում**, պահպանվում էր **Թոռնիկյանների** իշխանությունը:

2. ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

XI դարի վերջին սելջուկյան պետությունն սկսեց աստիճանաբար թուլանալ: Ձուգահեռաբար նկատվեց Հայաստանի հյուսիսային հարևանի՝ **Վրաստանի** հզորացման գործընթացը: Հայաստանի տարբեր մասերում առաջացած մահմեդական իշխանությունների դեմ XI դարի վերջից համատեղ պայքարի դուրս եկան հայերն ու վրացիները: Հայ-վրացական հարաբերությունները ջերմացան հատկապես վրաց **Դավիթ IV Շինարար (1089-1125 թթ.)** թագավորի օրոք: Վերջինս Հայաստանից Վրաստան արտագաղթող հայերի համար կառուցել տվեց **Գորի** քաղաքը:

XII դարում քայքայվող սելջուկյան տիրակալության դեմ Վրաստանում և Հայաստանում ծավալված հուժկու ազատագրական պայքարը գլխավորեցին վրաց **Բագրատունիների** շուրջը համախմբված բազմաթիվ հայ իշխաններ՝ իրենց գինական ուժերով, որոնցից նշանավորներն էին **Մամիկոնյանների** և **Արծրունիների** շառավիղները՝ **Օրբելյանները** և **Ջաքարյանները**: Վերջիններից հատկապես նշանավոր էր **Սարգիս Ջաքարյանը**, որին տրվել էր վրաց արքունիքի ամենապատվավոր և ազդեցիկ պաշտոններից մեկը՝ **ամիրսպասալարությունը**՝ զորքերի գլխավոր հրամանատարությունը:

Հայ զորահրամանատարների ներկայությունը վրացական արքունիքում ավելի էր բարձրացնում Վրաստանի՝ որպես քրիստոնյա բախտակից հարևանի հեղինակությունը սելջուկների լծից ազատվել ցանկացող հայ ժողովրդի աչքում: Այսպիսի պայմաններում հայերը հաճախ ապստամբում էին և դիմում վրաց թագավորների օգնությանը: Հայ-վրացական համատեղ պայքարի շնորհիվ **1113 թ.** թուրք-սելջուկներից մաքրվեցին **Կյուրիկյանների** նախկին թագավորության՝ **Տաշիր-Ձորագետի** բոլոր գավառները՝ **Լոռե (Լոռի)** քաղաքաբերդ կենտրոնով: Դրանով, փաստորեն, տեղի հայկական թագավորությունը վերացվեց և մտցվեց վրաց պետության կազմի մեջ: **1123 թ.** ազատագրվեցին **Գուգարքի** արևելյան և **Ուտիքի** արևմտյան շրջանները, իսկ մեկ տարի անց՝ **1124 թ.**, **Շաղդադյան** ամիրաների դեմ ապստամբած Անիի բնակչությունը պատվիրակություն ուղարկեց **Դավիթ Շինարարի** մոտ՝ նրան հայտնելով քաղաքը վրաց թագավորին հանձնելու իրենց մտադրության մասին: Հայ-վրացական զորքերը շուտով մտան Անի և այնտեղից դուրս քշեցին Շաղդադյաններին: Սակայն, վերջիններս շրջակա ամիրայությունների զորքով **1126 թ.** պաշարեցին Անին: Բնակիչները հերոսաբար պաշտպանեցին քաղաքը: Քաղաքի պաշտպանների մեջ հատկապես աչքի ընկավ **Այծեմնիկ** անունով մի հայ աղջիկ, որը, արհամարհելով նետերից ստացած բազմաթիվ վերքերը, շարունակում էր պարիսպներից քարեր նետել թշնամու վրա: Հենց քաղաքի պարիսպների վրա էլ զոհվեց հերոսուհի Այծեմնիկը: Ի վերջո, քաղաքում սկսված սովը հարկադրեց անեցիներին հանձնվել Շաղդադյաններին: Անին զավթած թշնամին դաժան հաշվեհարդար տեսավ քաղաքի բնակիչների հետ: Պայքարն Անիի և հյուսիսային Հայաստանի մյուս շրջանների համար նոր թափ ստացավ վրաց **Գեորգի III** թագավորի օրոք (**1156-1184 թթ.**): **1161 թ.** Անին նորից գրավվեց հայ-վրացական ուժերի կողմից: Ազատագրված Անի քաղաքի կառավարիչ կարգվեց **Իվանե Օրբելյանը**, իսկ օգնական՝ **Սարգիս Մեծ Ջաքարյանը**: **1165 թ.** սելջուկ-թուրքերը կրկին գրավեցին Անին, իսկ **1170թ.**՝ **Սյունիքի Բաղաբերդ** ամրոցը, որտեղ պահվող **10 հազար** ձեռագրերի զգալի մասը հրկիզվեց, իսկ հավաքված հարստությունները թալանվեցին:

Անին՝ Շիրակ գավառով, երրորդ անգամ ազատագրվեց **1174 թ.**, որի կառավարիչ նորից նշանակվեց **Իվանե Օրբելյանը**:

Հայ-վրացական զինակցությունն իր գագաթնակետին հասավ Գեորգի III-ին հաջորդած **Թամար** թագուհու կառավարման տարիներին (**1184-1213**): Այս ժամանակաշրջանից Հայաստանի հյուսիս-արևելյան և կենտրոնական շրջանների քաղաքական կյանքում սկսեց նշանակալից դեր խաղալ **Ջաքարյան** տոհմը: **Սարգիս Ջաքարյանը 1185 թ.** ստացավ հայ-վրացական զորքերի **ամիրսպասալարի** պաշտոնը, իսկ նրա մահից հետո այդ պաշտոնն անցավ նրա ավագ որդուն՝ **Ջաքարեին**: Վերջինիս կրտսեր եղբայր **Իվանեն** դարձավ վրաց **արքունի մեծ վեզիր** և թագաժառանգի խնամակալ՝ **աթաբեկ**: Ջաքարյան եղբայրների հրամանատարությամբ XII դարի վերջին հայ-վրացական զորքերը թշնամուց ազատագրեցին Հյուսիսային Հայաստանի բազմաթիվ շրջաններ: **1196թ.** ազատագրվեց **Ամբերդ** հայտնի ամրոցը, իսկ **1199 թ.** արդեն չորրորդ անգամ՝ **Անին**: Թշնամուց մաքրվեցին **Արցախը, Սյունիքը, Արարատյան դաշտը: 1201 թ.** ազատագրվեց **Բջնին, 1203 թ.**՝ **Դվինը**, իսկ **1206 թ.**՝ **Կարսը**, ապա նաև՝ **Բասենն** ու **Բագրևանդը**: Շարունակելով առաջընթացը՝ հայ-վրացական ուժերը հասան մինչև **Մանազկերտ** ու **Արճեշ**, իսկ **1209 թ.** պաշարեցին Վանա լճի ափին գտնվող **Խլաթ** քաղաքը՝ **Շահ-Արմենների** նստավայրը: Սակայն Խլաթի մոտ Ջաքարյան եղբայրներն անհաջողության մատնվեցին և դադարեցրին հետագա առաջխաղացումը:

Ազատագրված հայկական հողերի կառավարումն անառարկելիորեն անցնում էր Ջաքարյաններին և նրանց վասալ իշխաններին: Փաստորեն, Հայաստանի ազատագրված տարածքներում վերականգնվում էր հայկական պետականությունը՝ ի դեմս **Ջաքարյանների իշխանապետության** մեջ մտնող իշխանությունների: Այն դաշնակցում էր վրաց արքունիքի հետ, որն ազատագրված տարածքները ճանաչեց որպես Ջաքարյանների ժառանգական տիրույթներ:

Հայաստանի հյուսիս-արևելքում՝ **Տավուշում, Գարդմանում** և **Փռնիսոսում**, ստեղծվել էր Ջաքարյաններից կախյալ **Վահրամյանների** իշխանությունը՝ **Գագ** ամրոց կենտրոնով, որի հիմնադիրը Սարգիս Ջաքարյանի եղբայր **Վահրամն** էր:

Ջաքարյաններին ենթակա իշխանություններ կազմավորվեցին **Սյունիքում՝ Օրբելյանների, Վայոց ձորում՝ Պռոշյանների, Արագածոտնում՝ Վաչուտյանների, Շիրակում՝ Պահլավունիների, Արցախում՝ Հասան-Ջալալյանների** կողմից և այլն:

Չնայած հայ-վրացական զինակցության շնորհիվ (**1124-1236 թթ.**) Ջաքարյանների օրոք Հայաստանի կենտրոնական ու հյուսիսային շրջաններն ազատագրվեցին, ու երկիրն ունեցավ քաղաքական անկախություն, տնտեսական ու հոգևոր մշակութային վերելքի մի շրջան ևս, այդուհանդերձ հետագա դեպքերը՝ մոնղոլ-թաթարական հարձակումները, հայ ժողովրդի պատմական ճակատագիրը թեքեցին դեպի խավարի, հսկայական կորուստների ու մասնատման, հյուծման՝ դարեր տևած մի ժամանակաշրջան:

Այսպիսով, Հայաստանում, ուր ամենից վաղ էր սկսվել վերածննդին բնորոշ փոփոխությունները, չչարունակվեց պատմական օրինաչափ զարգացման այն փուլը, որով բնութագրվում էին արևմտաեվրոպական երկրները:

3. ՄՈՆԻՏԻՆԳԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

1206 թ. Սիբիրի և Չինաստանի միջև ընկած մոնղոլական քոչվոր ցեղերի ժողովը՝ **մեծ խուրաւը**, ցեղապետերից **Թեմուչինին** ընտրեց խան՝ **Չինգիզ խան** անունով: Վերջինս, միավորելով մոնղոլական ցեղերին, շուտով սկսեց իր աշխարհակալ նվաճումները: **1210-ական** թվականներին մոնղոլները ներխուժեցին **Չինաստան**, **Սիբիրի** հարավային շրջաններ և **Միջին Ասիա**: Միջին Ասիայի երկրներից **Խորեզմի** շահը պարտություն կրեց, իսկ նրա որդին՝ **Ջալալեդդինը**, նահանջելով Իրան և Անդրկովկաս, իր հերթին կողոպտեց տեղի բնակչությանը:

XIII դարի 20-ական թվականներից մոնղոլ-թաթարական հորդաները սկսեցին իրենց հետախուզական ներխուժումներն **Իրան**, **Յայաստան** և հարևան երկրներ: Առաջին անգամ նրանք **Անդրկովկասում** հայտնվեցին **1220 թ.**: Մոնղոլների դեմ դուրս եկան վրաց թագավոր **Գեորգի Լաշայի** և **Իվանե Ջաքարյանի** զլխավորած հայ-վրացական միացյալ ուժերը: **Կոտմանի** դաշտում տեղի ունեցած ճակատամարտում մոնղոլները կիրառեցին պայքարի նոր ձև. կազմակերպեցին կեղծ նահանջ, իսկ երբ հայ-վրացական ուժերն անցան հակագրոհի, դարանակալ հարվածեցին թիկունքից և պարտության մատնեցին հայ-վրացական զորքերին: Այնուհետև մոնղոլները շրջանցեցին Ջաքարյանների տիրույթներն ու Վրաստանը, անցան **Յյուսիսային Կովկաս** և **Ռուսիա**: Սակայն մոնղոլական քոչվորներին շուտով փոխարինեցին միջինասիական տիրակալ **Ջալալեդդինի** զորքերը, որոնք մոտ մեկ տասնամյակ ավերածություններ կատարեցին Անդրկովկասում:

Մոնղոլները Յայաստանում կրկին հայտնվեցին **1231 թ.**: Հետապնդելով **Ջալալեդդինին**՝ մոնղոլները կարողացան ջախջախիչ պարտության մատնել նրան, ապա անցան **Վասպուրական**՝ ավերելով բազմաթիվ բնակավայրեր: Հաջորդ տարում՝ **1232 թ.**, Միջին Ասիա վերադարձի ճանապարհին մոնղոլներն ավերեցին **Գանձակ** քաղաքը:

1236-1244 թթ. ընթացքում **Չարմաղանի** զլխավորությամբ Յայաստան ներխուժած մոնղոլական **30** հազարանոց բանակն ամբողջովին գրավեց երկիրը, իսկ նրա հետևից շարժվող բազմաթիվ քոչվոր ցեղերը հաստատվեցին Յայաստանում: Այդ ժամանակ Վրաստանը կորցրել էր իր նախկին հզորությունը, իսկ Ջաքարյանների իշխանությունը խիստ մասնատված էր: Պատահական չէ, որ թշնամին լուրջ ու կազմակերպված դիմադրության չհանդիպեց:

Յայաստանը մտավ **էլդանություն** վարչամիավորի մեջ: Հայ ժողովրդի վիճակը հատկապես ծանրացավ **1254-1255 թթ. աշխարհագրից** հետո: Սահմանվեցին բազում հարկեր, անկում էր ապրում երկրի տնտեսական և քաղաքական կյանքը, աճեց հայերի արտագաղթը:

Նվաճված քրիստոնյա ժողովուրդների վիճակն ավելի անտանելի դարձավ **XIII դարի վերջին**, երբ մոնղոլները մահմեդականություն ընդունեցին: Սկսվեց քրիստոնյաների բռնի հավատափոխությունը, իսկ ով չէր ցանկանում, պարտավոր էր ահռելի հարկեր մուծել: Ժամանակի պատմիչ **Ստեփանոս Օրբելյանի** վկայությամբ իսլամ ընդունած **Մուհամմեդ Խուդաբանդայի (Ուլջեյթու-խան, 1304-1316 թթ.)** («խուդաբանդա նշանակում է աստծու ծառա, որին հայերը ձևափոխած ասում էին դար-բանդա՝ էշի ծառա») և նրա հետևորդների օրոք թլպատում էին անգամ հայ հոգևորականներին: Յայաստանի բոլոր բնակիչները 11 տարեկանից սկսած պարտավոր էին հարկ մուծել, իսկ ով չէր կարողանում վճարել հարկերը, գերության էին քշում, անգամ սպանում:

Լինելով քոչվոր խաշնարածներ՝ մոնղոլական ցեղերը ծաղկուն քաղաքները, այգեստաններն ու ցանքատարածությունները վերածում էին ամայի տարածությունների, նոր արոտավայրերի, քանի որ քոչվոր անասնապահության համար անհրաժեշտ էին մեծ ու անմարդաբնակ տարածություններ: Հայաստանում քոչվորական ցեղերն իրենց անհամար անասուններով ամռանը տեր ու տնօրինություն էին անում լեռնային շրջաններում՝ **Սիփանի, Արագածի** փեշերին, **Տարոնում, Վասպուրականում, Գեղարքունիքում, Լոռիում**, ձմռանը՝ **Արարատյան, Ալաշկերտի, Երզնկայի, Բաբերդի** ու **Մուղանի** դաշտերում:

Այսպես սկսվեց հայ ժողովրդի պատմության աղետաբեր մի շրջան ևս, երբ ռազմաշունչ ցեղերի պատերազմներն ու նրցակցությունը հանգեցնում էին Հայաստանի ծաղկուն շրջանների ամայացմանը, և մեկի դաժան լուծը փոխարինվում էր մյուսի էլ ավելի վատթար տիրապետությամբ: **Կիրակոս Գանձակեցու** վկայությամբ հայոց աշխարհը ծածկվել էր դիակներով, կենդանի մնացածներն իրենց զգում էին դժոխքում, գիշերը նախընտրում էին ցերեկից, որովհետև գիշերը զոնե դադարում էին մոնղոլական վայրագությունները:

Համաշխարհային պատմության մեջ ոչ քաղաքակիրթ և ոչ էլ բարբարոս ժողովուրդներից որևէ մեկը մինչ մոնղոլներն այդքան կարճ ժամանակամիջոցում և նման հսկայածավալ տարածքում այդպիսի մեծ կայսրություն չէր ստեղծել, չէր ստրկացրել այդքան շատ ժողովուրդների: Ստրկացնող բարբարոս ժողովուրդներից շատ քչերն են գտնվել քաղաքակրթության այնպիսի ցածր աստիճանում, ինչպես մոնղոլները:

Պատմական իրավիճակը, հիրավի, անբնական էր թվում, և հպատակ ժողովուրդների հակամոնղոլական ելույթները, զինված պայքարը, ամեն տեսակի անհնազանդության դրսևորումները՝ օրինաչափ արձագանք:

Արդեն **1249 թ.** հայ և վրաց իշխանները վրաց **Դավիթ VI** թագավորի գլխավորությամբ նախապատրաստվեցին ապստամբության, որը, սակայն, բացահայտվեց, իսկ այն նախապատրաստող իշխանները պատժվեցին: Ապստամբություններ եղան նաև **1259-1261, 1267, 1290-1293** թվականներին, որոնք նպաստեցին ներքին հակասությունների հետևանքով թուլացած մոնղոլական տիրապետության քայքայմանը:

Ինչպես արաբական և սելջուկ-թուրքական տիրապետությունների, այնպես էլ մոնղոլական տիրապետության շատ ավելի ծանր շրջանում հայ իշխանական տները մեծ կորուստներ կրեցին: Թվում էր, թե այլևս չկան ժողովրդի ազատագրական պայքարն առաջնորդող ղեկավարներ, և մարելու է հայ քաղաքական կյանքն ու պայքարի ոգին: Բարեբախտաբար, հայ պայքարի քուրան մշտապես վառ մնաց: Դրա վկայությունը հայ բնիկ իշխանական տներից սերված ու ճյուղավորված իշխանական տների ու կիսանկախ իշխանությունների գոյության փաստն էր մոնղոլների անտանելի տիրապետության ողջ շրջանում: Հետագայում նրանցից մի քանիսը, ինչպես, օրինակ՝ **Օրբելյանները՝ Սյունիքում, Առանշահիկները՝ Խաչենում, Խաղբակյանները՝ Վայոց ձորում, Պռոշյանները՝ Գառնիից մինչ Բարգուշատ** տարածքում, **Վաչուտյաններն՝ Արագածոտնում, Մամիկոնյանների ժառանգները՝ Վասպուրականում** ու **Լոռիում (Դսեղ)** ոչ միայն գոյատևեցին, այլև հետագայում նրանց հետնորդներն էին, որ դարձան XVI-XVIII դարերի հայ քաղաքական կյանքի ու պայքարի առաջամարտիկները:

4. ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

1335 թ. մոնղոլական կայսրությունն սկսվեց փլուզվել: **1344 թ.** մոնղոլական **էլդանությունը** քայքայվեց, և նրա հիմքի վրա առաջացան բազմաթիվ իշխանապետություններ, որոնց միջև մրցակցությունն ու արյունահեղ բախումները Հայաստանի համար մի նոր արհավիրք էին: Ավելին, ծագումնաբանորեն տարացել բնակչությունից կազմված իշխանություններում անպակաս էին ներքին բուռն բախումները, մանավանդ որևէ հզոր առաջնորդի մահվանից կամ ռազմական պարտությունից հետո: Նորից ակտիվություն հանդես բերեցին հայ իշխանական տները՝ **Օրբելյանները՝ Սյունիքում, Վաչուտյաններն՝ Արագածոտնում, Պռոշյանները՝ Վայոց ձորում, Դոփյանները՝ Խաչենում:**

Դեռևս մոնղոլական նվաճումների ժամանակաշրջանում Հայաստանում հաստատվել էին թուրքական ծագում ունեցող բազմաթիվ նոր ցեղեր, որոնցից այս շրջանում ուժեղացավ սելջուկ-թուրքերին ազգակից **թուրքմենական ցեղերի** ներհոսքը Հայաստան: Նրանցից **ակ-կոյունլու** (այս անունը ստացել էին սպիտակ գույնի ոչխարներ պահելու համար) ցեղերը հաստատվեցին Հայաստանի հարավում՝ **Աղձնիք և Մուկք** աշխարհներում, իսկ **կարա-կոյունլուները** (սև ոչխարներ պահելու համար) բնակվեցին **Վասպուրականում և Տարոնում:**

1378 թ. կարա-կոյունլուների առաջնորդ **Կարա-Մահմադը** և նրա որդին՝ **Կարա-Յուսուֆը**, հիմնադրեցին իրենց իշխանապետությունը, իսկ ակ-կոյունլուների առաջնորդ **Օսմանը** դարձավ մեկ այլ իշխանապետության հիմնադիրը **Դիարբեքի** (հնում՝ **Ամիդ**) քաղաքի շրջակայքում: Թուրքմենական այս ցեղերը գտնվում էին մշտական հակամարտությունների մեջ, որից խիստ տուժում էր տեղի հայ բնակչությունը: Այս ամենին XIV դարի վերջին տասնամյակներին գումարվեցին մոնղոլական և միջինասիական զորապետների ավերիչ ասպատակությունները:

Մոնղոլների իշխանության մասնատմամբ Հայաստանը հայտնվեց հակամարտող մոնղոլ տիրակալների իշխանության տակ, որոնք Հայաստանը ենթարկեցին դաժան ասպատակությունների: Այսպես, **1384թ.** Անդրկովկասը ենթարկվեց **Ռսկե հորդայի** խան **Թողթամիշի 50** հազարանոց բանակի ասպատակությանը: Թշնամին գերեվարեց **Արցախի, Սյունիքի և Պարսկահայքի 200 հազար** բնակչությանը:

XIV դարի վերջին - XV դարի սկզբին Հայաստանը մեծ վնասներ կրեց հատկապես միջինասիական զորապետ **Լենկթեմուրի (կաղ Թեմուր)** արշավանքներից, որը XIV դարի վերջին Միջին Ասիայում ստեղծել էր մի ընդարձակ պետություն՝ **Սամարղանդ** կենտրոնով: **1386թ., 1387թ., 1394-96թթ., 1400-1402 թթ. Լենկթեմուրի** զորքերը ներխուժեցին Հայաստան, դաժանությամբ ավերեցին բնակավայրերը, առանց տարիքի և սեռի խտրության կոտորեցին բնակչությանը:

Լենկթեմուրի դաժանությունները սահման չունեին: **1387 թ. սեպտեմբերին** թշնամուն **26 օր** շարունակ դիմադրեցին **Վանի** բերդի պաշտպանները: Բերդը գրավելուց հետո գազազած թշնամին դաժան հաշվեհարդար տեսավ բնակչության հետ: Կանանց ու մանկահասակներին գերեվարեցին, իսկ մնացած բնակչությանը՝ մոտ **7** հազար մարդ, խուճը-խուճը կապելով իրար՝ ցած գլորեցին բերդի պարիսպներից: Հայ պատմիչի վկայությամբ նետվածների թիվն այնքան մեծ էր, որ վերջին ընկածներն արդեն չէին մեռնում: **1400 թ.** գրավելով **Սեբաստիա** քաղաքը՝ **3000** ռազմիկների, որոնք կռվել էին իրենց դեմ, կենդանի-կենդանի թաղեցին:

1405թ. Լենկթեմուրի մահից հետո նրա հսկայածավալ տերությունն արագորեն քայքայվեց, իսկ բազմաթիվ ժողովուրդներ ազատվեցին այդ բռնակալի տիրապետությունից:

Հայաստանում ու նրա հարևան տարածքներում գերիշխանության հաստատման համար կրկին պայքար սկսեցին դեռևս 1280-ական թվականներին այստեղ հաստատված թուրքմենական **կարա-կոյունլու** և **ակ-կոյունլու** քոչվոր ցեղերը: Նրանք պայքար ծավալեցին Լենկթեմուրի հաջորդների՝ **թեմուրականների** դեմ: Կարա-կոյունլուների առաջնորդ **Կարա-Յուսուֆը 1408 թ.** հաղթում է Լենկթեմուրի որդուն՝ **Միրանշահին** և իր տիրապետությունը հաստատում Հայաստանի և հարակից տարածքների նկատմամբ: Պատմիչ **Թովմա Մեծոփեցու** վկայությամբ Կարա-Յուսուֆի ժամանակ երկիրը շունչ քաշեց և սկսվեց համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան, որը, սակայն, երկար չպահպանվեց: **1419** թվականից կատաղի պայքար սկսվեց թուրքմենական երկու ցեղերի միջև, որը փոփոխական հաջողություններով շարունակվեց երկար ժամանակ: Հայաստանում խաղաղություն վերահաստատվեց կարա-կոյունլու տիրակալ **Ջհանշահի** օրոք: Վերջինս հենվում էր տեղի հայ բնակչության վրա և մեծ արտոնություններ էր տալիս Հայաստանում պահպանված իշխանական տների շահավիղներին: Պատահական չէ, որ **Սևանա լճի ավազանում, Վայոց ձորում, Արցախում, Սյունիքում, Գուգարքում** շուտով հանդես եկան հայ իշխանների՝ **մելիքների** իշխանություններ: Լայն հնարավորություններ տրվեցին առևտրի զարգացման համար: Ջհանշահի կառավարման տարիներին տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններից էր կաթողիկոսական աթոռի տեղափոխումը **Կիլիկիայից (Սիս) Էջմիածին: 1441 թ. Էջմիածնում 300** հայ հոգևորականների մասնակցությամբ գումարված ժողովը որոշում կայացրեց կաթողիկոսական աթոռը Էջմիածնում վերականգնելու մասին. **Կիրակոս Վիրապեցին** դարձավ կաթողիկոս: Ջհանշահի օրոք տեղի ունեցավ նաև մեկ այլ կարևոր իրադարձություն ևս. Այրարատ աշխարհի տարածքում կազմավորված վարչական միավորի կենտրոն դարձավ **Երևանը**, որը հետզհետե սկսեց վերածվել Արևելյան Հայաստանի քաղաքական, վարչական ու տնտեսական կենտրոնի:

Կարա-կոյունլուների տիրապետությունը **Հայաստանի, Ատրպատականի և Իրաքի** վրա տևեց մինչև **1468 թ.:** XV դարի երկրորդ կեսին Հայաստանում գերիշխող դիրք գրավեցին ակ-կոյունլուները, որոնց առաջնորդ **Ուզուն-Հասանը** շուտով բախվեց օրեցօր ուժեղացող օսմանյան թուրքերի հետ: Ակ-կոյունլուների տիրապետությունը, որը տևեց մինչև **1502 թ.**, կործանվեց ներքին հակասությունների և օսմանցիների հարվածների հետևանքով:

Արևելքից ներխուժած քոչվոր բարբարոս ցեղերի տևական տիրապետությունը, ավերիչ պատերազմները, բռնությունը, թալանը, գերեվարությունը, բնակչության զանգվածային արտագաղթը երկրի ամայացման պատճառ դարձան: Անընդհատ կրկնվող պատերազմների հետևանքով ժողովուրդը չէր կարողանում մշակել հողը և բերք հավաքել, դրան ավելանում էին այն ժամանակներին բնորոշ բնական աղետները: Երաշտի ու մորեխի, ցրտահարության ու կարկուտի հետևանքով առաջացած սովը բազմաթիվ մարդկային կյանքեր էր խլում:

Հայաստանում փոխվեց բնակչության ժողովրդագրական կազմը, հայ աշխատասեր ժողովրդին կեղեքող մահմեդական ցեղերը, հաստատվելով երկրի բարեբեր տարածքներում, այլևս չհեռացան: Հետևանքը եղավ քաղաքների անկումը, տնտեսության քայքայումը, մշակութային արժեքների ոչնչացումը, համընդհանուր հետադիմությունը. կարծես պատմական գործընթացը ետդարձ էր կատարում:

2.5. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (XI - XIV դդ.)

1. ՀԱՅԵՐԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ

Փոքր Հայքից հարավ-արևելք՝ Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափին է գտնվում քաղաքակրթության օրրաններից մեկը՝ **Կիլիկիան**: Եգիպտական, խեթական, ասորական, հրեական, ապա և հայկական աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել ծովափնյա բարեբեր այս երկրի մասին: Հին և միջին դարերում Կիլիկիան, լինելով Արևելքի և Արևմուտքի ծովային և ցամաքային ճանապարհների հանգուցակետը, կարևոր ռազմավարական նշանակություն է ունեցել:

Կիլիկիայի բնակչությունը հազարամյակներ շարունակ պայքարել է օտար նվաճողների դեմ՝ դիմագրավելով Եգիպտոսի փարավոնների, խեթական թագավորների, ասորեստանցիների, պարսիկների, հույների, հռոմեացիների ոտնձգություններին, մասնակից է եղել պատմական նշանավոր իրադարձություններին: Ինչպես վկայում է Հոմերոսն իր «Իլիական» պոեմում, կիլիկիացիները տրոյացիների դաշնակիցն էին և Տրոյական պատերազմի մասնակիցը: Ք.ա. VIII-VII դարերում Կիլիկիան դաշնակցել է Արարատի թագավորության հետ՝ ընդդեմ Ասորեստանի:

Կիլիկիան հելլենիստական մշակույթի կարևոր օջախներից մեկն էր: Ստրաբոնը վկայում էր, որ Կիլիկիայի հելլենիստական քաղաքները՝ **Տարսոնը, Ադանան, Անարզաբան, Փլավիան (Սիս)**, հռչակված էին հելլենիստական մշակույթի օջախներով՝ դպրոցներ, գրադարաններ, թատրոններ և տաճարներ, իսկ բնակիչները գիտության և փիլիսոփայության նկատմամբ իրենց սիրով ու հետաքրքրությամբ կարող էին մրցել անգամ Աթենքի և Ալեքսանդրիայի բնակիչների հետ:

Կիլիկիան բաղկացած է հիմնականում երկու շրջաններից՝ **Լեռնային** և **Հարթավայրային** կամ **Դաշտային Կիլիկիա**: Վերջինում տարեկան երկու անգամ հարուստ բերք էր ստացվում, իսկ Լեռնային Կիլիկիան աչքի էր ընկնում հիմնականում անասնապահությամբ: Հայկական գրավոր աղբյուրներում Կիլիկիան անվանվել է Կիլիկյան աշխարհ կամ Հայոց աշխարհ, ինչպես բուն Հայաստանը: Կիլիկիան ծովով, **Այաս, Կոռիկոս** և **Ալեքսանդրետ** նավահանգիստներով կապված էր **Ալեքսանդրիայի, Կոստանդնուպոլսի, Վենետիկի, Ջենովայի** հետ: Կիլիկիա մտնող ճանապարհներն անցնում էին բերդերով ամրացված մի քանի կիրճերով, որոնցից նշանավորներն էին «**Դրունք Կիլիկիո**» և «**Դրունք Ասորվոց**» լեռնացքները: Լեռնային Կիլիկիայում կային հարյուրից ավելի ամրոցներ:

Արդեն իսկ հնագույն ժամանակներում Կիլիկիան ունեցել է բնակչության խառը կազմ: Տիգրան II Մեծի ժամանակներում Կիլիկիան եղել է Հայոց թագավորության կազմում, և հայերի առաջին վերաբնակեցումները կարելի է նշել հենց այս ժամանակներից: Վաղ միջնադարում այստեղ բնակվող ասորիների, հույների, հրեաների հետ միասին բավական հոծ զանգվածներով հայեր էին բնակվում: Արդեն V դարում Կիլիկիայում հայերով բնակեցված բնակավայրերի թիվն այնքան էր շատացել, որ ստեղծվել էր նրանց սպասարկող հայ առաքելական եկեղեցու առանձին թեմ, որի մասին վկայում է Կիլիկիա արքսրված **Հովհան Ոսկեբերանը** (405 թ.), իսկ Իսուսի կամ Ալեքսանդրետի հայտնի ծովածոցը կրում էր **Հայկական ծովածոց** անունը:

Միջին դարերում օտարների հարձակումների հետևանքով շատ հայեր Մեծ Հայքից վերաբնակվեցին Կիլիկիայում: Բագրատունյաց թագավորության անկումից հետո (1045 թ.)

Բյուզանդիայի վարած անհեռատես հակահայկական քաղաքականության հետևանքով Հայաստանից արտագաղթն ընդունեց խոշոր չափեր: Հայ բնակչությունն արտագաղթում էր Վրաստան և հատկապես Փոքր Ասիա: Արտագաղթը նոր ծավալներ ընդունեց, երբ սկսվեցին սելջուկ-թուրքերի արշավանքները: Բյուզանդական տիրապետության տակ գտնվող տարածքներից հայերը գերազանցապես հաստատվում էին Կիլիկիայում:

Կիլիկիայում հայ բնակչությունը ստվարացավ հատկապես, երբ հոծ զանգվածներով Մեծ Հայքի աշխարհներից՝ **Վասպուրականից, Այրարատից, Սյունիքից, Արցախից**, այստեղ գաղթեցին հարյուր հազարավոր հայեր՝ **1044 թ. Գրիգոր Մագիստրոս Պահլավունին** Բջնիի ու շրջակայքի հազարավոր բնակիչներով, **1065 թ. Կարսի Գագիկ թագավորը** հազարավոր վանանդեցիներով, իսկ **1073թ. Գանձակի Օշին իշխանը** հազարավոր արցախցիներով հաստատվեց **Լամբրոն** բերդում և այլն:

1044 թ. Բյուզանդիայի **Կոնստանդին** կայսրը Կոստանդնուպոլսում ձերբակալեց Անիի Բագրատունյաց թագավորության վերջին թագավոր **Գագիկ II-ին** և աքսորեց Կիլիկիայի **Պիզու** քաղաքը. նրա հետ աքսորի ճամփան բռնեցին տասնյակ հայ իշխաններ ու հազարավոր հայաստանցիներ:

Այսպիսով, XI դարի երկրորդ կեսից Կիլիկիայի բնակչության գերակշռող մասը կազմեցին հայերը:

2. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԻՇԽԱՆԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

XI-XIV դարերում Միջերկրական ծովի հյուսիսարևելյան մերձափնյա հայաբնակ Կիլիկիայում ծաղկեց ու զարգացավ հայոց միջնադարյան վերջին և փառավոր պետականությունը:

Բյուզանդական կայսրության պետական պաշտոնյաների մեջ, այդ թվում անգամ կայսերական արքայատոհմերում, միշտ մեծ է եղել հայերի թիվը: Կիլիկիայում հաստատված հայ իշխանները ևս շուտով կարևոր պաշտոններ գրավեցին: Այսպես, օրինակ, Վասպուրականի իշխաններից **Աբլղարիբ Արծրունին 1042թ.** ստանձնեց Կիլիկիայի մի զգալի մասի կառավարումը: Կիլիկիան մահմեդական ամիրայությունների ներխուժումից պաշտպանող սահմանապահ զորքերի հրամանատարներից շատերը հայ զորավարներն էին: Դրանցից **Փիլարտոս Վարաժնունին**, օգտվելով **1071թ. Մանազկերտի ճակատամարտում** բյուզանդացիների՝ սելջուկ-թուրքերից կրած պարտությունից, ստեղծեց ինքնուրույն իշխանություն՝ **Մարաշ** կենտրոնով, որի սահմանները տարածվում էին Կիլիկիայից մինչև Մեծ Հայք: Այն իր գոյությունը պահպանեց մինչև XI դարի 80-ական թթ.: Փիլարտոսի մահից հետո **Գող Վասիլ իշխանի** գլխավորությամբ առաջացավ մի նոր իշխանություն՝ **Քեսու** կենտրոնով, որը նույնպես ընդարձակ շրջաններ էր ընդգրկում:

XI դարի երկրորդ կեսին Կիլիկիայում ձևավորվել էին մի շարք հայկական ինքնուրույն իշխանություններ, որոնցից կենսունակը **Ռուբինյան** իշխանությունն էր:

Բագրատունյաց վերջին թագավոր Գագիկ II-ի թիկնապահ իշխաններից **Ռուբենը** ապստամբում է բյուզանդացիների դեմ և հենվելով հայ բնակչության աջակցության վրա՝ գրավում Լեռնային Կիլիկիայի զգալի մասը: Այսպես, **1080 թ.** հիմք դրվեց հայկական մի իշխանության, որը գոյատևեց **300 տարի՝ 1080-1375 թթ.**՝ սկզբում որպես իշխանություն, ապա՝ որպես թագավորություն:

Ռուբեն I-ը (1080-1095 թթ.) և նրա որդի **Կոնստանդին I-ը (1095-1100 թթ.)**, օգտագործելով թշնամիների հակասություններն ու միջազգային բարենպաստ իրադրությունը, աստիճանաբար հզորացրին և ընդարձակեցին Կիլիկիայի հայկական իշխանությունը: Շուտով սկսվեցին խաչակրաց առաջին արշավանքները (**1096-1099 թթ.**): խաչակիրները, որ այդպես էին կոչվում իրենց հազուստի վրա խաչի նշանը կրելու համար, քրիստոնյա երկրներից հավաքված ասպետական զորք էին, որի՝ արևելքում հայտնվելու հիմնական նպատակ հռչակված Երուսաղեմի ազատագրումը, **Քրիստոսի** գերեզմանը մահմեդականներից փրկելու առաքելությունը: Մերձավոր Արևելքի պատմության շուրջ 200 տարին (**1096-1270թթ.**) առնչվում է նաև խաչակրաց ութ արշավանքների պատմության հետ:

Կոստանդինը կարողացավ ստանալ նրանց աջակցությունը և բյուզանդացիներից մաքրեց Լեռնային Կիլիկիայի շատ շրջաններ: **1098 թ.** նա գրավեց ռազմավարական մեծ նշանակություն ունեցող **Վահկա** բերդը Լեռնային Կիլիկիայում և այն դարձրեց իր նստավայրը:

Առաջին խաչակրաց արշավանքի ժամանակ, երբ Դաշտային Կիլիկիայի մեծ քաղաքները՝ **Տարսոնը, Ադանան, Մսիսը (Մամեստիա) և Ալեքսանդրետը**, մաքրվեցին բյուզանդացիներից ու թուրքերից և նվաճվեցին խաչակիրների կողմից, հայերը՝ **Օշին և Բագրատ** իշխանների ղեկավարությամբ, խաչակիրներին օգնում էին՝ համոզված լինելով, որ նրանք եկել էին ազատագրելու Արևելքի քրիստոնյաներին սելջուկ-թուրքական լծից: Սակայն շուտով պարզ դարձավ, որ խաչակիրները նույնպես նվաճողներ էին. Արևելքում նվաճված տարածքներում նրանք ստեղծեցին լատինական չորս պետություններ՝ **Երուսաղեմի թագավորությունը, Անտիոքի դքսությունը, Եդեսիայի և Տրիպոլիի կոմսությունները**:

Ռուբինյան իշխանները, որոնք կոչվում էին իշխանաց իշխան կամ մեծ իշխան, իրենց շուրջ համախմբելով հայկական իշխանական տները, Կիլիկիայի ազատագրված տարածքներում ստեղծել էին բավական ուժեղ մի իշխանապետություն:

Կոստանդինի որդի **Թորոս I-ը (1100-1129թթ.)**, գլխավորելով բյուզանդացիների և սելջուկների դեմ մղված պայքարը, իր իշխանության տակ վերցրեց Կիլիկիայի մեծ մասը: Հայերը ներխուժեցին **Դաշտային Կիլիկիա** և գրավեցին **Սիս, Անարզաբա** քաղաքները: **1107 թ. Թորոսն** ու **Գող Վասիլը** համատեղ ուժերով Կիլիկիայից դուրս քշեցին այնտեղ ներխուժած սելջուկ-թուրքերին: Կիլիկիայի Ռուբինյան իշխանները ոչ միայն Բյուզանդիայից միանգամայն անկախ քաղաքականություն էին վարում, այլև չէին երկնչում թշնամու արարքները խստագույնս պատժելուց: **1079թ. Գագիկ II** թագավորին դավադրաբար սպանած բյուզանդացի **Մանդալե** եղբայրներին գերելով՝ **Թորոս I-ը 1111 թ.** սպանեց նրանց: Թորոս իշխանը խաղաղ ժամանակ զբաղվում էր բերդաշինությամբ, եկեղեցիներ ու վանքեր էր կառուցում: Կիլիկյան հայ խոշոր մտածող **Վահրամ Բաբունու (XIII դար)** հաղորդմամբ, Թորոսի կառուցած վարդապետարաններից առավել հռչակավոր ուսումնագիտական կենտրոններ էին **Դրագարկն** ու **Մաշկևորը**:

Թորոս I-ին հաջորդեց եղբայրը՝ **Լևոն I-ը (1129-1137 թթ.)**, որն իր իշխանությունը տարածեց նաև Դաշտային Կիլիկիայի մյուս նշանավոր քաղաքների՝ **Մամեստիայի, Ադանայի և Տարսոնի** վրա՝ այդպիսով ամրանալով նաև Կիլիկիայի ծովեզրյա շրջանում:

Լևոն I-ի հաջողությունները լուրջ անհանգստություն առաջացրին Բյուզանդիայում: **1137թ. Հովհաննես II Կոմենենոս** կայսրն անձամբ գլխավորեց Կիլիկիայի դեմ կազմակերպված արշավանքը: Բյուզանդացիները գրավեցին Դաշտային Կիլիկիայի քաղաքները և շարժվեցին դեպի

Լեռնային Կիլիկիա: Թշնամին համառ դիմադրության հանդիպեց **Անարզաբա** քաղաքում և **Վահկա** ամրոցում: Սակայն, ի վերջո, կարճ ժամանակով (**1137-1145թթ.**) բյուզանդացիներին հաջողվեց ընկճել Կիլիկիայի հայկական իշխանությունը՝ գերեվարելով Լևոն I-ին ու նրա որդիներին: **1137թ.** Լևոն իշխանը մահացավ Կոստանդնուպոլսի բանտում, իսկ նրա որդիներից **Թորոսին** հաջողվեց փախչել և վերադառնալ Կիլիկիա:

1145թ. Լևոնի որդի Թորոս II-ը (**1145-1169թթ.**) Կիլիկիայում կարողացավ վերականգնել նախկին իշխանությունը: Օգտագործելով խաչակրաց երկրորդ արշավանքի ժամանակ ստեղծված նպաստավոր պայմանները՝ Թորոսն իր շուրջ համախմբված հայրենասեր ուժերի, ինչպես նաև գերեվարությունից գերծ մնացած եղբայրների՝ **Ստեփանեի** ու **Մլեհի** համագործակցությամբ **1147-1151 թթ.** ընթացքում ազատագրեց երկիրն օտար զավթիչներից և վերականգնեց Հայոց իշխանապետության անկախությունը: **1152 թ. Մամեստիայի** մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում գլխովին ջախջախելով բյուզանդական բանակին՝ վերականգնված հայկական իշխանությունը դարձրեց տարածաշրջանի հզոր պետություններից մեկը: Կիլիկիայի Հայաստանը նվաճելու Բյուզանդիայի՝ հետագա բազմաթիվ փորձերն ավարտվեցին նրա պարտությամբ: Ի վերջո, կայսերական արքունիքը հարկադրված եղավ հաշտություն կնքել Թորոս II-ի հետ և ճանաչել նրա ինքնուրույնությունը:

Թորոս II-ին հաջորդած **Մլեհ** իշխանի կառավարման տարիներին (**1169-1175 թթ.**) երկիրը հասավ բացարձակ անկախության: Մլեհը կտրուկ փոխեց հայկական իշխանության վարած արտաքին քաղաքականության ավանդական գիծը: Բարեկամանալով հարևան մահմեդական իշխանությունների հետ՝ Մլեհը բյուզանդացիներից խլեց Դաշտային Կիլիկիայի մեծ մասը, ապա և հաջողությամբ ետ մղեց խաչակիրներին՝ բռնագրավելով Կիլիկիայում հաստատված տաճարական ասպետների ամբողջ ունեցվածքը: Մլեհի օրոք՝ **1173 թ.**, իշխանության մայրաքաղաք դարձավ **Սիսը**: Մլեհը վարում էր կենտրոնախույս ուժերին սանձելու, եկեղեցու ուռճացած հարստությունները կրճատելու, բարձրաստիճան հոգևորականության միջամտությունները պետական գործերին սահմանափակելու և կենտրոնական իշխանությունը հզորացնելու քաղաքականություն: Մլեհի ներքին և արտաքին քաղաքականության նոր կուրսը հարուցեց հոգևորականների ու արևմտամետ իշխանների դժգոհությունը, որի հետևանքով **1175 թ.** նա սպանվեց պալատական դավադրությամբ:

Մլեհին հաջորդած **Ռուբեն III-ը** (**1175-1187թթ.**) հնազանդեցրեց Կիլիկիայի հայ իշխանների մեծամասնությանը, բացառությամբ **Լամբրոնի տեր Հեթումյանների**: Ռուբենի օրոք վերացվեցին Բյուզանդիայի վերջին հենակետերը Կիլիկիայում: Արու զավակ չունեցող Ռուբենի մահից հետո՝ **1187 թ.**, Հայոց իշխանի գահն անցավ եղբորը՝ **Լևոն II-ին**:

Այսպիսով, Ռուբինյան իշխանատան գլխավորությամբ Հայոց իշխանության հիմնադրումը Կիլիկիայում արդյունք էր այն տևական ազատագրական պայքարի, որը հայերը մղեցին սելջուկյան թուրքերի, Բյուզանդական կայսրության, խաչակիր ասպետների դեմ XI դարի վերջին քառորդին և XII դարի առաջին կեսին: Հայ իշխանների ռազմական հաջողությունները գերազանցապես պայմանավորված էին Կիլիկիայում հայ բնակչության բացարձակ գերակշռությամբ, ինչպես նաև քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում նրա խաղացած առաջնակարգ դերով:

3. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅՎԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ԼԵՎՈՆ II ՄԵԾԱԳՈՐԾ

Կիլիկիայի հայկական իշխանությունն իր հզորության գագաթնակետին հասավ **Լևոն II Մեծագործի** կառավարման տարիներին (**1187-1219 թթ.**): Այդ ժամանակ Կիլիկիայի հայկական իշխանության բնակչության թիվը մոտ **մեկ միլիոն** էր, տարածքը՝ **40 հազար կմ²**: Նրա սահմաններն արևմուտքում հասան մինչև **Անթալիա** նավահանգիստը, իսկ արևելքում՝ **Եփրատ** գետը: Միայն միջերկրածովյան ափամերձ տարածքի երկարությունը **500** կմ էր: Կիլիկիայի հայկական իշխանության հզորության մասին է վկայում նրա ունեցած մոտ **60 հազարանոց** զորաբանակը և **100-ից ավելի** բերդերն ու ամրոցները:

Խելացի քաղաքական գործիչ և հմուտ դիվանագետ Լևոն II-ը բավական բարդ միջազգային իրավիճակն օգտագործեց արտաքին քաղաքականության մեջ՝ Կիլիկիայի համար բարենպաստ պայմաններ ստեղծելով, ապա և Կիլիկիայի հայկական իշխանությունը որպես թագավորություն հռչակելով:

Արժանահիշատակ են խաչակիրների հետ Լևոն II-ի քաղաքական դիրքորոշումն ու իրագործած վճռական քայլերը:

Լևոն II-ը բարեկամական հարաբերություններ հաստատեց խաչակրաց երրորդ արշավանքի առաջնորդներ՝ **Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսի** և **անգլիական թագավոր Ռիչարդ Առյուծասրտի** հետ: Հանուն Կիլիկիայի քաղաքական շահերի՝ խաչակիրներին պարենով ապահովելով՝ Լևոն Մեծագործը Կիլիկիան առժամանակ ազատում էր իր հզոր թշնամիների՝ **Եգիպտոսի** մամլուքների, **Իկոնիայի** սուլթանության և **Բյուզանդիայի** հարձակումներից:

Բոլորովին այլ էր Լևոն II-ի վերաբերմունքն իր հետ թշնամացած խաչակիրների իշխանության՝ **Անտիոքի** նկատմամբ: Ի պատասխան Անտիոքի դուքս **Բոհեմունդի** դավադիր քայլերի՝ նա գերեվարեց դուքսին և ստիպեց ստորացուցիչ պայմանագիր կնքել՝ դրանով իսկ Անտիոքի իշխանությունից խլելով Դաշտային Կիլիկիայի հարավային տարածքները:

Իր իշխանության առաջին շրջանում (**1187-1198թթ.**) ընդարձակելով երկրի սահմանները, սաստելով թշնամիներին, բարեկամություն հաստատելով եվրոպական հզոր երկրների թագավորների հետ, ապահովելով **Հռոմի պապի** բարյացականությունը՝ Լևոն Մեծագործը խիստ բարձրացրեց Կիլիկիայի և հենց իր իշխանության միջազգային հեղինակությունը:

1198 թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքի **Սուրբ Սոֆիա** մայր տաճարում տեղի ունեցան Լևոն II-ի թագադրման հանդիսավոր արարողությունները: Հանդեսին ներկա էին ոչ միայն Կիլիկիայի աշխարհիկ ու հոգևոր նշանավոր ներկայացուցիչներ, այլ բազմաթիվ նշանավոր օտարերկրյա հյուրեր՝ Բյուզանդիայի, Գերմանիայի կայսրություններից, Բաղդադի խալիֆայությունից, ինչպես նաև պատվիրակություններ Մեծ ու Փոքր Հայքերից: Հայկական ու լատին ծեսերով Լևոն II-ն օծվեց **«Թագավոր Ամենայն Հայոց, և նահանգին Կիլիկեցոց, և Իսավրիոյ»**:

1045 թ. կործանված հայոց թագավորությունը կարծես վերածնվեց, այն էլ հայոց աշխարհից դուրս մի վայրում, որը հզոր երկրների բախման կիզակետ էր դարձել:

Շրջապատված լինելով հիմնականում իրեն թշնամի պետություններով՝ Կիլիկիայի հայոց թագավորությունն իր գոյության ողջ ընթացքում ստիպված էր անընդհատ պայքարելով գոյատևել:

Լևոն II թագավորի զգուշավոր ու ողջախոհ արտաքին քաղաքական քայլերն երկար ժամանակ Կիլիկիան գերծ պահեցին թշնամիների հարձակումներից: Լևոն II-ը, խաչակիրների **«Տևտոնյան»**

և «**Հյուրընկալ**» ասպետների օրդեններին հողեր տրամադրելով, սահմանային տարածքներում փորձում էր ապահովել երկրի պաշտպանությունն արտաքին վտանգից: Խնամիական կապերով Լևոն արքան բարեկամացավ **Անտիոքի** դքսության, **Երուսաղեմի** ու **Կիպրոսի** թագավորությունների հետ (Լևոնի կինը **Կիպրոսի Ամորի Լուսինյան** թագավորի աղջիկն էր): **1210 թ.** Անտիոքի դքսության գահակալ, իր թոռ **Ռուբեն-Ռայմոնդին** ճանաչելով Հայոց և Անտիոքի միացյալ գահի ժառանգորդ՝ Լևոն II արքան մտադիր էր միավորել քրիստոնյա երկրների ուժերն ընդդեմ ապագա փորձությունների:

1201 թ. Ջենովայի հետ կնքած առևտրական պայմանագրով, որով խիստ բարենպաստ պայմաններ էին ստեղծվում ծովային միջազգային առևտրի համար, Կիլիկիայի նավահանգստային քաղաքները, մասնավորապես **Այասը**, դարձան Եգիպտոսի **Ալեքսանդրիա** նավահանգստի մրցակիցը՝ մեծ եկամուտներ ապահովելով Կիլիկիայի թագավորության գանձարանի համար:

Ցուցաբերելով պետական գործչի հեռատեսություն ու վճռականություն՝ Լևոն II-ը կարողացավ ապահովել նաև Կիլիկիայի ներքին կյանքի կայունացումը: Սանձահարելով ինքնանկախ մնացած առանձին ավատատիրական տներին՝ թագավորը սաստեց անջատողական ձգտումներ ունեցող իշխաններին՝ միաժամանակ պաշտոններ տալով առավել վստահելի չորս խոշոր իշխաններին: Լևոն II-ն ամրապնդեց բանակը, կատարելագործեց պետական ապարատը՝ ստեղծեց տարբեր ոլորտները կառավարող գործակալություններ, բարեփոխեց դատարանը, դրամներ կտրեց «**Հայոց թագավոր**» մակագրությամբ: Լևոն II-ի օրոք Կիլիկիայում իրագործվեցին շինարարական մեծ աշխատանքներ՝ կառուցվեցին նավահանգիստներ, առևտրական ու ռազմական ճանապարհներ, բերդեր ու ամրոցներ, ինչպես նաև շուկաներ, իջևանատներ ու պանդոկներ:

Վերելք էր ապրում Կիլիկիայի մշակութային կյանքը՝ վանքերին կից բացվեցին դպրոցներ: Կիլիկիան դարձել էր գրչության ու մանրանկարչության կենտրոն: Լևոն II-ն անձամբ հովանավորում էր մշակույթի գործիչներին: Հիրավի, կիլիկիացիների աշխարհը լցվել էր իմաստությամբ: Այս պատճառով է, որ մեր պատմիչները մեծ հպարտությամբ Լևոն II-ին անվանում են «**Մեծագործ**»: **1219 թ.** Լևոն Մեծագործը մահացավ, նա արու զավակ չունեց և թագաժառանգ էր նշանակել իր դուստր **Ջաբելին**: Անչափահաս Ջաբելին խնամակալներ էին նշանակված, որոնցից **Կոստանդինը** երկարատև պայքարից հետո իր որդի **Հեթումին** անուսնացրեց Ջաբելի հետ: **1226 թ.** Հեթումի՝ թագավոր հռչակումով հիմք դրվեց թագավորական նոր տոհմի:

4. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ

Ռուբինյանների և Հեթումյանների միավորմամբ երկրի ներքին կյանքը, որը Լևոն Մեծագործ թագավորի մահից հետո անկայուն էր դարձել, նորից հունի մեջ մտավ՝ թուլացավ խաչակիրների քաղաքական ազդեցությունը, վերջ տրվեց իշխանական տների երկպառակություններին: Հեթումյանները, գրավելով քաղաքական, ռազմական ասպարեզի, եկեղեցական գործերի կառավարման գլխավոր պաշտոնները, միաժամանակ շատ հայտնի իշխանների խոհեմաբար պաշտոններ տվեցին, կալվածքներ ու ամրոցներ նվիրեցին: Արդյունքը համեմատաբար երկարատև խաղաղության շրջանն էր, երկրի տնտեսական, մշակութային վերելքը, կայուն արտաքին քաղաքականությունը:

Յեթուհի I-ի գահակալման տարիներին (1226-1270 թթ.) Միջին և Մերձավոր Արևելքը դարձան մոնղոլ-թաթարական ասպատակությունների թատերաբեմ, և շուտով մոնղոլները մոտեցան Կիլիկիայի սահմաններին: **1243 թ. Չմանկատուկի** ճակատամարտում մոնղոլները ծանր պարտության մատնեցին Կիլիկիայի հարևան **Իկոնիայի** սուլթանությանը: Հաջորդ զոհը կարող էր լինել Կիլիկիան: Մոնղոլական զորքին ուղեկցող հայ իշխաններ **Ջաքարյանների** ու **Հասան Ջալալի** միջնորդությամբ **Կոստանդին** թագավորահայրը մոնղոլ զորավար **Բաչուի** հետ պայմանագիր կնքեց:

Հայ-մոնղոլական դաշինքը Կիլիկիան գերծ պահեց մոնղոլական զորքերի ահավոր հարվածներից: Մոնղոլներին Կիլիկիայի հետ դաշնակցությունը ևս շատ ձեռնտու էր: Կիլիկիան տարածաշրջանում դարձնելով հենարան և ստանալով պարենավորման, սպառազինության, զորքի համալրման հնարավորություն, նրանք կարող էին շարունակել ռազմական արշավանքները դեպի **Սիրիա** ու **Եգիպտոս**:

Մոնղոլների հետ բարեկամության առաջին շրջանում Կիլիկիան կարողացավ պայքարել Անտիոքի դքսության և Իկոնիայի սուլթանության դեմ: **1249թ.** Կիլիկիան պարտության մատնեց Իկոնիայի սուլթանությանը՝ խլելով սահմանային մի շարք ամրություններ: Պայմանավորվածության համաձայն՝ **1254թ. Յեթուհի I-ը** մեկնեց մոնղոլական պետության մայրաքաղաք **Կարակորում՝ Մանգու** խանի մոտ: Մոնղոլ **Մեծ խանի** հետ կնքված պայմանագրի համաձայն՝ կողմերը պարտավորվում էին օգնել միմյանց պատերազմի ժամանակ: Կիլիկիայի հայերը պարտավորվում էին օգնել մոնղոլական կողմին նոր տարածքներ գրավելու գործում: Մոնղոլներն իրենց հերթին պարտավորվում էին պաշտպանել Կիլիկիան մահմեդական պետությունների հարձակումներից: Մոնղոլները չպետք է մտնեին Կիլիկիայի սահմանները, իսկ այն հողերն ու քաղաքները, բերդերն ու ամրոցները, որոնք նախկինում պատկանել էին հայկական թագավորությանը, մոնղոլների կողմից գրավվելու դեպքում վերադարձվելու էին Կիլիկիային:

Օգտվելով հայ-մոնղոլական դաշինքի ընձեռած հնարավորություններից՝ Կիլիկիան մի շարք հաջող արշավանքներով ընդարձակեց իր սահմանները: **1259թ.** Կիլիկիայի **52** հազարանոց զորքը միացավ դեպի Ասորիք (Սիրիա) մոնղոլ զորավար **Հուլավուի** արշավանքին:

Հայ-մոնղոլական զորքերը գրավեցին Յուսիսային Ասորիքը, որի մի մասը՝ **Հալեպ** կենտրոնով, անցավ Կիլիկիային:

Հետագայում, երբ մոնղոլական հսկայածավալ տերությունը սկսեց տրոհվել ու քայքայվել, թուլացավ նրա աջակցությունը Կիլիկիային: **1260թ.**, երբ մոնղոլները ծանր պարտություն կրեցին **Եգիպտոսի մամլուքներից**, պարզ դարձավ, որ Կիլիկիան ևս դառնալու է մահմեդական պետությունների հարձակման թիրախը:

1266թ. Եգիպտոսի սուլթանության զորքերը ներխուժեցին Կիլիկիա: Ժամանակին օգնություն չստանալով մոնղոլներից ու հայ իշխաններից՝ թագավորական զորքը ծանր պարտություն կրեց. թագաժառանգներից **Թորոսը** սպանվեց, **Լևոնը**՝ գերեվարվեց, իսկ մայրաքաղաք **Սիսը** ավարի ու թալանի մատնվեց: Ծերացած Յեթուհի արքան ծանր պայմաններով ստիպված հաշտություն կնքեց:

Լևոն III-ի օրոք (**1269-1289թթ.**) Կիլիկիայում իրավիճակը համեմատաբար կայուն էր. նույնիսկ նկատվեց տնտեսական և մշակութային վերելք: Սակայն մահմեդական երկրների, հատկապես հայերի հետ խիստ թշնամացած Եգիպտոսի սուլթանության սպառնալիքն օրեցօր ուժեղանում էր: Վիճակը խիստ սրվեց, երբ Կիլիկիայի լատինամետ տարրերը դիմեցին Արևմուտքի օգնությանը:

Յոթերորդի Կղերմու V պապը օգնության դիմաց պահանջեց ընդունել **կաթոլիկություն: 1307թ. Սիսի** ժողովում պապի առաջարկը չնայած ընդունվեց, սակայն քրիստոնյա երկրների կողմից Կիլիկիային օգնելու ոչ մի իրական քայլեր չարվեցին. ընդհակառակը, մոնղոլները թշնամացան Կիլիկիայի հետ: **1308 թ. Լևոն IV** արքայի գլխավորությամբ **40** հայ նշանավոր իշխաններ հրավիրվեցին մոնղոլ զորավար **Փիլարդունի** մոտ և դավադրաբար սպանվեցին: Այդպես վերջ տրվեց հայ-մոնղոլական բարեկամությանը:

1308-1375թթ.՝ մինչև թագավորության անկումը, Կիլիկիան գրեթե անընդհատ ենթարկվում էր թշնամի մահմեդական երկրների հարձակումներին: Եգիպտոսի սուլթանության զորքերը քայլ առ քայլ Կիլիկիայից գրավում էին նորանոր տարածքներ, ստիպում կնքել ավելի ու ավելի ծանր պայմաններով պայմանագրեր, որոնք, սակայն, բոլորովին էլ չէին բավարարում հենց իրենց:

1343թ. հանկարծակի մահացավ Չեթունյան դինաստիայի վերջին թագավոր **Լևոն V-ը**: Կիլիկիայի գահին տիրեցին **Կիպրոսի Ռուբինյան-Չեթունյան** տոհմի հեռավոր ազգականներ, ֆրանսիական ծագում ունեցող **Լուսինյանները**, որոնց վարած ֆրանկամետ քաղաքականությունը երկրին ոչ մի լավ բան չէր խոստանում. ավելի ուժեղացան մահմեդական երկրների ճնշումները: Շատ բնակավայրեր, ենթարկվելով ավերի ու կողոպուտի, հատկապես Դաշտային Կիլիկիայում, հայաթափվեցին: Այս սրված պայմաններում երկրում շարունակվում էր հակադիր քաղաքական ուժերի՝ **ունիթորների (լատինասեր) և հակաունիթորների** պայքարը՝ էլ ավելի վատթարացնելով իրավիճակը:

1375թ. Եգիպտոսի սուլթանության զորքերը գրավեցին մայրաքաղաք Սիսը՝ գերեվարելով **Լևոն VI Լուսինյան** արքային: Այսպես վերջ դրվեց հայոց վերջին թագավորությանը: Լևոն VI թագավորը, ազատվելով գերությունից, հեռացավ Եվրոպա:

Երկար ժամանակ, ընդհուպ մինչև XIX դարը, Լեռնային Կիլիկիայում ամրացած հայ իշխանները պահպանում էին իրենց կիսանկախ գոյությունը, կազմակերպում ժողովրդի դիմադրությունը:

Այսօր Կիլիկիայի Չայկական թագավորությունից շարունակում են գոյատևել Սիրիայի կազմում գտնվող **Քեսապի** շրջանի 7 հայաբնակ գյուղերը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԽՆԴԻՐԸ XVI – XIX ԴԴ. I ԿԵՍԻՆ

3.1. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ XVI ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ XIX ԴԱՐԻ ՍԿԻԶԲԸ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ XVI-XVII ԴԴ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

XV դ. հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական մասնատվածությանը, քոչվոր ցեղերի ավարառությանը, միմյանց փոխարինող մահմեդական տարբեր իշխանությունների բռնություններին, կեղեքումներին ու խոշտանգումներին իրենց կործանարար հետևանքներով ավելացան նոր՝ թուրք-պարսկական պատերազմների արհավիրքները:

1299թ. թուրքերի նախնիներից օղուզ վաչկատուն ցեղի առաջնորդ Օսմանը Փոքր Ասիայում (Անատոլիայում) դարձավ մի նոր պետության հիմնադիրը: Սելջուկյան սուլթանության տրոհումից ձևավորված 10 իշխանություններից Օսմանյան պետությունը ամենակենսունակն էր: Պատերազմելով թուրքական մյուս իշխանությունների դեմ՝ **XIV դարի վերջում** այն դարձավ ողջ Փոքր Ասիայի տերն ու Բյուզանդիայի մահացու ախոյանը: **1453թ. թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը՝ բյուզանդական երբեմնի հզոր կայսրության մայրաքաղաքը: Մի քանի տարվա ընթացքում օսմանցի թուրքերը գրավեցին Սերբիան, Բոսնիան, Վալախիան՝ սպառնալով եվրոպական բոլոր երկրներին:** Թուրքերը վերահսկում էին Արևելքի և Արևմուտքի ծովային ու ցամաքային միջազգային առևտուրը՝ մեծ վնաս պատճառելով եվրոպական շատ երկրների: Թուրքական վտանգը վերջիններիս ստիպեց միավորել իրենց ուժերը և դաշնակիցներ փնտրել Արևելքի երկրներում:

1499թ. Սեֆյան Շեյխ-Իսմայիլը 7 հազար անձնագոհ մարտիկներով պայքարի դուրս եկավ Ալկոյունլուների պետության դեմ, հաղթեց նրանց՝ գրավելով Թավրիզը: Իրանի տարածքում ստեղծվեց Արևելքի ուժեղագույն պետություններից մեկը, որի կազմի մեջ մտավ նաև ողջ Հայաստանը:

Առաջավոր Ասիայում գերիշխանության ձգտող Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև երկարատև պայքարը (մեկ դարից ավել), անընդհատ կրկնվող պատերազմներն ի վերջո հանգեցրին Հայաստանի բաժանումներին **1555թ.** և ապա **1639թ.:**

Հայաստանում հաստատված թուրքերի ու պարսիկների տիրապետությունը կարծես թե վերջնականապես կոտրել էր հայ ժողովրդի դիմադրողական ոգին: Ստեղծված ծանր պայմանները համաժողովրդական զինված պայքարի միջոցով իրավիճակը փոխելու ոչ մի հնարավորություն չէին թողնում: Հայաստանի ու Կիլիկիայի լեռնային շրջաններում պահպանված ինքնուրույն իշխանությունները (Սասունում, Մոկսում, Շատախում, Ջեթունում, Սյունիքում, Արցախում, Գեղարքունիքում ու Լոռիում) իրենց փոքրաթիվ ջոկատներով, առավել ևս տարանջատ գործելով, ոչ մի հնարավորություն չունեին հայ ժողովրդի միասնական պայքարի կազմակերպման համար: Ծայր առած զանգվածային կամավոր զաղթն էլ իր հերթին նպաստել էր ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխմանը: **Օրինակ՝ Արևելյան**

Հայաստանի որոշ գավառներում հայությունը XVI-XVII դդ. կազմում էր բնակչության 1/3 մասը միայն:

Ստեղծված սարսափելի իրավիճակում հայ քաղաքական ու հոգևոր գործիչները Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման հույսերը կապում էին օտար որևէ հզոր երկրի օգնության հետ: Այսպես, հայ ազատագրական մտքի պատմության մեջ ամրապնդվեց փրկիչներ որոնելու գաղափարը: Ազատագրական մտքի յուրօրինակ արտահայտություններից մեկը հայ ազատագրական լեգենդն էր: Տիրում էր այն կարծիքը, թե հայ ժողովուրդը չի կարող ազատագրվել սեփական ուժերով՝ առանց որևէ քրիստոնյա հզոր պետության օգնության:

Ազատագրական գաղափարների ու շարժման հիմնական կրողն ու իրագործողը հայոց եկեղեցին էր:

XVI-XIX դդ. ընթացքում Հայաստանի ազատագրության խնդրի իրագործման ջանքերը պատմական դրսևորման և իրագործման մի քանի փուլերով են անցել: **Նախ՝ այն դրսևորվեց հայ ազատագրական շարժման եկեղեցական վերնախավի կողմից հրավիրված գաղտնի խորհրդաժողովներով: 1547թ.** Էջմիածնում Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսի կողմից հրավիրված գաղտնի ժողովի մասնակիցները որոշեցին օգնության խնդրանքով պատվիրակություն ուղարկել Եվրոպա: **1562թ.** Սեբաստիայում համանման գաղտնի ժողով հրավիրեց Միքայել Սեբաստացի կաթողիկոսը:

1575թ. Էջմիածնի Թադեոս կաթողիկոսն անձամբ ժամանեց Լվով, Վենետիկ և Ջոն: Թվում էր, թե եվրոպական բանագնացությունները վերջ ի վերջո կպսակվեն հաջողությամբ: Եվրոպական երկրների և Օսմանյան Թուրքիայի առճակատում այդ ժամանակ հասել էր գագաթնակետին: Վենետիկի հանրապետության գլխավորությամբ ձևավորվել էր հակաթուրքական դաշինք, իսկ Թուրքիայի ներսում դաշնակից ունենալը խիստ օգտակար կարող էր լինել: Դժբախտաբար, շարունակական սին խոստումներից բացի, եվրոպական երկրներից իրական աջակցություն չստացվեց:

Ինչևէ, այս հանգամանքը բոլորովին էլ չհուսալքեց ազատագրական շարժման առաջնորդներին: Նրանք չդադարեցրին իրենց բանագնացություններն՝ անընդհատ դիմելով այդ պահին ամենաազդեցիկ ու հզոր եվրոպական պետությունների թագավորներին:

Այսպիսով, ազատագրական պայքարի նշված ժամանակաշրջանին բնորոշ էր փրկության աղերսը: Հայ ազատագրական շարժման գործիչները չէին առաջադրում ազատագրական որևէ ծրագիր, անգամ չէին պատկերացնում հայերի մասնակցությունն ազատագրության գործին:

Ազատագրական շարժման հաջորդ փուլում պայքարի դեկը վերցրեց հայ վաճառական-առևտրական գործունյա դասը (խոջաներ), որը նաև տնտեսապես էր խիստ շահագրգռված այդ խնդրում:

Հայ խոջաները Թուրքիայի և Իրանի՝ եվրոպական երկրների հետ առևտրի հիմնական իրագործողներն էին և փորձում էին առևտրատնտեսական բազմաբովանդակ կապերն օգտագործել հայ ազատագրական պայքարի խնդիրների լուծման համար: Երբ **1666թ.** Բաղիշեցի Մահտեսի Մուրադը Փարիզում օգնության խնդրանքով դիմեց Ֆրանսիայի «Արև-արքա» Լյուդովիկոս XIV-ին, առաջին անգամ ուրվագծվեցին ծրագրային որոշակի խնդիրներ՝ Ֆրանսիայի մասնակցության դեպքում խոստանալով Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի, հույների ու ասորիների համատեղ ապստամբությունների կազմակերպում:

Իրանի շահը հայ խոջաներին էր վստահում իրեն պատկանող մետաքսի վաճառքից ստացվող եկամուտների գանձումը: Երկրի ֆինանսական գործերով օտար երկրների հետ հարաբերությունները կարգավորող խոջաներն ազդեցություն ու կշիռ ունեին անգամ Իրանի արտաքին քաղաքական խնդիրները վճռելիս:

Համազգային խնդիրների լուծման գործում խոջաներն ակտիվ մասնակցություն ունեին: Վճռական էր նրանց դերը հատկապես Էջմիածնի կաթողիկոսների ընտրության հարցում: Սակայն հայ առևտրական դասը դեռևս չուներ գաղափարական-քաղաքական պատրաստվածություն և չէր կարող ազատագրական պայքարին տալ հատուկ ծրագրավորված բնույթ: Դրա համար անհրաժեշտ էին ազատագրական քաղաքական պայքարին անսահմանորեն նվիրված լուսավորյալ անհատներ:

2. ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

XVII դարի վերջերին հայ ազատագրական շարժումը թևակոխում է զարգացման նոր փուլ, երբ պայքարին պարզորոշ տրվում է նախապես ծրագրավորված գործողությունների բնույթ: Ծրագրավորված պայքարի շրջափուլի առաջամարտիկն Իսրայել Օրին էր:

1677թ. Էջմիածնում վեց հոգևոր և վեց աշխարհիկ գործիչների մասնակցությամբ Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից հրավիրված գաղտնի ժողովը նույն նպատակներն էր հետապնդում, ինչ որ նախորդները: Կազմակերպչական փուլում իր առաքելությունը դեռ չսկսած՝ **1680թ.** Ջուղայեցու մահով Եվրոպա մեկնելու պատրաստ պատվիրակությունը ցրվում է: Եվրոպա է մեկնում պատվիրակության ներկայացուցիչ մելիք Իսրայելի 17-ամյա որդին՝ Օրին: Ապրելով ու դեգերելով Եվրոպական մի շարք պետություններում՝ Իսրայել Օրին ազատորեն տիրապետեց ֆրանսերենին, գերմաներենին, իտալերենին, լատիներենին, յուրացրեց Եվրոպական վարքն ու բարքը, նիստուկացր: Ֆրանսիայում նա մտավ զինվորական ծառայության, մասնակցեց ֆրանս-անգլիական պատերազմին, հմտացավ ռազմական գործում: Զբաղվելով տնտեսական գործունեությամբ՝ որպես ֆրանսիական բանակի մատակարար, շփվեց ռազմական ու պետական մարմինների հետ. այդպես քաղաքական հասունացման դասեր յուրացնելով՝ իրեն անմնացորդ նվիրեց հայրենիքի ազատագրման գործին:

1695թ. Օրին գնաց Հռենոսյան Պֆալց, ծառայության անցավ կայսերընտիր(կուրֆյուրստ) Հովհան Վիլհելմի մոտ: Հռենոսյան Պֆալցը՝ որպես Եվրոպական «Սրբազան լիգայի» անդամ, մասնակցում էր Թուրքիայի դեմ պատերազմին: Հովհան Վիլհելմի հետ ունեցած հանդիպումներում Օրին կարողանում է նրան համոզել օգտագործել քրիստոնյա ժողովուրդներին, հատկապես հայերին, որպես դաշնակից՝ Թուրքիայի դեմ պատերազմում:

Հովհան Վիլհելմը հակաթուրքական լիգայի ղեկավարներից էր և լրջորեն հետաքրքրվեց Իսրայել Օրու առաջարկով: Օրին կարողացավ նրան համոզել օգնության ձեռք մեկնել Թուրքիայի և Պարսկաստանի լծի տակ տառապող հայ ժողովրդին՝ խոստանալով, որ հայ ժողովուրդն իր կողմից Հովհան Վիլհելմին կճանաչի թագավոր:

1699թ. տեղում իրավիճակը պարզելու և կաթողիկոսի ու մելիքների հավաստիացումներն ու երաշխավորագրերը ստանալու նպատակով Օրին մեկնեց Հայաստան: Սյունիքի Անգեղակոթ

ավանում հայ 10 մելիքների մասնակցությամբ տեղի ունեցած գաղտնի ժողովում որոշվում է ազատագրության խնդրանքով դիմել եվրոպական պետություններին: Ժողովի մասնակից մելիքները խոստանում էին ապագա պատերազմի դեպքում ակտիվ մասնակցություն ունենալ հայրենիքի ազատագրման գործում՝ ստեղծելով ռազմական ջոկատներ և նախապատրաստելով զինված ապստամբություն:

Ազատագրական պայքարի առաջին հաջողություններով ոգևորված՝ Իսրայել Օրին մշակեց ու Յովհան Վիլիելմին ներկայացրեց Հայաստանի ազատագրման՝ 36 կետից բաղկացած մի ծրագիր: «Պֆալցյան ծրագիրը» հայ ազատագրական պայքարի ու մտքի առաջնեկն էր: Ծրագրում Օրին խորապես մտածված, քայլ առ քայլ ընդգրկում էր ազատագրման գործողության ամբողջ ընթացքը, կողմերի պարտականությունները: Հայերը պարտավորվում էին իրենց վրա վերցնել ռազմական արշավանքի ամբողջ ծախսերը: Պատերազմի հիմնական ժանրությունն ընկնելու էր համընդհանուր զինված ապստամբությամբ ոտքի ելած հայ ժողովրդի վրա: Նախատեսվում էր 100 հազար զինված հայերի մասնակցությունը պատերազմին: Ծրագրում տեղ էին գտել հավանական դաշնակիցների հետ համագործակցելու անհրաժեշտ քայլերի իրականացումը: Հայաստանն ազատագրող եվրոպական պետություններից բացի, որոշակի դերակատարում պետք է ունենար նաև Ռուսաստանը: Պարսկաստանի դեմ պատերազմի դեպքում անհրաժեշտ բոլոր միջոցներով նախատեսվում էր հասնել Թուրքիայի չեզոքությանը:

Մեծ իշխանը, ծանոթանալով ծրագրին, հավանություն տվեց և համաձայնեց աջակցել, սակայն իրականացման համար վճռական էր Ավստրիայի Լեոպոլդ I կայսեր խոսքը: Դժբախտաբար, նախորդ մեկ տարվա ընթացքում իրավիճակը միջազգային ասպարեզում կտրուկ փոխվել էր: Թուրքիայի հետ Ավստրիայի կնքած հաշտության պայմանագիրը ետին պլան էր մղել հակաթուրքական խմբավորման նշանակությունը: Հայաստանի ազատագրման քայլերը եվրոպական երկրների համար դարձել էր չհիմնավորված արկածախնդրություն: Չնայած Օրու Պֆալցյան ծրագիրը մնաց որպես սոսկ չիրականացված երազանք, սակայն հայ քաղաքական պայքարի պատմության մեջ այն մինչ օրս էլ չի կորցրել իր նշանակությունը՝ որպես պայքարի ռազմավարության և մարտավարության խորաթափանց մտքի արգասիք:

Իսրայել Օրին, եվրոպական տերություններից հուսախաբված, շարունակեց մտորել Հայաստանի ազատագրման խնդրի իրականացման շուրջ: Նոր ուղիների և դաշնակիցների փնտրտուքը նրա հայացքը դարձրեց դեպի Ռուսաստան: Ժամանելով Ռուսաստան՝ Օրին ծանոթացավ ցարի քաղաքական ու ռազմական ծրագրերին: Ռուս պաշտոնյաների հետ ունեցած հանդիպումներում առաջադրելով Հայաստանի ազատագրության խնդիրը՝ նա համոզվեց, որ Ռուսաստանի ծավալապաշտական ձգտումները ուղղված էին ոչ միայն Բալթիկ ծովով դեպի Եվրոպա, այլև Սև և Կասպից ծովերի շրջանը, Անդրկովկասը ևս իրենց տեղն ունեին հեռակա այդ ծրագրերում:

Պատահական չէր, որ Իսրայել Օրին բարյացկամ ընդունելություն գտավ ռուսական արքունիքում:

Հայ և ռուս ժողովուրդների միջև հաստատված առևտրատնտեսական, մշակութային, անգամ ռազմական դաշնակցության կապերն ու հարաբերություններն սկիզբ են առել դեռևս Կիևյան Ռուսիայի ժամանակներից:

Իսրայել Օրու քաղաքական շրջադարձը դեպի Ռուսաստան օրինաչափ ու վճռական գործողություն էր. առաջին անգամ Հայաստանի ազատագրման գործում գտնվել էր այն երկիրը, որի քաղաքական-ազգնավարական շահերի իրականացումը, նվաճումները համընկնում էին հայ ժողովրդի ազատագրական ձգտումներին:

1701 թ. Պետրոս Մեծին ներկայացված պաշտոնական զեկուցագիրն ըստ էության ևս մեկ ծրագիր էր, որտեղ Իսրայել Օրին մանրամասնորեն ներկայացնում էր Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազատագրման խնդիրը: Ձեռնամուխ լինելով Հայաստանի ազատագրման գործնական քայլերին՝ **1707 թ.** 50 մարդուց բաղկացած ռուսական դեսպանության գլուխն անցած Օրին մեկնեց Հայաստան: **1707-1711 թթ.** ընթացքում նա հսկայական աշխատանք կատարեց՝ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշմանը տալով գործնական բնույթ, ինչպես նաև ապահովեց ռուսական արքունիքի հետ հայ ազատագրական պայքարի առաջնորդների կապը: Օրին իր գաղափարական զինակիցների՝ Մինաս վարդապետ Տիգրանյանի, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի և Ղարաբաղի մելիքների միջոցով, իր հանկարծահաս մահից հետո անգամ կարողացավ, ապահովել ծավալված ազատագրական պայքարի հետագա խորացումը:

2.ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

1722 թ. հուլիսին սկսվեց ռուսական զորքերի «պարսկական արշավանքը»: Հայ ժողովուրդը, ազատագրության հույսերով ոգևորված, ավելի էր համոզվում, որ գտնվել է այն շահագրգիռ իրական դաշնակիցը, որի օգնությամբ կարող է թոթափել պարսկական ու թուրքական անտանելի լուծը:

Անդրկովկաս արշավող ռուսական բանակի հետ Հայաստան եկած Մինաս Տիգրանյանը, որը Ռուսաստանում հայկական թեմի առաջնորդն էր, կոչով դիմեց հայ ժողովրդին՝ ամենուրեք զինվել, օգնել ռուսական բանակին, սեփական ձեռքերով կռել ազատությունը: Սյունիքում և Արցախում լայն թափ ստացած զինված պայքարի նախապատրաստությունը գլխավորում էին մելիքական տների ներկայացուցիչները: Շուտով Արցախ-Ղարաբաղում ու Սյունիք-Ջանգեզուրում հայությունն ընդլզեց տեղական թուրք ու պարսիկ բռնակալների դեմ:

Ազատագրական պայքարը լայն թափ ստացավ հատկապես Արցախում, որտեղ կազմակերպվել էին 17 հազարի հասնող զինված հեծյալ ջոկատներ, կառուցվել պաշտպանական ամրություններ (սղնախներ)՝ Ջրաբերդ, Կաչաղակաբերդ, Քարազուխ-Շոշ, Գյուլիստան, Ավետարանոց: Արցախի պայքարի կազմակերպիչն ու ոգեշնչողն էր **Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը:** Ձինված ջոկատների աչքի ընկնող ղեկավարներից էին **Ավան հարյուրապետը, մելիք Յովսեփը:**

Երբ **1721թ.** ավարառու լեռնականները փորձեցին ասպատակել Արցախի բնակավայրերը, Ջրաբերդի պաշտպանները մեծ ջարդ տվեցին նրանց՝ ստիպելով հեռանալ Ղարաբաղից: Եսայի կաթողիկոսը **Մինաս Տիգրանյանին տեղեկացրել էր,** որ ռուսական բանակին միանալու համար հայերն ունեն 40 հազար զինված մարդ, իսկ ռուսների՝ դեպի Արցախ առաջխաղացման դեպքում ևս 40 հազարը կարող են մասնակցել: Վրացիները նույնպես **Վախթանգ թագավորի** գլխավորությամբ 40 հազարանոց զորքով պատրաստ էին միանալ ռուսական բանակին: Թվում էր, թե բոլոր նախադրյալներն առկա են, և Անդրկովկասի ազատագրումը շուտով կիրականանա:

1722թ. ռուսական զորքերը գրավեցին Դերբենդը, իսկ **1723թ.** գրավելով Բաքուն, Գիլանը, Մազանդարանը և Աստրաբադը՝ ամրացան Կասպից ծովի հարավարևմտյան տարածքում և դադարեցրին իրենց առաջխաղացումը:

Ռուսաստանի թագավոր **Պետրոս I**-ը «պարսկական արշավանքի» հաջողության գործում հենարան էր գտել հանձին հայ-վրացական օգնության:

1723թ. Պետերբուրգում Պարսկաստանի հետ կնքվեց հաշտության պայմանագիր: 1724թ.

Կ.Պոլսում կնքվեց ռուս-թուրքական հաշտության պայմանագիր: Պարսկական արշավանքի անհաջողությունը մեծապես պայմանավորված էր թուրքիայի, ինչպես նաև Ֆրանսիայի և Անգլիայի՝ Ռուսաստանի նկատմամբ դրսևորած բացահայտ թշնամանքով: Այս երկրները, հատկապես թուրքիան չէին կարող թույլ տալ Անդրկովկասում Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը. Ռուսաստանին սպառնում էր նոր պատերազմ, որը 21 տարի տևած Հյուսիսային ծանր պատերազմից հետո այդ երկրի ուժերից վեր էր: Անտեղյակ ռուսական հրամանատարության գործողությունների պլանի փոփոխմանը՝ պայմանավորվածության համաձայն, վրաց-հայկական միացյալ ռազմական ուժերը՝ 30 հազարը վրացական, 12 հազարը հայկական, սպասում էին հանդիպման վայրում՝ Գանձակի մոտ՝ Չոլակ գյուղում:

1722թ. աշնանը լուր ստանալով ռուսական զորքերի կողմից արշավանքի դադարեցման մասին՝ ետ վերադարձած հայերն ու վրացիները, չնայած իրենց համար ստեղծված ծանր իրավիճակին, չդադարեցրին պայքարը, չհուսալքվեցին: Արդեն **1723թ. սկզբներին** Արցախը հասավ լիակատար անկախության, երկրամասից դուրս չպրտվեցին և՛ պարսկական, և՛ մահմեդական ցեղերի ավարառու զինախմբերը: Արժանահիշատակ է Հադրութի ճակատամարտը **1723թ. հոկտեմբերին:** Պարսկական 40 հազարանոց բանակը, տալով 2000 զոհ, հեռացավ Արցախից:

Հետագայում, սակայն, հայ ժողովրդին նոր, էլ ավելի դաժան փորձություն բաժին ընկավ: **1724թ.** սկսվեց թուրքական արշավանքն Անդրկովկաս, և արդեն հունիսին գրավելով Թիֆլիսը՝ թուրքական զորքերը մտան Արևելյան Հայաստան: Ավելի քան երեք ամիս տևած մարտերից հետո, որի ընթացքում թուրքերը տվեցին 20 հազար զոհ, **1724թ. սեպտեմբերին** գրավվեց Երևանը:

1725թ. Թավրիզը գրավելուց հետո թուրքական զորքի երկու հզոր խմբավորումներ շարժվեցին դեպի Արցախ ու Սյունիք:

Սկսվեցին Արցախի և Սյունիքի պաշտպանական ծանր մարտերը: **1725թ. փետրվարին** Ղարաբաղի Վարանդայի շրջանի հայերն, առերես ընդունելով թուրքական զորքի ներկայությունը, գիշերով հանկարծակի հարձակմամբ ոչնչացրին 6 հազար թուրք զինվորի, սպանեցին 2 հրամանատար փաշաներին, մեկին էլ գերեվարեցին: Հայերն Արցախում հաջողության հասան նաև **1726թ.** մարտերում: Արցախի Շուշիի ամրոցը պաշարած թուրքական 40 հազարանոց զորքը, կորցնելով 8 հարյուր մարդ, ստիպված նահանջեց: Թշնամու դեմ պայքարում բեկումը տեղի ունեցավ միայն **1728թ.**, երբ մահացավ պայքարի գաղափարախոսն ու ոգեշնչողը՝ **Եսայի Հասան-Ջալալյանը**, և երկարատև պայքարից հուսալքված՝ դեպի ռուսական տիրապետություն վերադարձավ Ավան հարյուրապետը: Սակայն Արցախի պայքարի բոցը փայլատակեց մինչև **1731թ.:** Պայքարը Գյուլիստանի սղնախում շարունակվում էր Աբրահամ սպարապետի առաջնորդությամբ: Թուրքերն իրենք վկայում էին, որ «գյավուր Աբրահամի» քաջերը հարձակվում էին թուրքական ասպատակիչների վրա, ցաքուցրիվ անում նրանց զորաջոկատները: Նույնիսկ

թուրք սուլթանի կողմից «սրբազան պատերազմի» հայտարարումը և մահմեդական մոլեռանդ գործի կատաղի հարձակումները չէին կարողանում հնազանդեցնել հայերին:

Ավելի բարդ էր հայերի վիճակը Սյունիքում: Այստեղ բույն դրած մահմեդական քոչվորավարառու ցեղերի գոյությունը սյունեցիներին ստիպում էր կռվել միանգամից երկու ճակատով՝ դիմագրավելով օսմանյան զորքերին՝ նրանք ստիպված էին նաև երկրամասը մաքրել տեղական խաներից ու նրանց ցեղակիցներից: Պայքարը դժվարանում էր նաև այն պատճառով, որ Սյունիքում չկային ռազմական մեծ ուժեր, պայքարը ղեկավարող հզոր անհատներ: Այդ նպատակով Ղափանի 50 տանուտերերի ու մելիքների անունից առևտրական Ստեփանոս Շահունյանը օգնության խնդրանքով գնաց Վրաստան: Վախթանգ թագավորի երևելի զորահրամանատարներից Դավիթ Բեկը 30 զորականներով, որոնցից էին Մխիթարը, Ավթանդիլը, Բայանդուրը, Մեծ և Փոքր Գոգաները եկավ Սյունիք՝ կազմակերպելու ազատագրական պայքարը: Վեց տարի շարունակ՝ **1722-28թթ.**, **Դավիթ Բեկի**՝ այդ աննկուն, քաջ զորավարի, շրջահայաց քաղաքական գործչի, իմաստուն հայրենասեր անձնավորության ղեկավարությամբ Սյունիքի հայությունը պայքարեց ու բազում հաղթանակներ տարավ թշնամիների նկատմամբ: Դավիթ Բեկի գլխավորությամբ առաջին լուրջ հաջողությունը Սյունիքի բոլոր գավառներում բույն դրած քոչվորավարառու Ջիվանչիր և Ղարաչոռլու 32 ցեղերի նկատմամբ տարած հաղթանակն էր, դրանց դուրս վճռումը երկրամասից:

Ոգևորված **Դավիթ Բեկի** հաղթանակներով՝ շուտով նրան միացան Սյունիքի մելիքներից **Թորոսը, Փարսադանը, Տեր Ավետիսը, Հին Ջուղայի տերերը՝ մելիք Սուղան, Դիլանչի եղբայրները:**

Պաշտպանության համար կառուցվեցին նոր բերդեր և ամրացվեցին հները՝ Հալիձորի, Տաթևի, Ջևայի, Շինուհայրի, Որոտանի և այլն:

Թշնամիների նկատմամբ Դավիթ Բեկի հաղթանակներն այնքան տպավորիչ էին, որ շուտով պարսկական շահը ճանաչեց Դավիթ Բեկի իշխանությունը և նրա հետ դաշինք կնքեց ընդդեմ թուրքերի:

Այսպիսով, Դավիթ Բեկի գլխավորությամբ Սյունիքում ստեղծվեց հայկական անկախ իշխանություն, որն ուներ 7 հազարանոց մարտունակ բանակ: Այն հայկական մյուս անկախ իշխանության՝ Արցախի հետ միանալով՝ կարող էր քայլեր ձեռնարկել հայոց կործանված պետականության վերականգնման համար:

Հատկանշական է այն փաստը, որ ազատագրական պայքարի ամբողջ ընթացքում Արցախը և Սյունիքը միմյանց զինական օգնություն էին տրամադրում, գործում էին միասնական: Արդեն **1722թ.** Արցախի 2000-անոց զորաջոկատն Ավան հարյուրապետի հրամանատարությամբ օգնության հասավ Դավիթ Բեկին Որոտնաբերդի գրավման ժամանակ:

1725թ. թուրքերը ներխուժեցին Սյունիք: Հայկական զորքը Գողթնում մեծ ջարդ տվեց թշնամուն: Սակայն օրավուր ուժեղանում էր թշնամու ճնշումը: Տեղացի մահմեդական բնակչությունը և խաներն աջակցում էին թուրքերին: Այդ օրհասական պահին բոլոր կողմերից թշնամիներով շրջապատված, Հալիձորը դարձնելով անառիկ բերդ՝ Դավիթ Բեկը պաշարված վիճակում անգամ չկորցրեց հաղթանակի հույսը: **1727թ.** կատաղի մարտերից մեկի ժամանակ բերդի պաշտպանները Մխիթար սպարապետի գլխավորությամբ հանկարծակի հարձակմամբ թշնամուն խուճափ մատնեցին՝ տանելով փառավոր հաղթանակ: Հալիձորի ճակատամարտում թուրքերը

կորցրին 13 հազար զինվոր, և հայերի ձեռքն ընկավ հսկայական ռազմավար, այդ թվում ` 143 թուրքական մարտական դրոշ:

1728թ. Դավիթ Բեկի մահը ծանր հարված էր Սյունիքի իշխանության համար: Չնայած Մխիթար սպարապետի ջանքերին և այն բանին, որ երկար ժամանակ ժողովուրդը զենքը վայր չդրեց, թշնամուն ի վերջո հաջողվեց կոտրել սյունեցիների դիմադրությունը ևս: Ինչևէ, Արցախի և Սյունիքի հերոսական պայքարը հայոց պատմության ամենավառ էջերից է:

1730-ական թվականներին Արևելյան Հայաստանում հաստատվեց պարսից Նադիր շահի իշխանությունը: Թուրքիայի դեմ պայքարում նա ստանում էր նաև հայ ժողովրդի, հատկապես մելիքությունների օժանդակությունը: Նադիր շահը լայն իրավունքներ է տալիս Արցախի, մասամբ Սյունիքի հայ մելիքներին` հասկանալով, որ արտաքին և ներքին թշնամիների դեմ պայքարում կարելի է հենվել հայերի վրա: Արցախում առաջանում են Խամսայի (հինգ) մելիքությունները (Ջրաբերդ, Գյուլիստան, Խաչեն, Վարանդա, Դիզակ):

Նադիր շահի սպանությունից հետո իրադրությունն Արցախում կտրուկ փոխվում է: Օգտագործելով հայ մելիքների միջև սկսված հակամարտությունը` քոչվոր ջլանջիրների ցեղի առաջնորդ Փանահը և նրա որդի Իբրահիմը հաստատվում են Արցախում, որով էլ **1860-ական թվականներից հիմք դրվեց Ղարաբաղի խանությանը:**

4.ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

XVI-XVII դարերում հայերը ոչ միայն Ռուսաստանում, այլև Հնդկաստանում մեծ թիվ էին կազմում: Այստեղ առաջացել էր հայկական խոշոր գաղութ: Հայերը, որոնք հիմնականում զբաղված էին առևտրով, միջոցներ էին որոնում իրենց հայրենիքն ազատագրելու համար: **Մադրասի, Կալկաթայի, Բոմբեյի, Հայդարաբադի և հնդկահայ այլ գաղութներից հատկապես մեծ գործունեություն ծավալեց Հովսեփ Էմինը, ով ռազմական կրթություն էր ստացել Անգլիայում և սկսած 1760-ական թվականներից հարաբերություններ էր հաստատել ռուսական և վրացական արքունիքների հետ:** Ըստ Էմինի ծրագրի` Հայաստանի ազատագրումը թուրք-պարսկական տիրապետությունից, հնարավոր էր հայ-վրացական զինակցությամբ և Ռուսաստանի օգնությամբ: Սակայն Վրաստանում Էմինը չի ստանում վրաց արքունիքի աջակցությունը և հաստատվում է Արցախում` նպատակ ունենալով համախմբել հայ մելիքներին և նրանց զորական ուժերն օգտագործել Հայաստանի ազատագրության համար մղվող պայքարում: Ի վերջո, **1767 թ.** Էմինն այստեղ ևս **անհաջողության մատնվեց և 1770 թ. վերադարձավ Հնդկաստան:** Հայաստանի ազատագրման համար մեծ աշխատանք էր կատարում հատկապես Մադրասի խմբակը, որի հիմնադիրն էր հնդկահայ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը: Խմբակի անդամները` Մովսես Բաղրամյանը, Գրիգոր Խոջաջյանը և ուրիշներ, հայրենիքի ազատագրումը տեսնում էին համաժողովրդական ապստամբության միջոցով` Վրաստանի և Ռուսաստանի օժանդակությամբ:

1770-ական թվականներին Հնդկաստանի Մադրաս քաղաքում հրատարակվեցին **Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ»** և **Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց»** գրքերը, որոնք նախատեսում էին Հայաստանը ազատագրել թուրք-պարսկական լծից և երկրում

հաստատել հանրապետական կարգեր: Այդ խնդրի իրագործման համար մեծ տեղ էր հատկացվում ժողովրդի լուսավորությանը:

Հայ-ռուսական դաշնագրի կամ Ռուսաստանի հովանու ներքո հայկական պետությունը վերականգնելու նախագիծ էր կազմել Շահամիր Շահամիրյանը, որի համաձայն Ռուսաստանի օգնությամբ ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ պառլամենտական կառուցվածքով:

XVIII դարի երկրորդ կեսին (1769 և 1783թթ.) Աստրախանի մեծահարուստ Մովսես Սարաֆյանը և արքեպիսկոպոս, ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արղությանը ցարական կառավարությանն են ներկայացնում Հայաստանի ազատագրության իրենց նախագծերը, որոնց համաձայն միապետական Հայաստանը գտնվելու էր Ռուսաստանի հովանավորության ներքո: Երկու պետությունների միջև հաստատվելու էին սերտ հարաբերություններ:

Հայ-ռուսական դաշնագրի երկու նախագծերը, որոնք պատմության մեջ մտան «Հյուսիսային» (հեղինակ՝ Հ. Արղության) և «Հարավային» (հեղինակ՝ Շ. Շահամիրյան) անուններով, ներկայացվել են ռուսական կառավարությանը, սակայն իշխանությունների կողմից բավարար ուշադրության չեն արժանացել ու չեն քննարկվել:

Եվ՝ Մադրասի խմբակի ձեռնարկած հրատարակությունները, և՛ հայ-ռուսական դաշնագրի վերոհիշյալ նախագծերը հայ քաղաքական մտքի կարևոր նվաճումներից էին, որոնք հսկայական դեր խաղացին հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման և Հայաստանի ազատագրության ուղղությամբ:

3.2. XIX դարի ԱՌԱՋԻՆ ԵՐԵՄՆԱՄՅԱԿԻ ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ ՌՈՒՄ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՄԱՍՏԱՆԻՆ

1. 1804-1813ԹԹ. ՌՈՒՄ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ 1806-1812ԹԹ. ՌՈՒՄ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ: ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ՝ ՌՈՒՄԱՍՏԱՆԻՆ ՄԻԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ

Հայ ժողովուրդը XIX դար թևակոխեց՝ շարունակելով բաժանված մնալ սուլթանական Թուրքիայի և շահական Պարսկաստանի միջև: Հետամնաց այս երկրներում տիրում էին ֆեոդալական հարաբերությունները, դաժանորեն շահագործվում էր հասարակ ժողովուրդը, մանավանդ՝ քրիստոնյաները: Չկար մարդկանց կյանքի, գույքի ապահովման ոչ մի երաշխիք: Բռնի կերպով հավաքվող 40-ից ավելի հարկերը (ծխահարկը, գլխահարկը, հողից, ջրից, արոտավայրերից, անգամ աղ օգտագործելու համար գանձվող հարկերը) խլում էին ժողովրդի ապրուստի վերջին միջոցները: Հատկապես ծանր էր բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմող գյուղացիության վիճակը: Վերջիններս ստիպված էին նաև կոռային ու բեգարային պարտավորություններ կատարել, կառուցել բերդեր, ճանապարհներ, տներ, պահեստարաններ, ձրի աշխատել ֆեոդալ-տիրոջ հողամասում, տանը և այլն:

Հայերին անվանում էին ռայա, այսինքն՝ հպատակ, իրավագուրկ, ստորին խավ, որը զրկված էր քաղաքացիական ու քաղաքական բոլոր իրավունքներից: Հայն իրավունք չունեին վկայություն տալ դատարանում, զենք կրել, ձի նստել: Նա անգամ իր հագուստով պետք է տարբերվեր մահմեդականներից և պարտավոր էր վերջիններիս առաջ գլուխ խոնարհել:

Հայ ժողովրդի՝ դարեր շարունակվող այս ծանր վիճակը, պատմական կյանքի ողջ ընթացքը նրան ավելի ու ավելի էին հանդուր, որ թուրքական և պարսկական բռնատիրությունից ազատագրվելու միակ ելքը, ազգային գոյությունը ապահովելու իրական միջոցը Ռուսաստանի օգնությունն է: Հայերի ակնկալություններն առավել մեծացան, երբ ռուսական ցար Ալեքսանդր I-ի 1801 թ. սեպտեմբերի 12-ի Մանիֆեստով Արևելյան Վրաստանը և Արևելյան Հայաստանի մի քանի շրջաններ միացվեցին Ռուսաստանին:

Աշխարհում ծայր առած գաղութացման գործընթացն ավելի ու ավելի լարված բնույթ էր հաղորդում պետությունների հարաբերություններին: Հզոր երկրների հակամարտությունների կիզակետերից մեկն Անդրկովկասն էր: Ցարական Ռուսաստանի ծավալապաշտական ձգտումներում այն առաջին հերթին ուներ ռազմաքաղաքական կարևոր նշանակություն: Սև ու Կասպից ծովերը, Կուր, Արաքս և Ախուրյան գետերը բնական պատնեշ էին՝ Ռուսական կայսրության հարավային սահմանները Պարսկաստանից, Թուրքիայից և նրանց «հովանավորներ» Անգլիայից ու Ֆրանսիայից պաշտպանելու համար: Բացի այդ՝ դեպի Մերձավոր Արևելք ձգտող Ռուսաստանը, տիրելով սևծովյան նեղուցներին, Միջերկրական ծովով ելք էր ստանում դեպի համաշխարհային մրցակցության մի նոր տարածաշրջան: Կասպից ծովում և Պարսկաստանի նկատմամբ գերակայությունը ևս ունեին հեռուն գնացող նպատակներ (Աֆղանստան և Հնդկաստան):

1804թ. հունվարին ռուսական զորքը գրավեց Գանձակի խանությունը, ինչը թշնամաբար ընդունվեց Պարսկաստանի կողմից: Ֆաթ-Ալի շահը ձգտում էր ռուսներին դուրս մղել Կրաստանից ու Գանձակից և հնազանդեցնել անկախացած խաներին: Պարսկական 40-հազարանոց զորքը գահաժառանգ Աբաս-Միրզայի գլխավորությամբ պատրաստ էր ներխուժել Անդրկովկաս: Անգլիան ու Ֆրանսիան իրենց հերթին խորացնում էին Պարսկաստանի, Թուրքիայի թշնամությունը Ռուսաստանի նկատմամբ, փորձում նրանց համատեղ ուժերով ետ մղել Ռուսաստանին Անդրկովկասից, Սև ու Կասպից ծովերից:

1801թ. անգլո-պարսկական դաշնակցային պայմանագրով Անգլիան խոստանում էր ֆինանսական ու ռազմական օգնություն ցույց տալ Պարսկաստանին՝ նրա տիրապետությունն Անդրկովկասում վերականգնելու ու ամրապնդելու նպատակով: 1803 թ. Կոստանդնուպոլիս ժամանած Պարսկաստանի ներկայացուցիչները Ֆրանսիայի թելադրանքով սուլթանին համոզում էին համատեղ ուժերով Ռուսաստանի դեմ հանդես գալ:

Ներհակ ու իրարամերժ շահերի այս խաչաձևումը հղի էր մեծ բախումներով և արյունալի պատերազմներով, որոնք ընթացան հայերով բնակեցված պատմական Հայաստանի տարածքում՝ նորից ցավ ու տառապանք բերելով հայ ժողովրդին:

Այսպիսով՝ ինչպես միշտ պատերազմների պատճառները թաքնված էին հակադիր շահեր ունեցող երկրների (Պարսկաստան-Ռուսաստան, Թուրքիա-Ռուսաստան) պատմական զարգացման անխուսափելի օբյեկտիվ գործընթացում: Միայն պատրվակ էր պետք պատերազմելու համար:

Ռուս-պարսկական 1804-1813 թթ. պատերազմը սկսելու առիթ հանդիսացավ Էջմիածնի կաթողիկոսական գահի շուրջ ծավալված **«Դավիթ-Դանիելյան» վեճը**: Ռուսական կառավարությունը պահանջեց կաթողիկոս ճանաչել Դանիելին, սակայն Երևանի Մահմադ խանը պաշտպանեց Դավիթի թեկնածությունը: Այս մերժումը պատրվակելով՝ Ռուսաստանը պատերազմ սկսեց Պարսկաստանի դեմ:

1804թ. մայիսին ռուսական առաջապահ զորքը խորացավ Արևելյան Հայաստանի տարածքում՝ հունիսի սկզբներին հասնելով Գյումրի: Առաջին խոշոր ճակատամարտը տեղի ունեցավ հունիսի 10-ին Փոքր Ղարաքիլիսա (Ագատան) գյուղի մոտ և ավարտվեց ռուսների հաղթանակով: Մտնելով Արարատյան դաշտ՝ ռուսական զորքն Էջմիածնի մատույցներում մարտի բռնվեց պարսկական հիմնական ուժերի՝ գահաժառանգ Աբաս-Միրզայի զորաբանակի հետ: Ռուսական զորքի գլխավոր ուժերը գեներալ Պ. Ցիցիանովի հրամանատարությամբ Հրազդանի ափին պարտության մատնեցին պարսկական զորքին և 1804 թ. հուլիսի 2-ին առաջին անգամ պաշարեցին Երևանի բերդը:

Երևանի բերդը (կառուցվել է 1582 թ.) Պարսկաստանի ամենահզոր ամրոցն էր Անդրկովկասում: Այն շրջապատված էր երկշար պաշտպանական կառույցներով, ուներ 7000-անոց կայազոր, 60 թնդանոթ: Բերդը կարելի էր գրավել կամ երկարատև պաշարմամբ, մարտական ուժերի գերակշռության պայմաններում՝ օգտագործելով պաշարողական ծանր տեխնիկա, թնդանոթներ, կամ էլ հանկարծակի անձնագոհ, անկասելի գրոհի միջոցով:

Սակայն Պ. Ցիցիանովի ուժերը փոքրաքանակ էին, նույնիսկ պարսկական կայազորից էլ քիչ և ապահոված չէին անհրաժեշտ զինամթերքով ու պարենով: Չօգտագործվեց հանկարծակի հարձակման հնարավորությունը: Ռուսական զորքը հայտնվեց շուրջ տասն անգամ իրեն գերազանցող թշնամու ուժերի հակահարձակման վտանգի տակ: Բացի այդ՝ վրաց արքայազն Ալեքսանդրի գլխավորությամբ պարսկական մեկ այլ զորաբանակ, շարժվելով դեպի Փամբակ,

սպառնում էր կտրել ռուսական ուժերի նահանջի ճանապարհը: 1804 թ. օգոստոսին պարսկական զորքը Յամանլուի (Սպիտակ) մոտ շրջապատեց Լոռի-Փամբակը պաշտպանող մայր Մոնտրեզորի 114 հոգանոց ջոկատը, որի զինվորները հրաժարվեցին հանձնվել և կռվելով՝ զոհվեցին մինչև վերջին մարդը:

Հայտնվելով խիստ ծանր իրավիճակում՝ ռուսական զորքը սեպտեմբերի 3-ին ստիպված էր դադարեցնել Երևանի պաշարումը և արագ հեռանալ դեպի Թիֆլիս:

Չնայած 1804-1813 թթ. պատերազմի առաջին փուլում ռուսները չկարողացան գրավել Երևանը, բայց ունեցան որոշակի հաջողություններ Արևելյան Հայաստանում: 1805 թ. մարտին ռուսները գրավեցին Շորագյալը (Արևելյան Շիրակը՝ Արթիկ կենտրոնով): 1805 թ. մայիսին Ղարաբաղի Իբրահիմ խանը պայմանագիր ստորագրեց, ըստ որի Ղարաբաղն ընդունում էր ռուսական հպատակություն: Ղարաբաղի հետ միասին Ռուսաստանին անցան նաև Ղափանի, Գորիսի, Սիսիանի շրջանները:

Թուրքիայի արևելյան սահմանների մոտ ռուսական զորքի հայտնվելը թշնամաբար ընդունվեց սուլթանի կողմից: Բարեբախտաբար, թուրք-պարսկական սահմանային վեճերը թույլ չտվեցին թուրքերին ու պարսիկներին այդ պահին համատեղ գործել ռուսների դեմ: Սակայն Եվրոպայում գերիշխանության հասած ֆրանսիական նորընծա կայսր Նապոլեոնը, ձգտելով թուլացնել իր հիմնական ախոյաններից մեկին՝ Ռուսաստանին, ամեն կերպ նրա դեմ լարեց Թուրքիային: Նապոլեոնը Թուրքիային խոստացավ օգնել զենքով, պարենով և անգամ ռազմական ուժով: Փորձ արվեց նաև թուրք-պարսկական դաշինք ստեղծել ընդդեմ Ռուսաստանի: Թևակոծված ֆրանսիացիների խոստումներով՝ Թուրքիան սկսեց խոշոր ռազմական ուժեր կուտակել Դանուբի և Ախուրյանի ափերին, ամրացրեց սահմանային բերդերը:

1806թ. դեկտեմբերի 18-ին պատերազմ հայտարարելով Ռուսաստանին՝ Թուրքիան ցանկանում էր ամրապնդել իր դիրքերը Բալկաններում, Անդրկովկասում և Սև ծովի տարածաշրջանում, ինչպես նաև՝ Ռուսաստանից զավթել տնտեսական ու ռազմա-ստրատեգիական նշանակության նոր տարածքներ:

Պատերազմի սկզբում Ռուսաստանի համար ստեղծվեց ծայրահեղ լարված իրավիճակ, քանի որ Պարսկաստանը ևս նախապատրաստվում էր ակտիվ գործողությունների:

Նպատակ ունենալով կանխել հետագա դեպքերի անցանկալի ընթացքը, ինչպես նաև շեղել թուրքերի ուշադրությունը Բալկանյան ռազմաճակատից՝ 1807 թ. ապրիլին ռուսական զորքը նախահարձակ եղավ: Գեներալ Գուրովիչի ուժերը շարժվեցին դեպի Ախալքալաք-Ախալցխա, իսկ գեներալ Նեսվետանի ուժերը՝ դեպի Կարս: Թուրքական զորքը Յուսուֆ փաշայի գլխավորությամբ փորձեց ռուսական երկու զորաբանակներին անջատ-անջատ կռվի մեջ քաշելով ջախջախել և շարժվել դեպի Թիֆլիս: Թուրքերին օգնության էր շտապում նաև պարսկական 12 հազարանոց բանակը՝ թագաժառանգ Աբաս-Միրզայի գլխավորությամբ: Կռահելով թշնամու մտադրությունը՝ ռուսներն ամրացան Ախուրյանի ափին: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ **1807թ. հունիսի 18-ին, Փոքր Ղարաբիլիսա** գյուղի մոտ: Ռուսական 7 հազարանոց զորքը փայլուն հաղթանակ տարավ թուրքական 20 հազարանոց զորքի նկատմամբ: Թուրքերը տվեցին 1000 զոհ, և նրանց նահանջը վերածվեց անկանոն փախուստի: Աբաս-Միրզան այդպես էլ չհամարձակվեց մարտ սկսել և շտապ նահանջեց Նախիջևան:

Այսպիսով՝ ռուս-թուրքական պատերազմի հենց առաջին ճակատամարտում ռուսներին հաջողվեց

և խափանել թուրքերի ռազմական պլանները, և ի չիք դարձնել թուրք-պարսկական ռազմական դաշինքը: **1807թ. օգոստոսին** Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց **ժամանակավոր զինադադար**: Այդ ընթացքում Ռուսաստանը փորձում էր դիվանագիտական ճանապարհով Պարսկաստանի հետ հստակեցնել ռուս-պարսկական սահմանը: Սպառնելով հարցի խաղաղ կերպով լուծման բոլոր հնարավորությունները՝ Ռուսաստանը վերսկսեց պատերազմը՝ նպատակ ունենալով գրավել Երևանի ու Նախիջևանի խանությունները: **1808թ. սեպտեմբերի 25-ին** ֆելդմարշալ Գուդովիչի 6000-անոց զորաբանակն Ապարանով շարժվեց դեպի Երևան: Աշտարակի մոտ սեպտեմբերի 29-ին տեղի ունեցած մարտում պարտության մատնելով Երևանի նոր խան Զուսեին-Ղուլիի հեծելազորին՝ Գուդովիչի բանակը **1808թ. հոկտեմբերի 9-ին** կրկին պաշարեց Երևանի բերդը:

Հետապնդելով պարսկական թագաժառանգ Աբաս-Միրզայի զորքին և ճակատամարտում պարտության ու փախուստի մատնելով նրան՝ ռուսական զորքը նոյեմբերի 1-ին գրավեց Նախիջևանը՝ այդպիսով թույլ չտալով Ֆաթի-Ալի շահին օգնել պաշարված Երևանին: Թվում էր, թե հասել է Երևանի գրավման պահը: Սակայն ռուսական հրամանատարությունն նորից անվճռական գործեց՝ փորձելով Երևանը պաշտպանող Հասան խանին համոզել բերդն առանց դիմադրության հանձնել: Միայն **նոյեմբերի 17-ին սկսվեց Երևանի բերդի գրոհը**՝ հանդիպելով հակառակորդի համառ դիմադրությանը: Զինամթերքի, սննդամթերքի պաշարների սպառվելը, Փամբակի լեռնանցքի՝ ձյունով ծածկվելը, Վրաստանից կտրվելու վտանգը ռուսներին ստիպեցին նորից դադարեցնել Երևանի պաշարումը:

Այսպիսով՝ 1808թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին գրավելով Երևանի և Նախիջևանի խանությունների գրեթե ամբողջ տարածքը (բացի Երևանի բերդից)՝ ռուսները նորից հարկադրված հեռացան:

1809թ. համարյա թե միաժամանակ վերսկսվեցին ռազմական գործողությունները թուրքերի ու պարսիկների դեմ:

Թուրքական ճակատում ռուսական զորքը **1809 թ. գրավեց Փոթին, 1810 թ.՝ Սուխումը, իսկ 1811թ. դեկտեմբերի 8-ին Պ.Կոտլյարովսկու** զորագունդը կայծակնային գրոհով գրավեց **պատմական Հայաստանի Ջավախք գավառի կենտրոն Ախալքալաքը**: 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմի վճռորոշ գործողությունները տեղի ունեցան Դանուբյան (Բալկանյան) ռազմաճակատում, ուր Մ. Կուտուզովի գլխավորությամբ ռուսական բանակը 1811 թ. հունիսին Ռուշչուկի մատույցներում հաղթանակ տարավ, ապա նոյեմբերին ջախջախեց թուրքական 35 հազարանոց բանակը՝ ստիպելով թուրքերին հաշտություն խնդրել:

1812թ. մայիսին հայազգի դիվանագետ Մանուկ բեյի աջակցությամբ Բուխարեստում կնքվեց ռուս-թուրքական հաշտության պայմանագիր, որով Ռուսաստանին միացվեց Բեսարաբիան, իսկ Կովկասում, ընդհակառակը, Ախալքալաքը վերադարձվեց թուրքերին:

Չնայած Անգլիայի՝ Պարսկաստանին տրամադրած և ֆինանսական, և՛ ռազմական օգնությանը՝ վերսկսված ռուս-պարսկական պատերազմում ևս հաջողությունը ռուսների կողմն էր: **1810 թ. ամռանը Պ. Կոտլյարովսկու** զորագունդը գրավեց **Մեդրին**:

1812 թ. Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Բոնապարտի զորքերը, ներխուժելով Ռուսաստան, հասան մինչև մայրաքաղաք Մոսկվա ու գրավեցին այն: Ռուսաստանի ծանր վիճակից փորձեցին օգտվել պարսիկները, սակայն Նապոլեոնին ջախջախելուց հետո ռուսները լայնածավալ հարձակման

անցան նրանց դեմ: 1812 թ. հոկտեմբերից մինչև 1813 թ. հունվարն ընկած ժամանակահատվածում ռուսական զորքը մեկը մյուսի հետևից ծանր հարվածներ հասցրեց պարսիկներին Արցախում, Լենքորանում, Ասլանդուզում և Մեղրիում: Ֆաթի-Ալի շահը հարկադրված էր հաշտություն խնդրել: **1813թ. հոկտեմբերին Արցախի Գյուլիստան բերդավանում** կնքվեց հաշտության պայմանագիր, որով Պարսկաստանը մեկընդմիջտ հրաժարվեց Արևելյան Վրաստանից, Գանձակի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Բաքվի խանություններից: Այդ պայմանագրով Ռուսաստանին միացվեցին Արևելյան Հայաստանի մի շարք տարածքներ՝ **Շիրակը, Արցախը, Լոռին, Ղազախը, Շամշադինը, Ջանգեզուրը**: Այսպիսով, սկիզբ դրվեց նաև հայկական հողերի միացմանը Ռուսաստանին:

2. 1826-1828ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով Անդրկովկասում ստեղծված իրավիճակը կողմերից ոչ մեկին չէր բավարարում: Առանձնապես դժգոհ էր Պարսկաստանը: Դարերով իր տիրապետության տակ գտնվող և հսկայական շահույթ ապահովող Անդրկովկասի տարածքների կորստի հետ հնարավոր չէր համակերպվել:

Ռուսաստանը ևս այս պատերազմով չէր կարողացել լուծել ծավալապաշտական քաղաքականությամբ առաջադրված խնդիրները՝ ամրանալ Ախուրյան և Արաքս գետերի բնական սահմաններում, Անդրկովկասի այդ տարածքները հենակետ դարձնել հետագա նվաճումների համար:

Ռուսաստանի քաղաքական փոխյան Անգլիան, իր հերթին ձգտելով Պարսկաստանում քաղաքական ու տնտեսական տիրապետության, ամեն կերպ աջակցում էր պարսից շահին, դրդում նրան Ռուսաստանի դեմ պատերազմի:

1825թ. դեկտեմբերին Ռուսաստանում բռնկվեց Դեկաբրիստների ապստամբությունը: Նման իրադրությունում անգլիական գործակալները շահին համոզում էին օգտվել Ռուսաստանում տիրող «քաոսից»:

1826թ. հունիսին Երևանի սարդարի զորքը հարձակվեց Ապարանի Միրաքի գյուղի ռուսական պահակակետի վրա, իսկ արդեն հուլիսին պարսից շահի 60 հազարանոց զորաբանակը գահաժառանգ Աբաս-Միրզայի գլխավորությամբ անցավ լայնածավալ հարձակման: **Հուլիսի 26-ին** պարսկական հիմնական ուժերը պաշարեցին **Շուշի բերդը**: Այդ նույն օրը Երևանի պարսկական զորաբանակը **Հասան խանի** գլխավորությամբ ներխուժեց **Փամբակի և Շիրակի** գավառները: Միաժամանակ **Թալիշից Մուղանի հարթավայր** շարժվեց 25 հազարանոց պարսկական հեծելազորը:

Ռուսաստանն Անդրկովկասում ուներ ընդամենը 35 հազարանոց զորք, այն էլ՝ ցրված Կասպից և Սև ծովերի ափերից մինչև Ախուրյան գետը: Այդ պատճառով էլ չկարողացավ ամենուր կազմակերպել ակտիվ պաշտպանություն, ինչի հետևանքով **պատերազմի առաջին փուլում պարսիկները գրավեցին Լենքորանը, Շիրվանը, Գանձակը, իսկ Արևելյան Հայաստանում՝ Շորագյալը և Փամբակը**:

Պատերազմի հետագա ընթացքի համար վճռական նշանակություն ունեցավ Շուշիի բերդի

պաշտպանությունը, որը կաշկանդելով թշնամու հիմնական ուժերը, ձախողելով պարսկական հրամանատարության՝ Թիֆլիսի գրավման պլանները՝ ռուսներին հնարավորություն տվեց ժամանակ շահել, վերադասավորել ուժերը, անցնել հակահարձակման:

Շուշիի բերդը պաշտպանում էին կայազորի 1700 զինվորներ՝ գնդապետ Ռեուտի գլխավորությամբ, ինչպես նաև շրջակա 22 հայկական գյուղերի աշխարհագորայինները: Շուշիի հերոսական պաշտպանները զինամթերքի ու սննդամթերքի խիստ պակասի պայմաններում 47 օր շարունակ թշնամուն պատճառեցին մեծաթիվ զոհեր, կոտրվեց պարսկական բանակի հարձակողական թափը, զինվորների բարոյական ոգին:

1826 թ. ամառվա վերջին Ռուսաստանից ստանալով օգնական ուժեր՝ ռուսական զորքն անցավ հակահարձակման բեկում մտցնելով պատերազմի ընթացքում:

1826 թ. սեպտեմբերի 3-ին Շամխորի մոտ ռուսական 2 հազարանոց զորամասը հայազգի նշանավոր գեներալ Վ. Մադաթովի գլխավորությամբ պարտության մատնեց պարսկական 10 հազարանոց զորաբանակին: **Սեպտեմբերի 13-ին Ելիզավետպոլի** մոտ վճռական ճակատամարտում ռուսական 8 հազարանոց զորքը գեներալ Ի. Պասկևիչի գլխավորությամբ ջախջախեց պարսիկների հիմնական ուժերին՝ Աբաս-Միրզայի 35 հազարանոց բանակին: **Սեպտեմբերի 21-ին** գեներալ **Դենիս Դավիդովի կորպուսը Ապարանի Միրաք գյուղի** մոտ պարտության մատնեց Երևանի խանի զորքին: Սկսվեց դեպի Երևան արշավանքի նախապատրաստումը:

1827թ. գարնանը ռազմական գործողությունները վերսկսվեցին ռուսական զորքի համընդհանուր հարձակումով: **1827 թ. ապրիլի 15-ին** գեներալ Բենկենդորֆի զորաբանակը **գրավեց Էջմիածինը**, իսկ **ապրիլի 25-ին պաշարեց Երևանը**: Գեներալ Կրասովսկու դիվիզիայի ուժերով պաշարված պահելով Երևանը՝ Ի. Պասկևիչը ռուսական զորաբանակի հիմնական ուժերով հետապնդում էր պարսկական զորքին՝ գրավելով **Կոտայքը, Գառնին, Արտաշատը, Վեդին և Նախիջևանը**: **1827 թ. հուլիսի 5-ին** Արաքսի ափին՝ Ջևանբուլաղում տեղի ունեցած կատաղի ճակատամարտում պարսիկներին հաղթելուց հետո ռուսական զորքը գրավում է նաև Աբասաբադի բերդը՝ գերելով 3000-անոց պարսկական կայազորին: Աբաս-Միրզան զինադադարի բանակցություններ է սկսում, բայց խորամանկորեն ժամանակ շահելով՝ հանկարծակի հարձակվում է Էջմիածնի վրա:

1827թ. օգոստոսի 17-ին Օշականի մոտ արյունահեղ ճակատամարտում պարսկական մեծաքանակ բանակը, որը 10 անգամ գերազանցում էր ռուսական ուժերին (պարսկական զորքի թիվը 30 հազար էր, ռուսական զորքինը՝ 3 հազար), պարտություն է կրում: Ճակատամարտում ռուսների հաջողությանը մեծապես նպաստեց պարսկական բանակում ծառայող թնդանոթածիզ Հակոբ Հարությունյանը, որը թնդանոթն ուղղեց պարսիկների վրա և խուճապ առաջացրեց: Օշականի ճակատամարտում կրած պարտությունից հետո պարսկական զորքն այլևս հարձակողական լուրջ գործողություններ չձեռնարկեց: Ռուսական ուժերի նշանակետ դարձան Սարդարապատի և Երևանի բերդերը: **1827թ. սեպտեմբերի 20-ին ռուսները գրավեցին Սարդարապատը**: Սեպտեմբերի 25-ի վաղ առավոտյան սկսվեց Երևանի բերդի ռմբակոծումը ծանր հրետանիով: Այն շարունակվեց մինչև սեպտեմբերի 30-ը՝ ավերակների վերածելով հինավուրց բերդի պարիսպներն ու շինությունները:

1827թ. հոկտեմբերի 1-ի առավոտյան ռուսական հետևակը, որի առաջին գծում մարտնչում էին դեկաբրիստներն ու հայ կամավորները, գրոհով մտավ Երևանի բերդ: Բերդի գրավման ժամանակ

գոհվեց հայ կամավոր Աղասին՝ Խաչատուր Աբովյանի «Վերջ Չայաստանի» վեպի գլխավոր հերոսը:

Երևանի գրավումը 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի ամենամեծ հաջողությունն էր: Սակայն պատերազմը շարունակվում էր: 1827 թ. հոկտեմբերի 6-ին ռուսական զորքը ուղղություն վերցրեց դեպի Թավրիզ: **1827 թ. հոկտեմբերի 13-ին** այն գրավված էր:

Կորցնելով Երևանը և Թավրիզը՝ Ֆաթի-Ալի շահը փորձեց դիմել նոր խորամանկության: **1827թ. նոյեմբերին Դեհկարխանում** բանակցություններ սկսվեցին: Դիտավորյալ ձգձգելով բանակցությունները՝ պարսիկները Ուրմիայում խոշոր ուժեր էին կուտակում: Ռուսական զորքը վերսկսեց հարձակումը՝ կարճ ժամանակում գրավելով **Ուրմիան, Խոյը, Մարաղան, Սալմաստը, Արդաբիլը**: Պարսկական ջախջախված բանակն այլևս անկարող էր դիմադրել: Ճանապարհը դեպի Թեհրան ազատ էր: Շահը ստիպված էր հաշտություն խնդրել:

1828թ. փետրվարի 10-ին Թուրքմենչայ գյուղում կնքված հաշտության պայմանագրով Ռուսաստանին անցավ Արևելյան Չայաստանի մնացած մասը՝ Երևանի ու Նախիջևանի խանություններն ու Օրդուբադի գավառը: Պարսկաստանը պարտավորվեց Ռուսաստանին վճարել 20 մլն ռուբլի ռազմատուգանք: Պարսկական կառավարությունը նաև պարտավորվեց չարգելել բոլոր ցանկացողների տեղափոխումը Պարսկաստանից Ռուսաստանի տիրապետության շրջաններ՝ մշտական բնակություն հաստատելու նպատակով: Կասպից ծովում ճանաչվեց ռուսական նավատորմի բացարձակ տիրապետությունը: Ռուսաստանի և Պարսկաստանի միջև վերականգնվեցին դիվանագիտական և առևտրական հարաբերությունները, ու այլևս պատերազմական առճակատում տեղի չունեցավ:

Թուրքմենչայի պայմանագիրը հայ ժողովրդի համար ունեցավ պատմական մեծ նշանակություն. Արևելյան Չայաստանը միացվեց քրիստոնյա մի երկրի, ուր հայերին ֆիզիկական ոչնչացման վտանգ չէր սպառնում: 1828թ. մարտին Նիկոլայ I-ի հրամանագրով կազմավորվեց Չայկական մարզը, որի մեջ մտան Երևանի և Նախիջևանի նախկին խանություններն ու Օրդուբադի օկրուգը: Ռուսաստանը տնտեսական, մշակութային զարգացման համեմատաբար բարձր մակարդակով ու եվրոպական տնտեսության, մշակույթի հետ կապի շնորհիվ հայ ժողովրդի համար անհամեմատ ավելի լայն հեռանկարներ էր բացում: Վերջապես, պայմանագրի 15-րդ հոդվածով պարսկահայերն իրավունք ստացան տեղափոխվել Արևելյան Չայաստան. այն դարձավ հայ ժողովրդի ազգահավաքման օջախ:

3. 1828-1829ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐԹԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Օսմանյան կայսրությունը բռնապետական երկրների շարքում անգամ ամենահետամնաց ու վայրագ պետությունն էր, որի լծի տակ հեծում էին բազմաթիվ ազգեր: 19-րդ դարի սկզբին պարզորոշ նկատելի էր թուլացած կայսրության՝ հատկապես քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարի ծավալումը: Թուրքական կայսրության թուլությունից շտապում էին օգտվել եվրոպական հզոր երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, Ավստրիան, Ռուսաստանը, որոնք հանդես էին գալիս բալկանյան և կովկասյան քրիստոնյաների «պաշտպանի» և «հովանավորի»

դերում: Այսպես ծագեց «Արևելյան հարցը»¹, որի բուն էությունը Թուրքիայի տիրույթների զավթումն էր: Ռուսաստանն ամենից ավելի վճռական դիրք որդեգրած և գործնական քայլեր կատարող պետությունն էր: Ցարական Ռուսաստանի «Արևելյան» քաղաքականության կիզակետում էին Բալկանները, Անդրկովկասը, Սև ծովն իր նեղուցներով:

Սուլթանական Թուրքիան, սակայն, ամենևին չէր պատրաստվում հանդես գալ զիջողի դերում: Ավելին, ձգտում էր հասնել Ռուսաստանի դիվանագիտական մեկուսացմանը և պատերազմելով՝ ռուսներին դուրս մղել Անդրկովկասից ու Սև ծովից, գրավել Ղրիմը, վերացնել Ռուսաստանի ազդեցությունը Բալկաններում:

Միջազգային իրադրության բարդ ու լարված պայմաններում **1828թ. ապրիլի 14-ին** սկսվեց ռուս-թուրքական պատերազմը, որն ընթանում էր 2 ռազմաճակատով՝ Բալկանյան և Կովկասյան:

1828թ. ապրիլին ռուսական 92 հազարանոց բանակը **գեներալ Պ.Վիտգենշտեյնի** հրամանատարությամբ անցավ Պրուտ գետը և գրավեց Դանուբյան իշխանությունները:

Կովկասում ռազմական գործողությունները սկսվեցին **1828թ. հունիսի 14-ին**: Ռուսական 50 հազարանոց բանակի հարվածային խմբավորումը՝ բաղկացած 14 հազար զինվորից, գեներալ Ի.Պասկևիչի գլխավորությամբ անցավ Ախուրյան գետը և, կոտրելով հակառակորդի դիմադրությունը, հունիսի 22-ին պաշարեց ու սրընթաց գրոհով հունիսի 23-ին գրավեց Կարսը՝ թուրքերի ամենահզոր ամրոցը Կովկասում: Ռազմական տեղաշարժերով մոլորեցնելով թշնամուն և նրա հիմնական ուժերը գամելով Կարինի ճանապարհի ուղղությամբ՝ ռուսական զորքն անակնկալ հայտնվեց Ախալքալաքի մոտ և հուլիսի 24-ին գրավեց այն: Ապա ռուսները իրար հետևից գրավեցին Ախալցխան (օգոստոսի 15-ին), Բայազետը (օգոստոսի 27-ին), Արդահանը (օգոստոսի 28-ին):

1828թ. ամռան ընթացքում ռուսական ուժերը Սև ծովի ափերին գրավեցին Անապան, Սուխումը և Փոթին, իսկ Բալկանյան ռազմաճակատում՝ Բրաիլը (հունիսի 17-ին), Վառնան (հոկտեմբերի 10-ին):

1829թ. սկզբին Կովկասյան ռազմաճակատում թուրքական զորքերն անցան հակահարձակման Ախալցխայի, Կարսի և Բայազետի ուղղություններով:

1829թ. փետրվարի 17-ին թուրքական 20 հազարանոց բանակը պաշարեց **Ախալցխան**: Թուրքերին հաջողվեց ներխուժել քաղաք, կոտորել ու կողոպտել խաղաղ բնակչությանը, սակայն նրանք չկարողացան գրավել Ախալցխայի ամրոցը: Պաշարված ռուսական կայազորը հայազգի գեներալ Վ.Բեհբուլթովի գլխավորությամբ 12 օր շարունակ ետ մղեց թշնամու կատաղի գրոհները: Մարտի 4-ին օգնության հասած Ի. Բուրցովի զորագունդը թիկունքից հանկարծակի հարվածով թուրքերին փախուստի մատնեց՝ ազատելով պաշարվածներին:

Թուրքական զորքի հակահարձակման ձախողման գործում կարևոր նշանակություն ունեցավ նաև **Բայազետի պաշտպանությունը**: **1829թ. հունիսի 19-ին** Վանի փաշայի 15 հազարանոց զորքը պաշարեց Բայազետը, որը պաշտպանում էին 1500 ռուս զինվորներ և 2000 հայ կամավորներ՝ հիմնականում բայազետցիներ: Բայազետի հերոս պաշտպանները ոչ միայն հետ մղեցին թուրքերի

¹ «Արևելյան հարցը» Օսմանյան կայսրության տարածքների բաժանման համար XVII դարի 2-րդ կեսից մինչև XX դարի սկիզբը մեծ տերությունների միջև պայքարի, միջազգային հակասությունների պայմանական անվանումն է: Ծագել է 1822 թ. Հունաստանի անկախության համար ծավալված պատերազմի ժամանակ:

բոլոր գրոհները, այլ, փոքրաթիվ ուժերով հանկարծակի հարձակվելով, ծանր կորուստներ պատճառեցին թշնամուն:

Այս պատերազմի նշանավոր մարտերից էր նաև **Սողանլուղի ճակատամարտը (հունիսի 19-20)**, որն ավարտվեց ռուսական զորքի փայլուն հաղթանակով և Հասան-Կալա բերդի գրավմամբ (հունիսի 24-ին):

Թուրքական ուժերին ետ շարտելուց հետո Կովկասյան կորպուսն անցավ հակահարձակման: **1829 թ. հունիսի 27-ին** ռուսները գրավեցին հայկական հնագույն **Էրզրում (Կարին)** քաղաքը, ապա **Օլթին, Մուշը, Խնուսը, Դերջանը, Բայբուրդը (Բաբերդ)**, ընդհուպ մոտեցան Տրապիզոնին: Դեպի Անատոլիայի խորքերը ճանապարհը բաց էր: Արևմտյան Հայաստանի մեծ մասը գրավված էր ռուսական զորքի կողմից:

Բալկանյան ռազմաճակատում, անցնելով Բալկանյան լեռնաշղթան, ռուսական զորաբանակը մտավ Հարավային Բուլղարիա, **1829 թ. օգոստոսի 8-ին գրավեց Ադրիանապոլիսը՝** մոտենալով Կոստանդնուպոլիսին: Թուրքական քայքայված բանակն անկարող էր պաշտպանել սեփական մայրաքաղաքը: Սակայն ստեղծված իրավիճակը խիստ անհանգստացնում էր Անգլիային, Ֆրանսիային, Ավստրիային, որոնք ռազմական սպառնալիքներով հարկադրեցին Ռուսաստանին զիջող պայմաններով հաշտություն կնքել Թուրքիայի հետ:

1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլիսում կնքվեց հաշտության պայմանագիր, ըստ որի Ռուսաստանին անցան Սև ծովի արևելյան ափը, Անապա և Փոթի նավահանգիստները, Ախալքալաքն ու Ախալցխան Անդրկովկասում: Թուրքիան պարտավորվեց Ռուսաստանին վճարել 4,5 մլն ռուբլի ռազմատուգանք: Ադրիանապոլիսի պայմանագրով ինքնավարություն տրվեց Հունաստանին, Սերբիային, Մոլդավային և Վալախիային: Սևծովյան նեղուցները բաց էին լինելու ռուսական առևտրական նավերի համար, իսկ ռուսական վաճառականները Թուրքիայի ողջ տարածքում ազատ առևտրի իրավունք էին ստանում:

Ռուսաստանի հակառակորդ եվրոպական պետությունների հարկադրանքով Թուրքիային վերադարձվեցին Արևմտյան Հայաստանի գրավյալ տարածքները: Ադրիանապոլիսի պայմանագրի 13-րդ հոդվածը հայ ժողովրդի համար ունեցավ և՛ դրական, և՛ բացասական հետևանքներ: Ըստ այս հոդվածի՝ երկու երկրների հպատակներին իրավունք էր տրվում 1,5 տարվա ընթացքում հոժարական տեղափոխվել մեկ երկրից մյուսը: Կարսից, Արդահանից, Բայազետից, Էրզրումից մոտ 100 հազար հայ տեղափոխվեց Արևելյան Հայաստան, ինչի հետևանքով Արևմտյան Հայաստանը զրկվեց բնիկ ժողովրդի մի մասից: Սակայն միևնույն ժամանակ արևմտահայերի, ինչպես նաև 45 հազար իրանահայերի գաղթի շնորհիվ ավելացավ հայերի թիվն Արևելյան Հայաստանում, որն էլ դարձավ հայապահպան օջախ:

4. ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներում հայ ժողովրդի համակրանքն անառարկելիորեն ռուսների կողմն էր: Ավելին, հայ ժողովուրդը ռուսական կողմում պատերազմին մասնակցելը համարում էր իր ազգային-ազատագրական պայքարի շարունակությունը: Ահա թե ինչու հայերը, իրենց ազատագրման հեռանկարը կապելով ռուսների հետ, ռուսական զորքին ռազմական, նյութական ու բարոյահոգեբանական մեծ օգնություն ցույց տվեցին:

1804-1813թթ. ռուս-պարսկական պատերազմի հենց առաջին օրերին Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի հայաբնակ վայրերում կազմավորվեցին հայ աշխարհագորայինների ջոկատներ, որոնք ակտիվ մասնակցություն ունեցան Երևանյան առաջին արշավանքին: Հատկապես աչքի ընկան **Գրիգոր Մանուչարյանի** գլխավորած 500 հայ հեծյալներից կազմված ջոկատը, Գյուլիստանի Ռոստոմ բեկի հեծյալ ջոկատը, Լուռի-Փամբակի 50 հոգանոց հեծյալ ջոկատը, Ձանգեզուրում ստեղծված աշխարհագորային ջոկատները և այլն: Գ. Մանուչարյանը հայ աշխարհագորայիններից առաջինն էր, որ պարզևատրվեց ռուսական բարձրագույն մարտական պարգևներով՝ **Գեորգիևյան խաչով և Վլադիմիրի ու Աննայի շքանշաններով**:

Ռուսական կանոնավոր զորքի հետ համատեղ գործողություններում հայ աշխարհագորային ջոկատներն ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին բոլոր խոշոր ճակատամարտերին, հուսալիորեն պաշտպանեցին ռուսական զորքի թիկունքն ու ռազմա-ստրատեգիական ճանապարհները: Հայերը հմուտ հետախույզներ ու կապավորներ էին: Առանց հայրենի աշխարհը հիանալիորեն ճանաչող հայ սուրհանդակների օգնության ռուսական շատ զորախմբեր թշնամու կողմից կոչնչացվեին, անհնարին կղաճար ռուսական ջոկատների գործողությունների համաձայնեցումը, պաշարված կայազորներին օգնություն ցույց տալը: Հայ հետախույզների ուղեկցությամբ ռուսական զորաջոկատները հաճախ աննկատ անցնում էին թշնամու թիկունքն ու հանկարծակի գրոհում նրա վրա կամ կարողանում էին դուրս գալ թշնամու պաշարման օղակից: Այսպես, օրինակ, 1805թ. հունիսին գնդապետ Կորյագինի 400 զինվորներն Ասկերանի կիրճում շրջապատվեցին պարսկական մեծաքանակ զորքի կողմից: Կործանման դատապարտված զորաջոկատը փրկվեց ղարաբաղցի հետախույզ **Վանի Աթաբեկյանի** ճարպիկ հնարքների շնորհիվ: 1826 թ. Շուշիի հերոսական պաշտպանությունն անհնարին կլիներ առանց 2000 հայ աշխարհագորայինների անձնագրի մասնակցության: 1826թ. սեպտեմբերին Ապարանի Միրաք գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ռուսների փայլուն հաջողությանը նպաստեց էրզրումցիների հեծյալ ջոկատը՝ **Մարտիրոս Վեթիլյանի** գլխավորությամբ:

1827թ. գարնանը Ներսես Աշտարակեցու և Հարություն Ալամդարյանի հայրենասիրական կոչերը լայն արձագանք գտան ժողովրդի մեջ: Թիֆլիսում, Ղարաբաղում և այլ վայրերում կազմավորվեցին կամավորական գումարտակներ: Մշակվեց 34 հոդվածից բաղկացած հատուկ կանոնադրություն՝ «Առաջադրություն», որը հաստատվեց ռուսական բանակի գլխավոր շտաբի կողմից: **1827թ. մարտի 30-ին Թիֆլիսում** կայացավ առաջին հայկական կամավորական գումարտակի զորահանդեսը: Գումարտակներն ունեին իրենց զինադրոշմները, հրամանատարները ռուսական բանակի հայ սպաներ էին, իսկ հրամանները տրվում էին հայերեն:

«**Հայկական գունդ**» անունը ստացած 117 հոգուց կազմված առաջին գումարտակը ռազմաճակատ մեկնեց **1827թ. մայիսի 17-ին**, իսկ հունիսի 2-ին՝ երկրորդը: Ճանապարհին նրանց էին միանում հարյուրավոր հայ երիտասարդներ՝ ջոկատները վերածելով 1000 մարդուց բաղկացած զնդերի: Երևանյան երրորդ արշավանքի (1827թ.) ժամանակ հայ կամավորները կռվում էին Սարդարապատի և Երևանի բերդերը գրոհողների առաջին շարքերում:

Ռուս-թուրքական 1828-1829 թթ. պատերազմին ևս հայերն ակտիվ մասնակցություն ունեցան: Կարսի, Ախալքալաքի, Ախալցխայի, Արդահանի, Էրզրումի և այլ ճակատամարտերում թուրքերի դեմ կռվում էին 3000 հայ աշխարհագորայիններ: Արևմտահայերը, օգտագործելով արևելահայերի փորձը, կազմավորեցին բազմաթիվ աշխարհագորային ջոկատներ: Դրանցից աչքի ընկավ

հատկապես **Բայազետի 500 հոգանոց հեծյալ ջոկատը՝ Մելիք-Մարտիրոսի գլխավորությամբ:** 1829թ. Բայազետի պաշտպանությանը մասնակցում էր 2000 հայ: Գեներալ Պոպովի վկայությամբ Բայազետում հայերը կռվում և մեռնում էին ինչպես հերոսներ: Թշնամու դեմ կռվում էին նաև շատ հայ կանայք: Ավանդագրույցից հայտնի է Հասան խանի հրոսակների դեմ համամլեցի գեղջկուհի Մանուշակի մղած անձնագոհ կռվի ու հերոսական մահվան մասին:

Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներում հայերը ռուսական զորքին նաև զգալի **նյութական օգնություն** ցույց տվեցին: Նրանք իրենց սեփական կարիքների համար պահված սննդամթերքի ամենավերջին պաշարներից բաժին էին հանում ռուս զինվորների համար: Հայ գյուղացիները ռուսական ջոկատներին տրամադրում էին սայլեր, ձիեր, եզներ և այլ փոխադրամիջոցներ: Հսկայական էր էջմիածնի վանքի տված օգնությունը: Երևանի բերդը պաշարած ռուսական զորքին միայն 1804թ. ուղարկվել է 1000 սոմար այլուր, 2175 սոմար ցորեն, 300 սոմար ձավարեղեն, կաթնամթերք և այլն:

Հայ ժողովրդի բարոյահոգեբանական աջակցությունը մեծապես ոգևորում էր ռուս զինվորներին. նրանք իրենց զգում էին հարազատ միջավայրում: Հայերը իրենց տներում պահում և խնամում էին վիրավոր զինվորներին: Եթե ռուսական հրամանատարությունը Երևանի գրավումը նշեց 101 հրանոթային համազարկով, ապա Երևանի և շրջակա գյուղերի բնակչությունը մեկ շաբաթ շարունակ տոնախմբություններ կազմակերպեց՝ ոչ միայն նշելով իր ազատագրումը պարսկական լծից, այլև իր երախտագիտությունը հայտնելով ռուսներին:

Այսպիսով՝ 19-րդ դարի առաջին երեսնամյակում տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները հայ ժողովրդի համար ունեցան պատմական խոշոր նշանակություն. հայ ժողովրդի մի հատվածն ազատվեց ֆիզիկական բնաջնջման վտանգից, Արևելյան Հայաստանը դարձավ հայության փրկության խարիսխ, համեմատաբար բարենպաստ պայմաններ ստեղծվեցին արևելահայերի տնտեսական և մշակութային զարգացման համար: Սակայն, միևնույն ժամանակ Օսմանյան կայսրությունն էլ ավելի վայրագ միջոցներով սկսեց հալածել արևմտահայերին՝ աստիճանաբար որդեգրելով հայերին դուրս մղելու ու բնաջնջելու պետական քաղաքականություն:

ԳԼՈՒԽ 4. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՐՈՆԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ XVIII ԴԱՐ

4.1. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՐՈՆԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ XVIII ԴԱՐ

1. ՀԱՅՈՑ ՅԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԿՐՈՆԸ

Հայ ժողովրդի նախաքրիստոնեական պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերն ունեցել են աշխարհաստեղծման, աշխարհընկալման, աշխարհայացքային յուրահատուկ պատկերացումներ, որոնց միջոցով փորձել են իմաստավորել և բացատրել այս կամ այն երևույթի, առարկայի կամ իրի գոյության և ծագման պատճառները, նրանց անմիջական ազդեցությունն իրենց առօրյա կյանքի, գոյության պայմանների և հասարակական հարաբերությունների վրա:

Հին հավատալիքներից հայերի մոտ հանդիպում է **տարրապաշտությունը (ֆետիշիզմ), կենդանապաշտությունը և բուսապաշտությունը (տոտեմիզմ):**

Բավականին զարգացած էր բույսերի պաշտամունքը: Բույսերին վերագրվում էին մեռնող և հարություն առնող, պտղաբերության և հավերժության գաղափարներ: Հայերին ծանոթ էր Կենաց Ծառի գաղափարը, որի օրինակները հանդիպում են ժայռապատկերներում և վիշապաքարերի վրա: Հայկական **Կենաց Ծառը** ուներ ինը ճյուղ, որոնք հավանաբար խորհրդանշում էին մեր նախնիների կողմից բացահայտված մոլորակները և լուսատուները:

Հնագույն հայկական ցեղերը, փորձելով բացահայտել և բացատրել հոգեկան երևույթները, հանգեցին կրոնական հավատալիքի մեկ այլ ձևի ևս՝ **ոգեպաշտության (անիմիզմ):** Հայերը հավատում էին բարի և չար ոգիների, հետմահու կյանքի գոյությանը, զարգացած էր նախնիների պաշտամունքը, շնչավորվում էին բնության և հասարակական ուժերը:

Նախնադարյան հավատալիքներից հին Հայաստանում առկա էր նաև **մոգությունը**՝ մարդու որոշակի գործողությունների և գերբնականի միջև կապի հավատը: Դեռևս հայկական ժայռապատկերներում հստակ երևում են, որ մեր նախնադարյան նախնիները կատարել են որոշակի մոգական գործողություններ. մասնավորապես ժայռերի վրա արձանագրել են իրենց և Հայկական լեռնաշխարհում ապրող կենդանիների փոխհարաբերությունները, որսը, նմանակել են այդ կենդանիներին՝ փորձելով կանխորոշել որսի արդյունքը: Մոգական գործողությունների զարգացումը խթանեց նաև գիտությունների, մասնավորապես բժշկության զարգացումը: Սիստիսի տաճարի կուռքերից: Մոգությունը հավանաբար հովանավորում էր նաև **Տիր** աստվածը, որին անվանում էին «երազացույց» և «երազահան»: Քրիստոնեության ընդունումից հետո էլ պաշտամունքային և ծիսական բազմաթիվ արարողություններ ներթափանցեցին քրիստոնեական տոնացույց, և հատկանշական է, որ կործանված հեթանոսական տաճարների փոխարեն կառուցված եկեղեցիներում հոգևոր սպասավորությունը **Գրիգոր Լուսավորիչը** հիմնականում հանձնում էր տվյալ տաճարների քրմերի ժառանգներին:

Հայ հեթանոսական դիցարանը, որպես ուրույն և զարգացած երևույթ, արտացոլում է հին հայերի հոգևոր մշակույթը, աշխարհաճանաչողական ընկալումները, շրջակա միջավայրի, բնական

երևույթների, իրերի, առարկաների մասին վերաբերմունքն ու պատկերացումները: Արարատյան դիցարանի գլխավոր աստվածն էր **Խալդը**, որին ուսումնասիրողները նույնացնում են **Յայկի** հետ: Վանի մոտ գտնվող **Մեթրի դուռ** կամ **Ագռավաքար** կոչված վայրում հայտնաբերվել է արձանագրություն, որտեղ թվարկված են պաշտամունքի արժանացած մոտ **70** աստվածների անուններ և նրանց համար զոհաբերված կենդանիների քանակը:

Արամազդ: Նոր շրջանի հայ դիցարանի գլխավոր աստվածն էր «մեծն ու արի» Արամազդը՝ երկրի և երկնքի արարիչը, «հայր դիցն ամենայնի», «հայոց աշխարհի հովանավորը», «լիություն և պարարտություն տվողը»: Հելլենական շրջանում Արամազդը նույնացվում էր հունական **Դիոսի (Ջևսի)** հետ:

Անահիտ: Հայ հեթանոսական միջավայրում ամենատարածվածը Անահիտ դիցուհու պաշտամունքն էր: Անահիտը համարվում էր պտղաբերության, արգասավորության և ծննդաբերության աստվածուհին, մայրության հովանավորը: Նա պատկերվում էր որպես մայր աստվածուհի՝ երեխան գրկին: Նրան էին վերագրվում նաև կենսատվության և ապաքինման շնորհները: Արտաշես արքայի հիվանդության ժամանակ պատվիրակ են ուղարկում . «...Անահիտի մեհյանը, որպեսզի կուռքերից բժշկություն և երկար կյանք խնդրե թագավորի համար», – գրում է Խորենացին:

Վահագն: Հին հայոց մեջ մեծ ժողովրդականություն վայելող աստվածներից էր Վահագնը: Նա ամպրոպի, կայծակի, մարտական զորության, քաջության, պատերազմի և հաղթության, թագավորներին հաղթանակ շնորհող աստվածն էր: Հարկ է նշել, որ **Վանական** վարդապետի մոտ պահպանված մի տեղեկության համաձայն, հայերը Վահագնին համարում էին նաև արեգակի աստված:

Աստղիկ: Վահագնի պաշտամունքն անմիջականորեն կապված էր Աստղիկ դիցուհու պաշտամունքի հետ, որին հայերը համարում էին Վահագնի տարիածու, իսկ նրան նվիրված տաճարներն անվանում «Վահագնի սենյակ»:

Հին հայոց մեջ Աստղիկը ևս վայելում էր մեծ ժողովրդականություն: Նա համարվում էր սիրո, գեղեցկության և երիտասարդների հովանավոր աստվածուհին, որին Ագաթանգեղոսը նույնացնում է հունական **Ափրոդիտեին**: Ըստ ավանդության՝ Վահագն ու Աստղիկը միմյանց հանդիպում էին Աստղիկի տաճարում, և նրանց մերժեցումից անձրև էր տեղում, որը ծաղկեցնում էր երկիրը, բերք ու բարիք տալիս մարդկանց:

Նանե: Հայոց մյուս դիցուհին էր Նանեն, որի անվանումը հանդիպում է միայն Ագաթանգեղոսի մոտ: Նանեն ևս համարվում էր Արամազդի դուստրը: Հելլենական շրջանում հեթանոս հայերը նրան նույնացնում էին հունական **Աթենասի** հետ, որի պատճառով ուսումնասիրողները ենթադրում են, որ նա եղել է ռազմի, իմաստության և հնարագիտության աստվածուհի:

Միհր: Հայ հեթանոսական դիցարանի կրակի, լույսի, արդարության և ուխտապահության աստվածն էր Արամազդի որդի արեգակնային Միհրը: Միհրի պաշտամունքը մեծապես ազդել է հատկապես հայ ժողովրդական էպոսի՝ «**Սասնա ծռերի**» ծնավորման վրա: Հայտնի է նաև նրա պաշտամունքի նշանավոր կենտրոն **Գառնիի** տաճարը:

Հին հայերը հավատացած էին, որ Միհրը գալու է աշխարհ, կործանելու է չար ուժերին և հաստատելու է արդարություն: Այս առումով հատկանշական է հայ ժողովրդի ազգային էպոսը, որի հերոսներից Մեծ և Փոքր Միերներն իրենց մեջ խտացրել և պահպանել են Միհր աստծուն բնորոշ

հատկանիշները: Մեծ Միերին էպոսում հայ ժողովուրդն անվանում է «**առյուծածև**»: Դա Միիր աստծո և առյուծի, որպես արեգակի խորհրդանիշի պաշտամունքի դրսևորումն էր: Միիր աստծո պաշտամունքը ուղեկցվում էր նաև ագռավի պաշտամունքով, որը համարվում էր կրակի պահապան սրբազան թռչուն:

Տիր: Հայոց հեթանոսական հաջորդ աստվածն էր Տիրը, որին հայ պատմագիրները նույնացնում էին հունական **Ապոլոնի** հետ: Տիրն Արամազդի որդին, դպիրն ու սուրհանդակն էր, նա համարվում էր գրի, գրչության, գիտության հովանավորը: Մի հին ավանդություն է պահպանվել, ըստ որի Տիրը ծնվածների անունները մուտքագրում էր իր մոտ պահվող ծննդյան մատյանում, իսկ մահացածներին դուրս հանում մատյանից: Տիրը, ում հոգին ուզում էր ելք անել, գնում էր նրա մոտ, հոգին առնում և տանում երկինք: Ենթադրվում է, որ այստեղից է ծագել մինչ օրս հայտնի «**գրող**»-ը, որը հատկապես հայտնի է մի քանի անեծք-արտահայտություններում՝ «**գրողի տարած**», «**գրողը քեզ տանի**»:

Ամանոր և Վանատուր: Այս երկու աստվածների պաշտամունքն անմիջականորեն կապված են միմյանց: Հին Հայաստանում Ամանորին նվիրված գլխավոր տոնակատարությունը նշվում էր նոր տարում՝ Նավասարդ ամսի 1-ին: Այդ ժամանակ հին հայերը մեծ շուքով նշում էին ոչ միայն նոր տարին, այլ նաև բերքահավաքի սկիզբը: Ամանորի գլխավոր տոնակատարությունը նշվում էր **Բագավանում**՝ հյուրընկալության և հյուրասիրության հովանավոր աստված Վանատուրի (Վանատուր բառացի նշանակում է «**օթևան տվող**») գլխավոր մեհյանում, և երկու աստվածների պաշտամունքը նույնացվում էր:

Սանդարամենտ: Հին հայերն անդրշիրիմյան կյանքի և թագավորության մասին իրենց պատկերացումները խտացրել և մարմնավորել էին առանձին աստծո՝ **Սանդարամենտի** կամ **Սպանդարամենտի** պաշտամունքում: Նրա գլխավոր տաճարը գտնվում էր Վաղարշապատ մայրաքաղաքում, այնտեղ, որտեղ հետագայում կառուցվեց Ս. Էջմիածին մայր տաճարը: Քրիստոնեության շրջանում Սանդարամենտը նույնացվեց դժոխք հասկացության հետ և դարձավ այս բառի հոմանիշ, որը պատմագրության մեջ խորհրդանշեց անհատակ անդունդը «սանդարամենտը անդնդոց» ձևով:

2. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

Քրիստոնեությունը համաշխարհային երեք կրոններից մեկն է, որի հիմնադիրն է համարվում Հիսուս Քրիստոսը: Ներկայումս ևս քրիստոնեությունը հետևորդների քանակով համարվում է համաշխարհային ամենատարածված կրոնական ուղղությունը:

Քրիստոնեությունը սկզբնավորվել է I դարի 30-ական թվականներին, Հռոմեական կայսրության արևելյան պրովինցիաներից մեկում՝ Պաղեստինում: Ք. ա. I դարի վերջերին Պաղեստինում թագավորում էր Հերովդեսը: Վերջինիս մասին պահպանված պատմական վավերագրերը միահամուռ վկայում են նրա դաժանության, հրեա ժողովրդի նկատմամբ ունեցած ատելության և Հռոմին նվիրվածության մասին, որի պատճառով էլ նա վայելում էր Օկտավիանոս Օգոստոսի հովանավորությունը: Հերովդեսը բոլոր հրեաներին պարտադրում էր հավատարմության

երդում տալ Հռոմին: Նրա քաղաքականության կարևոր բաղկացուցիչներից մեկը պոլիսային բնույթի նոր քաղաքների շինարարությունն էր, որոնք կոչվում էին «Կեսարիա» կամ «Սեբեսիա» (հուն.՝ կեսար և օգոստոս) անուններով: Թեև նա հրեական կրոնի դավանորդ էր, այնուամենայնիվ, ձգտում էր Հրեաստանը լիովին ենթարկել հռոմեական քաղաքական հարաբերություններին, որի կարևոր օղակներից մեկն էլ համարում էր հրեաներին ապագայնացող լատինականության բռնի արմատավորումը և կայսրերի պատշտամունքի պարտադրանքը:

Ք. ա. I դարի առաջին կեսին Պաղեստինում մեծ թվով շրջիկ-վարպետներ կային, որոնք քարոզում էին Աստծո օծյալի՝ մեսիայի (մաշիախ) կամ Փրկչի մոտալուտ գալստյան գաղափարը, որը պետք է ազատագրեր հրեաներին, վերականգներ Երուսաղեմի տաճարը և դառնար նրանց իսկական թագավորը: Այդ մասին խիստ արժեքավոր տեղեկություններ ենք քաղում ժամանակաշրջանի հրեա պատմիչներից մեկի՝ Հովսեփիոս Փլավիոսի աշխատություններից:

Դատելով նորկտակարանային տեքստերից՝ ի սկզբանե քրիստոնեության կազմակերպչական ձևը եղել է եկեղեցին («Էկլեսիա» - «ընտրյալների հավաք», «համայնք»): Քրիստոնեական առաջին եկեղեցին հիմնադրվել է Երուսաղեմում և ղեկավարվել Հիսուս Քրիստոսի 12 առաքյալների կողմից, որոնցից Հակոբոս Տեառնեղբայրն ընտրվել է այդ եկեղեցու առաջին եպիսկոպոս: Պահպանված վավերագրերը վկայում են, որ թե՛ առաքյալները և թե՛ եկեղեցու առաջին անդամները նախապես իրենց՝ հրեաներից (հրեականությունից) նախապես չեն գատել՝ իրենց անվանելով «իսկական հրեա հավատացյալներ»:

Պաշտամունքային համակարգի կարևորագույն տարրերից են եկեղեցական խորհուրդները: **Հիսուս Քրիստոսը եկեղեցական յոթ խորհուրդները հաստատեց «փրկագործությունը շարունակելու և սատանային հաղթելու համար»:** **Հայոց եկեղեցին ուներ յոթ խորհուրդներ: Դրանք են. մկրտություն, դրոշմ, ապաշխարհություն, հաղորդություն, պսակ կամ ամուսնություն, ձեռնադրություն, կարգ հիվանդաց:**

Այսպես, սկզբնական (ադամական) մեղքից մաքրվելու և Ա.Հոգու պարզև ստանալու համար հաստատված **մկրտության** խորհուրդն ամենից առաջ ըմբռնվում էր որպես վերստին ծնունդ, որի հետևանքով մկրտվողը, վերստին ծնվելով ջրից և Հոգուց, դառնում էր Աստծու որդեգիր և եկեղեցու անդամ: Եկեղեցին միշտ էլ մկրտությունը համարել է միակ ու անկրկնելի, որի հրամայականով էլ իբրև աստվածային պատվիրանի դեմ մեղանչում՝ մեկընդմիշտ արգելվել է կրկնամկրտությունը:

Առաքելական շրջանից սկսած մկրտության խորհրդին հաջորդել է **դրոշմը (օծումը)** իբրև Ա.Հոգու կնիք: Այն իրողությունը, որ առաքյալները կատարում էին դրոշմի խորհուրդը, վկայում է այն մասին, որ եկեղեցու վաղ կյանքում օծման խորհուրդը դիտարկվել է իբրև եկեղեցուն անդամագրվելու անխուսափելի պայման: Այդ շրջանից սկսած դրոշմի խորհրդի նշան է համարվել **Ս.մյուռոնը (յուղը)** իբրև Ա.Հոգու խորհրդանշան:

Վաղ քրիստոնեության հոգևոր կյանքի անբաժանելի ուղեկիցն է եղել նաև **հաղորդության խորհուրդը:** Ինչպես հրահանգված է նորկտակարանային տեքստերում, հաղորդության խորհուրդն ըմբռնվել է իբրև մեղքերի թողության և քավության միջոցով Աստծո հետ միավորում (հաղորդություն): Իբրև **հաղորդության** խորհրդի նշաններ՝ օգտագործվել են բաղարջ հացը (Քրիստոսի անապական մարմնի սիմվոլը) և անապական (անխառն) գինին (Քրիստոսի արյան սիմվոլը):

Վաղ քրիստոնեական եկեղեցու համակարգում ուրույն տեղ է գրավել նաև **ապաշխարության խորհուրդը**: Այն կիրառվել է «աստվածային պատվիրանների դեմ անհնազանդություն և հակառակություն» ցուցաբերողներին **«դարձի բերելու և մեղքը խոստովանելու միջոցով մեղքից մաքրվելու համար»**: Համարվել է, որ ապաշխարողը մեղքերի համար կարող է թողություն ստանալ Աստծուց, որով նա «կվերականգնի իր հոգեկան կապը Աստծու և եկեղեցու հետ» (ընդ որում համարվում էր, որ ապաշխարությունը վերստին ծնունդ չէ, այլ լոկ վերականգնում է կամ վերանորոգում):

Վաղ քրիստոնեական համայնքների հոգևոր իշխանության և վարչական ղեկավարության հարցերն հնուց անտի կարգավորվել է **ձեռնադրության խորհրդի** միջոցով: Այս խորհրդի անհրաժեշտությունը ևս թելադրված է Աստվածաշնչական հրահանգներով: Վաղ շրջանի եկեղեցում ընդունված էր եկեղեցու ձեռնադրյալ պաշտոնյաների նվիրապետական երեք աստիճան՝ եպիսկոպոս, քահանա (երեց), սարկավագ:

Վաղ եկեղեցու պաշտամունքային համակարգում իրենց ուրույն տեղն են գրավել նաև **պսակի (ամուսնության) և կարգ հիվանդաց (վերջին օծում) խորհուրդները**: Ամուսնությունը համարվել է **«Աստծո օրհնությամբ տղամարդու և կնոջ միջև հաստատված միություն»**, **«ամուսնացող զույգի սիրո և հավատարմության ուխտադրություն Աստծո հետ»**: Ամուսնության խորհուրդը միություն կազմող զույգերին առաջադրում է մի շարք պարտադիր պայմաններ (**չափահաս տարիք, ֆիզիկական և մտավոր առողջություն, ամուսնանալու համար ազատ կամքի առկայություն, նույն դավանանքի պատկանելիություն և արգելվել է մերձամուսնությունը**): Իբրև եկեղեցական խորհուրդ՝ ամուսնությունը (եկեղեցական պսակը) համարվում է **մեկը, և այն լուծելու իրավունք (բացառիկ դեպքերում, իհարկե) վերապահված է միայն եկեղեցուն**:

Կարգ հիվանդաց խորհուրդը այն հավատամքի արտահայտությունն է, թե **Աստված ընդունելով իր հավատարիմ դավանողների աղոթքը՝ նրանց բժշկում է**: Խորհուրդը կատարվում է միայն այն դեպքում, երբ իրագործվում է զոջում մեղքերի համար և հավատացյալը Հիսուս Քրիստոսի օժանդակությամբ հրաժարվում է կործանարար մոլություններից (հպարտություն, նախանձ, բարկություն, ծուլություն, ազահություն, որկրամոլություն և բղջախոհություն):

3. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանյաց առաքելական եկեղեցու հիմնադրության հետ կապված ամենանվիրական ազգային ավանդույթներից է **Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչությունը Հայաստանում**: Ազաթանգեղոսի ու Փավստոս Բուզանդի պատմական երկերի միջոցով մենք հնարավորություն ունենք ճշգրիտ կերպով շարադրելու **IV դարի սկզբում, Գրիգոր Լուսավորչի անմիջական ջանքերով, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու պատմությունը**:

Բնականաբար հարց է առաջանում, թե մինչև պետական կրոն հռչակելը Հայաստանում գոյություն ունեցե՞լ են արդյոք քրիստոնեական համայնքներ, թե դրանք հայտնվել են միայն IV դարում: Այս հարցին անվերապահորեն կարելի է պատասխանել, որ Հայաստանում քրիստոնեության սերմերը ցանվել են դեռևս առաքելական շրջանում: Համաձայն հայկական, ասորական, հունական ու լատինական հավաստի աղբյուրների՝ Հայաստանում քրիստոնեությունը քարոզել են Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալները, որոնք էլ, նահատակվելով հայոց Սանատրուկ թագավորի

հրամանով, դարձել են հայ եկեղեցու հիմնադիրները: **Այդ իսկ պատճառով էլ հայ եկեղեցին կոչվում է «Հայաստանյայց առաքելական եկեղեցի»:**

Հայաստանում քրիստոնեության տարածման պատմության մասին պահպանվել են նաև մի շարք հետաքրքրաշարժ ավանդություններ: Ըստ ավանդության՝ Եդեսիայի Աբգար թագավորը մահացու հիվանդանում է և, լսելով Հիսուսի բժշկությունների մասին, ուղարկում է իր պատվիրակներին՝ նրան Եդեսիա հրավիրելու խնդրանքով: Պատվիրակները, Հիսուսին հանդիպելով Պաղեստինում, հայտնում են Աբգարի հրավերի մասին, սակայն Հիսուսը նրանց հայտնում է, որ ինքն առաքելություն ունի կատարելու և իր համբարձումից հետո աշակերտներից մեկը կգա ու կբժշկի Աբգարին: Այնուհետև նա վերցնում է պատվիրակներից մեկի ձեռքից թաշկինակը, որի վրա նա փորձում էր պատկերել Քրիստոսին և չէր կարողանում, հպում է իր դեմքին ու արդեն պատկերված դիմապատկերը ետ տալիս նրան: Այդ թաշկինակը քրիստոնեական աշխարհում հայտնի է որպես «անձեռակերտ դաստառակ»:

Հայաստանում քրիստոնեության տարածման համար կարևոր նախապայման է եղել նաև Հայաստանի քաղաքներում հրեական գաղութների առկայությունը, քանի որ, ինչպես հայտնի է, առաջին քրիստոնեական քարոզիչները գնում էին այնտեղ, ուր կային հրեա գաղութներ: Հայաստանի գլխավոր քաղաքներում՝ Տիգրանակերտում, Արտաշատում, Վաղարշապատում և այլուր, հրեա համայնքները կազմում էին առանձին գաղութներ:

Հայաստանում Թադեոս առաքյալի քարոզչությամբ շատերը մկրտվում են քրիստոնյա: Քրիստոնյա են դառնում նաև թագավորական տան անդամներից շատերը, այդ թվում նաև Սանատրուկ թագավորի դուստրը՝ Սանդուխտ կույսը, որն ավելի ուշ հոր ձեռքով շատ քրիստոնյաների հետ նահատակվում է Արտազ գավառում: Հետագայում նրանց նահատակված վայրում կառուցվում է Ս. Թադեի վանքը, որն այժմ գտնվում է Պարսկաստանի տարածքում:

Հայաստանի համար այդ շրջանում քրիստոնեության նկատմամբ պատմական ճշմարտությունը պետք է փնտրել նույն ավանդության երկրորդ մասի մեջ, որն առնչվում է **հայոց Սանատրուկ թագավորի (88-110 թթ.)** ժամանակաշրջանին՝ կապված պատմական դեպքերի հետ: Մեր պատմահայր Մովսես Խորենացին այդ թագավորի մասին բավականին մանրամասնությամբ է գրել: Ամենահին հայկական ավանդությունը պատմում է, որ հայոց Սանատրուկ թագավորի դուստրը՝ Սանդուխտը, քրիստոնյա դարձավ և նահատակվեց հոր ձեռքով: Փաստորեն Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի վկայաբանությունը **I, II, III դարերում Հայաստանում** առաջին քրիստոնյաների, ինչպես նաև եկեղեցական նվիրապետության ծագման, հաստատման և շարունակման մասին հավաստի պատմական անդրանիկ տեղեկությունն է:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու նախընթաց պատմությունը հայտնի է **Տրդատ III թագավորի կողմից Գրիգոր Լուսավորչին Խոր Վիրապում բանտարկելու պատմությամբ:** Ազաթանգեղոսը պատմում է, որ Գրիգորին Վիրապում իր երազի համաձայն ամեն օր հաց է բերել մի կին, իսկ թագավորը հիվանդացել մի հիվանդությամբ, որից հետո նրա դեմքը սկսել է խոզակերպ արտահայտություն ստանալ: Այդ հիվանդությունից բուժվելու համար թագավորին խորհուրդ է տրվում Վիրապից ազատել Գրիգորին և սկսել նոր կրոնի քարոզչությունը, ինչը և տեղի է ունենում: Դրանից հետո Տրդատ թագավորը Գրիգորին ուղարկում է Կեսարիա՝ ձեռնադրություն ստանալու նպատակով:

Չետաքրքիր է, որ Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայից վերադարձի ճանապարհին, ուղիղ Վաղարշապատ գալու փոխարեն, որտեղ իրենց սպասում էին թագավորը, ավագանին ու ողջ ժողովուրդը՝ ճանապարհը շեղելով այցելում է Տարոն գավառի քրիստոնեական համայնքին, որի հովիվն էր Դանիել Ասորին: Այս շատ կարևոր փաստը նույնպես օգնում է մեզ հասկանալու այն իրողությունը, որ ս. **Գրիգորից առաջ Տարոնում նույնպես կար քրիստոնեական համայնք, որն ուներ առաքելական կամ եպիսկոպոսական աթոռ: Չենց այս՝ Տուրուբերան նահանգի Տարոն գավառի Աշտիշատ ավանում էր, որ Գրիգոր Լուսավորիչը 301թ. հիմնեց առաջին եկեղեցին՝ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո:**

Առաջին, երկրորդ և երրորդ դարերում քրիստոնեական համայնքներ կային Չայաստանի գլխավորապես այն քաղաքներում և ավաններում, որոնք առևտրական ճանապարհներով կապված էին Ասորիքի ու Կապադովկիայի հետ: Քրիստոնեությունը հենց սկզբից էլ պարարտ հող գտավ հայ ժողովրդի ցածր դասակարգերի մեջ, որը նախապատրաստեց քրիստոնեական համայնքների կազմակերպումը Չայաստանում:

Առաջին երեք դարերում Չայաստանում քրիստոնեական գաղափարների տարածման մասին է խոսում նաև այն փաստը, որ հայոց **Վաղարշ II (185-198 թթ.) և Խոսրով I (198-215 թթ.)** թագավորների ժամանակ խստագույնս հալածվում էին քրիստոնյաները, իսկ **Տրդատ III-ի (287-330թթ.)** ժամանակ հատուկ հրովարտակով դաժանորեն պատժվում և մահվան էին դատապարտվում քրիստոնյաները: Չենց այս շրջանում էր, որ նահատակվեցին Չոփսիսիմյանց կույսերը: Անհմաստ կլիներին քրիստոնյաներին հալածելու և պատժելու մասին եղած հրովարտակները, եթե մեր երկրում չլինեին քրիստոնեական համայնքներ, որոնցից այնքան շատ էին վախենում հեթանոս միապետները: Մինչև Լուսավորիչը Չայաստանում քրիստոնյա համայնքների գոյության մասին է խոսում նաև այն փաստը, որ Գրիգոր Լուսավորիչը հայոց դարձից անմիջապես հետո այնքան արագ կազմակերպեց, ոգի ու շունչ տվեց Չայաստանյայց եկեղեցուն, որն անհնարին պիտի լիներ, եթե իրապես չլինեին քրիստոնյաներ կամ քրիստոնեական համայնքներ: Քրիստոնյաներն այնքան էին շատացել Չայաստանում, որ III դարի վերջին և **IV դարի սկզբին** քրիստոնեությունն առանց մեծ դժվարությունների, բնական ընթացքով դարձավ պետական կրոն: Չայ ժողովրդի պատմության ամենամշակակալից այդ իրողության տարեթիվն արդի պատմագիտությունը համարում է 301 թվականը: Այդ գործում առաջնակարգ դեր են խաղացել **Տրդատ III թագավորը (287-330 թթ.)** և հայ առաքելական եկեղեցու առաջին **հայրապետ Գրիգոր Լուսավորիչը (302-325 թթ.):**

4. ՉԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Եկեղեցական կազմակերպությունը: Չայոց եկեղեցին գլխավորում էր **կաթողիկոսը** կամ **հայրապետը:** IV-V դդ.՝ մինչև Սահակ Պարթևի մահը, կաթողիկոսի պաշտոնը, որպես կանոն, զբաղեցնում էին Գրիգոր Լուսավորչի տոհմի անդամները: Այդ ժամանակաշրջանում եկեղեցականները չամուսնանալու պարտավորություն դեռևս չէին ստանձնում և ընտանիք էին կազմում:

Չայոց կաթողիկոսը թագավորից հետո երկրորդ ազդեցիկ անձնավորություն էր ողջ երկրում: Նրա մասնակցությամբ էին լուծվում բոլոր կարևոր քաղաքական ու վարչական հարցերը: Կաթողիկոսն էր

տնօրինում հայոց եկեղեցուն պատկանող հսկայական հարստությունը: Նա հաճախ միջնորդի և հաշտարարի դեր էր ստանձնում հայոց մեծամեծների միջև և ծագած հակամարտությունների ժամանակ: Կաթողիկոսը կատարում էր հայոց արքայի դիվանագիտական հանձնարարությունները: Հայոց հայրապետի բարձր հեղինակությունն ընդունում էին հարևան երկրների տիրակալները: Եկեղեցական կազմակերպության մեջ հաջորդ աստիճանը զբաղեցնում էին եպիսկոպոսները: Վարդապետները ցածրաստիճան հայ հոգևորականության կրթված մասն էին կազմում: Վարդապետի կոչումը տրվում էր ուսմամբ և գիտելիքներով աչքի ընկնող եկեղեցականներին: Գյուղում բնակվող քահանաներն ամուսնանում և ընտանիք էին կազմում: Նրանք հաճախ իրենց ապրելակերպով քիչ էին տարբերվում գյուղացիներից:

Հայ եկեղեցու ինքնուրույնության ամրապնդումը: Հայ եկեղեցու ինքնիշխանությունն իր ավարտուն կերպարանքը ստացավ միջնադարյան Հայաստանի ամենաականավոր կրոնական գործիչներից մեկի՝ Ներսես Ա Մեծի հայրապետության շրջանում: Այդ գործընթացի կարևոր օղակներից մեկն էլ հայոց թագավոր Պապ Արշակունու 374 թ. հրովարտակն էր, ըստ որի հայոց հայրապետների ձեռնադրման և օծման խորհուրդները պետք է կատարվեին Հայաստանում, իսկ Կապադովկիական Կեսարիան, ինչպես նախկինում, հայ եկեղեցու համար շարունակում էր դիտարկվել իբրև կաթողիկե եկեղեցու հավասարազոր անդամներից մեկը և ոչ ավելին: Հայ եկեղեցու ինքնիշխանության ամրապնդումն ուղեկցվում էր նաև չափազանց կարևոր մի այլ գործընթացով՝ ազգայնացմամբ: Այդ միտումներն իրենց տրամաբանական վախճանին հասան հայ ժողովրդի պատմության ամենածանր ժամանակահատվածներից մեկում՝ 387-439 թթ., երբ հայոց ընդհանրական հայրապետն էր Սահակ Պարթևը: Հայ եկեղեցին ևս հայտնվել էր ծանր իրավիճակում: 387թ. Հռոմի և Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանումից հետո Հայոց եկեղեցին երկփեղկվել էր: Հռոմեական իշխանությունները ստիպում են հայոց եկեղեցու արևմտյան թեմերին ենթարկվել հունական եկեղեցուն: Հայոց կաթողիկոսի իշխանությունը սահմանափակվում է և տարածվում միայն Արևելյան Հայաստանի եկեղեցիների վրա:

Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի համատեղ աշխատանքի արդյունքը լուսավորչական-մատենագրական գործունեությունն էր՝ հայոց գրի և գրականության ստեղծումը, ծավալումը, ինչպես նաև «թարգմանչաց շարժման» սկզբնավորումը: Դրանով ոչ միայն վճռական քայլ կատարվեց ազգապահպանության, այլև հայ եկեղեցու ինքնիշխանության հետագա ամրապնդման գործում:

Հայացվեցին Աստվածաշունչը, եկեղեցական ավանդության, Հայրաբանության, դավանաբանական, կանոնիկ, վարքաբանական և վկայաբանական բազմաթիվ ժողովածուներ: Դրան զուգահեռ կազմվեցին նաև ազգային տարաբնույթ առաջին ժողովածուները: Փաստորեն այդ լուսավորիչների հանճարով քրիստոնեական եկեղեցին լիովին ազգայնացվեց, և այդ շրջանից սկսած «**Հայ եկեղեցի**» տերմինը հոմանիշ դարձավ «**Հայաստան**» կամ «**հայ ժողովուրդ**» տերմիններին:

Այս շրջանում էր նաև, որ Պարսկահայաստանում խմորվում էին վճռական իրադարձություններ: Պարսից արքունիքի սադրիչ քաղաքականության հետևանքով հայ նախարարական որոշ տներ բռնել էին դավանափոխության ուղին: Եկեղեցու և վանքերի վրա ծանր հարկեր էին դրված: Այդ ամենին հաջորդեց պարսից արքունիքի հազարապետ Միտրներսեհի հրովարտակը, որը Սասանյան Հազկերտ II-ի անունից պահանջում էր կամ ընդունել զրադաշտականություն, կամ էլ ներկայանալ Տիգրանի Մեծ ատյանին: 450 թ. Արտաշատի ժողովը անվերապահորեն մերժեց պարսիկների

պահանջը, դատապարտեց ուրացությունը և փաստորեն ընդունեց քրիստոնեական հավատքի պահպանման մի ամբողջական ու ավարտուն փաստաթուղթ, ուր հռչակվում էր. «Թող եղբոր ձեռքը հարազատ եղբոր վրա բարձրանա, եթե նա երես կթեքի Տիրոջ ուսմունքից, և հայրն առանց գթասրտության թող որդու վրա ձեռք բարձրացնի, իսկ որդին՝ հոր, և թող այլևս կինը չվախենա ձեռք բարձրացնել իր ուրացող ամուսնու վրա և ծառան ազատ է ապստամբելու իր տիրոջ դեմ»: Հայ եկեղեցին հեթանոսների դեմ պայքարում օգնություն խնդրեց Բյուզանդիայից, բայց «տիեզերական» Կ. Պոլիսը ոչնչով չօժանդակեց հայերին: Ավելին, Մարկիանոս կայսրը հայերի կողմից նախապատրաստվող ապստամբության մասին տեղյակ պահեց պարսից արքունիքին:

451 թ. մայիսին տեղի ունեցավ Ավարայրի ազատագրական հերոսամարտը, որի նահատակները՝ Վարդան Մամիկոնյանը և 1036 զոհերը (Ս. Վարդանանք), ինչպես նաև Հովսեփ կաթողիկոսն ու ազատամարտի հայ հոգևորականները (Ս. Ղևոնդյանք) սրբացվեցին հայ եկեղեցու կողմից: Համաժողովրդական այդ ապստամբությանը հաջորդած իրադարձությունների հետևանքով հայ եկեղեցին չկարողացավ մասնակցել նաև 451 թ. Քաղկեդոնի տիեզերաժողովին և չընդունեց ժողովի որոշումները: Քաղկեդոնի ժողովը Հիսուս Քրիստոսի մեջ ընդունում է մարդկային և աստվածային բնություններ, որոնք Քրիստոսի մեջ գործում են առանձին-առանձին: Այդ ժողովի հետևորդներին հետագայում կոչեցին երկաթակներ կամ քաղկեդոնականներ: Հայ եկեղեցին Քրիստոսին ընդունում է իբրև Աստվածամարդ, այսինքն մարդկայինը և աստվածայինը Քրիստոսի մեջ մշտապես հանդես են գալիս միասնաբար: Սա է հայ եկեղեցու տարբերությունը կաթոլիկ, ուղղափառ և բողոքական եկեղեցիներից: Դվինի 506 թվականի եկեղեցական ժողովի մասնակից հոգևորականները հրաժարվեցին ընդունել Քաղկեդոնի ժողովի որոշումները: Այդ պատճառով էլ հաջորդ դարի ընթացքում հայերին անվանում էին հակաքաղկեդոնականներ կամ միաբնակներ:

Հայ, վրաց և աղվանից եկեղեցիների դավանական միասնությունը շաղկապում էին երեք ազգերի՝ պարսկական տիրապետության դեմ նրանց համատեղ պայքարում: Երեք եկեղեցիները միասնաբար էին հանդես գալիս նաև բյուզանդական հոգևորականության ճնշումների դեմ:

Դվինի 554 թվականի երկրորդ ժողովը դարձյալ ընդունեց հակաքաղկեդոնական որոշում: Անդրկովկասի ժողովուրդների դավանական միասնությունը խախտվեց միայն VII դարի սկզբին, երբ վրաց եկեղեցին բաժանվեց հայկականից ու միացավ բյուզանդականին:

Դարեր շարունակ բյուզանդական եկեղեցին ձգտում էր հայերին հլու հնազանդ դարձնել իրեն: Բյուզանդացիները հույս ունեին այդ ճանապարհով հասնել իրենց նպատակին՝ ինքնուրույնությունից զրկել հայերին:

Յերեսիկոսական շարժումները և հայ եկեղեցին: VIII դարի II քառորդում հայ եկեղեցին վճռականորեն հանդես եկավ երևութական և պատկերամարտական հերետիկոսությունների դեմ: Այս շրջանում էր նաև հայ եկեղեցին ակտիվ պայքար սկսել այնպիսի հերետիկոսական ուղղությունների դեմ, որպիսիք էին **պավլիկյանները և թոնդրակյանները**, որոնց հնարավոր եղավ հաղթահարել միայն Գրիգոր Մագիստրոսի ակտիվ ջանքերի շնորհիվ:

Երևութականությունը I դարում սկիզբ առած հերետիկոսական ուսմունք էր, ըստ որի Հիսուս Քրիստոսի մարդեղությունը և չարչարանքներն իրական չեն, այլ երևութական, թվացյալ, իսկ Քրիստոսն անմարմին էակ է:

Քաղկեդոնականները՝ մասնավորապես հունական եկեղեցին (Կ.Պոլսի պատրիարքությունը), «պատկերապաշտություն» ասելով հասկանում էին աստվածապաշտության ժամանակ սրբապատկերներին պաշտելը և երկրպագելը, իսկ բոլոր նրանց, ովքեր աստվածապաշտության ժամանակ դրանք չեն օգտագործում, հույները անվանեցին «պատկերամարտներ»:

Բայց քաղկեդոնականները չէին կարող չիմանալ, որ Չայաստանում ի հնուց անտի պահպանվում էին քրիստոնեության ամենահին սրբապատկերները՝ «Անձեռակերտ Դաստառակը» (կամ «Յիսուսի անձեռակերտ պատկերը», որը Չայաստան էր բերել Թադեոս առաքյալը) և «Աստուածամօր պատկերը» (որը Չայաստան էր բերել Բարդուղիմեոս առաքյալը): Իսկ դա նշանակում էր, որ պատկերահարգությունը դեռևս I դարից տարածված էր հայերի մեջ: Նրանք գիտեին նաև, որ ի տարբերություն պատկերամարտների՝ հայ եկեղեցուն հարգի էին նաև սուրբ մասունքները: **Չայ եկեղեցին, մասնակցելով պատկերամարտների և պատկերապաշտների միջև պայքարին, խրախուսել է պատկերահարգությունը՝ խուսափելով նրա ծայրահեղ դրսևորումներից:**

5. ՉԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ և ԿԻԼԻԿՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Բագրատունիներին նախորդող շրջանում հայ եկեղեցու կյանքում որևէ նշանակալի իրադարձություն չի եղել: Եկեղեցին հիմնականում իր վրա է վերցրել պետական առանձին գործառույթներ և հիմնականում ունեցել ազգապահպանիչ դեր: Բագրատունյաց թագավորության հաստատումից հետո (885թ.) նորովի է վերելք ապրում եկեղեցական կյանքը, բացվում են վանական նոր համալիրներ, զարգանում է եկեղեցական մշակույթը: Այս շրջանում **հատկապես հիշատակելի է Աշոտ III (953-977թթ.) թագավորի կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու կողմից Չաղպատի և Սանահինի վանական համալիրների հիմնումը, որով նոր թափ հաղորդվեց հայ մշակույթին և դպրությանը: Սմբատ II-ը (977-990թթ.) սկսում է Անիի մայր տաճարի (Կաթողիկեի) շինարարությունը: Կաթողիկեի շինարարության հովանավորությունը հետագայում ստանձնում է Սմբատ II-ի եղբայր Գագիկ I-ի(990-1020թթ.) կինը՝ Կատրամիդե թագուհին, որն ավարտվում է 1001թ.:** Չնայած հարաբերական անդորրին, Բյուզանդական օրթոդոքս եկեղեցին չի դադարեցնում իր հարձակումները հայ եկեղեցու վրա, ինչն էլ առավել լավ է դրսևորվում հատկապես պատկերամարտական շարժումների ընթացքում: **Քանի դեռ Չայաստանի Բագրատունի թագավորները չունեին իրենց հաստատուն մշտական մայրաքաղաքը, հայոց կաթողիկոսները ևս նրանց հետ միասին վայրից վայր էին տեղափոխվում: Կաթողիկոսարանի շինարարությունն Անի մայրաքաղաքում ավարտվեց X դարի վերջին և նշվեց շքեղ հանդիսություններով:**

Անին գրավելուց հետո բյուզանդացիները ձեռնարկեցին Չայոց կաթողիկոսությունը թուլացնելու և կազմալուծելու գործը: 1045թ. Անիի բյուզանդական կառավարիչը մայրաքաղաքից հեռացրեց **Պետրոս Գետադարձ** կաթողիկոսին, իսկ 1047թվականից նրան չորս տարի ստիպողաբար պահում են Կ.Պոլսում:

XI դարում Չայաստանին վիճակված արհավիրքները ողբերգական հետևանք ունեցան նաև կաթողիկոսական աթոռի համար: Քաղաքական անապահով վիճակից դրդված կաթողիկոսները շարունակ տեղից տեղ էին դեգերում: Բյուզանդական կայսրությունը նրանց արգելել էր հաստատվել Չայաստանում: Այդ պատճառով էլ հայոց եկեղեցու ղեկավարներն ապրում էին հայրենի հողից

հեռու, փոքրասիական զանազան քաղաքներում, մինչև որ ապաստան գտան Կիլիկիայում՝ սկզբում հաստատվելով **Յոնոկլա բերդաքաղաքում**, հետագայում՝ **Սիս քաղաքում**:

Կիլիկյան թագավորության հիմնումից հետո հայ եկեղեցին համեմատաբար խաղաղ զարգացման հնարավորությունն ստացավ: Եկեղեցին գտնվում էր պետական իշխանության լիիրավ վերահսկողության ներքո, այն դիտարկվում էր որպես պետության գործակալություններից մեկն, ու Սսի կաթողիկոս էր դառնում թագավորի որդիներից մեկը: Կիլիկյան շրջանում հայ եկեղեցու հովանու ներքո մեծ թափով զարգացավ հայկական մշակույթը:

6.3ԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ XIV-XVIII դարերում

Բուն Հայաստանի տարածքում սելջուկ-թուրքերի և հետագայում մոնղոլների տիրապետության շրջանում որևէ նշանակալի իրադարձություն հայ եկեղեցու կյանքում տեղի չի ունեցել: Ավելին, եկեղեցին զբաղված էր ազգապահպանության և եկեղեցապահպանության օրախնդիր հարցերով: Այլ էր խնդիրը հայոց իշխանական տների հզորացման ու տիրապետության շրջանում, որոնցից Ջաքարյանները, Պռոշյանները, Վաչուտյանները, Օրբելյանները փաստացի իշխանության էին հասել Հայաստանում, սակայն մոնղոլների արշավանքները կասեցրին նրանց հետագա զարգացումը: Ճիշտ է, մոնղոլները որոշակի արտոնություններ տվեցին հայ եկեղեցուն, բայց օտարի լծի տակ դա բավարար պայման չէր բնականոն զարգացում ապահովելու համար:

1375 թ. Կիլիկյան թագավորության վերացումից հետո կաթողիկոսական Աթոռի տեղափոխությունն Արևելյան Հայաստան օրախնդիր էր դարձել: Կարևորագույն այդ գործը ձեռնարկեցին ժամանակի նշանավոր գիտնականներ Հովհաննես Հերմոնացին և Թովմա Մեծփեցին: **1441 թ.** Էջմիածնում գումարվում է եկեղեցական ժողով, կաթողիկոս է ընտրվում Կիրակոս Վիրապեցին, ու երկարատև դեգերումներից հետո կաթողիկոսական Աթոռը վերադառնում է Էջմիածին: Չնայած այս հանգամանքին՝ Կիլիկյան Աթոռը շարունակում է իր գոյությունը, իսկ XX դարի սկզբին տեղափոխվում է Լիբանան՝ Անթիլիաս, ու մինչ օրս շարունակում իր գործունեությունը: Այս իրադարձությունից 20 տարի անց՝ **1461 թ.**, Կ. Պոլսում հիմնվում է հայոց պատրիարքություն, որը հսկայական դեր է խաղացել Օսմանյան Թուրքիայում ապրող հայորդիների ինքնակազմակերպման ու պահպանության գործում:

XVI-XVII դարերի հայ ժողովրդի պատմությունը սերտորեն առնչվում է հայ եկեղեցու գործունեությանը: **Մայր աթոռը կիսում էր հարազատ ժողովրդի դառը ճակատագիրը: Այն մատնված էր անգործության և ենթակա էր սոսկալի կեղեքումների ու հարստահարումների: Նման պայմաններում գահ բարձրացած կաթողիկոսների գլխավոր մտահոգությունը որևէ կերպ Մայր աթոռի գոյությունը ապահովելն էր: Ս.Էջմիածնի վիճակն ինչ-որ չափով թեթևացնելու նպատակով կաթողիկոսները հաճախ, երբեմն երեք-չորս հոգու կարգում էին աթոռակից կաթողիկոսներ: Այս երևույթը, անշուշտ, թուլացնում էր կաթողիկոսական իշխանությունը, դուռ բացում ներքին ներհակությունների ու երկպառակությունների առջև:**

Այդ ժամանակաշրջանում հայ ժողովրդի ներքին կյանքի կարգավորման միակ օրգանը մնացել էր հայ եկեղեցին: **XVII դարի 30-ական թվականներին սկսվում է հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու վերազարթոնքը, որն անխզելիորեն կապված է Մովսես Գ Տաթևացի կաթողիկոսի գործունեության հետ: 1629թ.Մովսես Տաթևացին ընտրվելով կաթողիկոս շատ կարճ ժամանակահատվածում (1629-**

1632թթ.) լուրջ քայլեր է ձեռնարկում Մայր աթոռը շենացնելու ուղղությամբ: Շահ Աբասից ստանալով լքված ու ավերված Ս.Էջմիածնի վանքը նորոգելու թույլտվություն Մովսես Գ Տաթևացին վերանորոգում է վանքը, վեհարանը, կառուցում Մայր տաճարի գմբեթը, շրջապարիսպը, Երևանի Ս.Զորավոր եկեղեցին: Տաթևացին վերացնում է նաև մեծ չարաշահույնների ու երկպառակությունների տեղիք տվող աթոռակից կաթողիկոսների ինստիտուտը և վերականգնում Ամենայն Հայոց կաթողիկոսների միանձնյա իշխանությունը:

XVII դարի երկրորդ կեսին ծավալված ազատագրական շարժումը չշրջանցեց նաև Ս.Էջմիածինը: Եկեղեցու ու նրա հայրապետների (Ստեփանոս Ե Սալմաստեցի (1545-1567թթ.), Միքայել Սեբաստացի (1567-1576թթ.) անմիջական ջանքերով էլ **XVI-XVII դարերն** ամբողջապես դարձան ազատագրության որոնման պատմություն՝ հայ եկեղեցու նախաձեռնությամբ ու եվրոպական երկրների աջակցությամբ: Այդ շարժումը կազմակերպելու և ուղղություն ցույց տալու գործում մեծ էր Ամենայն Հայոց կաթողիկոս **Հակոբ Դ Զուղայեցու (1655-1680թթ.)** դերը: Հակոբ Զուղայեցին ժամանակի ականավոր հոգևորականներից էր: Մեծ դեր է խաղացել Մայր աթոռի բարեկարգման գործում, պայքարել Հայաստանում և հայկական գաղթավայրերում գործող կաթոլիկ քարոզիչների դեմ:

XVIII դարի իրադարձություններին գործուն մասնակցություն ցուցաբերեցին հայ հոգևորականության բազմաթիվ ներկայացուցիչներ, իսկ Գանձասարի (Աղվանից) կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը Արցախի ազատամարտի կազմակերպիչն էր ու առաջնորդը:

Մայր աթոռի դրությունը բարելավվեց այն ժամանակ, երբ կաթողիկոսական գահ բարձրացավ Աբրահամ Գ Կրետացին (1734-1737թթ.): Ցուցաբերելով մեծ խորաթափանցություն և դիվանագիտական հմտություն՝ նա իր աջակցությունն է հայտնել պարսից Նադիր խանին: 1735թ. նա ընծաներով ընդառաջ գնաց Նադիրին և այդ ձևով Մայր աթոռն ու Հայաստանը ազատեց ավերածություններից ու կողոպուտից: Կրետացին 35 հրովարտակ է ստացել Նադիրից՝ ի շահ եկեղեցու և հայ ժողովրդի: Մասնավորապես, Մայր աթոռը ազատել է հարկերից, հաստատել տվել Ամենայն Հայոց կաթողիկոսության իրավունքները, ընդարձակել Ս.Էջմիածնի կալվածքները: Նա 15կգ քաշով ոսկե ջահ է ստացել Մայր տաճարի համար, գերությունից ազատել հազարավոր հայերի ու վրացիների:

Աբրահամ Կրետացուց հետո հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու պատմության այս բարդ ժամանակաշրջանում հանդես է գալիս եկեղեցական ականավոր գործիչ, հայոց նշանավոր կաթողիկոսներից մեկը՝ Սիմեոն Ա Երևանցին (1736-1780թթ.): Ինչպես ժամանակին Մովսես Տաթևացին, այնպես էլ Սիմեոն Երևանցին մեծ ջանքերի գնով կարողացավ բարձրացնել Մայր աթոռի հեղինակությունը և հաստատել կաթողիկոսական միանձնյա իշխանություն: Նա ծավալեց շինարարական-վերանորոգչական լայն գործունեություն: Վերականգնեց Էջմիածնի կաթողիկոսության իրավունքը Ռուսաստանի հայոց թեմի նկատմամբ: Իրականացրեց նախորդ սերունդների վաղեմի երազանքը և **1771թ. էջմիածնում հիմնադրեց տպարան, իսկ 1776թ.՝ թղթի գործարան:**

XVIII դարում հայ եկեղեցու կյանքում տեղ գտած իրադարձությունների շարքում առանձնանում է **1717 թ. Վենետիկի սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հիմնումը**, որը միչև օրս հանդիսանում է հայ ժողովրդի գիտամշակութային ամենակարևորագույն օջախներից մեկը: **Միայն 18-րդ դարում Մխիթարյանները հրատարակել են շուրջ 100 անուն գիրք:**

Այսպիսով, XVIII դարի երկրորդ կեսին գահակալող կաթողիկոսները փորձել են Մայր աթոռի համար ապահովել խաղաղ ու բարգավաճ վիճակ, ծավալել շինարարական գործունեություն, աջակցել են ազատագրական շարժմանը, չնայած երբեմն էլ չհամաձայնելով դրանց հետ՝ հակադրվում էր՝ հայ ժողովրդին արկածախնդրությունից փրկելու նպատակով:

4.2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ VIII ԴԱՐ

1. ՎԱՂ ԵՎ ՀԻՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հայ ազգային մշակույթն իր ուրույն և արժանի տեղն է զբաղեցնում համաշխարհային քաղաքակրթության մեջ: Որպես աշխարհի ամենահին ժողովուրդներից մեկի մշակույթ՝ իր ակունքներով այն նույնպես ունի շատ հին պատմություն: Հին հայկական մշակույթը ձևավորվել է հայկական լեռնաշխարհի տարածքում բնակվող ցեղերի մշակույթների հիման վրա:

Հայկական հողի վրա հայտնաբերվել են բազմաթիվ բնակավայրեր, ամրոցներ, պեղվել են դամբարաններ: Վաղ շրջանի մշակույթից աչքի են ընկնում հատկապես այն հուշարձանները, որոնք գտնվելով ներկայիս ՀՀ տարածքում՝ համեմատաբար ավելի լավ են ուսումնասիրված. դրանց են պատկանում **Էթիունիի՝ Երևանի** հուշարձանները, **Լճաշենի և Վանաձորի** բրոնզեդարյան հարուստ դամբարանները: Այստեղ գտնվել են արձանիկներ, զարդեր, զենքեր, գործիքներ, կենցաղային իրեր: Գեղամա լեռներում, Արագածի փեշերին և այլ վայրերում հայտնաբերվել են **ժայռապատկերներ**, որոնք ոչ միայն նկարչության և զարդարվեստի նմուշներ են, այլև գրի հնագույն տեսակ՝ պատկերագիր: Ժայռապատկերները վկայում են մեր նախնիների ապրելակերպի մասին: Գեղամա լեռներում հայտնաբերվել են նաև ձկնակերպ քարե արձաններ՝ **վիշապներ**, որոնք նվիրված են ջրի պաշտամունքին:

Վաղ շրջանի հայկական մշակույթի ձևավորման մեջ իր ուրույն տեղն ունի **Վանի** թագավորության մշակույթը:

Վաղ շրջանից մեզ են հասել նաև **առասպելներ և ավանդազրույցներ**:

Ք. ա. VI-IV դդ. հայկական մշակույթին վերաբերող տեղեկությունները մեզ են հասել պեղումներից և հույն գրող ու պատմագիր, հունական զորքերի ղեկավար **Քսենոփոնի «Անաբասիս»** («Տասը հազարի նահանջը») աշխատությունից:

Վաղ հայկական մշակույթը, ձևավորվելով տեղում, ազդեցություն և կապեր է ունեցել Միջերկրականի երկրների, Հունական աշխարհի, Փոքրասիական երկրամասի մշակույթների հետ:

Վաղ շրջանին հաջորդած՝ հին շրջանի մշակույթը բուռն զարգացում էր ապրում, քանի որ նրանում տեղ գտած երկու ուղղությունների՝ հելլենիստական և հինարևելյան մշակույթների փոխներթափանցումը հարստացրել էին այն՝ հասցնելով բարձր մակարդակի և նոր որակի:

Հելլենիզմը կամ հունականությունը յուրահատուկ մշակույթ է, որը ձևավորվել է Առաջավոր Ասիայի երկրներում, Ալ. Մակեդոնացու արշավանքներից (Ք. ա. IV դար) հետո, հունական և առաջավորասիական մշակույթների միահյուսումից:

Հայաստանում հելլենիզմի դարաշրջանը տևել է մոտ 600 տարի՝ Ք. ա. 4-րդ դարի վերջից մինչև 3-րդ դարի վերջը: Այս ժամանակաշրջանում հայկական հինարևելյան մշակույթը ձերբազատվեց պարսկական մշակույթի նկատելի ազդեցությունից և կողմնորոշվեց դեպի արևմտյան՝ հունական մշակույթ: Հայաստանում հելլենիստական մշակույթի ծաղկմանը նպաստեց երկրի տնտեսական և քաղաքական վերելքը:

Հելլենիստական մշակույթը առավել տարածում էր գտել հասարակության վերնախավի մեջ, իսկ բուն ժողովուրդը հիմնականում հավատարիմ էր հինարևելյան մշակութային ավանդույթներին:

Յեւլլենիզմն առավել ամբողջական դրսևորում է գտել նյութական մշակույթի բնագավառում և հատկապես քաղաքաշինության մեջ: Այդ ժամանակաշրջանում Հայաստանում կառուցվել են տասնյակ նոր քաղաքներ, որոնցից նշանավոր էին մայրաքաղաք **Արտաշատն** ու **Տիգրանակերտը**: Կառուցվել են նաև հզոր ամրոցներ: Այդ ժամանակաշրջանի ամրոցաշինության լավագույն նմուշն է **Գառնիի** ամրոցը: Ամրոցի ներսում գտնվել են պալատական շինություններ, արքունի բաղնիքը: Այստեղ պահպանվել է Տրդատ I Արշակունի թագավորի հունարեն արձանագրությունը: Հայաստանի հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետական կառույցներից լավագույնը Գառնիի հեթանոսական տաճարն է, որը կառուցվել է I դարի երկրորդ կեսին, Տրդատ I-ի կողմից: Տաճարը նվիրված է եղել հայոց **Միհր** աստծուն:

Յեւլլենիստական ժամանակաշրջանում Հայաստանում բարձր զարգացման է հասել քանդակագործությունը: Գառնիում և Արտաշատում գտնվել են մարմարյա արձաններ: Քանդակագործության գեղեցիկ նմուշ է Արևմտյան Հայաստանից Լոնդոնի Բրիտանական թանգարան տարված **Անահիտ** աստվածուհու արձանի բրոնզե գլուխը:

Կերպարվեստի ծնունդ են նաև արքայական պատկերները **Մեծ Հայքի** և **Ծոփքի** թագավորների հատած **դրամների** վրա: Նկարչության մի հոյակապ նմուշ է Գառնիի բաղնիքի **խճանկարը**, որը պատրաստվել է Ազատ գետի հունից հավաքած գույնզգույն քարերից:

Հին հայկական հոգևոր մշակույթն իր արտացոլումն է գտել հայերի հեթանոսական կրոնի, պատմական ավանդությունների, Տիգրան Մեծ, Արտաշես, Տրդատ, Սանատրուկ արքաների, Սմբատ Բագրատունու և ուրիշների շուրջ ստեղծված **թատերարվեստի** մեջ:

Հայաստանում թատրոն գոյություն է ունեցել դեռևս երկու հազար տարի առաջ: Տիգրան II-ը Տիգրանակերտում կառուցել է հսկա թատերական շենք, որը կարող էր տեղավորել 10000-ից ավել հանդիսատես: Տիգրանի որդի Արտավազդ II-ը շարունակել է հոր գործը: Արքունի պալատում և քաղաքային թատրոնում բեմադրվել են հույն հեղինակների, նաև Արտավազդ II-ի ողբերգությունները: Հունալեզու թատրոնից բացի, Հայաստանում գործում էին նաև ժողովրդական թատերական խմբեր, որոնք տալիս էին հայալեզու ներկայացումներ:

Այսպիսով, հին Հայաստանի մշակույթը հասել էր բարձր մակարդակի՝ դառնալով այն հիմքը, որի վրա հաջորդ դարաշրջանում զարգացավ հայկական միջնադարյան հին մշակույթը:

2.ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

V-VII դարերում հայ ժողովուրդը բուռն վերելք ապրեց: Դրան նպաստեց և ճանապարհի հարթեց ակնառու և շատ կարևոր մի երևույթ՝ գրերի ստեղծումը:

Մինչ հայ գրերի գյուտը հայերը երկար դարեր խոսել, երգել, առասպելներ են պատմել հայոց լեզվով, բայց գրել են օտար լեզուներով՝ հունարեն, արամերեն, պարսկերեն, որոնք նաև օգտագործվել են հայկական արքունիքներում: IV-V դարերում, երբ վտանգվել էր հայկական պետականությունը և հայ ժողովրդի գոյությունը, **գրերի** ստեղծման հարցը մեծ նշանակություն ձեռք բերեց: Մայրենի լեզվով գրի և գրականության ստեղծումը անհրաժեշտ էր ինչպես պետական գործերը մայրենի լեզվով վարելու, այնպես էլ պարսկա-բյուզանդական ազդեցությունների դեմ պայքարելու, ազատագրական պայքարը կազմակերպելու և քրիստոնեական դավանանքը ամրապնդելու համար:

Պատմականորեն անհետաձգելի ու անհրաժեշտ համազգային և համապետական նշանակություն ունեցող այդ խնդիրը իրականացրեց **Մեսրոպ Մաշտոցը**: Սեփական գրեր՝ այբուբեն ունենալու միտքը և Աստվածաշունչը հայերեն թարգմանելու մտորումները նա հայտնում է կաթողիկոս **Սահակ Պարթևին** և **Վռամշապուհ** արքային: Վերջիններս ըմբռնումով են մոտենում առաջարկին և **405թ.** մի խումբ աշակերտների հետ Մաշտոցին ուղարկում են Ասորիք՝ այնտեղի գիտունների հետ խորհրդակցելու, օտար գրերին ծանոթանալու: Տքնաջան աշխատանքն ավարտվեց հաջողությամբ: Եղեսիայում Մեսրոպը ստեղծեց հայերեն տառերը:

Այբուբենի 36 տառերը արտահայտում էին հայոց լեզվի բոլոր հնչյունները: Այն անփոփոխ գործում է մինչև այսօր: Միայն X դարից սկսած այբուբենի մեջ ավելացան «օ», «ֆ» տառերը¹: Տառերին գեղագիտական տեսք տվեց հմուտ վարպետ Զոոփանոսը:

Այբուբենի 36 տառերը չորս շարքով արտահայտել են նաև թվային արժեքներ:

Ա - 1	Ժ -10	Ճ -100	Ռ -1000
Բ - 2	Ի -20	Մ -200	Ս -2000
Գ - 3	Լ -30	Յ -300	Վ -3000
Դ - 4	Խ -40	Ն -400	Տ -4000
Ե - 5	Ծ -50	Շ -500	Ր -5000
Զ - 6	Կ -60	Ո -600	Ց -6000
Է - 7	Յ -70	Չ -700	ՈՒ -7000
Ը - 8	Ձ -80	Պ -800	Փ -8000
Թ - 9	Ղ -90	Ջ -900	Ք -9000

Գրերի գյուտը լայն հնարավորություններ ստեղծեց ինքնուրույն մշակույթի զարգացման համար: Մաշտոցն իր աշակերտների հետ դպրոցներ է բացում ինչպես Զայաստանի Արևելյան, այնպես էլ Արևմտյան՝ բյուզանդական մասում: Ազգային լեզվով կազմակերպվում է ոչ միայն ուսուցումը, այլև առաջին հերթին՝ քրիստոնեության տարածումը ժողովրդի մեջ:

Այբուբենի առաջին փորձարկումը Աստվածաշնչից Սողոմոնի առակներից արված թարգմանությունն էր Մաշտոցի և նրա աշակերտների կողմից: Զայերեն թարգմանված առաջին **նախադասությունն էր. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»**: Աշխարհաբար՝ **«Տեղյակ լինել իմաստությանը և ուսմանը, հասու լինել խոհեմ խոսքին»**:

Մեսրոպ Մաշտոցը Սահակ Պարթևի հետ ավարտեց Աստվածաշնչի թարգմանությունը հունարենից: Այդ փայլուն թարգմանությունը հայտնի է որպես **«թագուհի թարգմանութեանց»**: Ասորերենից և հունարենից հայերեն են թարգմանվել նաև Զին աշխարհի շատ նշանավոր հեղինակների գործեր: Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը գրեցին բազմաթիվ հոգևոր երգեր ու ծիսական աղոթքներ հայերեն լեզվով:

Յայոց այբուբենի աղոթքի նմուշ

ա Արարիչ	ժ Ժամանակած	ճ Ճեմարան	ռ ռաբբի
բ բովանդակ	ի իրած	մ մտաց	ս սրբոց
գ գոյություն	լ լուսոյ	յ Յիսուս	վ վկայական

¹ «և»-ը առանձին տառ չէ, այն տեղ է գտել այբուբենում որպես օ-ն և ֆ-ն ավելացնելու միջոց՝ և-ի իմաստով:

դ դատավոր	խ խավարի	ն նազովրեցի	տ տեր
ե երկնից	ծ ծովոց	շ շնորհ	ր մեր
զ զորավոր	կ կեսականաց	ո ոգեշունչ	ց ցանկալի
է էութուն	հ համայնից	չ չարյաց	ու ու
ը ըստուն	ծ ձայն	պ պատարագիչ	փ փառք
թ թագավոր	ղ ղողանջականք	ջ ջանադիր	ք Քրիստոսիդ

Հին հայերենը՝ **գրաբարը**, դրսևորեց գրական լեզվի ճկունություն և գեղեցկություն: Այդ խոսակցական լեզուն, գրավոր դառնալով, կայունացավ և հետագայում վաստակեց **«նսկեդարյան»** անունը, քանի որ հայոց լեզվով ստեղծված ազգային պատմագրությունն ու գրականությունը կոչվեց հենց այդպես:

Գրերի գյուտի նշանակությունը մեծ է նաև քաղաքական առումով: Այն դարձավ հզոր միջոցներից մեկը, որի օգնությամբ ժողովուրդը կարողացավ պահպանել իր ինքնուրույնությունը, մանավանդ պետականության բացակայության պայմաններում:

Պատմագրություն, գրականություն և փիլիսոփայություն. Գրերի գյուտը նպաստեց հայ պատմագրության ստեղծմանը: Այն սկզբնավորվեց և ծաղկեց V դարում:

V դարի հայ պատմիչներ **Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը և Ղազար Փարպեցին**, շարունակելով միմյանց աշխատությունները, ներկայացրել են III-V դդ. հայոց պատմությունը:

Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը» նվիրված է Հայաստանում քրիստոնեության հաստատմանը (հայոց դարձին): Շարունակելով նրա գործը՝ **Փավստոս Բուզանդը** գրել է IV դարի պատմությունը՝ հասցնելով մինչև **387թ.**՝ Հայաստանի 1-ին բաժանումը: **Ղազար Փարպեցին**, շարունակելով **Փ. Բուզանդին**, անդրադարձել է IV դարի վերջի, V դարի պատմությանը:

V դարի պատմիչ **Կորյունը** հայոց պատմագրության մեջ հանդես է գալիս որպես առաջին պատմիչ և կենսագիր: Նրան բախտ է վիճակվել առաջին անգամ գրել աշխարհիկ բնույթի պատմագրական երկ: Նա ոչ միայն նկարագրել է հայոց այբուբենի ստեղծումը 405թ., այլև **«Վարք Մաշտոցի»** աշխատությունում նկարագրում է իր ուսուցիչ **Մեսրոպ Մաշտոցի** կյանքի և գործունեության ամբողջական պատմությունը:

V դարի մյուս պատմիչներից **Եղիշեն** 450-451թթ. ապստամբությունների ժամանակակիցն է : Նա իր **«Վասն Վարդանանց և Հայոց պատերազմին»** երկում գեղարվեստական լեզվով նկարագրել է Սասանյան Պարսկաստանի դեմ ժողովրդական ապստամբությունը: Հանուն հայրենիքի և քրիստոնեության պաշտպանության Եղիշեն ինքնազոհությունը համարում է հոգևոր-բարոյական անմահություն՝ **«Մահ ոչ իմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն»**:

Հաջորդ դարերի պատմիչներից **Սեբեոսը (VII դար)** գրել է Հայաստանի և Մերձավոր Արևելքի՝ VI-VII դարերի պատմությունը, **Ղևոնդ պատմիչը (VIII դար)** ներկայացնում է արաբական խալիֆայության ժամանակաշրջանի իրադարձությունները: Նրա աշխատությունը նույնպես տեղեկություններ է տալիս շրջակա երկրների մասին:

Նշված պատմիչների շարքում իր հատուկ տեղն ունի **V դարի** պատմիչ **Սովսես Խորենացին**: Նա համարվում է հայ պատմագրության հայրը, քանի որ առաջինն է շարադրել հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ նրա կազմավորումից մինչև իր ապրած ժամանակը՝ V դարի կեսը: Եթե պատմիչներից **Ղազար Փարպեցին** գրում էր, որ պատմությունը շարադրելիս **«պետք է ստույգը գրել, չեղածը չավելացնել, եղածները չպակասեցնել»**, ապա պատմահայրն այդ սկզբունքին

ավելացնում է ևս մեկը՝ պահպանել իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունը: Մովսես Խորենացին գրում է. **«Չկա հավաստի պատմություն առանց ժամանակագրության»**: Բացի դա, պատմիչը գտնում է, որ մարդկության պատմությունը ստեղծում են ոչ միայն մեծ, այլև փոքր ազգերը:

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» հարուստ նյութ է պարունակում մեր հարևան Վրաստանի, Աղվանքի, Ասորիքի և այլ հեռավոր երկրների մասին: Նա պատկերացում է ունեցել այն ժամանակ հայտնի ամբողջ աշխարհի մասին՝ Իռլանդիայից մինչև Չինաստան: Հեղինակը հայոց պատմությունը դիտել է որպես համաշխարհային պատմության մի մաս: Աշխատության այս առանձնահատկությունները վկայում են, որ Մովսես Խորենացին սովորական պատմիչ չէ, այլ գիտնական, անաչառ և հետևողական ուսումնասիրող:

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» միջնադարում ծառայել է որպես դասագիրք և հայրենասիրական ոգով է դաստիարակել հայերի տասնյակ սերունդների: Նրա երկը թարգմանվել է մեկ տասնյակից ավելի լեզուներով:

Վաղ միջնադարյան հայ պատմիչների ստեղծած երկերը ոչ միայն ժամանակաշրջանի հավաստի պատմությունն են, այլև ներկայացնում են բարձր գեղարվեստական արժեք: Խոսքի պատկերավորությամբ և գեղարվեստականությամբ աչքի է ընկնում հատկապես **Եղիշեն**՝ Վարդանանց պատերազմի մասին աշխատությամբ: Պատկերավոր հատվածներ կան նաև Փավստոս Բուզանդի, Սեբեոսի աշխատությունների մեջ:

Քրիստոնեությունը ստեղծում է գրականության նոր տեսակ, որը վերաբերում է սրբերի կատարած հերոսական արարքներին, կրած տառապանքներին: Գրականության այդ տեսակը կոչվում է **վարք** կամ **վարքագրություն**: Առաջանում է նաև հոգևոր երգերի տեսակ՝ **շարական**: Դրանք ծիսական երգեր են, որոնք բաժանված են հասարակ օրերի և կիրակի ու եկեղեցական տոների ժամանակ երգվող շարականների: VII դարը տվել է երկու մեծ հայ բանաստեղծ: Նրանցից մեկը **Կոմիտաս** կաթողիկոսն է, մյուսը՝ **Դավթակ Քերթողը** (Քերթող նշանակում է բանաստեղծ): V դարում պատմագրության հետ մեկտեղ զգալի հաջողությունների է հասնում նաև հայ **փիլիսոփայական** միտքը: Հայ փիլիսոփաների շարքում իր ծանրակշիռ տեղն ունի 5-րդ դարի փիլիսոփա, թարգմանիչ և աստվածաբան **Եզնիկ Կողբացին**: Նրա գրած ամենանշանավոր փիլիսոփայական երկը **«Աղանդների հերքումը»** (**«Եղծ աղանդոց»**) աշխատությունն է, որտեղ քրիստոնեությունը մեծարելով՝ հեղինակը պաշտպանում է հայ ժողովրդի ազգային ինքնուրույնությունը:

V դարի վերջին քառորդից մինչև VI դարի կեսերը ապրել և ստեղծագործել է վաղ միջնադարի ամենանշանավոր փիլիսոփա **Դավիթ Անհաղթը**: Ուսումը ստանալով Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում՝ միշտ հաղթել է հրապարակային փիլիսոփայական վեճերում և ստացել Անհաղթ պատվանունը: Նա մեծ հռչակ է վայելել ոչ միայն հայ, այլև հույն և հռոմեացի փիլիսոփաների շրջանում: Պատկառելի տարիքում վերադարձել է Հայաստան և նպաստել հայ փիլիսոփայական գիտության կազմավորմանը: Գրել է բազմաթիվ աշխատություններ հայերեն և հունարեն: Ամենազխալոր աշխատությունը («Իմաստության սահմանումը») գործն է, որտեղ դրվել է գիտելիքների դասակարգման հարցը:

Բնական գիտություններ: Վաղ միջնադարում զգալի զարգացում են ապրում բնական գիտությունները:

Աշխատանքներ են կատարվել տոմարի ճշգրտման ուղղությամբ: Հայ եկեղեցին քաղկեդոնականից վերջնական բաժանվելուց հետո վերանայեց հայկական տոմարը: Մովսես կաթողիկոսի կողմից 554թ. հատուկ ժողով է գումարվում, և բյուզանդական եկեղեցուն հակառակ՝ հաստատում են նոր տոմարը: Ըստ դրա՝ **հայկական թվականության սկիզբն է ընդունվում 552թ.:**

Միջնադարի գրավոր աղբյուրները տեղեկություններ են հայտնում Հայաստանում բժշկության զարգացած լինելու մասին: Դեռևս IV դարում Հայաստանի տարբեր վայրերում հիմնվել են բորոտանոցներ, որտեղ հիվանդները բժշկական խնամք են ստացել: Ջարկերակի միջոցով հայ բժիշկները ախտորոշել են հիվանդությունները, ուսումնասիրել են մարդու զգայարանները, ներքին օրգանները: Դիահերձման մասին փաստերը վկայում են, որ բժիշկները ձգտել են խորությամբ ուսումնասիրել հիվանդության պատճառները: Հին ժամանակներից Հայաստանում հայտնի էին բուսական դեղորայքը և հանքային ջրերի բուժիչ հատկությունները: Հայաստանում բժշկությունը զարգանում էր նաև այլ երկրների փորձի հիման վրա, որի նպատակով շատ գրքեր են թարգմանվել հունարենից:

Բնական գիտությունների ասպարեզում հայ ամենանշանավոր դեմքը VII դարի գիտնական **Անանիա Շիրակացին** է: Մեծ տիեզերագետ, աշխարհագրագետ և մաթեմատիկոս Անանիա Շիրակացին մերժել է եկեղեցականների այն տեսակետը, թե երկիրը տափակ է: Ըստ Շիրակացու երկիրը ձվաձև է: Նա բացատրում է, որ արեգակի խավարման պատճառը նրան պատնեշող լուսինն է:

Շիրակացու «Աշխարհացույց»-ում նկարագրված են իր ժամանակի բոլոր աշխարհամասերը, ծովերն ու օվկիանոսները: Հատկապես մանրամասն ներկայացված են հարևան երկրները: Մաթեմատիկայի, ինչպես և մյուս գիտությունների ասպարեզում Անանիա Շիրակացին հետևել է անտիկ հունահռոմեական գիտնականներին:

Արվեստ: Վաղ միջնադարյան Հայաստանում ծաղկում է ապրել **ճարտարապետությունը:** Կառուցվել են բնակելի տներ, հզոր ամրոցներ, եկեղեցիներ, ապարանքներ, կամուրջներ և այլ շինություններ: Հայկական ճարտարապետության զլուխգործոցներից է Կոմիտաս կաթողիկոսի կողմից 618 թ. կառուցված **Յոթհարկանի** տաճարը, VII դարի կեսերին Ներսես կաթողիկոսի կառուցած **Ջվարթնոց** տաճարը, որը X դարում կործանվել է երկրաշարժի հետևանքով:

Ճարտարապետության և շինարարության հետ զուգահեռ զարգացել են արվեստի այլ ճյուղեր՝ քանդակագործությունը, նկարչությունը: Վաղ միջնադարում հաճախ եկեղեցիների պատերը զարդարվում էին քանդակներով, նկարներով, հատակը՝ խճանկարներով:

Ջարգանում էր նաև արվեստի մեկ այլ ճյուղ՝ թատրոնը, որը ժառանգել էր հելլենիստական թատրոնի ավանդույթները: Սակայն վաղ միջնադարում այն գործել է հայոց լեզվով և մեծ ժողովրդականություն է վայելել: Ոչ միայն թատերախմբերն էին շրջում երկրով մեկ, այլ նաև գուսանները, որոնք կատարում էին ինչպես ժողովրդական, այնպես էլ հեղինակած երգեր:

4.3. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ IX-XVII դԱՐԵՐՈՒՄ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ IX-XIV դԱՐԵՐՈՒՄ

Հայկական մշակույթը IX-XIV դարերում հասավ զարգացման բարձր մակարդակի: Այդ վերելքը պայմանավորված էր պետականության վերականգնումով, Հայաստանի, այդ թվում և Կիլիկյան Հայաստանի քաղաքական և տնտեսական առաջընթացով: Բագրատունիները և Ջաքարյանները՝ Հայաստանում, իսկ Ռուբինյանները՝ Կիլիկիայում խրախուսում և հովանավորում էին գիտության և արվեստի զարգացումը: Մեկ այլ նախադրյալ ևս բարերար ազդեցություն էր ունենում հայ մշակույթի զարգացման վրա՝ շփումները արաբական, հատկապես բյուզանդական մշակույթի հետ: Մշակութային վերելքին էր նպաստում նաև քաղաքային կյանքի վերածնունդը:

Դպրոց. Առևտրի, քաղաքների զարգացումը տարրական կրթությամբ մարդկանց պահանջ էր ծնում: IX-XIV դարերում աճեց դպրոցների քանակը, ավելացավ դասավանդվող առարկաների թիվը: Նախնական ուսուցումը կատարվում էր տարրական դպրոցներում, վանքերում և խոշոր գյուղերում: Այդ դպրոցները պահվում էին պետության և եկեղեցու հաշվին: Կային նաև մասնավոր դպրոցներ, որտեղ ուսումը վճարովի էր:

Նոր երևույթ էր բարձրագույն տիպի դպրոցների՝ **վարդապետարանների** հիմնումը: Այստեղ տարրական դպրոցից հետո ստանում էին հետագա կրթությունը, որի տևողությունը 7-8 տարի էր: Վարդապետարան-համալսարաններում դասավանդում էին աստվածաբանություն, փիլիսոփայություն, արվեստ, մատենագրություն, պատմություն: Բոլոր վարդապետարանները հայտնի էին իրենց մատենադարաններում պահվող հազվագյուտ և թանկարժեք ձեռագրերով, որոնք փոխանցվում էին սերնդից սերունդ: Կրթական գործի մեծ երախտավորներից էին Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, Դավիթ Ալավկատրոսին, Վարդան Արևելցին և ուրիշներ:

Վարդապետարաններ էին հիմնվել Անիում, Նարեկավանքում, Սանահինում, Գոշավանքում, Տաթևում, Սիսում և այլ քաղաքներում ու վանքերում: Անիում XI-XII դարերում բեղմնավոր գործունեություն ծավալեց Հովհաննես Իմաստասերը: Նրա ուսուցչապետության տարիներին Անիի վարդապետարանը բազում շրջանավարտներ տվեց, որոնք հետագայում գործում էին Հայաստանի տարբեր վայրերում:

Հայկական վարդապետարաններից ամենանշանավորը **Գլաձորի համալսարանն** էր, որը հիմնադրվել է 1280-ական թվականներին Ներսես Մշեցու կողմից: Համալսարանի գործունեությունը հովանավորում էին **Պռոշյան և Օրբելյան** իշխանները: **Եսայի Նչեցու** ուսուցչապետության տարիներին այստեղ սովորել են հարյուրավոր երիտասարդներ: Գլաձորի **րաբունները** (դասախոսները) դասավանդում էին ժամանակի եվրոպական համալսարաններում ուսումնասիրվող գիտություններ: Երբ քաղաքական և տնտեսական ծանր պայմանները հարկադրեցին դադարեցնել Գլաձորի համալսարանի գործունեությունը (1340-ական թթ.), նրա սաները տեղափոխվեցին Տաթևի համալսարան, որը շարունակելով Գլաձորի ավանդույթները՝ գոյատևեց մինչև 1412 թ.: Տաթևի համալսարանում դասավանդել են **Հովնան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին**:

Ուսումնական նշանավոր կենտրոններից էին նաև **Կեչառիսի, Հաղպատի, Այրիվանքի, Նարեկավանքի, Սանահինի** և այլ վարդապետարանները: Նշված բոլոր կենտրոնները հիմք են հանդիսացել միջնադարյան հայ մշակույթի և մտավորականության ձևավորման համար:

Գիտություն. Արաբական տիրապետության շրջանում անկում ապրած գիտությունը վերելք ապրեց Բագրատունյաց թագավորության ընդհանուր զարգացման պայմաններում:

Գիտության ճյուղերից հատուկ ծաղկում ապրեց **պատմագրությունը**: Շարունակվեց «Հայոց պատմությունների» շարքի շարադրումը: Հեղինակները սկսում էին իրենց աշխատությունների շարադրումը այն տեղից, որտեղ կանգ էր առել նախորդ պատմությունը: Այսպես, կաթողիկոս և պատմագիր **Հովհաննես Դրասխանակերտցին** իր «Հայոց պատմություն» մատյանում ներկայացնում է պատմական իրադարձությունները մինչև 924թ.: Դրա հետ մեկտեղ պատմագրության մեջ դրսևորվեցին մի շարք նոր ուղղություններ: Պատմիչներն սկսեցին գրի առնել նաև այլ երկրների, այսինքն՝ **«համաշխարհային» կամ «տիեզերական»** պատմություններ: Այս ուղղության ներկայացուցիչներն էին **Ստեփանոս Տարոնեցին և Վարդան Արևելցին**: **Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկ)** ստեղծագործել է **X դարի վերջին և XI դարի սկզբին**: Նրա **«Պատմություն տիեզերական»** գրքում տեղեկություններ կան Եգիպտոսի, Մարաստանի, Արշակունյաց Հայաստանի, Սասանյան Պարսկաստանի, Բյուզանդիայի և այլ երկրների ու ժողովուրդների մասին: Արժեքավոր են Ստեփանոս Տարոնեցու տեղեկությունները Բագրատունյաց Հայաստանի մասին: **Վարդան Արևելցու (XIII դ.) «Պատմություն տիեզերականը»** արժեքավոր աղբյուր է մասնավորապես մոնղոլների արշավանքների, Անդրկովկասի նվաճման և նրանց հարկային քաղաքականության հարցերի ուսումնասիրության համար:

Մյուս կարևոր ուղղությունը հայ **նշանավոր տոհմերի և նահանգների** պատմությունն էր: Հովհաննես Դրասխանակերտցին գրեց Բագրատունիների պատմությունը, **Թովմա Արծրունին**՝ Վասպուրականի թագավորության կամ Արծրունիների պատմությունը: XIII դարի պատմիչների մեջ հատուկ տեղ է գրավում **Ստեփանոս Օրբելյանը**: Նրա **«Միսական նահանգի պատմությունը»** նվիրված է Մյունիքի թագավորության, հայ Օրբելյանների իշխանության պատմությանը: Գիրքը աչքի է ընկնում հաղորդած նյութի հավաստիությամբ, հատկապես նահանգի սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ:

XII դարում ձևավորվում է նոր ուղղություն՝ **ժամանակագրությունը կամ տարեգրությունը**, որտեղ հեղինակները ըստ տարիների համառոտ ներկայացնում են իրենց ապրած ժամանակաշրջանի հիշարժան իրադարձությունները: Նշանավոր է կիլիկյան պատմիչ (սպարապետ) **Սմբատ Գունդստաբլի «Տարեգիրք»** աշխատությունը, որն ավանդում է Ռուբինյան ու Հեթումյան ժամանակաշրջանի կարևոր դեպքերը: Ժամանակակիցներից նշանավոր էին նաև **Մատթեոս Ուռհայեցին և Սամվել Անեցին**:

X-XIV դդ. զարգանում և փոփոխությունների է ենթարկվում նաև փիլիսոփայությունը: Գիտության այս ճյուղում աչքի ընկան զորավար և քաղաքական գործիչ **Գրիգոր Մագիստրոս Պահլավունին**, և հռչակավոր փիլիսոփա, գիտնական ու բանաստեղծ է **Հավհաննես Սարկավազ Իմաստասերը**: Վերջինս հայ իրականության մեջ **ընափիլիսոփայության** ուղղության հիմնադիրն է: Հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում մեծ դեր խաղացին Տաթևի համալսարանում դասավանդող **Հովնան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին**:

Աննախընթաց վերելք ապրեց նաև **իրավագիտությունը**: Այս ասպարեզի նշանավոր գործիչներից է **Դավիթ Ալավկաորդին**, որը XII դարի 1-ին կեսին ստեղծեց իր **«Կանոնները»**: XII դարի վերջին **«Գիրք դատաստանի»** օրենսգրքով հանդես է գալիս **Մխիթար Գոշը**: Այս աշխատությունը միջնադարյան հայ իրավունքի գլուխգործոցն է: Հաջորդ դարում **Սմբատ Գունդստաբլը**, հենվելով Մխիթար Գոշի դատաստանագրքի (1184թ.) վրա, գրում է իր **«Դատաստանագիրքը»**, որը հարմարեցվել է Կիլիկյան Հայաստանի պայմաններին:

ժամանակի պահանջով վերելք ապրեցին նաև բնական գիտությունները: Դարաշրջանի ականավոր գիտնականներից էր արդեն հիշատակված **Յովհաննես Իմաստասերը**: Նա հեղինակեց թվաբանական և տոմարագիտական աշխատություններ:

Մաթեմատիկայի ասպարեզում իր խոսքն է ասել նաև **Գրիգոր Սագիստրոս Պահլավունին**:

Մեծ զարգացում ունեցավ **կենդանաբանությունը, կենսաբանությունը** և հատկապես **բժշկությունը**: Հայ բժիշկները ուսումնասիրությունների նպատակով անգամ դիտարկումներ էին կատարում, ինչն արգելված էր եկեղեցու կողմից և դատապարտվում էր եվրոպական երկրներում: Դարաշրջանի մեծանուն բժիշկներից էր **Մխիթար Հերացին (XII դար)**: Նրա ստեղծած երկերի շարքում ամենանշանավորը «**Ջերմաց մխիթարություն**» աշխատությունն էր, որը գրված էր ժամանակի խոսակցական լեզվով, որպեսզի «դյուրահաս լինի» բոլորին: Այդ գրքի գերմաներեն թարգմանության առաջաբանում բժշկագիտության պատմաբան **Ջայդելը**, բարձր գնահատելով Մխիթար Հերացու ծառայությունը, գրել է. «Երբ մենք առանց կանխակալ կարծիքի համեմատում ենք «Ջերմաց մխիթարություն» գրքից ընդամենը մի քանի տասնյակ տարի առաջ գրած Հելդեգարդի «Բնագիտությունը» մեր հայ վարպետի հասած արդյունքների հետ, ապա տեսնում ենք, որ վճռականորեն վերջինիս պետք է հանձնենք դափնեպսակը՝ բնության ավելի արմատական իմացության, ավելի հետևողական և ավելի ինքնուրույն մտածողության, ինչպես նաև սխոլաստիկական մախապաշարմունքներից զերծ լինելու համար»:

Գրականություն: IX-XIV դդ. բուռն զարգացում էր ապրում նաև գրականությունը: Շարունակում էր զարգանալ **ժողովրդական բանահյուսությունը**: Լրացվեց և հարստացավ «Սասնա ծռեր» դյուցազնավեպը: Աշխարհիկ թեմաներով գործերը նոր երևույթ էին հայ գրականության մեջ: Ժամանակի ամենամեծ գործիչներից էին բանաստեղծներ **Գրիգոր Նարեկացին (XI դար)**, **Ներսես Շնորհալին (XII դար)**, **Ֆրիկը (XIII դար)**:

Դարաշրջանի ամենամեծ բանաստեղծը **Գրիգոր Նարեկացին է, որի «Մատյան ողբերգության»** պոեմը վայելում է համաշխարհային հռչակ, իսկ նրա հեղինակը ֆրանսիացի գրականագետների կողմից ստացել է աշխարհի թիվ մեկ բանաստեղծի կոչումը: Պոեմը գրված է ճոխ և հարուստ լեզվով: Բովանդակային առումով այն մի հոյակապ վեճ է Աստծո հետ, միաժամանակ՝ բարձրարվեստ աղոթք առ Աստված: Դրա մեջ է հեղինակի մեծ ողբերգությունը: Հեղինակը հոգու բոլոր ուժերով, գերագույն լարումով ուզում է ձուլվել Աստծո հետ, դառնալ նրա մի մասնիկը: Սակայն հոգու այդ խոյանքի ճանապարհը խոչընդոտվում է մարմնական մեղքով: Հոգու և մարմնի միջև մղվող պայքարը ողջակիզում է մարդու հոգին, մարդ, որը ցանկանում է, մաքրվելով, Աստծո մասնիկը դառնալ, բայց որը գամված է հողին և նրանից ուժ ու զորություն է ստանում:

2002թ. լրացավ «Մատյանը» գրելու հազար տարին: Նրա հեղինակը՝ Գրիգոր Նարեկացին դասվել է հայ եկեղեցու սրբերի շարքը: Մատյանը հազար տարի եղել է հայ ժողովրդի պաշտամունքի առարկան, «ետ ավետարանին նոր ավետարան հայոց» (Գարեգին Սրվանձոյանցի գնահատականը): Հասարակ ժողովուրդը «Մատյանին» օժտել է բուժիչ հատկություններով, հիվանդների բարձի տակ է դրել «Նարեկը» (կրճատ այդպես են անվանել), հավատալով նրա աստվածային էությանը: Նարեկացին գրել է նաև տաղեր, որոնք, չնայած հոգևոր խորագրերին՝ «Տաղ ծննդյան», «Տաղ վարդավառին» և այլն, ունեն իրապես աշխարհիկ բովանդակություն, զովերգում են գեղեցիկ կնոջը, ջլապինդ հաղթաբազուկ երիտասարդին և այլն: Նարեկացին առաջին բանաստեղծն է, որ, օգտվելով ժողովրդական բանահյուսության գանձարանից, ստեղծեց բաժրորակ բանաստեղծություններ:

XII-XIII դարերում նշանավորվում են նաև առակագրության վերելքով: Առակագրության հիմնադիրն էր **Մխիթար Գոշը**: Նրա գործի շարունակողն էր **Վարդան Այգեկցին**:

Արվեստ: Նյութական մշակույթի և արվեստի զարգացման մասին խոսելիս պետք է նշել դարավոր ավանդույթներ ունեցող **ճարտարապետության և քանդակագործության** վերելքի ուղու մասին: Հանճարեղ ճարտարապետ Մանուելի կողմից Աղթամար կղզում կառուցվեց ամբողջությամբ քանդակներով պատված **Սուրբ Խաչ** եկեղեցին: Գագիկ I թագավորի հրամանով հռչակավոր **Տրդատը** կառուցեց Անիի մայր տաճարը (Կաթողիկե), զվարթնոցատիպ եկեղեցին և այլ շինություններ:

IX-X դդ. քանդակագործության մեջ ձևավորվում է նոր երևույթ՝ խաչքարերի արվեստը, որը կատարելության է հասնում XII-XIV դդ.: Քարագործ վարպետներից նշանավոր էր ճարտարապետ, քանդակագործ և մանրանկարիչ **Մոմիկը**: Ճարտարապետության զարգացման հետ անմիջական զարգացում ունեցավ **որմնանկարչությունը**: Որմնանկարներով էին զարդարվում ոչ միայն եկեղեցիների պատերը, այլև աշխարհիկ կառույցները: X-XIV դդ. ոչ միայն գրվում, այլև արտագրվում էին հազարավոր ձեռագրեր: Այդ ձեռագրերի նակարագրողումը մեծապես խթանեց **մանրանկարչության** զարգացումը: Ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը՝ մանրանկարչությունը, ձևավորվել էր դեռևս Vդ.: Այն բարձր զարգացման հասավ նշված ժամանակաշրջանում, հատկապես Կիլիկիայում, որը կրում էր բյուզանդական արվեստի ազդեցությունը: Կիլիկյան մանրանկարիչներից ամենահայտնին **Թորոս Ռուսլինն էր**, նշանավոր էր նաև **Սարգիս Պիծակը**: Բուն Հայաստանի մանրանկարիչներից է **Մոմիկը**, որը անցել է գեղարվեստի կիլիկյան դպրոցը:

X-XIV դդ. զարգացման նոր փուլ է թևակոխում **երաժշտությունը**: Առավել բարձր մակարդակի է հասնում **գուսանական երգը**, զարգանում է **գյուղական** (գեղջկական) երաժշտությունը: Առաջադիմեց նաև հայ **եկեղեցական** երաժշտությունը: Շարականները՝ հոգևոր երգերը, աչքի էին ընկնում պարզությամբ և մեղեդայնությամբ, հիմնված լինելով ժողովրդական երգի վրա՝ հասկանալի էին հասարակ մարդկանց: Այս շրջանում երաժշտության մեջ է մտնում **խազերի** արվեստը՝ միջնադարյան նոտագրությունը:

Միջին դարերում շարունակում է զարգանալ նաև թատրոնը, սակայն IX-XI դդ. դեռևս կրում է տարերային բնույթ: Թատերական ներկայացումների էին հաճախում բազմաթիվ մարդիկ: Դա ոչ միայն անհանգստացնում էր եկեղեցուն, այլև ստիպում հոգևորականներին եկեղեցական արարողություններին թատերական հանդիսության տեսք տալ:

Նյութական մշակույթի ասպարեզից անհրաժեշտ է նշել ժամանակաշրջանի կիրառական արվեստի ճյուղերը: Ջարգանում էին **փայտի փորագրման արվեստը, խեցեգործությունը**, արծաթագործությունն ու ոսկերչությունը, գորգագործությունը և այլն: X-XIV դդ. հոգևոր և նյութական մշակույթն ազգային հիմքի վրա ստեղծված ժողովրդի արժեքավոր ձեռքբերումներից է, որն արժեքավոր ներդրում է համաշխարհային մշակույթի գանձարանում:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XV-XVII դարերում

XV-XVII դդ. օտար նվաճողների երկարատև տիրապետությունը Հայաստանում ծանր հետևանքներ ունեցավ ոչ միայն երկրի ավերածության և ամայացման, այլև հայկական մշակույթի զարգացման առումով: Հատկապես տուժեց **դպրոցական գործը**, դադարեցին գործել Տաթևի համալսարանը, Մեծփի դպրոցը և այլն:

Այս անկումը բարեբախտաբար կարճ տևեց: XVII դ. սկզբին հիմնվեց **Սյունաց Մեծ կամ Հարանց անապատի** դպրոցը: Դպրոցներ բացվեցին Հովնանավանքում, Երևանում, Նոր Ջուղայում, Ղրիմում և հայկական մի շարք գաղութներում: 1700 թ. **Մխիթար Սեբաստացին** հիմնում է **Մխիթարյան միաբանությունը**: Հալածանքները ստիպեցին, որ Մխիթարյանները Կ. Պոլսից տեղափոխվեն Հունաստան,

այնուհետև՝ Վենետիկի մոտ գտնվող **Սուրբ Ղազար կղզի**, որտեղ նրանք հաստատվեցին 1717թ. և ծավալեցին լայն գիտամշակութային գործունեություն:

Գրատպություն: Հայկական մշակույթի զարգացմանը մեծապես խթանեց **գրատպության գյուտը**: Հայկական առաջին գրքերը տպագրվեցին եվրոպական տպարաններում: Վենետիկը դարձավ այն նշանավոր կենտրոնը, որը ծնունդ տվեց հայ տպագրությանը: Այստեղ 1512թ. լույս տեսավ հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «**Ուրբաթագիրքը**», առաջին հայ տպագրիչ **Հակոբ Մեղապարտի** կողմից: Հայ երկրորդ տպագրիչ **Աբգար Թոխատեցին** Վենետիկ էր ուղարկվել կաթողիկոս **Միքայել Սեբաստացու** կողմից: Նա այնտեղ վերսկսում է հայերեն գրքերի տպագրությունը: XVII դ. տպարաններ են հիմնվում և հայերեն գրքեր հրատարակվում **Լվովում**, **Նոր Ջուղայում** (1638թ.), **Ամստերդամում** (1658թ.), որտեղ առաջին անգամ տպագրվեց Աստվածաշունչը:

XV-XVI դդ. անկում ապրեց **պատմագրությունը**: Այս ժամանակաշրջանում գործել են **Թովմա Մեծոփեցին (XVդ.)**, **Առաքել Դավրիժեցին (XVIIդ.)**, **Գրիգոր Դարանաղցին**, **Զաքարիա Քանաքեռցին** և ուրիշներ: Առաքել Դավրիժեցին միակ հայ պատմիչն է, որն իր գիրքը տեսել է տպագրված: Նրա «Պատմություն» աշխատությունը տպագրվել է Ամստերդամում 1669թ.: Գիրքը նկարագրում է Հայաստանի XVII դարի առաջին կեսի դեպքերը, թուրքերի և պարսիկների վարած պատերազմները, շահ Աբասի կողմից կազմակերպված հայերի գաղթը, ինչպես նաև պատմում է Նոր Ջուղայի և Լվովի հայկական գաղութների և հարևան ժողովուրդների կյանքը:

Հայ գրականություն: XV-XVII դարում շարունակվում էր հարստանալ նոր անուններով: Հռչակվեցին այնպիսի բանաստեղծներ, ինչպիսիք էին **Սկրտիչ Նաղաշը (XVդ.)**, **Առաքել Բաղիշեցին**, **Նաղաշ Հովնաթանը**, **Գրիգորիս Աղթամարցին**: Հայ գրականության մեջ ամենամեծ դերը խաղաց XVI դարի բանաստեղծ-քնարերգու **Նահապետ Քուչակը**: Քուչակը մեր այն երգիչն է, որով սկսվում է աշուղական արվեստի զարգացումը:

XV-XVII դարերի գրականության համար բնորոշ են Տաղարան կոչվող ժողովածուները, որոնց մեջ, ըստ պատվիրատուների ընտրության, զետեղում են տարբեր հեղինակների բանաստեղծություններ: XV-XVII դարերի հայ գրականությունը հարստանում էր նաև այլ լեզուներից կատարած գեղարվեստական թարգմանություններով:

Գիտություն: XV-XVI դարերում գիտությունը զարգանում էր վանքերում գործող դպրոցներում, վարդապետների և ուսուցիչների կողմից: **Բնական գիտությունների** ասպարեզում իրենց գործունեությամբ խոր հետք են թողել մի շարք տոմարագետներ, բժշկագետներ: Մեծ վաստակ ունի Հակոբ Ղրիմեցին, որը XV դարի սկզբին Մեծոփա վանքի դպրոցում դասախոսություններ է կարդացել տոմարի և բնագիտության հարցերով: Նրա հայտնի աշխատություններից են «Մեկնություն տոմարի» և «Բնության մասին» ծավալուն գրքերը:

Այս ասպարեզում ամենանշանավոր դեմքը բժիշկ և բնագետ **Ամիրդովլաթ (Գրիգոր) Ամասիացին** (1414-1496թթ.) է: Նա ունեցել է բժշկի մեծ համբավ, եղել է թուրքական Մուհամմեդ II սուլթանի անձնական բժիշկը: Ամասիացու բազմաթիվ աշխատություններից առավել հայտնի են «Ուսումն բժշկության» և «Անգիտաց անպետը» (անգետներին անպիտան): Այն վեցլեզվյան (հայերեն-հունարեն-պարսկերեն-թուրքերեն-արաբերեն-լատիներեն) հանրագիտարանային բնույթի բառարան է:

Չնայած աննպաստ հանգամանքներին՝ **արվեստի** որոշ բնագավառներ, այնուամենայնիվ, շարունակում էին զարգացում ապրել: Հաջողություններն ակնառու էին **կերպարվեստի** բնագավառում՝ հատկապես **մանրանկարչության** բնագավառում: Մանրանկարներում պատկերվում էին կրոնական և

աշխարհիկ կյանքից դրվագներ: Առավել սիրված թեմաներն էին Հին Կտակարանի պատմությունները, Մարիամ Աստվածածնի, Հիսուս Քրիստոսի կյանքն ու գործերը, ավետարանիչների պատկերումը՝ ստեղծագործելիս կամ աղոթելիս: Պատկերում էին նաև հայոց եկեղեցու նշանավոր գործիչներին՝ Գրիգոր Տաթևացուն և ուրիշների: Իսկ XVI դարում հայ մանրանկարիչները պատկերել են նաև Ավարայրի ճակատամարտը՝ նպատակ ունենալով կենդանի պահել հայ ժողովրդի ազատասիրական ոգին: XV-XVII դարերում առավել հայտնի էին Վասպուրականի, Կարինի, Նոր Ջուղայի և Ղրիմի մանրանկարչական դպրոցները: Հայ մանրանկարիչներից նշանավոր էին Հակոբ Ջուղայեցին, Ավագը, Մինասը և ուրիշներ:

XVII դարի ականավոր հայ նկարիչներից է նորջուղայեցի Բոգդան Սալթանովը (Աստվածատուր Սալթանյան), որը խոշոր դեր է կատարել հայկական և ռուսական կերպարվեստների փոխադարձ հարստացման գործում: Տեսնելով հայ վարպետի ձեռքով պղնձի վրա փորագրված «խորհրդավոր ընթրիքը» թեմայով պատկերը՝ ռուսաց ցար Ալեքսեյ Միխայլովիչը Աստվածատուր Սալթանյանին հրավիրել է Մոսկվա: Հայ նկարիչը 1666 թվականին հաստատվել է Մոսկվայում, աշխատանքի է անցել Կրեմլի Ջինապալատում՝ դառնալով առաջին նկարիչներից մեկը: Որոշ ժամանակ գլխավորել է արվեստագետների աշխատանքը, միաժամանակ, իր արվեստն ուսուցանել երիտասարդ ռուս նկարիչներին: Նկարագարդել է պալատներ, պատրաստել է պալատական կահույք, հորինել է խաղալիքներ:

XV-XVII դարերում հայկական արվեստի գլուխգործոց է «Ալմաստե գահը»: Այն Նոր Ջուղայի վարպետների ձեռքի գործն է: Գահը փայտակերտ է և ամբողջովին պատված է թանկարժեք քարերով: Այս շքեղ գահը Նոր Ջուղայի հայ վաճառականների ընծան է ռուսաց թագավոր Ալեքսեյ Միխայլովիչին՝ ի նշան երախտագիտության: Ռուսաց թագավորները՝ մասնավորապես Ալեքսեյ Միխայլովիչը, հովանավորում էին հայ վաճառականների առևտրական կապերը ռուսական շուկայի հետ:

Մեծ զարգացում էր ապրում նաև կիրառական արվեստը, հատկապես գորգագործությունը: Հայկական գորգերն արտահանվում էին շատ երկրներ և մեծ հռչակ ունեին: Հայտնի էին հատկապես հայկական վիշապագորգերը: Հայկական գաղթօջախներում հայտնի էին բարձրարվեստ ոսկերչությունն ու նկարչությունը: XVI դ. զարգացում էր ապրում նաև խաչքարային արվեստը:

XV-XVI դարերում հայ ճարտարապետությունն անկում էր ապրում անկայուն քաղաքական-տնտեսական վիճակի և թուրք-պարսկական տիրապետողների կրոնական մոլեռանդության պատճառով: XV դ. հայ ճարտարապետության անկման արտահայտությունն էր այն եզակի դեպքը, երբ Մեծփա վանքի նոր եկեղեցին կառուցելու համար հրավիրեցին օտարազգի (հույն) ճարտարապետ: XVII դ. որոշ առաջընթաց է նկատվում շինարարական արվեստի մեջ. տարածում գտավ եկեղեցիներին կից զանգակատների կառուցումը: Սկսեցին կառուցվել միաթռիչք և բազմաթռիչք կամուրջներ, որոնց մի մասը գործում է մինչև այսօր:

XV-XVII դդ. հայ ճարտարապետները մեծ ծառայություններ են մատուցել նաև Օսմանյան թուրքիայի շինարարական արվեստին: Հայազգի **Սինան** ճարտարապետը XV-XVI դդ. Կ. Պոլսում կառուցել է բազմաթիվ պալատներ, մզկիթներ, այլևայլ շենքեր և դարձել թուրքիայի ճարտարապետության հիմնադիրներից մեկը: XVII դարից Կ. Պոլսում արքունի ճարտարապետի պաշտոնը մշտապես զբաղեցնում էին **Պալյան** գերդաստանի ներկայացուցիչները, որոնք երեք դարերի ընթացքում կառուցեցին բազմաթիվ հոյակապ շենքեր և պալատներ:

Ունեցելիության թեմաներ և գրականություն

1. Դպրոցը և կրթական կենտրոնները Հայաստանում զարգացած միջնադարում

- *Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև XVIII դարի վերջը)*, խմբ. Ս.Տ.Սելիք-Բախչյանի, Երևան, 1975, էջ 557-560:
- *Հայոց պատմություն (ինագույն ժամանակներից մինչև մեր օրերը)*, խմբ. Հր. Սիմոնյանի, Երևան, 2000, էջ 287-288:
- *Դանիելյան Է., Սելքոնյան Ա., Հայոց պատմություն (ինագույն ժամանակներից մինչև մեր օրերը)*, Երևան, 2008, էջ 177-180
- *Սելքոնյան Ա., Հայոց պատմություն*, Երևան, 1998, էջ 102:
- *Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հատոր I*, Երևան, 1971, էջ 309-318, 789-802:

2. Մանրանկարչության զարգացումը Կիլիկիայում

- *Դանիելյան Է., Սելքոնյան Ա., Հայոց պատմություն (ինագույն ժամանակներից մինչև մեր օրերը)*, Երևան, 2008, էջ 186-190:
- *Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հատոր III*, Երևան, 1976:
- *Ազատյան Լ., Կիլիկյան մանրանկարչությունը XII-XIII դդ.*, Երևան, 1964:
- *Ազատյան Լ., Կիլիկյան մանրանկարչության ակունքները*, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1960,թ.3, էջ 39-58:
- *Իզնատոսեան Վ., Հայկական մանրանկարչություն և Թորոս Ռոսլին, Վենետիկ, Ս.Ղազար, 1983:*

4.Հայ մշակույթի նշանավոր գործիչները

- *Հայոց պատմություն (ինագույն ժամանակներից մինչև մեր օրերը)*, խմբ. Հր. Սիմոնյանի, Երևան, 2000, էջ 287-306
- *Հայ ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., հատոր III, IV, V:*
- *Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, Երևան, 1976:*